ԷՋՄԻԱԾԻՆ

1970-Ջ-Ի

ՌՆԺԸ
ԻԵ ՏԱՐԻ

Յունիս – Յուլիս 67

ԷՋՄԻԱԾԻՆ

ՊԱՀՏՕՆԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՌՈՅ
Ս. ԷՋՄԻԱԾՆԻ

Զ-Է

1970

ԼԱՆԻՆՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՊՈՒԼՏԱՄԵՆՏԱՅԻ ԳՐԱԴԱՐԱՆ
ԱԼՈՐԵԱՅԻ ԲԱՆ

ՀՐԱՄԱՆԱՒ

Տ. Տ. ՎԱԶԳԵՆԻ ԱՌԱՋՆՈՅ

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ՃՇՄԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ ԱՄԲՈՂՋ

Անթիլիասի Տանն Կիլիկիո Աթոռի հետ Մայր Աթոռիս հարաբերությանց մասին այլևս գրեթե ասելիք չմնաց: Այս է մեր եզրակացությունը նաև այժմ, ընթերցելուց հետո Անթիլիասում տպված պաշտոնական վերջին հրատարակությունը՝ «Էջմիածնի մեջ գումարված եպիսկոպոսական ժողովին, Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության մասնակցության մասին» (Անթիլիաս—1970):

Մենք բնավ տրամադիր չէինք այս հարցին անդրադառնալ և հրապարակել փոխանակված նամակներն ու հեռագրերը Մայր Աթոռիս և Կիլիկյան Աթոռի միջև, սակայն, քանի որ Անթիլիասի կաթողիկոսությունը հարմար է նկատել ա՛յս օրերին հատուկ մի գրքույկ հրատարակել, փոխանակված նամակներից միայն որոշ մեջբերումներով, խմբագրությունս անհրաժեշտ գտավ անդրադառնալ վերոհիշյալ գրքույկին և հրապարակել փոխանակված բոլոր նամակներն ու հեռագրերն ամբողջությամբ և տալ իր լուսաբանությունները, որպեսզի ճշմարտությունը երևան գա ոչ թե կիսով չափ, այլ ամբողջությամբ:

Անթիլիասի պաշտոնական հրատարակությունը 57 էջերի մեջ փորձում է ապացուցել՝

1. Թե Անթիլիասի գահակալ Տ. Տ. Խորեն կաթողիկոսն է եղել վերարծարծողը եկեղեցական բարեկարգությանց հարցերի քննարկմանը, առաջարկելով օրակարգ և ծրագիր՝ իր 15 մարտ 1968 թվակիր նամակով՝ ուղղված Ամենայն Հայոց Հայրապետին.

2. Թե օրակարգի վրա այլ հարցերի մուծումը Մայր Աթոռի կողմից մի տեսակ ձգտում է բուն կենսական հարցից շեղվելու.

3. Թե 1969 թ. Էջմիածնում գումարված եպիսկոպոսաց ժողովին կիլիկյան եպիսկոպոսների չմասնակցելը հետևանք է գոյացած մի համաձայնու-

թյան խախտումի, ինչ-որ խորհրդավոր և Անթիլիասի կողմից անհասկանալի մնացած պատճառով:

Սրանք են հիմնական մտքերը գրքույկի:

Ահա և խմբագրությանս լուսաբանությունները:

Ա. Փոխանակված նամակների ամբողջական բնագրերի հրապարակումը անհրաժեշտ է, որովհետև Անթիլիասի հրատարակությունը միայն որոշ մեջբերումներ է կատարում, ընթերցողին ներկայացնելով այն հատվածները միայն, որոնք կարող են նպաստել իր մեկնություններին:

Այս պարագան ակնբախ է, օրինակ, վերոհիշյալ գրքույկի առաջին պնդումի նկատմամբ: Իրողությունն այն է, որ 15 մարտ 1968-ից շատ առաջ Ամենայն Հայոց կաթողիկոսը վերարծարծել է հայ եկեղեցու բարեկարգման հարցը և նախաձեռնել եպիսկոպոսաց ժողովի գումարում, ինչպես հայտնում է Տ. Տ. Վազգեն կաթողիկոսը Իր 9 ապրիլ 1968 թվակիր պատասխան նամակում:

Արդարև, թե՛ 1956-ին Կահիրեում և թե՛ 1958-ին և 1962-ին Մայր Աթոռում տեղի ունեցած եպիսկոպոսաց ժողովները զբաղվել են սույն հարցով և կատարել նախապատրաստական աշխատանքներ, իսկ 1967-ին խորհրդակցական մի ժողովից հետո, Ամենայն Հայոց կաթողիկոսը որոշել է Մայր Աթոռում եպիսկոպոսաց ժողով գումարել 1969-ին մյուռոնօրհնության առիթով և կազմել ժողովի օրակարգը՝ բաղկացած 9 հարցերից, այդ թվում նաև՝ հայ եկեղեցու բարեկարգության հարցը, և գրավոր հայտնել այդ մասին ս. Էջմիածնի եպիսկոպոսներին 1967-ին: Այսպես, օրինակ, Տ. Տ. Վազգեն Ա կաթողիկոսը 19 հոկտեմբեր 1967-ին այդ մասին երկարորեն գրել էր Կ. Պոլսի Տ. Շնորհք պատրիարքին:

Բ. Անթիլիասի վերոհիշյալ հրատարակությունը, ինչպես և Ինքը Տ. Տ. Խորեն կաթողիկոսը Իր նամակներում, անընդհատ պնդում են, բոլորովին անհամոզեցուցիչ կերպով, թե եպիսկոպոսաց ժողովը պետք է զբաղվի միմիայն եկեղեցական բարեկարգության հարցերով, և այնպիսի մի տոնով, որ կարծեք Անթիլիասի Աթոռը լիներ որոշողը, թե Ամենայն Հայոց Հայրապետը ի՞նչ օրակարգի հարցեր կարող է ներկայացնել եպիսկոպոսաց ժողովին և թե՛ եկեղեցական բարեկարգության հարցերով զբաղվելու անհրաժեշտությունը կարծեք թե ժխտեր՝ նույնքան կարևոր այլ հարցերով զբաղվելու հնարավորությունը:

Գ. Կասկածից վեր է որևէ սրտցավ և ողջամիտ հայ մարդու համար, որ մեր օրերին, Հայաստանյայց եկեղեցու ներքին կյանքում, անհանգստացնող սուր տագնապ ստեղծող և հետևաբար ամենահրատապ և ամենաանհետաձգելի հարցը եղել է և մնում է այդ տագնապի վերացման և եկեղեցական ներքին միության վերականգնման հրամայականը:

Այնուամենայնիվ, 26 օգոստոս 1969 թվակիր իր նամակում Տ. Տ. Խորեն կաթողիկոսը հայտարարում է, թե՝ «Մեզի համար նման հարց ըստ էության գոյություն չունի, որովհետև Հայաստանյայց եկեղեցին միշտ մի եղած է, մի է այսօր և մի պիտի մնա հավիտյան: Մեր անխախտ հավատքն ու համոզումը այն է, որ ամոր ներքին միությունը չէ խախտված երբեք, որպեսզի կարոտի ամրապնդումի»: Նույն պնդումներն է անում նաև հրատարակված գրքույկը:

Ի սեր Աստուծո, ինչպե՞ս կարելի է այս աստիճան անտեսել իրողությունները. ինչպե՞ս կարելի է այս աստիճան չզգալ մեր ժողովրդի համատարած խռովքը և ընդվզումն ի տես սփյուռքը ս. Էջմիածնից բաժանելու Անթիլիասի գործադրած քաղաքականության: Եվ եթե Անթիլիասը այսքան հաստատ կերպով հանոզված է, որ «Մեր եկեղեցվո ներքին միությունը չէ խախտած երբեք, որպեսզի կարոտի ամրապնդումի», ապա ինչո՞ւ է նա այնքան հետևողականորեն խուսափում այդ հարցի քննարկումից: Ինչո՞ւ: Անթիլիասը մի կողմից խոսում է հայ եկեղեցու միության, սիրո և եղբայրության մասին, սակայն մյուս կողմից այդ միությունն ու եղբայրությունը իրապես, գործնապես և օրինավորապես կյանքի կոչելու մասին չի ուզում խոսքի իսկ նստել:

Տարակույս չկա, որ մեր ժողովուրդը բավարար չափով ողջամիտ է և իրատես՝ հասկանալու համար ճշմարտությունը:

Դ. Անթիլիասում հրապարակված գրքույկը, երկար մեկնաբանություններով, իզուր տեղն է չարչարվում՝ փորձելով ապացուցել, թե իբր Մայր Աթոռի կողմից կատարվել է «խախտում գոյացած մի համաձայնության»:

Նախ պետք է հստակ լինի բոլորին, թե Ամենայն Հայոց Հայրապետը երբեք չի համաձայնվել, որ եպիսկոպոսաց ժողովի օրակարգից լրիվ հանվի «Հայ եկեղեցու միության ամրապնդում» հարցը, այլ ընդառաջել է Տ. Տ. Խորեն կաթողիկոսի 26 օգոստոս 1969 թվակիր նամակին, որ այդ հարցը ըստ էության քննարկվի եպիսկոպոսաց ժողովից հետո, երկու Աթոռների կողմից կազմված մի հանձնաժողովում: Ամենայն Հայոց կաթողիկոսը թե բերանացի՝ տ. Գարեգին եպս. Սարգսյանին, և թե գրավոր՝ Տ. Տ. Խորեն կաթողիկոսին, հայտնել է, որ տվյալ հարցը օրակարգի վրա կպահվի, սակայն եպիսկոպոսաց ժողովը կբավարարվի Կիլիկյան Աթոռի վերոհիշյալ առաջարկ-բանաձևով և հարցի ըստ էության քննարկումը կփոխանցի հանձնաժողովին, որը պետք է կազմվեր Մայր Աթոռիս և Կիլիկյան Աթոռի ներկայացուցիչներով:

Ե. Այս բոլորից հետո, ճշմարիտ է, որ Վեհափառ Հայրապետի վրա ծանրորեն շփոթեցուցիչ ազդեցություն թողեց Տ. Տ. Խորեն կաթողիկոսի՝ Բոստոնում արտասանած ճառը, հրապարակված «Հայրենիք» օրաթերթի 1969 թվի հուլիսի 11-ի համարում: Այդ ճառի բնագիրը Բեյրութի «Զարթոնք» օրաթերթը վերահրատարակել էր օգոստոսի 17-ին, և որը ստացվել էր Մայր Աթոռում սեպտեմբերի 6-ին միայն, այո՛, սեպտեմբերի 6-ին: Ի՞նչ կա այստեղ անհավատալի, տրված լինելով, որ թերթերը շուրջ մեկ ամիս ուշացումով են հասնում Բեյրութից Հայաստան: Եթե իրոք Վեհափառ Հայրապետը ծանոթ եղած լիներ այդ ճառի բովանդակությանը, հնարավո՞ր էր, որ այդ մասին ակնարկած չլիներ տ. Գարեգին եպիսկոպոսին, երբ նա օգոստոսի վերջերին ս. Էջմիածնում էր գտնվում իբրև բանագնաց: Տ. Գարեգին սրբազանն ի՞նչ է կարծում իր խղճի խորքում:

Այո՛, Տ. Տ. Խորեն կաթողիկոսի Բոստոնի ճառը աննախընթացորեն մտահոգիչ է, իր **կուսակցական-քաղաքական շեշտված բովանդակությամբ:**

Ահա թե ինչո՛ւ արդարացի էր Ամենայն Հայոց Հայրապետի վիշտը և Նրա 10 սեպտեմբեր 1969 թվակիր հայտարարությունը, թե «Հայ իրականության մեջ երբեք չի պատահել, որ մի բարձրաստիճան հոգևորական պաշտոնապես և հրապարակով այնքան շեշտված և ամբողջական կերպով իր անձը և իր հոգևոր առաքելությունը նույնացրած լինի մի քաղաքական կուսակցու-

թյան ծրագրի և գործունեության հետ»: Վեհափառ Հայրապետը ափսոսանք հայտնելով այդ անսպասելի ելույթի առթիվ, եղբայրորեն հորդորում էր Անթիլիասի գահակալին, որ նա, պատշաճ մի ձևով, հետս կոչի հիշյալ իր հայտարարությունները, «այլապես անօրինակ մի նոր կացություն կստեղծվի Իր և իր Աթոռի համար, հայ եկեղեցու և ժողովրդի ծոցում»:

Հայտնի է նաև, որ Տ. Տ. Խորեն կաթողիկոսի Բոստոնի ճառի բովանդակությունը դժգոհություն էր ստեղծել ամենից ավելի հենց նույն կուսակցության դեկավար շրջանակներում, և այդ՝ շատ հասկանալի պատճառներով:

Այսուհանդերձ, անհավատալի «միամտությամբ» գրքույկը ասում է. «Ի՞նչ կար այնքան խորթ այդ ոգեշունչ ճառին մեջ, ի՞նչ կար այնքան ընդվզեցուցիչ այդ հայրապետական պատգամին մեջ». և ապա՝ «Ի՞նչ կապ կար Խորեն Վեհափառի խոսած ճառի և եպիսկոպոսաց ժողովի եկեղեցական բարեկարգչական աշխատանքներուն միջև»: Եվ հեղինակը անթիլիասական ծանոթ, հիվանդագին հոգեբանությամբ ավելացնում է. «Պարզ է որ ուրիշ ազդակներ միջամտեցին հարցին, պատճառներ՝ որոնց հայտնաբերումը կյանք պատմության»:

Անթիլիասի հրատարակությունը իզուր տեղ փորձում է ինչ-որ խորհրդավոր ազդակներ տեսնել այնտեղ, որտեղ ամեն ինչ պարզ է և հասկանալի: Բավական է, որ ողջամիտ ընթերցողը պարզապես կարդա Խորեն կաթողիկոսի արտասանած Բոստոնի ճառը, որպեսզի ամեն ինչ ճիշտ հասկանա և հայտնաբերի, առանց... պատմությանը թողնելու: Դրա լավագույն ապացույցն այն է, որ անցյալ մայիսի սկզբին ինքը Տ. Տ. Խորեն կաթողիկոսը դիմել էր տ. Եղիշե պատրիարքին, նրա Հռոմ այցելության առիթով, որ հայտնի դարձնի Ամենայն Հայոց Հայրապետին, թե իրականում ինքը՝ Խորեն կաթողիկոսը նման բովանդակությամբ ճառ չի արտասանել Բոստոնում, և թե «Հայրենիք»-ի մի աշխատակից իր ուզածի պես խմբագրել է այն: Եթե ճիշտ է այդ իրողությունը, սպասելի է, որ Տաճն Կիլիկիո կաթողիկոսությունը հրապարակով հայտնի այդ մասին:

Այնքան ժամանակ, որ Խորեն կաթողիկոսը իր վրա է վերցնում պատասխանատվությունն այդ ճառի բովանդակության, նշանակում է, որ նա հրապարակով և պաշտոնապես իր վրա է վերցնում **կուսակցական հանգամանք և քաղաքական շեշտված դիրքավորում:** Կա՞ արդյոք աննրաժեշտություն մի անգամ ևս հիշեցնելու, որ նման դիրքավորումով և հայտարարություններով իզուր տեղը ստեղծվում են ծանր ու անել կացություններ հայ կյանքում: Եթե մեր կաթողիկոսներն ու մեր հոգևոր առաջնորդները նման բովանդակությամբ ճառերով և նման կուսակցական դիրքավորումներով հանդես գան, ապա այլևս ո՞րն է տարբերությունը հոգևորականների և աշխարհական, քաղաքական գործիչների միջև: Նման պայմաններում այլևս ինչպե՞ս հնարավոր կլինի կենսագործել **եկեղեցու միարար և խաղաղարար առաքելությունը:**

Այո՛, ճշմարիտ է, որ Տ. Տ. Խորեն կաթողիկոսի այդ ճառը մի պատ ցնցեց մեզ բոլորիս Մայր Աթոռում, և, ծանրորեն ճնշող մտահոգությանց ներքև, Հայոց Հայրապետը հեռագրեց Խորեն կաթողիկոսին 13 սեպտեմբերին, թե ի հետևանս այդ ճառով ստեղծված նոր կացության, բարվոք է, որ եպիսկոպոսաց ժողովը քննարկի «Հայ եկեղեցու միության ամրապնդում» հարցը, որպեսզի Կիլիկյան Աթոռի եպիսկոպոսների բերանից վերջապես լսենք, թե ի՞նչ է հետապնդում Անթիլիասը, դեպի ո՞ւր է գնում, ո՞րն է լինելու նրա ապագա

գործունեության ուղղությունը, ո՞րն է ճշմարտությունը Բոստոնի ճառի վերաբերյալ և այլն:

Եվ, ի վերջո, ինչո՞ւ Անթիլիասը այդքան պետք է սրտնեղեր. ընդհակառակն, դա լավ առիթ պետք է նկատեր, որ իր եպիսկոպոսները Մայր Աթոռում գումարված ժողովում գուցե կարողանային իսկզբ լուսաբանություններով փարատել ստեղծված մտահոգություններն ու կասկածները:

Ավելացնենք նաև, որ Տ. Տ. Խորեն կաթողիկոսը 14 սեպտեմբեր 1969 թ. «Այգ» օրաթերթին կատարած իր հայտարարություններով. եկավ առավել մտահոգիչ դարձնելու կացությունը, որովհետև այն բացահայտ խախտում եղավ Մայր Աթոռիս և Կիլիկյան Աթոռի (Գարեգին եպս. Սարգսյանի) միջև գոյացած համաձայնության, ըստ որի կիլիկյան եպիսկոպոսները պիտի մասնակցեին եպիսկոպոսաց ժողովին միմիայն իրենց Կիլիկյան Աթոռի միաբանի հանգամանքով: Տ. Տ. Խորեն կաթողիկոսի այդ հայտարարությունների Ամենայն Հայոց Հայրապետի սեպտեմբեր 13-ի հեռագրից հետո լինելը ըստ էության ոչինչ չի փոխում: Կայացած համաձայնության խախտումը մնում է խախտում, և, հետևաբար, Մայր Աթոռիս բոլոր առարկություններն այդ մասին մնում են ի զորու:

Զ. Երբ սեպտեմբերի 23-ին Մայր Աթոռում կարդացվեց Տ. Տ. Խորեն կաթողիկոսի հեռագիրը, որով նա հայտնում էր, թե Կիլիկյան Աթոռի եպիսկոպոսները չեն մասնակցելու եպիսկոպոսաց ժողովին, Ամենայն Հայոց Հայրապետը, միշտ հաշտարար ոգով, սեպտեմբեր 24-ին հեռագրեց՝ խոստանալով և վստահեցնելով Խորեն կաթողիկոսին, թե «Հեզ անհանգստացնող հարցը այստեղ կլուծենք համախորհուրդ Ձեր եպիսկոպոսներու հետ: Ձեզ կվստահեցնենք թե որևէ անհարմար կացություն չստեղծվի Ձեր Աթոռին համար: Մենք վերստին կհրավիրենք Ձեր եպիսկոպոսները Էջմիածին ժողովի: Եպիսկոպոսական ժողովը սեպտեմբեր 27-ին»:

Պարզ էր, որ Ամենայն Հայոց Հայրապետը ամեն գնով ցանկանում էր, որ կիլիկյան եպիսկոպոսները մասնակցեին ժողովին՝ վստահեցնելով, թե որևէ անհարմար կացություն չի ստեղծվի նրանց համար ս. Էջմիածնում: **Եթե կիլիկյան եպիսկոպոսները իրոք ճիշտ հաուկանային կացությունը, ուղիղ կարդային Ամենայն Հայոց Հայրապետի հոգին ու գային ս. Էջմիածին, հնարավոր կլիներ ամեն ինչ կարգավորել, առանց վեճի, առանց որևէ անախորժության՝ «Հայ եկեղեցու ներքին միության ամրապնդում» հարցի քննարկումը թողնելով եպիսկոպոսաց ժողովից հետո կազմվելիք հանձնախմբին:**

Այս էր, այո՛, իմաստը Վեհափառ Հայրապետի 24 սեպտեմբեր 1969 թվակիր հեռագրի:

Է. Եպիսկոպոսաց ժողովից հետո Ամենայն Հայոց Հայրապետը, առաջնորդված նույն ոգով և նկատի ունենալով նաև Տ. Տ. Խորեն կաթողիկոսի 26 օգոստոս 1969 թվակիր նամակով կատարված առաջարկությունը, այլև ընթացք տալով եպիսկոպոսաց ժողովի ցանկությանը, 30 հոկտեմբեր 1969-ին հրավիրեց Խորեն կաթողիկոսին, որ իր Աթոռի կողմից 2—3 լիազոր-ներկայացուցիչներ նշանակի և ուղարկի ս. Էջմիածին, որպեսզի Ամենայն Հայոց Հայրապետի նշանակած լիազորների հետ եղբայրորեն քննարկեն բոլոր այն կացությունները, որոնք ներքին տագնապներ և պառակտումներ են ստեղծել սփյուռքի եկեղեցու ծոցում շատ տեղեր, ու աշխատեն օրինական և գործնա-

կան լուծումներ գտնել՝ համրապնդումն հայ եկեղեցու ներքին միության և ի մխիթարություն հայ հավատացյալ ժողովրդի:

Իսկ ցավալի է հաստատել, որ Անթիլիասի գահակալը ցարդ չի ընդառաջել հայրապետական հրավերին և առհասարակ որևէ պատասխան չի տվել: Խիստ հատկանշական է, որ Անթիլիասի հրապարակած գրքույկն էլ **բնավ չի անդրադառնում Ամենայն Հայոց կաթողիկոսի այդ հրավեր-նամակին:**

Անհասկանալի է մնում, թե ինչո՞ւ Տ. Տ. Խորեն կաթողիկոսը եպիսկոպոսաց ժողովից առաջ կատարած իր առաջարկին ընթացք չի տալիս եպիսկոպոսաց ժողովից հետո: Հիմնականում որևէ նոր կացություն չի ստեղծվել եպիսկոպոսաց ժողովից հետո: Եկեղեցու բարեկարգության հարցերը, որոնք թվում են, թե առավել հետաքրքրում են Կիլիկյան Աթոռին, ուսումնասիրությանց ընթացքի մեջ են, որևէ որոշում չի տրվել, և քննարկումներն ու նախագծերի պատրաստման աշխատանքները դեռևս մեկ-երկու տարի կարող են տևել, աշխատանքներ, որոնց լավ է, ցանկալի է, որ մասնակցեն նաև կիլիկյան եպիսկոպոսները: **Հետևաբար ի՞նչ պատճառ կա, որ Անթիլիասի գահակալը մերժի 30 հոկտեմբեր 1969 թվի հայրապետական հրավերը:**

Ը. Անթիլիասում հրապարակված գրքույկը սահում-անցնում է Հայաստանյայց եկեղեցու ծոցում ծանր տագնապ ստեղծող և սփյուռքի հայության կյանքը քաքայող հիմնական հարցի վրայից՝ քողարկելով այն «մեր Աթոռի ըմբռնումը», «մեր հստակ տեսակետը» և այլ բացատրություններով:

Անթիլիասի «հստակ տեսակետ» և «ըմբռնում» ասածը իրոք նրա հստակ քաղաքականությունն է՝ սփյուռքի եկեղեցիներն ու ժողովուրդը ս. Էջմիածնից բաժանելու և Անթիլիասի Աթոռին միացնելու: **Հենց այդ հստակության մեջ է ամբողջ ողբերգությունը:** Այո՛, հստակ է անթիլիասյան կեցվածքն ու ըմբռնումը. այն է՝ խոսքի իսկ չնստել գրավված թեմերի մասին, խոսքի իսկ չնստել Միացյալ Նահանգաց և Մարսելի ապօրինի ողբերգական կացությանց մասին, խոսքի իսկ չնստել իր Աթոռի կանոնադրության 32-րդ և 33-րդ հոդվածների մասին, խոսքի իսկ չնստել իր հակապատմական և հակաօրինական հավասարազորության նորաթուխ տեսության մասին. **խոսքի իսկ չնստել՝ վերջ տալու համար հայ եկեղեցին և ժողովուրդը կիսելու և իրարից բաժանելու հակաազգային քաղաքականությանը:** Ահա բուն իմաստը և **միակ պատճառը Անթիլիասի մերժման՝ մասնակցելու եպիսկոպոսաց ժողովին, մերժման՝ Ամենայն Հայոց կաթողիկոսի 30 հոկտեմբեր 1969 թվակիր հրավերին:**

Թ. Մեզ վրա լուրջ տպավորություն չթողեց նաև Անթիլիասի հրատարակության «Հավելված»-ը և հատկապես Նյու-Ճըրզիի վերաբերյալ շարադրությունը: Եվ ինչքա՜ն տարօրինակ ու բռնազբոսիկ են հնչում անթիլիասական հրատարակության մեջ «եկեղեցական կանոնական խախտում», «հայ եկեղեցվո կարգերուն հատուկ դարավոր կառուցվածքի հարված», «կանոնական ակնբախ խախտում հայ եկեղեցվո ավանդության» բացականչությունները: Որտե՞ղ էր այս հրատարակության հեղինակը տասը և ավելի տարիներից ի վեր: Չէ՞ր տեսնում ու չի՞ տեսնում մեր եկեղեցու կանոնների և ավանդությանց և դարավոր կառուցվածքի խախտումները, հարվածները, մեկը մյուսի ետևից, ծրագրված ձևով կատարված Անթիլիասի կողմից, շատ ու ավելի ծանր հետևանքներով, քան Նյու-Ճըրզիի խախտումը, որը տեղական և մասնակի բնույթ է կրում, և որն արդեն դատապարտվել է Ամենայն Հայոց կաթողիկոսի կողմից ու հարցը փակվել «ոչ յօրինակ այլոց» վճռով, ինչպես վարվել էր նաև

հանգուցյալ Գևորգ Զ կաթողիկոսը նման երկու պարագաներում: Այս առթիվ հրապարակում ենք նաև Ամենայն Հայոց կաթողիկոսի և Տ. Տ. Խորեն կաթողիկոսի միջև փոխանակված նամակները:

Ժ. Եվ քանի որ կանոն, ավանդություն ու դարավոր եկեղեցական կարգերը հարգելու մասին է խոսքը, տեղին է հիշել Տ. Տ. Խորեն կաթողիկոսի վերջին հակաօրինական և Ամենայն Հայոց կաթողիկոսի հայրապետական իշխանության դեմ կատարած ծանրակշիռ ոտնձգությունը՝ Հայաստանը լքած, ուխտադրուժ և կարգալույծ Անդրեասյան նախկին քահանայի պարագան, մի մարդու, որին Անթիլիասի գահակալը վերականգնել է քահանայական կարգի մեջ, առանց գոնե ձևականորեն տեղեկություն ուզելու ազգիս Ընդհանրական Հայրապետից: Որտե՞ղ է Անթիլիասի օրինապահությունը, կարգապահությունն ու ավանդապահությունը:

Այս մասին Տ. Տ. Վազգեն կաթողիկոսը հատուկ նամակ ուղղեց Տ. Տ. Խորեն կաթողիկոսին, 12 փետրվար 1970 թվին, որը նույնպես մնաց անպատասխան:

Ահա թե ինչու, իրապես Անթիլիասի հետ Մայր Աթոռիս հարաբերությանց մասին գրեթե ասելիք բան չի մնացել այլևս:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հանրահայտ է և բոլորին ծանոթ Անթիլիասի քաղաքականությունը, այն է՝ բաժանել արտասահմանի հայ եկեղեցիները և հավատացյալ մեր ժողովրդին Մայր Աթոռ ս. Էջմիածնից, քաղաքականություն, որն ավելի քան տասը տարիներից ի վեր հետապնդվում է և գործադրվում քայլ առ քայլ. քաղաքականություն, որը հստակորեն արտահայտվում է նաև Կիլիկյան Աթոռի նոր կանոնադրության 32-րդ և 33-րդ հոդվածներում:

Անցյալ տարի սեպտեմբերին, Ամենայն Հայոց կաթողիկոսը եպիսկոպոսաց ժողովին հրավիրեց Տ. Տ. Խորեն կաթողիկոսին և Կիլիկյան Աթոռի եպիսկոպոսներին՝ հույս ունենալով, որ միասնաբար և եղբայրաբար հնարավոր կլինի քննարկել մեր եկեղեցու միության ամրապնդման հարցը և վերացնել աղետալի տագնապի պատճառները: Նրանք մերժեցին զբաղվել այդ ամենակենսական հարցի քննարկումով և, իրենց իսկ խոստովանությամբ, **այդ միակ պատճառով չեկան ս. Էջմիածին:**

Այնուհետև, ազգիս Ընդհանրական Հայրապետը հոկտեմբերի 30-ին հայրական սիրով նոր հրավեր ուղղեց Անթիլիասի գահակալին, որ ներկայացուցիչներ ուղարկի Մայր Աթոռ, նույն ցավոտ հարցի քննարկման համար, որպեսզի վերջ գտնի մեր եկեղեցու տագնապալի կացությունը: Ցարդ որևէ պատասխան չի ստացվել:

Այս բոլորը ստույգ ապացույցներ են, որ իրապես Անթիլիասը մտադիր չէ հրաժարվելու սփյուռքի հայ եկեղեցիները ս. Էջմիածնից բաժանելու իր քաղաքականությունից:

Ուրեմն, ամեն ինչ պարզ է ու հստակ արևի լույսի պես: Մնացյալը ավելորդ շատախոսություն է և անզոր փորձ՝ հանրային կարծիքը շեղելու բուն, հիմնական հարցից:

Այնքան ժամանակ, որ Անթիլիասը կշարունակի այս հակաեկեղեցական ու հակաազգային քաղաքականությունը, իր կանոնադրությամբ իսկ հռչակված, բոլորս մեր նվիրական պարտքը պետք է նկատենք պաշտպանել հայ

եկեղեցու միությունը և Մայր Աթոռ սուրբ Էջմիածնի գերագույն հեղինակությունը, իբրև կենտրոն և գլուխ Հայաստանյայց եկեղեցու:

Բայց մենք դեռևս հույս ունենք, որ Անթիլիասի ափերին բարերար մի շունչ կփչի, և նրա գահակալը, պատասխանելով Ամենայն Հայոց կաթողիկոսի հրավերին, ս. Էջմիածին կուղարկի իր լիազոր ներկայացուցիչներին, և միասնական ճիգերով ու եղբայրական փոխադարձ սիրով կվերացվեն ստեղծված տագնապի պատճառները ու կվերականգնվեն հայ եկեղեցու ներքին միությունն ու խաղաղ գործակցությունը օրինականության ոգով և հայ եկեղեցու ու ժողովրդի հիմնական և տևական շահերի գիտակցությամբ:

ՄԱՅՐ ԱԹՈՌԻ ԵՎ ԱՆԹԻԼԻԱՍԻ ՄԻՋԵՎ ՓՈԽԱՆԱԿՎԱԾ ՆԱՄԱԿՆԵՐ ԵՎ ՀԵՌԱԳՐԵՐ՝ Ս. ԷՋՄԻԱԾՆՈՒՄ 1969 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐ 27—ՀՈԿՏԵՄԲԵՐ 2-Ը ԿԱՅԱՑԱԾ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՑ ԺՈՂՈՎԻՆ ԿԻԼԻԿՅԱՆ ԱԹՈՌԻ ԵՊԻՍԿՈՊՈՍՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Անթիլիաս, 15 մարտ 1968

ՆՈՐԻՆ Ս. ՕԾՈՒԹՅՈՒՆ
ՎԵՀԱՓԱՌ Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին

Սիրելի Եղբայր ի Քրիստոս,

Ուրախությունը ունինք այսու նամակով անգամ մը ևս ողջունելու Ձեր Վեհափառ Եղբայրությունը և ի խորոց սրտի մաղթելու Ձեզի քաջառողջ կյանք, բազմաբեղուն գործունեություն և երջանիկ գահակալություն:

Երկար տարիներե ի վեր Մեր մտածումներուն և խոսակցությանց առարկա եղած են մեր եկեղեցվո հոգևոր առաքելության հետ կապված կարգ մը հարցեր, որոնց քննարկումը, միասնական ճիգերով, կհավատանք որ մեծապես պիտի սատարե Հայց. եկեղեցու զորացումին, հայ քրիստոնեական հավատքի ծաղկումին և առհասարակ հայ ժողովուրդի ազգային-եկեղեցական կյանքի բարգավաճումին:

Վերջին տարիներուն, հստակորեն կնկատենք որ քրիստոնեական եկեղեցիները հաճախ առիթներ կստեղծեն և միջոցներ կգտնեն իրենց առաքելությունը Ի դարու աշխարհին մեջ վերստին մտածելու և որոշ պատշաճեցում-

ներ կատարելու ի խնդիր քրիստոնեական սուրբ հավատքի առավել ևս աճումին և ազդեցության մարդոց կյանքին և գործունեության մեջ: Վերանորոգումի և վերակենսավորման գեղեցիկ շարժում մը կա քրիստոնեական աշխարհին մեջ, որ ապահովաբար ամենեն հատկանշական և հուսադրիչ երևույթն է Ի դարու եկեղեցվո պատմության:

Հայց. եկեղեցին վերջին հիսուն տարիներու ընթացքին միշտ ունեցած է բարեկարգության հարց մը, որուն մասին ոչ միայն անհատներ, հոգևորական թե աշխարհական, գրած են և հրապարակավ արտահայտված, այլև ու մանավանդ մեր եկեղեցին պաշտոնապես անդրադարձած է անոր, մասնավորաբար երջանկահիշատակ Տ. Տ. Խորեն Ա Ամենայն Հայոց կաթողիկոսի 1937-ի սրբատառ կոնդակով (1 օգոստոս, թիվ 417), ինչպես նաև մեր նվիրապետական ս. Աթոռներու Գահակալներուն կողմե եղած արտահայտություններով:

Բնականորեն ըստ ինքյան բարդ խնդիր մըն է Հայց. եկեղեցվո բարեկարգության հարցը: Երկար տարիներ անհրաժեշտ են զայն ամբողջականորեն և խորապես ուսումնասիրելու և ըստ այնմ եզրակացություններու հանգելու համար: Բայց կան որոշ հարցեր որոնք անմիջական ուսումնասիրության և կարգադրության կկարոտին, որովհետև, մեր հավատացյալ ժողովուրդին համար այլևս դարձած են առօրյա հարցեր, որոնց մասին հանախ կիսավի երբեմն տեղի տալով առողջ նախանձախնդրութենե բխող արդար դժգոհություններու և երբեմն ալ առիթ տալով անհիմն տեսակետներու և անտեղի քննադատություններու:

Արդարև, մեր եկեղեցվո ներկայի կյանքին և դրության մեջ կան որոշ ավանդություններ և սովորություններ, որոնք զուտ կրոնական, հոգևոր և ծիսական բնույթ ունին և ժամանակի ընթացքին ալ արդեն կրած են ինչ-ինչ փոփոխություններ մեր ժողովուրդի կյանքին պատշաճեցման և եկեղեցվո առաքելության արդյունավորության սկզբունքներեն և առաջադրություններեն թելադրված: Այդպիսի խնդիրներ են, օրինակի համար, Մեծ պահոց և առհասարակ պահեցողության հարցը՝ թե տևողության, թե բովանդակության և թե կարգավորման եղանակին տեսակետներեն դիտված, **ս. պսակի արգիլյալ օրերու, Աստվածահայտնության տոնի թվականի** և այլ նմանօրինակ կամ հարակից խնդիրներ:

Մենք հույս ունեինք, որ գերշ. տ. Տաճատ ս. արքեպիսկոպոսի և գերշ. տ. Գարեգին ս. եպիսկոպոսի 1967-ի հունիսին ծրագրված մեկնումը ի ս. Էջմիածին, Ապրիլյան եղեռնի զոհերուն կանոնական սրբացումի հարցի քննարկությամբ զբաղվելու համար՝ պիտի ըլլար գեղեցիկ առիթ մը արծարծելու վերեվ նշված խնդիրները և անոնց հարակից ու նմանօրինակ հարցեր, որոնց համար անհրաժեշտ է որ մեր եկեղեցին պաշտոնապես ընե որոշ տնօրինություններ: Բայց երկու սրբազաններուն ս. Էջմիածին մեկնումը կարելի չեղավ խորհրդակցական ժողովին հետաձգման պատճառով:

Այժմ, հարմար առիթը նկատելով գերշ. տ. Գարեգին ս. եպիսկոպոսին ուղևորությունը ի Զագորսկ, Մոսկվա, միջեկեղեցական խորհրդակցական ժողովի մը մասնակցելու համար, **«Եկեղեցի և ընկերություն»** նյութին շուրջ, (17—28 մարտ), փափագեցանք որ այս նմանօրինակ հարցերու շուրջ ինք հայտնե Ձեզի Մեր տեսակետներն ու ընդհանուր տրամադրությունները՝ անձամբ այցելելով Ձերդ Վեհափառության և բերելով Ձեզի Մեր եղբայրական սիրո ջերմ ողջույնը և սրտալից մաղթանքները Ձեր արևշատության և ս. Էջմիածնի պայծառության համար:

Մեծապես ուրախ պիտի ըլլանք իմանալով Ձեր տեսակետները վերոհիշյալ հարցերու, ինչպես նաև անոնց լուծումը գտնելու մասին, որպեսզի նման բարեկարգչական ջանքերով առավել ևս զորանա մեր եկեղեցին ի սիյուռս աշխարհի:

Կաղոթենք առ Ամենաբարին Աստված որ Ձեզ զորացնե Ձեր նվիրական առաքելության մեջ պարգևելով Ձեզի անսահման ուժ և հոգեկան արիություն փառավորապես արդյունավորելու համար Ձեր գահակալությունը ի ծառայություն մեր ս. եկեղեցվո և ի պանծացումն մեր ազնվական հայ ազգին:

Մնամ եղբայրական սիրո ջերմ ողջունիվ,

Աղոթակից՝

ԽՈՐԵՆ Ա.
ԿԱԹՈՂԻԿՈՍ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈ

Էջմիածին, 9 ապրիլ 1968 թ.

Ն. Ս. ՕԾՈՒԹՅՈՒՆ
Տ. Տ. ԽՈՐԵՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈ

Ա ն թ ի լ ի ա ս

Մեզի ուրախություն պատճառեց այցելությունը Մայր Աթոռ, գերաշնորհ տ. Գարեգին եպիսկոպոս Սարգիսյանին, որ մեկ շաբաթ եղավ Մեր անձնական հյուրը:

Տ. Գարեգին սրբազան հանձնեց Մեզի Ձեր 15 մարտ 1968 թվակիր նամակը ուր կնշեք անհրաժեշտությունը որոշ ծիսական բարեկարգումներ կատարելու մեր եկեղեցվո ծոցին մեջ, ինչպիսիք են՝ Մեծի պահոց և առհասարակ պահեցողության, ս. պսակի արգիլյալ օրերու, Աստվածահայտնության թվականի և այլ նման հարցեր:

Այս առնչությամբ կկամենայինք Ձեզի հայտնի դարձնել թե վերջին տարիներու ընթացքին՝ 1956-ին և 1962-ին եպիսկոպոսական ժողովներու և անցյալ տարի խորհրդակցությանց առարկա դարձած ըլլալով վերոհիշյալ հարցերը, Մենք որոշած ենք արդեն զանոնք հանգամանորեն քննարկման ենթարկելու եպիսկոպոսական ժողովին մեջ, զոր ծրագրած ենք գումարել հառաջիկա տարի հոկտեմբերին ս. Էջմիածնի մեջ ս. մյուռոնի օրհնության առթիվ:

Հուսով ենք թե այդ ժողովին իրենց մասնակցությունը կբերեն նաև՝ Ձեր Աթոռի եպիսկոպոսները:

Ընդունեցեք Մեր եղբայրական ողջույնը սուրբ Էջմիածնեն, բարի մաղթանքներով Ձեր քաջառողջության և արևշատության համար:

ՎԱԶԳԵՆ Ա.
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Անթիլիաս, 27 մայիս 1968 թ.

ՆՈՐԻՆ Ս. ՕԾՈՒԹՅՈՒՆ
ՎԵՀԱՓԱՌ Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին

Սիրելի Եղբայր ի Քրիստոս,

Շնորհակալությամբ ստացանք Ձեր 9 ապրիլ 1968 թվակիր և 367 թվահամար գրությունը որպես պատասխանի Մեր Ձեզի ուղղած 15 մարտ 1968 թվակիր և 120/68 թվահամար գրության, ուր արծարծեր էինք Հայց. մեր ս. եկեղեցվո ներկա կյանքին հետ սերտ առնչություն ունեցող և կրոնաժիսական բնույթ կրող կարգ մը այժմեական հարցեր:

Շատ ուրախ ենք որ Ձեր Ս. Օծությունն ալ հիշատակված այդ հարցերուն նկատմամբ ցույց տված է ջերմ հետաքրքրություն և նախանձախնդիր շահագրգռություն հօգուտ մեր ս. եկեղեցվո զորացումին և անոր առաքելության արդյունավորման:

Բարենորոգչական այդ հարցերով և անոնց հարակից կամ նմանօրինակ խնդիրներով զբաղելու համար, ս. Աթոռիս Ազգային կեդրոնական վարչության հետ երկար խորհրդակցելե հետո, եկանք հետևյալ եզրակացության որպես լավագույն միջոց և ուղիղ ճամփա անոնց բարվոք լուծումին համար:

Նկատի ունենալով որ ըստ Հայց. առաքելական ս. եկեղեցվո հարազատ և ժողովրդավար ոգիին և ավանդության ազգային-եկեղեցական համագումարը է որ պետք է պարտն ու պատշաճը տնօրինե և սահմանե հարկ եղած կանոնները այդ հարցերու կարգադրության համար,

Այսու գրությամբ կառաջարկենք նախ կազմել հոգևորական և աշխարհական մասնագետներե բաղկացյալ հանձնախումբ մը, որուն համար Ձերդ Վեհափառությունը նշանակե 3—4 անդամներ և Մենք նշանակենք 2—3 անդամներ, որպեսզի անոնք որոշյալ ժամանակամիջոցի մը ընթացքին քննական ուսումնասիրություններով պարզաբանեն, վերլուծեն նշանակյալ հարցերը և գրավոր զեկույցներ ներկայացնեն թե Ձերդ Սրբության և թե Մեզի որպեսզի Դուք և Մենք ներկայացուցած տեղեկագիրներու հիման վրա խորհրդակցինք մեր թեմական եպիսկոպոսներուն և պատկան ազգային-եկեղեցական վարչությանց հետ և ապա մեր եզրակացությունները հղենք ազգային-եկեղեցական համագումարին ի քննարկումն և ի պատշաճ տնօրինումն:

Մենք արդեն ի մտի ունինք որոշ անձեր նման հանձնախումբի մը անդամակցելու համար. անձեր՝ որոնք հատուկ պրպտումներ կկատարեն որպես նախապատրաստական աշխատանք ուսումնասիրության մը համար:

Մենք, առաջնորդվելով Հայց. ս. եկեղեցվո միության ոգիեն և կաթողիկոսական զույգ Աթոռներու միջև գործակցության սկզբունքեն, մեծ հույս ունինք որ լիովին կհաջողինք կենսական և այլևս անհետաձգելի դարձած այս գործը միասնաբար ի գլուխ հանել՝ ի պայծառություն մեր ս. եկեղեցվո և ի բարգավաճումն մեր պատվական հայ ժողովուրդին: Պետք է արագ և ապահով, խոհեմ և ազատամիտ ոգիով շարժիլ այս դարուն՝ զորացնելու համար մեր եկեղեցին նման վերանորոգիչ կարգադրություններով, միանգամայն ամուր և անխախտ պահելով հայ եկեղեցվո էական ավանդությունները: Մեր ժողովուրդի

հոգևոր կյանքին աղաղակող կարիքները կպահանջեն որ չուշանա և չդանդաղի բարեհորոգչական այս սուրբ ու նվիրական գործը:

Ի խորոց սրտի կաղոթենք առ Բարձրյալն Աստուած որ շնորհե Ձեզի քաջառողջ և երջանկալից երկար կյանք որպեսզի կատարյալ հաջողությամբ պսակվին Ձեր ազգանվեր բոլոր ճիգերն ու ջանքերը ի շինություն հայրենի մեր աշխարհին, ի պայծառություն մեր ս. Էջմիածնին և ի վառավորումն մեր պանծալի ս. եկեղեցվույն:

Սպասելով Ձեր պատասխանին,

Մնամ եղբայրական սիրո ջերմ ողջունիվ,

Աղոթակից՝

ԽՈՐԵՆ Ա

ԿԱԹՈՂԻԿՈՍ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈ

Էջմիածին, 21 նոյեմբեր 1968 թ.

Ն. Ս. ՕԾՈՒԹՅՈՒՆ

Տ. Տ. ԽՈՐԵՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ

ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈ

Ա ն թ ի լ ի ա ս

Այսու Մեր գրով գոհունակությամբ կհաստատենք Ձեր 27 մայիս թվակիր նամակը, որով Մեզի կհայտնեիք Ձեր մտածումները ի մասին որոշ ծիսական և տոմարական բարեկարգումներու մեր եկեղեցիեն ներս, ընդգծելով անոնց այժմեությունը:

Ինչպես նշած էինք Մեր 9 ապրիլ 1968 թվակիր նամակով, հիշյալ հարցերը տակավին 1956-են սկսյալ, եղած են առարկան Մեր և մեր եպիսկոպոսական քանի մը ժողովներու քննարկման, հարցեր որոնք այսօր ևս կհանդիսանան բոլորիս ուշադրության կեդրոնը, նկատելով որ իրոք ժամանակն է արդեն վերջնական եզրակացությանց հանգելու և բարվոք լուծումներ տնօրինելու, ի շինություն մեր ս. եկեղեցվո:

Այս իսկ նպատակով Մենք որոշած ենք հառաջիկա աշնան, սրբալույս մյուռոնի օրհնության առթիվ, եպիսկոպոսական ժողով գումարել Մայր Աթոռիս մեջ:

Այս պահուս մեր եկեղեցվո կյանքի ներկա պայմաններուն մեջ, երբ կխոսինք սակայն ներքին բարեկարգությանց մասին, չենք կրնար չանդրադառնալ այն տխուր կացության որուն մեջ կգտնվի մեր եկեղեցին 1956-են սկսյալ, և հատկապես 1963-ի մեր ողջագուրումեն հետո, և որ կհանդիսանա սփյուռքի մեջ հայ եկեղեցական կյանքի ամենամեծ անբարեկարգությունը:

Այսօր, երբ սկսած ենք մտածել մեր եկեղեցվո ներքին բարեկարգությանց մասին, ամեն բանե առաջ պետք է մտահոգվինք և աշխատինք միասնական ճիգերով բարեկարգել մեր եկեղեցվո նվիրապետական, կանոնական և սյատմականորեն հաստատված կարգը և վերահաստատել մեկությունը և միությունը մեր եկեղեցիին, որով առաջնորդված են մեր նախնիք դարեր շարունակ, ս. Գրիգոր Լուսավորչի իսկ օրերեն սկսյալ:

Կխորհինք թե իրապես ժամանակն է, որ Մեծի Տանն Կիլիկիո Աթոռը, անդրադառնա այս ճշմարտության և գործնապես ապացույցը տա օրինականության, ճամփա բանալով միության վերահաստատման, ներքին խաղաղության և եղբայրական գործակցության մեր եկեղեցվո ծոցին մեջ:

Այս հարցերուն վերաբերյալ հայտնի են Ձեզի Մեր գերագույն ճիգերը որ ի գործ դրինք 1963-ին Երուսաղեմի մեր ողջագուրման օրերուն: Հայտնի են Ձեզի նաև Մեր հոգեկան խռովքը և ծանր հուսախաբությունները, որ Մենք ապրեցանք 1963-են հետո ի տես Ձեր Աթոռի վարած քաղաքականության, և որոնց առարկան հանդիսացան Ձեզի ուղղված Մեր նամակները՝ 14 մարտ, 5 հունիս և 27 օգոստոս 1964 թվակիր, ինչպես և 12 հոկտեմբեր և 14 դեկտեմբեր 1965 թվակիր, որոնք մնացին անարձագանք:

Մեր վրա շատ ծանր ազդեցին մանավանդ ողջագուրումեն հետո, ծանոթ ոգին և գործելակերպը, որով Ձեր Աթոռը՝ հանրահայտորեն և առավել չափով հակադրվեցավ Մայր Աթոռ ս. Էջմիածնին մանավանդ՝

ա. Հավասարազորության նորելուկ տեսությամբ մը, որով փորձ կըլլա հայ եկեղեցին և նվիրապետությունը վերածելու երկգլխանի մարմնի մը, Անթիլիասի Աթոռը հավասարազոր նկատելով Ամենայն Հայոց Հայրապետական Աթոռին, և «Ամենայն Հայոց» տիտղոսը ավելացնելով կիլիկյան կաթողիկոսի անունին:

բ. Միջեկեղեցական կյանքի մակարդակի վրա Կիլիկյան կաթողիկոսությունը ներկայանալով ու գործելով իբրև առանձին Աթոռ, անջատ Հայաստանյայց եկեղեցվո միությունեն, հակադրվելով Մայր Աթոռին և Ամենայն Հայոց Հայրապետության: Այսպիսով փաստորեն, միջեկեղեցական հարաբերությանց և ժողովներու մեջ, չկա մեկ հայ եկեղեցի, այլ կան երկու հայ եկեղեցիներ, երկու անջատ և հանախ իրարու հակադրվող պատվիրակություններ:

գ. Ձեր Աթոռի նոր կանոնադրության 32-րդ հոդվածով, որով ս. Էջմիածնի իշխանության տակ գտնվող պատմական թեմերը՝ Պարսկաստանի, Մ. Նահանգներու և Հունաստանի, պաշտոնապես հոչակված են Մայր Աթոռ ս. Էջմիածնեն բաժնված և միացած Անթիլիասին, և նույն Ձեր կանոնադրության 33-րդ հոդվածով, որ հրավեր կկարդա նաև այլ թեմերու Անթիլիասին միանալու: Այս հոդվածներով Ձեր Աթոռը պաշտոնապես և տևապես հարձակողական դիրքերու վրա կգտնվի Մայր Աթոռիս հանդեպ:

դ. Նշանակումովը Մարսիլիո մեր թեմեն ներս Ձեր միաբան եպիսկոպոսի մը, առանց Մեր գիտության և համաձայնության:

Այս բոլորի հետևանքը ծանոթ է Ձեզի և համայն հայության: Սփյուռքի մեջ գրեթե ամեն տեղ հայ եկեղեցվո ծոցին մեջ, կտիրե անկայուն և խռովահույզ վիճակ, պառակտումներ և նոր պառակտումներու սպառնալիքներ:

Ահա թե ինչո՞ւ, երբ կմտածենք բարեկարգել մեր եկեղեցին և մխիթարել մեր հավատացյալ ժողովուրդը, նախ պարտինք վերջ տալ այս անտանելի կացության, վերահաստատումովը մեր եկեղեցվո և նվիրապետության ծոցին մեջ, միության, օրինականության և խաղաղության:

Այստեղ գուցե հիշենք ավելորդ անգամ մը ևս, թե Մայր Աթոռս երբեք չէ մտածած և չի մտածեր որևէ չափով տկարացնել Կիլիկյան Աթոռը կամ սահմանափակել անոր իրավասությունները, և ներքին ինքնավար ղեկավարությունը: Մենք անշեղ կերպով կհետևինք Մեզ նախորդող Հայրապետներու օրինակին, և կհարգենք Ձեր Աթոռին իշխանությունը՝ Լիբանանի, Սուրիո և Կիպրոսի թեմերուն վրա, որոնք 1928-ին, ս. Էջմիածնի Մայր Աթոռիս տնօրի-

նությամբ, Երուսաղեմի հայոց պատրիարքության կողմե տրամադրվեցան Անթիլիաս հաստատված Կիլիկյան Աթոռին:

Մեր օրերուն; մեր եկեղեցվո բարեկարգությանց առաջնահերթ հարցը, բարեկարգումն է սույն ողբալի կացության, եկեղեցական օրինականության և ազգային միասնության հրամայականներու լույսին տակ: Ինչքան ատեն Ձեր Աթոռը կշարունակե հակադրվիլ Մայր Աթոռիս՝ հայ եկեղեցվո կյանքեն ներս և միջեկեղեցական կյանքի մակարդակի վրա, ինչքան ատեն Ձեր Աթոռը կշարունակե արտասահմանի հայ թեմերը պառակտելու և ս. Էջմիածնեն բաժնելու իր քաղաքականությունը, բնականորեն հետզհետե կքայքայվի միությունը մեր եկեղեցիին և նվիրապետության սուրբ մարմնույն, ու հետզհետե կխորանա խռովահույզ հոգեկան վիճակը մեր պանդուխտ ժողովուրդին:

Հետևաբար, Մենք եղբայրաբար վերստին կոչ կընենք Ձերդ Սրբության. որ անդրադառնաք մանավանդ վերև հիշված չորս արարքներուն որոնք ի գործ դրվեցան Ձեր Աթոռին կողմե 1963-ի ողջագուրումեն հետո, որպեսզի խաղաղություն ըլլա և սկիզբ առնե շրջան մը համերաշխ ու շինարար գործակցության մեր պանդուխտ ժողովուրդի եկեղեցական, կրթական, մշակութային կյանքեն ներս: Որպեսզի վերահաստատվի միությունը մեր եկեղեցիին և մեր նվիրապետության, և ճանապարհ հարթվի գործակցության՝ Մայր Աթոռիս միջև, այնպես ինչպես ցայսօր գոյություն ունին այդ օրինական կացությունը և համերաշխ գործակցությունը՝ Մայր Աթոռիս և Երուսաղեմի ու Կ. Պոլսո մեր պատրիարքական աթոռներուն միջև:

Միություն, օրինականություն և խաղաղություն, այս թող ըլլա Ձեր նշանաբանը այժմ և միշտ:

Այսպես է որ պիտի հաղթահարենք մեր ամենուս առաջ դրված հայրցները ու դժվարությունները:

Այսպես է որ պիտի ամրապնդենք և բարձրացնենք հեղինակությունը մեր ս. եկեղեցիին հաչս մեր ազգին և հաչս մեր քույր եկեղեցիներուն:

«Զխաղաղութեան զհետ երթայք ընդ ամենեսին» (Եբր. ԺԳ. 14) և «Եղ. բայրսիրութիւն հաստատեսցէ առ Ձեզ» (Եբր. ԺԳ. 1):

Քաջառողջության սրտաբուխ մաղթանքներով և սիրով ի Քրիստոս՝

ՎԱԶԳԵՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Անթիլիաս, 5 ապրիլ 1969 թ.

ՆՈՐԻՆ Ս. ՕԾՈՒԹՅՈՒՆ
ՎԵՀԱՓԱՌ Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին

Սիրեցյալ Եղբայր ի Քրիստոս,

Ստացած ենք, իր ատենին, Ձեր 21 նոյեմբեր 1968 թվակիր և 1002 թվահամար նամակը ի պատասխանի Մեր 27 մայիս 1968 թվակիր և 237/68 թվահամար գրության, որուն մեջ հանգամանորեն անդրադարձած էինք մեր Հայց.

ս. եկեղեցվո հատուկ բարեկորոգումներու հարցին և առ այդ հայտնելն ետք Մեր տեսակետները ընդհանուր ձևով՝ առաջարկած էինք Ձերդ Վեհափառությանն հարցերու քննության և լուծման հատուկ ընթացք մը, որ կհամապատասխաներ մեր եկեղեցվո ոգիին և դրության և միանգամայն կարտահայտեր միասնական գործակցության սկզբունքը:

Առաջնորդված այդ բարեկորոգումները հարմարագույն և օգտակարագույն ձևով իրականացած տեսնելու նախանձախնդրությունն՝ բնականորեն խոր ցավ պատճառեց Մեզի այն իրողությունը, որ Մեր արտահայտած մտածումներուն և առաջարկած գործակցության սկզբունքին և ձևին անդրադառնալու փոխարեն այս առիթով կհարուցանեիք հարցեր և կուտայիք մեկնաբանություններ, որոնք աղերս չունեին բարեկորոգումներու հասարակաց և ընդհանրական հարցին հետ, որուն քննարկումը և լուծման ձևերու որոնումը՝ գործակցության եղբայրական ոգիով՝ դարձած են ստիպողական պարտք մեր եկեղեցիին համար:

Մեր այս գրությամբ, հաստատելե ետք Մեր արտահայտած տեսակետները 15 մարտ և 27 մայիս 1968 թվակիր նամակներուն մեջ, կուգանք Ձերդ սիրեցյալ Եղբայրության բարձր նկատողության հանձնել հետևյալ կետերը.

1. Հետևելով անցյալի ավանդության և հատկապես ս. Էջմիածնի և Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսությանց միջև հայ եկեղեցվո բարեկարգումին առընչությամբ ցարդ կիրարկված գործակցության սկզբունքին, ինչպես նաև նկատի ունենալով Ձեր երջանկահիշատակ նախորդներու նախաձեռնությունները այս ուղղությամբ, Մենք անհրաժեշտ կգտնենք, և հույժ փափագելի, որ շարունակվին միասնական աշխատանքի այդ ոգին և ընթացքը թե հարցերու քննության և թե անոնց մասին որոշումներու հանգումի հանգրվաններուն վրա: Մեզի համար մեր եկեղեցվո խոր ու անքակտելի միությունը այնքան նվիրական է որ ոևէ հարց որ կապ ունի անոր դավանական, ծիսական, կարգապահական, նվիրապետական կառույցին հետ պետք է նկատի առնվի հայ եկեղեցվո ամբողջականության շրջագծին մեջ: Միակողմանի ոևէ աշխատանք և ոևէ շարժում կրնա վտանգել այդ միությունն ու ամբողջականությունը, ինչ որ, կհավատանք, ցանկալի չէ ոևէ հայ մարդու համար որ սեր ունի իր դարավոր և նահատակ եկեղեցվույն հանդեպ: Ուստի, պատմության առջև կեցած, անգամ մը ևս կհայտնենք Ձերդ սիրեցյալ Եղբայրության, Կիլիկյան մեր ս. Աթոռին եղբայրական գործակցության տրամադրությունը, համաձայն այն սկզբունքներուն և տեսակետներուն զորս արտահայտած ենք Մեր վերոհիշյալ զույգ նամակներուն մեջ: Կհուսանք որ՝ մղված հայ եկեղեցվո միության սկզբունքեն և առաջնորդված հայ ժողովուրդի գերագույն շահերեն՝ հայ եկեղեցվո բարեկորոգման այնքան հիմնական գործին մեջ չի խախտվիր միասնական գործակցության ավանդական խարիսխը, որուն խախտումը կրնա այնքան բարդ դժվարություններու առաջնորդել և նորանոր հարցերու և վեճերու դուռ բանալ, որոնցմե պետք է զերծ պահել մեր պատվական հայ ժողովուրդը մասնավորաբար սփյուռքի մեջ ուր ան այնքան բուռն զոհողություններով լի պայքար կմղե իր գոյատևման համար, որուն հիմնական ույժերեն մեկը մեր դարավոր, և անբաժանելի եկեղեցին է:

2. Կուզեինք նաև հայտնել Ձերդ սիրեցյալ Եղբայրության որ գործակցության այս ոգիեն թելադրված և ապագայի հուսալից հեռանկարներով այդ գործակցությունը դրականապես արտահայտելու կամքեն մղված՝ և միանգամայն նկատելով որ դուք արդեն հրավիրած եք խորհրդակցական ժողով մը զբաղելու համար բարեկորոգումներու այս նույն հարցով, այն ինչ որ հայտներ

Էինք Մեր 27 մայիս 1968 թվակիր նամակով նախապատրաստական աշխատանքներ տանելու մասին, ավելի գործնական և պաշտոնական արտահայտություն տվինք ամոր՝ կազմելով հատուկ հանձնախումբ մը երեք հոգևորականներե և չորս աշխարհականներե բաղկացած (գերշ. տ. Տաճատ ս. արքեպիսկոպոս, գերշ. տ. Գարեգին ս .եպիսկոպոս, հոգշ. տ. Մեսրոպ վրդ. Աշճյան, տիար Հակոբ Տեր-Մելքոնյան, տիար Վահե Սեթյան, տիար Բյուզանդ Եղիայան և տիար Գրիգոր Պողարյան), որոնք այժմ կկատարեն ուսումնասիրություններ, որոնց արդյունքը պիտի հայտնեն Մեզի որպեսզի զայն նկատի ունենանք պաշտոնապես մեր կաթողիկոսության վերին իշխանության, Ազգային ընդհ. ժողովին մեջ, պատշաճ ժամանակին: Լիահույս ենք որ այս հանձնախումբի աշխատանքները և Ձեր կողմե հրավիրված խորհրդակցական ժողովին արդյունքները կներդաշնակվին փոխադարձ խորհրդակցություններով որպեսզի կարելի ըլլա զանոնք ներկայացնել ազգային-եկեղեցական համագումարին, որ գերագույն հեղինակությունն է Հայց. եկեղեցվո մեջ, առ ի քննություն և ի պատշաճ տնօրինումն:

Ի վերջ բանիս, պարտք կզգանք անգամ մը ևս շեշտել կարևորությունը բարեփոխումներու հատուկ աշխատանքներուն՝ ի խնդիր մեր եկեղեցվո և ժողովուրդի պայծառացման և հոգևոր, ազգային զորացումին: Վստահ ենք որ այս ընդհանրական հարցին առջև կչքանան բոլոր տեսակի ժամանակավոր բնույթ կրող տարակարծությունները և եղբայրական սիրո մթնոլորտի մը մեջ գործակցության ոգին, այնպես ինչպես ան արտահայտվեցավ այնքան գեղեցիկ և օրինակելի ձևով Երուսաղեմի մեջ 1963-ի հոկտեմբերին: Կսպասենք և կհուսանք որ այդ ոգին իր բարերար ազդեցությունը կշարունակե հայ եկեղեցվո և ժողովուրդի կյանքին մեջ ներկայիս և ապագային ի պայծառություն մեր ս. եկեղեցվո և ի շինություն ու բարգավաճում ազգիս հայոց:

Ի բոլոր սրտե կաղոթենք որ Ամենաբարին Աստված պարգևե Ձեզի մը շտատև առողջություն և երջանկալից երկար կյանք որպեսզի Ձեր եկեղեցական ճիգերն ու ջանքերը հաջողությամբ պսակվին ի պայծառություն, ի զորացումն և ի փառավորումն Հայց. առաքելական մեր ս. եկեղեցվո:

Մնամ եղբայրական սիրո ջերմ ողջունիվ,

Աղոթակից՝

ԽՈՐԵՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈ

Էջմիածին, 3 ապրիլ 1969 թ.

Ն. Ս. ՕԾՈՒԹՅՈՒՆ
Տ. Տ. ԽՈՐԵՆ Ա-ի
ԿԱԹՈՂԻԿՈՍ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈ

Անթիլիաս

Ծնորհազարդ Եղբայր,

Այսու Մեր գրով կհաստատենք Ձեր 15 մարտ 1968 և 27 մայիս 1968 թվակիր նամակները, ինչպես և Մեր 9 ապրիլ 1968 և 21 նոյեմբեր 1968 թվա-

կիր գրությունները, որոնց առարկան հանդիսացան կարգ մը հարցեր մեր եկեղեցվո ներքին բարեկարգությանց վերաբերյալ: Մեր 9 ապրիլ 1968 թվակիր նամակով Ձեզի հայտներ էինք թե այդ հարցերը Մեր ալ մտահոգությանց կեդրոնը կգտնվին և կնկատենք զանոնք անհետաձգելի, և թե մտադրված ենք 1969-ի աշնան հրավիրել Հայաստանյայց Եկեղեցվո եպիսկոպոսներու ժողով ս. Էջմիածնի մեջ: Եվ նույն Մեր նամակին մեջ հույս կհայտնեինք թե «ժողովին իրենց մասնակցությունը կբերեն նաև Ձեր Աթոռի միաբան եպիսկոպոսները»:

Մենք թեև կսպասեինք Մեր 21 նոյեմբեր 1968 թվակիր կարևոր նամակի պատասխանին, զոր տակավին չենք ստացած, այսու կփութանք Ձեզի հաղորդել թե Մեր նախատեսած վերոհիշյալ եպիսկոպոսական ժողովը որոշած ենք գումարել հառաջիկա սեպտեմբերի 25-են հոկտեմբերի 2-ը Մայր Աթոռիս մեջ, սրբալույս մյուռոնի օրհնության առթիվ, որ տեղի պիտի ունենա կիրակի 5 հոկտեմբեր 1969-ին:

Արդ, հաճելի է Մեզի եղբայրական հրավեր ուղղել Ձերդ Սրբության, որպեսզի Ձեր գործոն մասնակցությունը բերեք Հայաստանյայց եկեղեցվո եպիսկոպոսներու ժողովին, ի գլուխ Ձեր Աթոռի միաբան եպիսկոպոսներուն:

Մեր իղձն է որ մեր եկեղեցվո առաջ դրված հարցերու ուսումնասիրությունը, քննարկումը և ժողովի եզրակացություններն ու բանաձևումները ըլլան այնպիսի մակարդակի վրա որ՝ թե՛ հաչս մեր ժողովուրդին և թե՛ հաչս քույր եկեղեցիներուն, բարձր պահվի Հայաստանյայց առաքելական եկեղեցվո հոգեվոր ու բարոյական հեղինակությունը: Ցանկալի է Մեզի վստահ ըլլալ թե Ձերդ Սրբությունը այս առթիվ պիտի բերե իր թանկագին նպաստը ի շինություն հայ հավատացյալ ժողովուրդի հոգևոր կյանքին:

Ներփակ Ձեզի կուղարկենք ժողովի օրակարգի նախագիծը, որ տակավին հրապարակելի չէ, զի կարող է որոշ փոփոխություններ կրել:

Կներփակենք նաև պաշտոնական հրավերները ուղղյալ Ձեր Աթոռի բոլոր եպիսկոպոսներուն: Կխորհինք թե պատշաճը կտնօրինեք որպեսզի հնարավոր դառնա բոլորի մասնակցությունը ժողովին:

Նույն հրավերը, նույն օրակարգով, հղած ենք նաև Երուսաղեմի և Կ. Պոլսո հայոց պատրիարքներուն և Մայր Աթոռիս միաբան բոլոր եպիսկոպոսներուն, հանձնարարելով որ այժմեն իսկ հետամուտ ըլլան բազմակողմանիորեն ուսումնասիրելու օրակարգի հարցերը, պատրաստելով իրենց գրավոր եզրակացությունները և առաջադրանքները, զանոնք ներկայացնելու համար ժողովին: Ցանկալի է որ նույն հանձնարարությունը հաճիք կատարել Ձեր Աթոռի սրբազան միաբաններուն, որոնք հրավիրված են մասնակցելու ժողովի աշխատանքներուն:

Հուսով ենք թե սուրբ Հոգվո ներշնչմամբ, միության ոգիով և միասնական աշխատանքով, մեր եկեղեցվո եպիսկոպոսներու ժողովը պիտի հաջողի բարի ու դրական արդյունքներու հասնիլ ի մխիթարություն մեր հավատացյալ ժողովուրդին և հուրախություն մեզի:

Սպասելով Ձեր պատասխանին, մնամք եղբայրական սիրով ի Քրիստոս՝

ՎԱԶԳԵՆ Ա

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Էջմիածին, 4 ապրիլ 1969 թ.

ԳԵՐԱՇՆՈՐՀ
Տ. ՂԵՎՈՆԴ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՇԵՊԵՇՅԱՆ
ՄԻԱԲԱՆ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈ ԱԹՈՌԻ

Անթիլիաս

Ամենայն Հայոց կաթողիկոս Տ. Տ. Վազգեն Ա Հայրապետի որոշումով և օրհնությամբ, Մայր Աթոռ ս. Էջմիածնում հրավիրվում է Հայաստանյայց եկեղեցու եպիսկոպոսներու ժողով, քննարկելու համար այժմեություն ներկայացնող մի շարք հարցեր, հանգելու համապատասխան եզրակացությանց, և ապա ներկայացնելու զանոնք Նորին Սրբության ի հաստատում և ի հրապարակում:

Ներկա գրով հաճույքն ունինք Ձերդ Սրբազնության փոխանցելու Ամենայն Հայոց կաթողիկոսի սիրալիր հրավերը, որպես Հայաստանյայց եկեղեցու Կիլիկյան Աթոռի միաբանի, որ հաճիք Ձեր ներկայությամբ Ձեր գործոն մասնակցությունը բերելու մեր եկեղեցու եպիսկոպոսական ժողովի աշխատանքներին, որ գումարվելու է հառաջիկա սեպտեմբերի 25-ից հոկտեմբերի 2-ը:

Ներփակ ուղարկում ենք Ձեզ, ժողովի օրակարգը որ տակավին հրապարակելի չէ:

Հաճելի պիտի լինի մեզ ստանալ Ձերդ Սրբազնության պատասխանը մինչև հառաջիկա 5 մայիս, ձեռնարկելու համար Ձեր վիզայի կարգադրությանց:

Ընդունեցեք Վեհափառ Հայրապետի սիրո ողջույնը և բարի մաղթանքները:

Աղոթակից եղբայր՝

ՀԱՅԿԱԶՈՒՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
ԱՏԵՆԱՊԵՏ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՐԴԻ

Բոստոն, 22 մայիս 1969 թ.

ՆՈՐԻՆ Ս. ՕԾՈՒԹՅՈՒՆ
ՎԵՀԱՓԱՌ Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին

Շնորհազարդ Եղբայր ի Քրիստոս,

Շնորհակալությամբ ստացանք Ձեր 3 ապրիլ 1969 թվակիր և 439 թվահամար նամակը հարակից թուղթերով, զորս Մեզի փոխանցած էր կաթողիկոսարանիս դրան եպիսկոպոս գերշ. տ. Գարեգին ս. եպիսկ. Սարգիսյան, Անթիլիասեն:

Ինչպես ծանոթ է Ձերդ Եղբայրության, ներկայիս կգտնվինք Հյուսիսային Ամերիկա, հովվապետական մեր անդրանիկ այցելությամբ հոգեպես ներշնչելու համար թեմիս հավատացյալ ժողովուրդը և ամրապնդելու համար մեր զավակներուն մեջ հավատքը ի մասին նոր նվաճումներու կարելիության՝ հատկապես կրթական մարզի մեջ, ուժերու և աղբյուրներու զորաշարժով մը, որով հնարավոր կրնա դառնալ մտքի տուներու կառուցումը հավատքի տուներու կողքին:

Հասկնալի Մեր զբաղումներուն հակառակ, առիթ ունեցանք անհրաժեշտ կարևորությամբ և հանգամանորեն նկատի առնելու բովանդակությունը Ձեր նամակին ու բոլոր կետերը նախատեսված օրակարգին: Հետ խորհրդակցության ս. Աթոռույս Կեդր. վարչության հետ ստորև Ձեր սիրեցյալ Եղբայրության կփոխանցենք Մեր կարծիքներն ու տեսակետները:

ա. Մեր կարծիքով, եպիսկոպոսական ժողով մը իրավասություն պետք չէ զգա, վերջնական եզրակացությանց հանգելու առաջադրանքով, զբաղվելու եկեղեցական-ծիսական հարցերու քննարկումով: Այս ուղղությամբ, Մեզի համար հստակության կարոտ պարագա կմնա այն կետը, թե 25 սեպտ.—2 հոկտ. ի ս. Էջմիածին գումարելի եպիսկոպոսական ժողովը **խորհրդակցակա՞ն** բնույթ պիտի ունենա թե ոչ, որպեսզի Մենք ևս ըստ այնմ տնօրինենք պարտն ու պատշաճը:

բ. Մեր մտածումն ու առաջարկը եղած էր և կմնա այն, որ նախքան հարցերու պաշտոնական քննարկումը ազգային-եկեղեցական համագումարի մը կողմե, կազմվի երկու Աթոռներու եկեղեցական և աշխարհական ներկայացուցիչներեն հանձնաժողով մը, որուն պարտականությունը պիտի ըլլա հավաքական քննության ենթարկել այժմեություն ներկայացնող բազմաթիվ եկեղեցական և ծիսական հարցեր, դասավորել զանոնք և եզրակացությունները փոխանցել երկու կաթողիկոսներուն:

գ. Առաջադրված բարեկարգությունները Հայց. եկեղեցվո կանոններուն ու ավանդությանց ճամփով ձևակերպելու համար, անհրաժեշտ է լուծելի բոլոր կետերը ենթարկել ազգային-եկեղեցական համագումարի մը, ինչ որ լրիվ կհամապատասխանե մեր եկեղեցվո ժողովրդավար ոգիին ևս:

դ. Կիլիկյան ս. Աթոռի մասնակցության պարագան, ինչպես ըսինք, կապված է նաև օրակարգի հարցերու վերանայման հստակացման հետ: Բնականորեն անհրաժեշտ էր օրակարգի հարցերուն կապակցաբար նկատի ունենալ նաև Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության տեսակետները: Մենք այս ուղղությամբ հիշատակություններ ըրած էինք արդեն Մեր վերոհիշյալ նամակներուն մեջ, կընդգրկե այնպիսի հարցեր որոնք աղերս չունին Հայց. եկեղեցվո ծիսական-բարեկարգելի խնդիրներուն հետ:

Այսպես օրինակ, ներկայացված օրակարգի թիվ 1—«Հայց. եկեղեցվո ներքին միության ամրապնդման հարց», թիվ 8—«Հայց. եկեղեցին և էկումենիզմը» և թիվ 9—«Մեր օրերի մարդկությունը հուզող հարցերի և հատկապես աշխարհի խաղաղությունը ամրապնդելու Հայց. եկեղեցվո կեցվածքը և աշխատանքի բաժինը հոգուտ նրանց արդար լուծման Ավետարանի պատվիրանների լույսի տակ» հարցերը առնչություն չունին մնացյալ վեց հարցերուն հետ, որոնք եկեղեցական-ծիսական բնույթ կկրեն:

Մղված Հայց. եկեղեցվո բարեկորոգման նախաձեռնություններեն ու քաջալերված նաև Ձեր նամակի այն տողերեն ուր կըսեք թե «ներփակ կուղարկենք ժողովի օրակարգի նախագիծը, որ տակավին հրատարակելի չէ, զի կարող է որոշ փոփոխություններ կրել» կառաջարկենք վերոհիշյալ երեք կետերը հապավել օրակարգեն, ինչ որ բնականորեն ավելի և լայն ժամանակ պիտի տա խորհրդակցության մասնակցողներուն զբաղելու մնացյալ վեց և ըստ էության բարեկարգային կենսական հարցերով:

Կհուսանք, որ հիմնական այս փոփոխությունը կկատարվի օրակարգին վրա, ինչպես նաև նկատի կառնվին Մեր կողմե ա, բ և գ կետերով արծարծված նույնքան կենսական պարագաները և Կիլիկյան Աթոռը կունենա ուրախությունը հատուկ ներկայացուցիչներով մասնակցելու սույն **խորհրդակցական** ժողովին:

Վստահ ենք նաև, որ Մեր այս նկատողությունները կգտնեն դրական արձագանք Ձերդ Վեհափառության մոտ ու կստեղծվի ցանկալի գործակցությունը կաթողիկոսական երկու Աթոռներուն միջև, եկեղեցական-ծիսական մարզի մեջ, ինչ որ, կհավատանք, մեծապես պիտի նպաստե Հայց. Առաքելական ս. եկեղեցվո ազգային և հոգևոր զորացման:

Սպասելով Ձերդ Վեհափառության պատասխանին, և աղոթելով առ Ամենակալն Աստված որ Ձեզի պարգևե կատարյալ առողջություն, երջանիկ օրեր և բեղուն գործունեություն:

Մնամ եղբայրական սիրո ջերմ ողջունիվ,

Աղոթակից՝

ԽՈՐԵՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈ

Էջմիածին, 19 հուլիս 1969 թ.

Ն. Ս. ՕԾՈՒԹՅՈՒՆ
Տ. Տ. ԽՈՐԵՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈ

Անթիլիաս

Ծնորհազարդ Եղբայր,

Սիրով կհաստատենք Ձեր 22 մայիս 1969 թվակիր նամակը, գրված Բոստոն, որ գերաշնորհ տ. Գարեգին եպիսկոպոսի 2 հունիս 1969 թվակիր գրությամբ, Մեր ձեռքը հասավ 16 հունիսին:

Մեր պատասխանը քիչ մը ուշացավ, Մայր Աթոռես շուրջ երեք շաբաթ Մեր բացակայության պատճառով:

Անմիջապես ըսենք, կրկին անգամ, թե Մեր անկեղծ իղձն է որ Ձերդ Սրբությունը ի գլուխ Աթոռիդ եպիսկոպոսներու, Իր գործոն մասնակցությունը հաճի բերել Հայաստանյայց եկեղեցվո եպիսկոպոսներու ժողովին, որ պիտի գումարվի Մեր հրավերով, ս. Էջմիածնի մեջ, սեպտեմբեր 25-են հոկտեմբեր 2, Ձեզի ծանոթ օրակարգով:

Անդրադառնալով Ձեր մտահոգություններուն, կփափագինք Ձեզ լուսաբանել ստորև տրված բացատրություններով:

ա. Եպիսկոպոսական ժողովներ, անցյալի մեջ ալ գումարված են, թե ս. Էջմիածնի Մայր Աթոռես և թե Ձեր Աթոռեն ներս՝ ուսումնասիրելու, քննարկելու և որոշ եզրակացությանց հանգելու համար, վճիռ տալու և այն հրապարակելու իրավասությունը միշտ վերապահված ըլլալով Հայոց Ընդհանրական Հայրապետին, կարևոր հարցերու համար ազգային-եկեղեցական ժողովի գումարմամբ:

Այս ընթացքով, եպիսկոպոսական ժողովի մը՝ խորհրդակցական կամ ոչ խորհրդակցական ըլլալու հանգամանք վերագրել, կխորհինք թե տեղին չէ, և ոչ ալ հարմար:

բ. Մեր 9 ապրիլ 1968 նամակին մեջ գրած էինք Ձեզի թե մտադիր ենք 1969-ին եպիսկոպոսական ժողով գումարել, հույս հայտնելով թե պիտի մասնակցին նաև Ձեր, Կիլիկյան Աթոռիդ բոլոր եպիսկոպոսները: Հետո, ստանալով Ձեր 27 մայիս 1968 թվակիր նամակը, 21 նոյեմբեր 1968-ին՝ Ձեզի ուղղեցինք Մեր շատ կարևոր գիրը, որուն պատասխանեցիք 5 ապրիլ 1969-ին, առանց սակայն անդրադառնալու այն հիմնական հարցերուն զոր ներկայացուցած էինք Ձեզի, հանուն բնականոն հարաբերություններու և եղբայրական գործակցության վերականգնման ու ամրապնդման Մայր Աթոռիս և Ձեր Աթոռի միջև:

գ. Մեր պաշտոնական հրավերները Մենք ուղարկեցինք Ձերդ Սրբության և Ձեր Աթոռի բոլոր եպիսկոպոսներուն, ամեն մեկին առանձին, տարվույս ապրիլի 3-ին, կցելով օրակարգի նախագիծը և հիշեցնելով թե այն հրապարակելի չէ տակավին և կրնա փոփոխությանց ենթարկվիլ: Դուք, ոչ առաջ, և ոչ ալ այդ առթիվ, Ձեր խոսքը կամ կարծիքը չհայտնեցիք եպիսկոպոսական ժողովի գումարման և անոր օրակարգի մասին, հակառակ որ Աթոռիդ դրան եպիսկոպոս՝ գեր. տ. Գարեգին սրբազան, նամակով հավաստիացուցած էր Մեզ, թե Մեր հրավերները անմիջապես օդային փոստով ուղարկված են Ձեզի Ամերիկա, ի տնօրինություն:

Վերջապես, հունիսի 16-ին ստացանք Ձեր պատասխանը որ Մեզի հուսախաբություն պատճառեց, որովհետև, ոչ մեկ արտահայտություն գտանք Ձեր և Ձեր եպիսկոպոսներու մասնակցության մասին Հայաստանյայց եկեղեցվո եպիսկոպոսական ժողովին:

Նաև անհասկանալի եղավ Մեզի, թե ինչո՞ւ կփափագիք նախատեսնված օրակարգեն հանել երեք հարցերը զոր կնշեք: Ճշմարիտ կըսենք Ձեզի, թե պատրաստ էինք և այժմ ալ պատրաստ ենք ի նկատի առնել Ձեր առաջարկությունները, ի հարկին վերանայելով եպիսկոպոսական ժողովին օրակարգը, սակայն կարդալով Ձեր նամակը այնտեղ չգտանք որևէ բացատրություն և հիմնավորում թե ինչո՞ւ դուրս հանվին հիշյալ երեք հարցերը:

դ. Մեր եկեղեցվո «ներքին միության ամրապնդման» հարցը մեր եկեղեցական և ազգային կյանքի ամենացավոտ , հետևաբար ամենաանհետաձգելի հարցն է: Ի սեր Աստուծո, չեք խորհիր, թե այլևս կարելի չէ այսպես շարունակել: Ոչ մեր եկեղեցվո նվիրապետության բազմադարյան կարգն ու կանոնը, ոչ մեր ժողովուրդի գերագույն շահերը և ոչ ալ մեր խիղճը, չեն հաշտվիր այս կացության հետ, որի մասին հանգամանորեն Ձեզի գրած ենք Մեր 21 նոյեմ-

բեր 1968 թվակիր նամակով: Զե՞ք տեսներ, թե մեր ամբողջ ժողովուրդը ան-խտիր, կսպասե բոլորես, հատկապես մեր երկուքես, որ վերահաստատենք մեր միությունը և խաղաղություն տանք սփյուռքի պանդուխտ մեր զավակնե-րուն:

Եպիսկոպոսական ժողովը լավագույն առիթն է որ Մենք հոգևորական-ներս գոնէ, եղբայրորեն քով-քովի գանք և խաղաղ սրտով, փոխադարձ հաս-կացողությամբ ճամփա մը բանանք ամրապնդելու մեր եկեղեցվո նվիրապե-տության ներքին միությունը ու համերաշխ գործակցությունը: Վերականգնենք, ամրացնենք, պտղառատ դարձնենք Երուսաղեմի մեր ողջագուրումի ոգին:

ե. Երկրորդ հարցը որ կփափագիք դուրս թողուլ մեր օրակարգեն «էկու-մենիկ» շարժման հետ կապված հարցերն են և ճշտումը անոնց նկատմամբ մեր եկեղեցվո կեցվածքին և վերաբերմունքին: Էկումենիկ շարժման հետ կապված հարցերը բազմաթիվ են և այլազան և կան, ինչպես օրինակ եկեղե-ցիներու միության հարցը, որ կենսական նշանակություն ունին մեր եկեղե-ցիին և ազգին ապագային համար:

Հետևաբար ինչո՞ւ միասնաբար չմտածենք և չփորձենք բոլորիս համար ընդունելի տեսակետներ մշակել, մանավանդ որ մեր եկեղեցին, և Ձեր Աթոռն ալ, անդամ ենք Եկ. համ. խորհուրդին, և գործոն կերպով կմասնակցինք, ա-նոր գործունեության, այսինքն էկումենիկ շարժման:

զ. Խնդրո առարկա երրորդ հարցն է՝ «Մեր եկեղեցվո վերաբերմունքը՝ մարդկությունը հուզող, և հատկապես աշխարհի խաղաղությունը ամրապնդ-ելու, հարցերու նկատմամբ»:

Այս հարցը նույնպես այժմեական է և բոլոր եկեղեցիներու և եկեղեցական համագումարներու մտահոգություններուն առարկան է դարձած: Անցյալ տար-վան Ուփսալայի համագումարը ինչպես գիտեք, մեծավ մասամբ իր օրակարգի վրա ունեցավ նման հարցեր: Նույն մտահոգությունները արտացոլվեցան Վա-տիկան Բ ժողովին մեջ և առավել շեշտված կերպով՝ Հովհաննես ԻԳ և Պո-ղոս Զ Պապերու կարևորագույն կոնդակներուն մեջ, ինչպես էին «Mater et magister», «Pacem in terris» և «Populorum progressio» կոնդակները:

Այս մտահոգությանց կեդրոնը անշուշտ, աշխարհի խաղաղության պահ-պանման և ժողովուրդներու արդար ու եղբայրական հարաբերություններու ամրապնդման մեծ հարցերն են: Արդյոք մեր ալ խղճի պարտքը չէ՞, հանդի-սավոր առիթներով ցույց տալ մեր ժողովուրդին և աշխարհին, թե Հայաս-տանյայց եկեղեցվո բարձրաստիճան ներկայացուցիչներն ալ՝ մտածում մը, իղձ մը, ըսելիք խոսք մը ունին, թելադրված իրենց կրոնական գիտակցութե-նեն և իրենց ազգի ու հայրենիքի անվտանգության հրամայականներեն:

Կա՞ արդյոք աշխարհի վրա ազգություն մը, որ Մեզի չափ տուժած ըլլա պատերազմներու ատեն: Կա՞ արդյոք աշխարհի վրա հայրենիք մը, որ մեր մայր երկրի չափ կենսականորեն շահագրգռված ըլլա աշխարհի խաղաղու-թյան պահպանմամբ: Մեր բոլոր հույսերը մենք կրնանք կապել միմիայն խա-ղաղության դատին հաղթանակին հետ: Հայոց վերածնած հայրենիքի և ժող-ովուրդի համար մահացու մեղք է, հույսեր կապել հնարավոր պատերազմներու հետ:

Ամեն բանե վեր և ամեն բանե առաջ, պահպանումը և ամրապնդումը աշխարհի ժողովուրդներու խաղաղ գործակցության, ահա այն իղձն ու աղոթ-քը որ մերը պետք է ըլլա բոլորեն առաջ, այժմ և միշտ:

Մեր այս խոհերը Ձեր նկատառման հանձնելով, կխորհինք թե բավարար չափով մը բացատրեցինք Մեր միտքը, և իմաստն ու անհրաժեշտությունը, որ վերոհիշյալ հարցերը մնան մեր եպիսկոպոսական ժողովի օրակարգի վրա:

Հետևաբար վերստին Մեր ցանկությունը կհայտնենք, Ձերդ Սրբությունը ունենալ Մեր եկեղեցվո եպիսկոպոսական ժողովին մեջ, ի գլուխ Աթոռիդ բոլոր եպիսկոպոսներուն, որոնց անձնապես հղած ենք Մեր հրավերները Ձեր միջոցավ:

Սպասելով բարի լուրեր Ձեր ափերեն, մնամք սրտանց Ձեզի ցանկացող քաջաստողջություն և շինարար գործնեություն:

Ձերդ Սրբության՝ ողջույն Մայր Աթոռ սուրբ Էջմիածնեն և վերածնած Մայր Հայաստանեն:

Եղբայրական սիրով ի Քրիստոս՝

ՎԱԶԳԵՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Անթիլիաս, 26 օգոստոս 1969 թ.

ՆՈՐԻՆ Ս. ՕԾՈՒԹՅՈՒՆ
ՎԵՀԱՓԱՌ Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին

Սիրեցյալ Եղբայր ի Քրիստոս,

Հյուսիսային Ամերիկայի և Կանադայի Մեր հովվապետական այցելութենեն վերադարձին, շնորհակալությամբ ստացանք Ձեր 19 հուլիս 1969 թվակիր և 761 թվահամար նամակը ի պատասխանի Մեր 22 մայիս 1969 թվակիր նամակին:

Խորապես շնորհակալ ենք որ վերստին կհայտնեք Ձեր իղձը Մեր և Մեր Աթոռի միաբան եպիսկոպոսներու մասնակցության համար Ձեր կողմե հրավիրված «Հայաստանյայց եկեղեցվո եպիսկոպոսներու ժողովին», որ պիտի գումարվի ս. Էջմիածնի մեջ սեպտեմբեր 25-են հոկտեմբեր 2, նախապես Ձեր կողմե Մեզի հղված օրակարգով:

Մենք ևս, մղված Հայց. առաքելական ս. եկեղեցվո բարեկարգության նախաձեռնությունեն, ինչպես Մեր նախորդ նամակներով, նաև այս նամակով կուզեինք Մեր տեսակետները անգամ մը ևս հստակորեն պարզել հուսալով որ կստեղծվին այն նպաստավոր պայմաններն ու մթնոլորտը, որով կարելի կդառնա Մեր ս. Աթոռին մասնակցությունը եպիսկոպոսներու խորհրդակցական ժողովին:

1. Ճիշտ է, Վեհափառ Եղբայր, որ եպիսկոպոսական ժողովներ, հանդիպումներ, հավաքույթներ հաճախ տեղի ունեցած են անցյալին մեջ թե Մայր Աթոռ ս. Էջմիածնի մեջ և թե Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսարանիս մեջ:

Բայց ոչ մեկ ատեն Մեր ս. Աթոռի եպիսկոպոսական ժողովները Հայց. եկեղեցվո բարեկարգչական հարցերու շուրջ որոշումներ առած են. անոնք զբաղած են այլազան հարցերով, որոնք կապ ունեցած են կաթողիկոսարանիս հոգևոր, կրթական և ազգային գործունեության հետ և ըրած են որոշ կարգադրություններ ընթացիկ հարցերու շուրջ, միշտ խորհրդակցական բնույթ կրելով: Մեր ծանոթության սահմանին մեջ, կրնանք ըսել որ նույնն է եղած նաև Մայր Աթոռ ս. Էջմիածնի մեջ:

Ուստի, ըստ Մեր համոզումին, ս. Էջմիածնի մեջ ծրագրված հառաջիկա ժողովի նպատակը ըլլալու է ուսումնասիրել հարցերը և կարելի լավագույն լուծումներու մասին ընել որոշ թելադրություններ, շատ հավանաբար որոշ հարցերու շուրջ ծրագրելով նաև հառաջիկային կատարելիք նոր ուսումնասիրություններ: Այս եզրակացությունները ապա պետք է որ քննարկվին եկեղեցվո վերին իշխանությանց կողմե, Մայր Աթոռ ս. Էջմիածնի և Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության մեջ և ապա վերջնական բանաձևումով հղվին ազգային-եկեղեցական ընդհանուր համագումարին առ ի պատշաճ տնօրինություն:

Մենք այսպես կհասկնանք բնույթն ու դերը ս. Էջմիածնի մեջ գումարվելիք եպիսկոպոսական ժողովին: Այսպես է եղած ավանդությունը Հայց. ս. եկեղեցվո դարերու ընթացքին. ավանդություն՝ որուն մեջ Հայց. եկեղեցին իր գերագույն հեղինակությունը կտեսնե իր լրությանը մեջ, ներկայացուցչական ձևով արտահայտված և մասնակցությամբ հոգևորականներու և եկեղեցվո աշխարհական անդամներու, ինչ որ է պարագան ազգային-եկեղեցական ընդհանուր համագումարին: Պետք է անխախտ պահել այս սկզբունքը և ոգին Հայց. առաք. ս. եկեղեցվո:

2. Ժողովի մը մասնակցության հարցը բնականորեն կապված է այդ ժողովի օրակարգի հետ: Մեր 22 մայիս 1969 թվակիր նամակին մեջ, կհիշեք Վեհափառ Եղբայր, որ դիտել տված էինք որ Ձեր առաջադրած օրակարգի ինը կետերեն երեքը առնչություն չունեին մնացյալ վեց կետերուն հետ, որոնք ծիսական-եկեղեցական-հոգևոր բնույթ կկրեին, միշտ եկեղեցվո բարեկարգման սկզբունքեն դիտված:

Ստորև կուտանք Ձերդ Վեհափառության հավելյալ բացատրություններ.

ա. Հայ եկեղեցվո ներքին միության ամրապնդման հարցը ըստ Մեզի շատ անորոշ կերպով դրված հարց մըն է օրակարգի վրա իր բանաձևված հակիրճ պատկերին մեջ: Նախ, կուզեինք հայտնել Ձերդ Վեհափառության որ Մեզի համար նման հարց ըստ էության գոյություն չունի, որովհետև Հայց. եկեղեցին միշտ մի եղած է, մի է այսօր և մի պիտի մնա հավիտյան: Մեր անխախտ հավատքն ու համոզումը այն է որ անոր ներքին միությունը չէ խախտած երբեք որպեսզի կարոտի ամրապնդումի:

Բայց այնպես ինչպես Ձերդ Վեհափառությունը կմեկնե օրակարգի այդ հարցը Ձեր 19 հուլիս թվակիր նամակի Դ կետով, հատկապես ակնարկելով Ձեր 21 նոյեմբեր 1968 թվակիր նամակին, անոր տակ դրված կըլլան ներկայիս Հայց. եկեղեցվո երկու կաթողիկոսական Աթոռներու միջև գոյություն ունեցող ինչ-ինչ տարակարծություններ և կարգ մը դժվարություններ վարչական բնույթ կրող հարցերու շուրջ: Բնականորեն այդ դժվարությունները պետք է որ հարթվին: Նման դժվարություններ անցյալի մեջ ալ հառաջ եկած են երբեմն-երբեմն և միշտ լուծված են փոխադարձ խորհրդակցություններով և հասկացողությամբ: Ներկայիս գոյություն ունեցող տարակարծություններն ալ

պետք է որ փարատին. այդ կպահանջե մեր ժողովուրդին և եկեղեցվո շահը: Մեր աթոռը պատրաստ է զանոնք հարթելու համար խորհրդակցություններ ունենալու Մայր Աթոռ ս. Էջմիածնի հետ: Լավագույն միջոցը պիտի ըլլար որ ս. Էջմիածնի և Կիլիկիո կաթողիկոսությանց կողմե ներկայացուցիչներ նշանակվեին որոնք հանդարտ մթնոլորտի տակ, Եվրոպայի խաղաղ կեդրոնի մը մեջ, հարմար ժամանակի մը ընթացքին, եղբայրական ոգիով և մղված համազգային եկեղեցական շահերեն, սրտբացորեն քննարկեին խնդրո առարկա հարցերը և հանգեին փոխադարձաբար ընդունելի եզրակացությանց: Ինչ երջանիկ պահ պիտի ըլլար Մեզի համար այդ պարագային, այցելել Ձեզ, անգամ մը ևս ողջագուրվիլ Ձեզ հետ ս. Էջմիածնի դարավոր կամարներուն տակ և մեր հայրենի սուրբ հողին վրա առավել ևս խորացնել ու գեղեցկացնել մեր եղբայրությունը, կաթողիկոսական Աթոռներու միջև: Որքան պիտի հրճվեր մեր ժողովուրդը վայելելով նման գեղեցկագույն ու պատմական պահ մը իր կյանքին մեջ:

Անհավասիկ այդ հարցերու լուծման համար ամենեն դրական, խոհեմ և ապահով ճամփան: Անոնց ներառումը եպիսկոպոսական ժողովի օրակարգի մեջ, իրատես քայլ մը չէ: Նախ, ոչ մեկ խորհրդակցություն տեղի ունեցած է անոնց մասին. հետո, եպիսկոպոսներու հավաքույթի մը մեջ քննարկվելիք հարցեր չեն անոնք երբ մանավանդ այդ հավաքույթը նպատակ ունի քննարկել այնքան կարևոր այլ հարցեր՝ զուտ ծիսական-եկեղեցական-հոգևոր-բարեկարգչական բնույթ կրող:

Անհավասիկ թե ի՞նչ մտածումներով և ի՞նչ նախաձեռնությամբ առաջնորդված՝ Մենք առաջարկեցինք, և այս նամակով անգամ մը ևս կառաջարկենք, որ այդ առաջին հարցը «Հայ եկեղեցու ներքին միության և ամրապնդման հարց» չդրվի օրակարգի վրա: Թե ըստ էության անհարիր, և թե գործնական տեսակետե անօգտակար քայլ մը կրնա ըլլալ ժողովի բարեկարգչական գործին համար:

բ. Բնականորեն քրիստոնեական եկեղեցիներու մերձեցման և գործակցության շարժումը, «Էկումենիզմ» բառին տակ հասկցված, կարևոր երևույթներեն մեկն է արդի քրիստոնեական աշխարհին: Մեր եկեղեցին իր երկու կաթողիկոսական Աթոռներով լիովին կմասնակցի այդ շարժումին, անդամ ըլլալով Եկեղեցիներու համաշխարհային խորհուրդին: Այդ շարժումի նկատմամբ այնքան պարզ է մեր եկեղեցվո տեսակետը որ զայն օրակարգի նյութ դարձնելը, դարձյալ բարեկարգչական բնույթ կրող այս ժողովին, կնկատենք ոչ անհրաժեշտ: Մեր տեսակետը այդ մասին շատ մեկին է—անխախտ պահել մեր եկեղեցվո առանձնահատուկ ոգին, նկարագիրը և հիմնակառույցը, երբեք չշեղիլ Հայց. եկեղեցվո դարերով նվիրագործված դավանաբանական ուղղափառութենեն, անաղարտ պահել մեր եկեղեցվո ազգային դիմագիծը ու շունչը, միանգամայն հաղորդ ըլլալով արդի եկեղեցական շարժումներուն հետ և օգուտ քաղելով փորձառություններու այն հանդիպումեն, որ էկումենիկ շարժումն է ըստ էության: Մի՞թե կարելի է այլ կերպ մտածել այս մարդին մեջ:

Ուստի, անհրաժեշտ չենք նկատեր այդ հարցին ներառումը եպիսկոպոսական այս ժողովի օրակարգին մեջ:

գ. Խաղաղության և արդարության հարցը անշուշտ քրիստոնեական եկեղեցվո ինչպես և մեր եկեղեցվո համար կենսական հարց է ըստ էության: Բայց դարձյալ ընդհանուր հարց է այդ: Իսկ այնպես ինչպես բանաձևված է օրակարգի վրա և մեկնաբանված է Ձեր 19 հուլիս 1969 թվակիր նամակին մեջ, այդ ընդհանուր հարցը դրված է այնպիսի ըմբռնումով մը որ մասնակի հաս-

կացողություն է և կրնա դուռ բանալ անհարկի վիճաբանությանց: Նկատի պետք է ունենալ նաև այն կարևոր պարագան որ եպիսկոպոսներու այս ժողովը զուտ բարեկարգչական նպատակ ունի և արդար չէ որ զբաղի այլ հարցերով, որոնք առանձնապես կրնան արժեք և այժմեականություն ունենալ, բայց տեղ չգտնել ծրագրված եպիսկոպուական ժողովի օրակարգի վրա, որովհետև արդեն իսկ ծանրաբեռնված է այդ օրակարգը և պետք է ջանալ խտացնել զայն փոխանակ տարածելու:

Ի վերջո, աշխարհի խաղաղության համար ցանկություն կարելի է հայտնել ոևէ ատեն, ինչպես հանախ Ձերդ Վեհափառությունը և Մենք անձամբ կընենք տոնական օրերուն և այլ առիթներով: Իսկ եթե օրինակ պիտի ունենանք Ուփսալայի համագումարին աշխատանքները այս ուղղությամբ կամ Հովհաննես ԻԳ և Պողոս Զ սրբազան Պապերու հռչակավոր կոնդակները այս մարզեն ներս, զորս առանձնապես կհիշատակեք Ձեր նամակին մեջ, օրերով պետք է նստիլ և ուսումնասիրել աշխարհի այնքան բարդ հարցերը, որոնք ունին քաղաքական, ընկերային, տնտեսական և այլ հարակից այնքան բազմերանգ երեսներ և հանգամանքներ:

Ինչպես կտեսնեք, սիրեցյալ Եղբայր ի Քրիստոս, Մեր միակ մտահոգությունն է և խորագույն բաղձանքը որ եպիսկոպոսներու խորհրդակցական այս ժողովը ունենա զուտ բարեկարգչական բնույթ, սահմանափակ դաշտը իր աշխատանքներուն որպեսզի կարելի ըլլա խորապես և հանգամանորեն քննարկել առաջադրված հարցերը: Փորձառաբար գիտենք որ ինչքան քիչ ըլլան հարցերը և լայն ըլլա ժամանակը անոնցմով զբաղելու, այնքան արդյունավոր կըլլան խորհրդակցությունները: Բնականորեն Ձերդ Վեհափառությունն ալ կանդրադառնա թե մնացյալ վեց հարցերը որքան էական և այլազան կողմերով խճողված հարցեր են—հայ ծիսարանի կրճատումը, պահոց օրերու, պասկի արգիլյալ օրերու վերաքննության խնդիրները, կուսակրոնության այնքան վիճաբանված և խճճված հարցը, հայ նահատակաց սրբացման պարագան, Զատկի թվականի փոփոխության խնդիրը, նզովքներու վերացման հարցը, Աստվածաշունչի աշխարհաբար թարգմանության ծրագրումի պարագան և այլն: Ահավասիկ այնքան ընդարձակ դաշտ մը զոր նվաճել մեկ շաբթվան խորհրդակցություններով Մեզի համար կթվի գրեթե անկարելի:

Քաջատեղյակ եք անշուշտ որ նման հարցերով զբաղելու համար քանի ամիսներ հատկացվեցան, քանի տարիներով և ինչ տքնաջան նախապատրաստություններ տեղի ունեցան գիտնական անձերու կողմե, Վատիկանի պարագային: Ուրիշ եկեղեցիներ և միջեկեղեցական կազմակերպություններ որքան ջանք և որքան աշխատանք կտան՝ին ամբողջական ու խոր մոտեցումով քննարկելու նման հարցեր և որոշ եզրակացությանց հանգելու անոնց մասին: Այս բոլորին վրա երբ ավելցնենք նաև մեր եկեղեցվո ապա-պարագային զուտ հոգևոր, ծիսական, աստվածաբանական, կրոնագիտական ազդակներու շարքին նաև ազգային մտահոգությունները, հատկապես ազգապահպանումի համահայկական և հրամայական պարտավորության տեսակետեն, այն ատեն շատ ավելի ըմբռնելի կդառնա թե այս հարցերը կկարոտին ամենախոր և բազմակողմանի ուսումնասիրության:

Բնականորեն շատ հարցեր կան մեր եկեղեցվո ներկայի առաքելության համար: Բայց այդ բոլոր հարցերը եպիսկոպոսներու խորհրդակցական մեկ հավաքույթի մեջ լուծելի հարցեր չեն: Որպես օրինակ միայն կուզեինք նշել այստեղ այն պարագան թե մեր եկեղեցվո առաքելության հիմնական գիծերեն մեկը, կրոնական-հոգևոր էական ծառայության կողքին, հայապահպանումի

իր բերելիք նպաստն է, մանավանդ սփյուռքի ցիրուցանված և ամեն օր ձուլումի վտանգին ենթակա մեր սիրելի ժողովուրդին համար: Արդյո՞ք օգտակար պիտի չըլլար Հայց. եկեղեցվո եպիսկոպոսներու ժողովին մեջ քննարկել այն հարցերը որոնք կապված են եկեղեցվո այս կենսական դերին հետ: Ի՞նչ պետք է ընել որպեսզի մեր եկեղեցին ամենուրեք, մանավանդ ուծացումի ամենեն ավելի արագ և դյուրին ենթակա սփյուռքյան շրջաններուն մեջ, տարածե հայ լեզուն, մեր տոհմիկ դպրությունը և ազգային մշակույթը: Վերջին չորս ամիսներու Մեր հովվապետական այցելության առթիվ Հյուսիսային Ամերիկայի և Կանադայի մեջ, Մենք հուզումնալից սիրտով և արտասվալից աչքերով դիտեցինք ու տեսանք մեր պաշտելի ժողովուրդին ծարավը մեսրոպաստեղծ հայ գիրին, ոսկեղենիկ մեր լեզվին և հազարագանձ մեր մշակույթին. Ո՞ր մեկ ատեն մեր պատմության մեջ հայ ժողովուրդը այսքան խոր կարիքն է զգացեր հայ եկեղեցվո ծառայության՝ հայ տոհմիկ կրթության և մշակույթի տարածման մարզերեն ներս: Երբ Հայց. եկեղեցվո իշխաններ ի մի հավաքվին, կրնա՞ն անտեսել այսքան կենսական և հայ ժողովուրդի գոյության հետ սերտորեն կապված հարց մը: Միթե՞ հայկական դպրոցներ բանալու և հայ լեզուն, գրականությունը, պատմությունը և առհասարակ մշակույթը տարածելու հարցը նվազ կարևոր հարց է հայ եկեղեցվո համար քան «Մեր օրերի մարդկությունը հուզող հարցերի և հատկապես աշխարհի խաղաղությունը ամրապնդելու հայ եկեղեցվո կեցվածքը և աշխատանքի բաժինը հոգուտ նրանց արդար լուծման Ավետարանի պատվիրանների լույսի տակ» բանաձևումով դրված հարցը:

Բայց հասկնալի է որ եկեղեցվո ծիսական բարեկարգչական հարցերով զբաղելու համար հրավիրված եպիսկոպոսներու ժողով մը իր օրակարգին վրա չունենա «Հայ եկեղեցվո նպատը հայապահպանման գործին» կամ «Դպրոցաշինության շարժումը և հայ եկեղեցին» խորագիրներու տակ տարազելի հարցեր, որքան էլ որ էական ըլլան անոնք:

Ուստի, սիրեցյալ Եղբայր ի Քրիստոս, Մենք ի սեր մեր եկեղեցվո բարեկարգության և ի սեր առ այդ գումարելի ժողովի աշխատանքներու բարվոք և ատոք պսակումին, պիտի խնդրենք որ հառաջիկա սեպտեմբեր 25-են հոկտեմբեր 2 ս. Էջմիածնա մեջ գումարելի եպիսկոպոսական ժողովը ունենա զուտ խորհրդակցական հանգամանք և իր խոսակցությանց և խորհրդակցության որպես նյութ կամ բովանդակություն նկատի առնե այն վեց հարցերը, զորս վերև թվեցինք առնելով Ձեր առաջադրած օրակարգի ինը կետերեն: Այն ատեն այս ժողովը կունենա հատակ դիմագծություն, որոշ ուղղություն և կրնա դառնալ տոկուն և բարերար սկիզբ մը բարեկարգչական շարժումին՝ Հայց. եկեղեցվո ծոցին մեջ: Այն ատեն մեր Աթոռն ալ իր ներկայացուցիչ եպիսկոպոսներով պիտի մասնակցի անոր: Այս ձևով նաև իսկական գործակցության գեղեցիկ քայլ մը առնված կըլլա կաթողիկոսական երկու Աթոռներու միջև, ինչ որ նոր և առավել ևս հուսալից հորիզոններ կրնա բանալ հայ եկեղեցվո ապագային համար:

Ահա այս հույսով և վստահությամբ կնքենք Մեր խորհրդածությունները և կհավատանք Առաքյալին բառերով թե «յոյս ոչ երբեք ամաչեցուցանէ»: Այս տեսակետեն Մենք զՄեզ հուսադրված կզգանք նաև այն պատճառով որ Դուք Ձեր 19 հուլիս 1969 թվակիր նամակին մեջ տրամադրություն կհայտնեք ի հարկին փոփոխության ենթարկելու եպիսկոպոսական ժողովի օրակարգը: Վստահ ենք որ վերև արտահայտված տեսակետներն ու խորհրդածությունները լիովին կհիմնավորեն Մեր առաջարկած փոփոխությունները, ինչ որ մե-

ծապես օգտակար կհանդիսանա նաև ժողովի արդյունավորումին համար և կարելիություն կստեղծե մեր Աթոռի մասնակցության համար:

Առաջնորդված նույն սիրո, լույսի և նախաձեռնության ոգիեն՝ փափագեցանք այս նամակը ուղարկել Ձերդ սիրեցյալ Եղբայրության՝ մեր Աթոռի դրան եպիսկոպոս և Ազգային կեդրոնական վարչության կրոնական ժողովի ատենադպիր՝ գերշ. տ. Գարեգին ս. եպիսկոպոսի և Ազգային կեդրոնական վարչության անդամներեն և ս. Աթոռիս նվիրյալ զավակներեն տիար Ոսկեբերան Արզումանյանի միջոցավ, թելադրելով իրենց որ անձամբ փոխանցեն Ձերդ Վեհափառության Մեր այս գիրը, և ի հարկին, տան հավելյալ բացատրություններ Մեր մտածումներու և տեսակետներու մասին այս առընչությամբ: Վստահ ենք որ Մեր պատվիրակները հայրական սիրով կընդունվին Ձերդ Վեհափառության կողմե և կվերադառնան Ձեր դրական պատասխանով: Այն ատեն Մենք հեռագրով կհայտնենք Ձեզի անունները այն եպիսկոպոսներուն, որոնք պիտի ըլլան ներկայացուցիչները Կիլիկիո մեր ս. Աթոռին՝ եպիսկոպոսներու ժողովին համար:

Այս առթիվ, անգամ մը ևս ի խորոց սրտի կաղոթենք առ Բարձրյալն Աստված որ Ձեր սիրելի Եղբայրության պարգևե կատարյալ առողջություն և հոգեկան անսպառ կորով որպեսզի կարենաք առավելագույն արդյունավորությամբ պսակել Ձեր հովվապետական առաքելությունը ի պայծառություն Հայց. ս. եկեղեցվո և ի բարգավաճումն մեր պատվական հայ ժողովուրդին:

Մնամ եղբայրական սիրո ողջունիվ,

Աղոթակից՝

ԽՈՐԵՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈ

Էջմիածին, 31 օգոստոս 1969 թ.

Ն. Ս. ՕԾՈՒԹՅՈՒՆ
Տ. Տ. ԽՈՐԵՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈ

Ա ն թ ի լ ի ա ս

Շնորհազարդ Եղբայր Մեր,

Հայրական սիրով ընդունեցինք Ձերդ Սրբության պատվիրակները՝ գեր. տ. Գարեգին եպիսկոպոս և տիար Ոսկեբերան Արզումանյան, որոնք Մեզի բերին Ձեր եղբայրական ողջույնը բարի մաղթանքներով հանդերձ և հանձնեցին Մեզի Ձեր 26 օգոստոս 1969 թվակիր կարևոր նամակը:

Կարդալով Ձեր գիրը համակվեցանք գոտեպնդիչ զգացումներով, զի հաստատեցինք թե Մեր մտահոգությունները Դուք ևս կբաժնեք և այժմ պատրաստ եք Ձեր կարելին ի գործ դնելու որպեսզի կարճ ժամանակի ընթացքին, վերջ գտնեն բոլոր թյուր հասկացողությունները և անբնական կացությունները ավյուռքի մեր եկեղեցական կյանքեն ներս և վերահաստատվի օրինականությունը, խաղաղությունը և դարավոր եղբայրական գործակցությունը մեր ձվիրապետական Աթոռներու միջև, հայ եկեղեցվո միության և հայ ժողովուրդի միասնության նվիրական ոգիով:

Կողջունենք Ձեր առաջադրանքը որ եպիսկոպոսական ժողովեն հետո Մայր Աթոռեն և Ձեր Աթոռեն երկու պատվիրակություններ քննարկեն մեր Աթոռներու միջև առկախ և անլուծ մնացած ցավոտ հարցերը, որ Մեր ալ բաղձանքը եղած է երկար տարիներե ի վեր, թե Երուսաղեմի Մեր ողջագուրումեն առաջ և թե հետո: Արդ, Մենք վստահ ենք թե այս առաջադրանքով, եպիսկոպոսական ժողովի օրակարգին վրա դրված հարցը՝ «Հայ եկեղեցվո միության ամրապնդումը» այլևս վիճելի չի դառնար և ոչ իսկ քննարկման կարոտ: Եպիսկոպոսական ժողովը պարզապես գոհունակությամբ կարձանագրե այդ առաջադրանքը, իբրև եզրափակում օրակարգի հիշյալ հարցի:

Մենք նույնպես հույժ ողջունելի կգտնենք Ձեր խոհերը և մտահոգությունները արտասահմանի հայապահպանման հարցի առնչությամբ: Տարբեր չեն նաև Մեր մտածումները և ծրագիրները ապագայի նկատմամբ: Սփյուռքի մեջ, մեր պանդուխտ զավակներուն հայկական հոգիին և գիտակցության պահպանումը, մեր առաջ դրված սեպուհ խնդիրն է, որու մասին Մենք ալ շատ հաճախ արտահայտված ենք կենդանի խոսքով և գրով, թե Մեր արտասահման ուղևորությանց ընթացքին և թե Ձեզի հետ ունեցած Մեր թղթակցությանց մեջ: Եվ այս նվիրական գործը առավել ամուր հիմերու վրա դնելու, և բոլոր կենդանի ուժերը համատեղ օգտագործելու մտադրությամբ է՝ որ Մենք կենտրոնակորեն անհրաժեշտ և անհետաձգելի կնկատենք մեր եկեղեցական ներքին միության և մեր նվիրապետական Աթոռներու միջև համերաշխ գործակցության վերահաստատումը: Ձերդ Սրբության ուղղած Մեր նամակներու մեջ քանիցս ընդգծած ենք Մեր ապրումները և իղձերը, այս ոգիով:

Գոհ ենք հետևաբար որ այս նույն ոգիով պատրաստ եք ուղարկելու Աթոռիդ պատվիրակությունը, բաղկացած սրբազան եպիսկոպոսներե, որոնք պիտի մասնակցեն եպիսկոպոսական ժողովին որ պիտի գումարվի, ս. Էջմիածնի մեջ, հառաջիկա սեպտեմբեր 25-են հոկտեմբեր 2:

Այս առիթով անհրաժեշտ կնկատենք ընդգծելու և հավաստիացնելու Ձեզ, թե եպիսկոպոսական ժողովի պարտականությունը պիտի ըլլա օրակարգի հարցերը բազմակողմանիորեն քննարկել, ուսումնասիրել և եզրակացությանց հանգիլ և զանոնք հանձնել հայրապետական նկատառման ի կանոնական տնօրինում: Եվ եթե, տվյալ հարցերու վերաբերյալ եպիսկոպոսական ժողովի եզրակացությունները և բանաձևումները բավարար չափով հիմնավորված և ընդունելի նկատվին, պիտի մտածենք զանոնք գործադրության դնելու մասին, ի հարկին մոտ ապագային հրավիրելով ազգային-եկեղեցական ժողով, ինչպես Դուք ևս կնախատեսեք: Ժողովի եզրակացությունները և բանաձևումները բնական է պիտի ներկայացվին Ձերդ Սրբության, ժողովին մասնակից Աթոռիդ եպիսկոպոսներուն կողմե:

Իսկ ինչ կվերաբերի Ձեր մտահոգություններուն, օրակարգի Ձեր հիշած երեք հարցերու առնչությամբ, կկամենանք Ձեզ վստահեցնել թե որևէ անպատեհ կացություն չի կրնար ստեղծվիլ Ձեր Աթոռին համար: Անհրաժեշտ հավաստիացումները և լուսաբանությունները զոր տվինք Ձեր ներկայացուցիչներուն, կխորհինք թե լիովին պիտի բավարարեն զՁեզ:

Ուրեմն հղելով Ձեզի Մեր սիրո ողջույնը, կսպասենք որ Ձեր ներկայացուցիչները Աթոռիդ եպիսկոպոսական դասեն, ներկա գտնվին հառաջիկա եպիսկոպոսական ժողովին և գործոն կերպով մասնակցին բոլոր աշխատանքներուն իբրև լիիրավ անդամները ժողովին և հարազատ որդիները երանելի Հորը մեր՝ ս. Գրիգոր Լուսավորչին և ս. Էջմիածնին:

Մենք առավել գոհ պիտի ըլլանք, եթե Ձեր սրբազան եպիսկոպոսները,

հատենի ժողովո հանդես գան նախօրոք պատրաստված զեկուցումներով, օրակարգի այն հարցերուն վերաբերյալ, զոր Դուք հարմար պիտի դատեք:

Եվ բնականաբար, սիրով կհրավիրենք՝ Ձեզ ներկայացնող եպիսկոպոսները որ մասնակցեն մյուռոնօրհնության սրբազան արարողություններուն և հանդիսություններուն, որոնք պիտի տեղի ունենան հոկտեմբեր 5—12 ներառյալ: Կներփակենք հանդիսությանց ծրագրի նախագիծը:

Վերջացնելե առաջ հրավերի Մեր այս գիրը, կփափագինք Ձեզի հայտնել Մեր ցանկությունը, որ հաճիք Ձեր Աթոռեն ուղարկելու նաև երկու-երեք աշխարհական ներկայացուցիչներ, մասնակցելու մյուռոնօրհնության հանդիսությանց իբրև Մեր թանկագին հյուրերը:

Մեծի Տանն Կիլիկիո Աթոռիդ եպիսկոպոսներու մասնակցությունը առաջիկա եպիսկոպոսական ժողովին, բնականորեն երջանիկ առիթ մը պիտի հանդիսանա որ սկիզբ առնե նոր շրջան մը մեր օրերու հայ եկեղեցվո կյանքի մեջ, և Մենք մխիթարված ենք նաև որ Ձերդ Վեհափառությունը իր բարի իղձը կհայտնե, մոտ ապագային այցի գալու Մեզի Մայր Աթոռ սուրբ Էջմիածին, որ է և միշտ պիտի մնա Ձեր ալ հարազատ ապահով Տունը:

Թող Աստված անսասան պահե մեր սուրբ եկեղեցին, հավետ ամբողջ ու անխոով:

Քրիստոսավանդ սիրո ողջունիվ և ամենաբարի մաղթանքներով՝

ՎԱԶԳԵՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տ. Խորեն կաթողիկոսի Բոստոնում արտասանած ճառը, վերահրատարակված Բեյրութի «Զարթոնք» թերթի օգոստոսի 14-ի համարում, ստացված է Մայր Աթոռում սեպտեմբերի 6-ին: Այս առթիվ Հայաստանի մամուլի գործակալության թղթակիցը դիմում է հետևյալ հարցերով Վեհափառ Հայրապետին:

Հարցում—Անթիլիասի կաթողիկոս Խորեն Առաջինը հուլիս ամսում նախագահել է Բոստոնում գումարված «Դաշնակցություն» կուսակցության տարեկան համագումարի բացման նիստին և արտասանել է մի ուշագրավ ճառ: Ձերդ Վեհափառությունը ծանո՞թ է արդյոք այդ ճառին և ի՞նչ կարծիք կարող է հայտնել նրա մասին:

Պատասխան—Չորս օր առաջ է որ ծանոթացանք այդ ճառի բովանդակության, արտասահմանի հայ մամուլից: Կարդալով այն, Մենք սիրեցինք և մտահոգվեցինք: Պետք է ասել, թե հայ իրականության մեջ, երբեք չի պատահել որ բարձրաստիճան մի եկեղեցական, պաշտոնապես և հրապարակով, կուսակցական մի համագումարում, այնքան շեշտված և ամբողջական կերպով, իր անձը և իր հոգևոր առաքելությունը նույնացրած լինի մի քաղաքական կուսակցության ծրագրի և գործունեության հետ:

Հոգևոր կոչումի գիտակցությունը ունեցող որևէ եկեղեցու սպասավոր, և առհասարակ որևէ քաղաքական-հասարակական լուրջ գործիչ, չեն կարող հաշտվել՝ մի հոգևոր պատասխանատու ղեկավարի, նման հայտարարությունների հետ:

Այլ բան է քաղաքական կյանքի բնույթն ու ապարեզը, և բոլորովին այլ բան՝ եկեղեցու առաքելության բնույթն ու էությունը և եկեղեցականի կոչումը:

Քաղաքականը անհրաժեշտորեն՝ պարագայական է, փոփոխական ու հատվածական: Իսկ եկեղեցին, հավիտենական հաստատություն է, իր էությամբ անփոփոխ, իր առաքելությամբ՝ մայր դաստիարակը ժողովրդի բոլոր զավակներին անխտիր, հավասարապես, վեր կուսակցական, հատվածական հակամարտություններից:

Այո, եկեղեցին, հոգևորականը պետք է ներկա լինեն հասարակական, ազգային կյանքի մեջ, սակայն որպես՝ միարար, հաշտարար և խաղաղարար գործոն, ազգի և հայրենիքի գերագույն շահերի գիտակցությամբ:

Մեզ մնում է ափսոսանք հայտնել այս անսպասելի ելույթի առթիվ և եղբայրորեն հորդորել Անթիլիասի գահակալ Խորեն կաթողիկոսին, որպեսզի պատշաճ մի ձևով, հետս կոչե հիշյալ իր հայտարարությունները, այլապես անօրինակ մի նոր կացություն կստեղծվի Իր և Իր Աթոռի համար, հայ եկեղեցու և ժողովրդի ծոցում:

Հարցում—Մի հարց ևս, Վեհափառ:

Անթիլիասի Աթոռի միաբանները մասնակցելո՞ւ են եպիսկոպոսական ժողովին, որ գումարվելու է ս. Էջմիածնում:

Պատասխան—Ինչպես հայտնի է, Մենք վաղուց ենք հրավերներ ուղղել Տանն Կիլիկիո կաթողիկոսին և եպիսկոպոսներին, սակայն տակավին վերջնական պատասխան չենք ստացած նրանց մասնակցության մասին:

10 սեպտեմբեր 1969 թ.

Հեռագիր

Տ. Տ. ԽՈՐԵՆ Ա

ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈ

Լիբանան, Բեյրութ, Անթիլիաս

Ի հետևանս Մեր տասը սեպտեմբերի հայտարարության Ձեզի ուղղված 31 օգոստոս Մեր նամակին, այժմ անհրաժեշտ կգտնենք, որ հառաջիկա եպիսկոպոսական ժողովը հանգամանորեն քննարկե մեր եկեղեցվո ներքին միության ամրապնդման հարցը Ձեր Աթոռի եպիսկոպոսներուն հետ միատեղ: Կհաստատենք Ձեր 12 սեպտեմբերի հեռագիրը Ձեր հինգ եպիսկոպոսներու մասնակցության մասին եպիսկոպոսական ժողովին:

ՎԱՉԳԵՆ ԿԱԹՈՂԻԿՈՍ

13-9-69

Հեռագիր

Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Մեծ ուրախությամբ ստացանք Ձեր օգոստոսի 31 թվակիր նամակը ի պատասխան մեր եղբայրական գործակցության փափագին: Խորապես ցավում ենք Ձեր սեպտեմբերի 14 թվակիր հեռագրի և ռադիո թղթակցին արած Ձեր հայտարարությունների առթիվ, որոնք հրապարակվեցին որոշ թերթերում և որոնց համար մենք ոչ մի արդարացում չենք գտնում: Դրանք հիմնված էին սխալ տեղեկությունների վրա: Մենք ոչ մի պատճառ չենք տեսնում օրակարգի առաջին կետի վերաբերյալ Ձեր դիրքի փոփոխության մասին և անկեղծորեն հույս ենք հայտնում, որ Դուք կվերադառնաք Ձեր 31 օգոստոսի թվակիր նամակի ոգուն: Այն հոգեկան կապերը, որոնք միացնում են մեր ս. եկեղեցու երկու մեծ Աթոռները, ինչպես նաև եկեղեցական կարգերի բարեռորոգման վերաբերյալ ընդհանուր ուսումնասիրության համար մեր խնդրանքը չպետք է ազդվի նման պատահականություններից: Խնդրում ենք Ձեզ հավաստիացնել մեզ, որ օրակարգի առաջին կետը առարկա չի դառնա ոչ քննարկման, ոչ բանավեճերի և ոչ էլ որոշումների, որպեսզի մենք կարողանանք մեր Աթոռը ներկայացնող եպիսկոպոսներին շտապ ուղարկել:

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԽՈՐԵՆ Ա.

23 սեպտեմբեր 1969 թ.

Հեռագիր

Տ. Տ. ԽՈՐԵՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈ

Անթիլիաս, Բեյրութ, Լիբանան

Այսօր ստացանք Ձեր հեռագիրը լրիվ ընթեռնելի: Մենք վերստին կհրավիրենք Ձեր եպիսկոպոսները Էջմիածին ժողովի: Ձեզ անհանգստացնող հարցը այստեղ կլուծենք համախորհուրդ Ձեր եպիսկոպոսներու հետ: Ձեզ կվստահեցնենք թե որևէ անհարմար կացություն չստեղծվիր Ձեր Աթոռին համար: Եպիսկոպոսական ժողովը սեպտեմբեր 27-ին:

ՎԱԶԳԵՆ ԿԱԹՈՂԻԿՈՍ

24-9-69

Հեռագիր

Անթիլիաս, 27 սեպտեմբեր 1969 թ.

Ն. Ս. ՕԾՈՒԹՅՈՒՆ
Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին

Ստացանք Ձեր 24 սեպտեմբերի հեռագիրը: Կցավինք հայտնելու որ այնտեղ չգտանք վերահաստատումը Ձեր 31 օգոստոսի նամակին ոգիին և տառին: Կմաղթենք որ հառաջիկային ավելի նպաստավոր պայմաններ թույլատրեն միասնաբար ուսումնասիրելու եկեղեցական բարեկորոգմանց հիմնական հարցը ի խնդիր մեր ս. եկեղեցվո առավել մեծ բարիքին:

ԽՈՐԵՆ ԿԱԹՈՂԻԿՈՍ

Էջմիածին, 30 հոկտեմբեր 1969 թ.

Ն. Ս. ՕԾՈՒԹՅՈՒՆ
Տ. Տ. ԽՈՐԵՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈ

Անթիլիաս

Աստուծոյ օգնականությամբ մեր սուրբ եկեղեցվո Եպիսկոպոսաց ժողովը, գումարված Մայր Աթոռ ս. Էջմիածին Մեր նախագահությամբ, իր աշխատանքը բարի արդյունքներով ավարտեց, օրակարգի վրա նախատեսված հարցերը քննարկելե հետո՝ 29 սեպտեմբեր—2 հոկտեմբերին:

Այսու կհաստատենք եպիսկոպոսաց ժողովի 6 հոկտեմբեր 1969 թվակիր Դիվանիս հաղորդագրությունը որ ուղարկված է նաև Ձերդ Սրբության ի գիտություն:

Սույն Մեր գրով խղճի պարտք կզգանք, սրբազան ժողովականներու հետ մեկտեղ՝ հայտնելու Մեր վիշտը որ Ձեր Աթոռի եպիսկոպոսները չմասնակցեցան վերոհիշյալ ժողովին, որովհետև օրակարգի մեջ նախատեսած էինք քննարկումը «Հայ եկեղեցվո միության ամրապնդման» հարցի, որ մեր եկեղեցվո արդի կյանքի ամենացավոտ ու ամենաանհետաձգելի հարցը կհանդիսանա:

Ձեր ներկայացուցիչներ՝ տ. Գարեգին եպս. Սարգիսյանի և տիար Ասկեբերան Արզումանյանի ժամանումը Մայր Աթոռ, անցյալ օգոստոսի վերջերուն, Մեզի ներշնչած էր հույսը թե Ձեր եպիսկոպոսներու մասնակցությամբ՝ Հայաստանյայց եկեղեցվո եպիսկոպոսաց ժողովին սկիզբ պիտի առնե հոր շրջան մը Մայր Աթոռիս և Ձեր Աթոռին հարաբերությանց մեջ:

Այդ էր պատճառը որ Մենք ընդառաջելով Ձեր և Ձեր ներկայացուցիչներու պնդումներուն, համաձայնություն տվինք Մեր 30 օգոստոս 1969 թվակիր

նամակով, որ եպիսկոպոսական ժողովի օրակարգի վրա պահելով հանդերձ «Հայ եկեղեցվո միության ամրապնդման» հարցը, լայն քննարկման առարկա չդառնա ան, այլ ժողովի որոշումով այդ քննարկումը փոխանցվի՝ Մայր Աթոռիս և Ձեր ներկայացուցիչներե կազմված հանձնաժողովի մը, որ պետք է գումարվեր եպիսկոպոսական ժողովեն անմիջապես հետո:

Այս և այլ կարևոր հարցերու մասին լսելով Ձեր երկու ներկայացուցիչներու հավաստիացումները, Մենք առավել լավատես դարձանք և տպավորությունը ունեցանք, թե Ձեր Աթոռեն ներս կզարթնի կամեցողությունը կյանքի կոչելու՝ 1963-ի Երուսաղեմի մեր ողջագուրումի ոգին: Այս հավաստիացումներեն մեկն էր, որ ս. Էջմիածնեն անջատված թեմերեն ներս պաշտոնավարող Ձեր Աթոռի եպիսկոպոսները, ժողովին պիտի մասնակցեին իբրև Տանն Կիլիկիո միաբան եպիսկոպոսներ և ոչ թե իբրև թեմական առաջնորդներ: Ինչպես քաջ գիտեք, արդեն Մեր պաշտոնական հրավերներն ալ 4 ապրիլ 1969 թվակիր, ուղղյալ Ձեր եպիսկոպոսներուն, այդպես էին հաստատագրված: Մեր այս օրինավոր պահանջին վրա, տ. Գարեգին եպիսկոպոս պաշտոնապես խոստացավ հարգել այս պայմանը, որ Մայր Աթոռիս համար սկզբունքային վճռական նշանակություն ուներ: Եվ մեծ եղավ Մեր հուսախաբությունը, երբ Ձեր ներկայացուցիչներու վերադարձեն տասը օր անց, 14 սեպտեմբերին, «Այգ» օրաթերթին մեջ կարդացինք Ձեր հայտարարությունը թե Ձեր եպիսկոպոսները՝ Մարսիլիայեն, Հունաստանեն, Միացյալ Նահանգներեն, ժողովին պիտի մասնակցին հիշյալ երկիրներու թեմական առաջնորդներու հանգամանքներով, ինչ-որ բացահայտ խախտում էր մեր միջև գոյացած համաձայնության: Ուրեմն հազիվ առաջին քայլը առնելու կպատրաստվեինք դեպի մերձեցում և համերաշխ գործակցություն, ահա Դուք կփորձեիք օգտագործել այս առաջին պահն իսկ, կերպով մը «օրինականացնելու» անօրինական վիճակներ, ճիշտ այն վիճակները, որոնք քննարկման և լուծման ենթակա պետք է ըլլային կազմվելիք ապագա հանձնաժողովին կողմե: Դուք շատ լավ կըմբռնեք թե անհնար էր որ Մենք համաձայնեինք որ՝ օրինակի համար Արտավազդ եպիսկոպոս Թրթրյանը Մայր Աթոռ պաշտոնապես ընդունվեր իբրև «հարավային Ֆրանսայի և Մարսիլիո առաջնորդ» ինչպես կհայտարարեիք: Այսպիսով Մենք հստակորեն տեսանք թե վերստին կգտնվինք դեմ հանդիման այն նույն ոգիին և գործելակերպին, որ Անթիլիաս ցուցաբերեց նաև 1963-ի ողջագուրումեն հետո, այն խաբկանքի մը վերածելով:

«Այգ» օրաթերթի մեջ Ձեր անսպասելի հայտարարությունը և խախտումը Ձեր ներկայացուցիչներու խոստումին, առաջին պատճառը հանդիսացավ, որ Մենք ալ անդրադառնանք Մեր 30 օգոստոս թվակիր նամակին, և անհրաժեշտ գտնենք որ եպիսկոպոսաց ժողովին մեջ քննարկման առարկա հանդիսանա «Հայ եկեղեցվո միության ամրապնդման» հարցը, Ձեր Աթոռի եպիսկոպոսներու հետ միասին:

Մեր վրա ծանր ազդեց նաև Ձեր անսպասելի ճառը խոսված Բոստոնի մեջ և հրապարակված «Հայրենիք» օրաթերթի 11 հուլիս 1969 թիվին մեջ, որ Մեր ձեռքը հասավ սեպտեմբերի 6-ին, Ձեր ներկայացուցիչներուն Մայր Աթոռեն մեկնելեն քանի մը օր հետո:

Ձեր ճառը, խոսված քաղաքական կուսակցության մը համագումարի բացման հանդիսության և մանավանդ անոր բովանդակությունը իրոք որ անանախընթաց և անօրինակ կացության մեջ դրավ Ձեր անձը և Ձեր Աթոռը, շփոթեցնելով ու մտահոգելով Մեզ և բոլոր պատասխանատու հասարակական

գործիչները, վստահ ենք՝ ներառյալ նաև վերոհիշյալ կուսակցության լուրջ ղեկավարները:

Այսու, Մենք անգամ մը ևս կհորդորենք Ձեզ, պատշաճ ձևով մը հետս կոչել Ձեր այդ հայտարարությունները:

«Այգ»-ի մեջ Ձեր հայտարարութենեն և Բոստոնի Ձեր ճառեն հետո, Մենք այո՛ անդրադարձանք թե այլևս կարելի չէ եպիսկոպոսաց ժողովին չխոսիլ Ձեր եպիսկոպոսներու հետ, այս հարցերուն, և Մայր Աթոռիս ու Ձեր Աթոռին փոխհարաբերությանց մասին: Մենք այլևս չէինք կրնար չարտահայտել Մեր այս մտահոգությունները և չլսել Ձեր ներկայացուցիչներուն լուսաբանությունները: Եվ ի վերջո անոնք ինչո՞ւ այդքան պիտի խուսափեին խոսքի նստելե և բացատրություն տալե, մանավանդ որ Մեր վերջին, 24 սեպտեմբերի հեռագրով կկրկնեինք Ձեզի Մեր հրավերը սա խոսքերով՝

«Այսօր ստացանք Ձեր հեռագիրը լրիվ ընթեռնելի: Մենք վերստին կհրավիրենք Ձեր եպիսկոպոսները Էջմիածին ժողովի: Ձեզ անհանգստացնող հարցը այստեղ կլուծենք համախորհուրդ Ձեր եպիսկոպոսներուն հետ: Ձեզ կվստահեցնենք թե որևէ անհարմար կացություն չստեղծվիր Ձեր Աթոռին համար: Եպիսկոպոսական ժողովը կհետաձգենք սեպտեմբեր 27-ին»:

Այսպիսով Մենք չհասկցանք, թե իրապես ինչո՞ւ չկամեցաք որ Ձեր եպիսկոպոսները Մայր Աթոռ ս. Էջմիածին գան, մասնակցելու եպիսկոպոսաց ժողովին և ս. մյուռոնի օրհնության սրբազան արարողությանց, երբ սքանչելի առիթ մը կհանդիսանար որ եղբայրական սերը աճեր մեր և ձեր եպիսկոպոսներու միջև, և չափով մը գոնե պարզաբանվեին մեր ցավոտ հարցերը ի խնդիր ապագա բարվոք և օրինավոր լուծման:

Ի սեր Աստուծո սիրելի Եղբայր, այլևս կարելի չէ այս կերպ շարունակել: Այս բոլորը պետք է արմատեն իսկ դարմանվին: Ինչպես հստակորեն անձամբ հայտարարեցինք տ. Գարեգին եպիսկոպոսին և տիար Ռ. Արզումանյանին, Անթիլիաս պետք է անկեղծորեն և վճռականորեն մեկ անգամ ընդմիշտ հրաժարի՝

ա. Ս. Էջմիածնի Մայր Աթոռին հավասարազոր ըլլալու իր ձգտումեն, որ հրապարակ բերվեցավ և շեշտվեցավ 1964-են սկսյալ:

բ. Արտասահմանի թեմերը և եկեղեցիները ս. Էջմիածնեն բաժնելու և իրեն միացնելու քաղաքականութենեն:

գ. Իր նոր կանոնադրության 32 և 33-րդ հոդվածներեն, որոնք Անթիլիաս տևական հարձակողական դիրքի մեջ կպահեն ընդդեմ ս. Էջմիածնի:

Այս կացությունը պետք է վերջ գտնե հանուն մեր եկեղեցվո և մեր պանդուխտ զավակներու ազգային գերագույն շահերուն և ներքին խաղաղության:

Կխնդրենք հավատացեք, թե Մեր մեջ չխոսիր ոչ մեկ անձնական փառասիրության կամ անբարյացակամ զգացում Ձեր անձին և կամ ձեր շրջանակներուն հանդեպ:

Մեր բոլոր արտահայտություններուն, Մեր բոլոր գործերուն առանցքը կկազմեն միմիայն Մեզ տանջող մտահոգությունները, մեր եկեղեցվո և մեր պանդուխտ ժողովուրդի ապագային նկատմամբ: Եվ հույս ունինք թե վերջ ի վերջո Ձերդ Սրբությունը և Անթիլիասի մեր բոլոր եղբայրները պիտի հասկնան Մեր հոգին և պիտի չմերժեն Հայոց Ընդհանրական Հայրապետության հրավերը՝ օրինականության, միության, խաղաղության և համերաշխ գործակցության: Օրինականություն, խաղաղություն և գործակցություն իրարմե անբաժանելի են:

Ահա այս սպասումով է որ Մենք ընթացք տալով եպիսկոպոսաց ժողովի առաջադրանքին, և ի նկատի ունենալով Ձեր 26 օգոստոս թվակիր նամակի առաջարկը, կհրավիրենք որ նշանակեք 3—5 ներկայացուցիչներ Ձեր Աթոռեն, որ Ձեր կողմե լիազորված ըլլան գալու ս. Էջմիածին, քննարկելու համար սփյուռքի մեջ մեր եկեղեցիեն ներս ստեղծված տագնապալի կացությունները, և օրինավոր լուծման հանգելու Մեր նշանակած ներկայացուցիչներուն հետ միասին:

Մայր Աթոռիս և Ձեր Աթոռի ներկայացուցիչներեն կազմված հանձնաժողովը, կխորհինք թե կրնա ս. Էջմիածին գումարվիլ հառաջիկա տարվան հունվար կամ ամենաուշը փետրվար ամսվան ընթացքին:

Ձեր ներկայացուցիչները Մենք պիտի ընդունեինք հայրական սիրով, իբրեվ Մեր ցանկալի հյուրերը:

Լավատեսությամբ, Մենք կսպասենք Ձեր պատասխանին, բարի հույսով թե Մեզի պիտի հաղորդեք նաև անունները Ձեր լիազորներուն, որ պիտի մասնակցին վերոհիշյալ հանձնաժողովի աշխատանքներուն:

Մաղթելով Ձերդ Սրբության լիակատար ու տևական քաջառողջություն, մնամք եղբայրական սիրո ողջունիվ՝

ՎԱԶԳԵՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Մնթ.—Սույն հրավեր-նամակը մնացել է ցարդ անպատասխան:

Էջմիածին, 29 դեկտեմբեր 1969 թ.

ԳԵՐԱՇՆՈՐՀ
Տ. ԳԱՐԵԳԻՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ
ԴՈՒԱՆ ԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹՅԱՆ

Անթիլիաս

Սրբազան եղբայր,

Վերջերս մեզանում համառ լուրեր են տարածվել առ այն, որ Երևանի ս. Սարգիս եկեղեցվո նախկին ծխատեր քահանա Սարգիս Անդրեասյանը, որը քահանա էր ձեռնադրվել 1948-ին, հրամանավ երջանկահիշատակ Տ. Տ. Գևորգ Զ կաթողիկոսի, և որը, սակայն, հետագային անազնվաբար դրժելով իր ուխտը, լքեց ծուխն ու մայր հայրենիքը, որի համար կարգալույծ հռչակվեց Արարատյան թեմի որոշումով և հայրապետական վճռով, իբր թե արժանացել է Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության բարյացակամ հովանավորությանը: Մեր ունեցած տեղեկությունների համաձայն, նա իբր թե վերահաստատվել է իր քահանայական կարգի մեջ, արժանացել ավագության աստիճանի և նշանակվել, որպես Չիկագոյի եկեղեցվո հովիվ, Աթոռիդ միաբան տ. Հրանտ արք. Խաչատրյանի կարգադրությամբ:

Ամենայն Հայոց Հայրապետի հրամանով դիմում ենք Ձեզ պարզելու հա-

մար այս բոլորը, Ձեզանից սպասելով ճշգրիտ տեղեկություններ վերոհիշյալ կարգալույծ և անարժան Սարգիս Անդրեասյանի մասին:

Ընդունեցեք մեր եղբայրական ողջույնները և բարի մաղթանքները:

Մնամ աղոթակից՝

ՀՈՒՍԻԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՍԱՆԹՈՒՐՅԱՆ
ԱՆԴԱՄ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՐԴԻ

Ծնթ.—Սույն նամակի պատասխանը չի ստացվել:

Էջմիածին, 12 փետրվար 1970 թ.

Ն. Ս. ՕԾՈՒԹՅՈՒՆ
Տ. Տ. ԽՈՐԵՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈ

Անթիլիաս

Ծանոթ է Ձերդ Սրբության թե Երևանի ս. Սարգիս եկեղեցվո նախկին քահանա Սարգիս Անդրեասյանը, ձեռնադրված լուսահոգի Տ. Տ. Գևորգ Զ կաթողիկոսի հրամանով, լուսարարապետ տ. Սահակ արքեպիսկոպոսի ձեռամբ, դրժելով իր եկեղեցվո համայնքին ծառայության ուխտը, և չանսալով Արարատյան թեմի եպիսկոպոսի և թեմական խորհուրդի կարգադրությանց ու բազմաթիվ նախազգուշացումներուն այլև արհամարհելով Մայր Աթոռիս Գերագույն հոգևոր խորհուրդի հորդորները, առանց ոևէ բանավոր պատճառի, ոտնակոխ ըրավ եկեղեցական կարգապահությունը և լքեց իր հոտը և իր եկեղեցին, մեկնելով արտասահման:

Արարատյան թեմական եպիսկոպոսի և թեմական խորհուրդի առաջադրանքով և համաձայն մեր եկեղեցվո կարգապահական կանոններուն, հայրապետական վճռով Մենք կարգալույծ հռչակեցինք Սարգիս Անդրեասյանը, զինք դասելով ի շարս աշխարհականաց: Մեր այդ վճիռը հրապարակվեցավ Մայր Աթոռի Դիվանի կողմե 9 հունվար 1968-ին, որ ինչպես գիտեք լույս տեսավ Մայր Աթոռիս «Էջմիածին» պաշտոնաթերթի և արտասահմանի թերթերուն մեջ:

Վերջերս տեղեկացանք թե Ձեր որոշումով, Սարգիս Անդրեասյանը վերահաստատված է քահանայական իր կարգին մեջ և Աթոռիս միաբան տ. Հրանտ արք. Խաչատուրյան հոգևոր հովվի պաշտոն վստահած է անոր Չիկագոյի մեջ:

Ստուգելու համար այս լուրի ճշտությունը, տ. Հուսիկ եպս. Սանթուրյան, Մեր հանձնարարությամբ 29 դեկտեմբեր 1969 թվակիր նամակով հարցում կատարեց Աթոռիդ դրան եպիսկոպոս տ. Գարեգին եպիսկոպոսին, առանց սակայն պատասխան ստանալու:

Նոր լուրեր զոր ստացանք Նյու-Յորքի մեր առաջնորդարանեն, դժբախտաբար կհաստատեն Մեր ունեցած տեղեկությունը Սարգիս Անդրեասյանի մասին, այն ինչ որ պահ մը Մեզի անհավատալի կթվար:

Այս կացության առջև, Մենք Ձեզ կհրավիրենք որպեսզի Ձեր վճռական և շուտափույթ մեկ կարգադրությամբ, առաջքը առնեք այս գայթակղության, հեռացնելով Սարգիս Անդրեասյանը եկեղեցական պաշտոնեն, քանի որ ան Մեր հայրապետական վճիռով՝ է և կմնա կարգազուրկ և ոչ ոք իրավասու չէ Մեր վճիռը խախտելու:

Մեր այս նախանձահույզ վերաբերմունքը և պահանջը կհիմնվին ոչ միայն եկեղեցական կարգ ու կանոնի վրա, այլ նաև Մեր մտահոգության, չտկարացնելու մեր մայր երկրի հոգևոր կյանքը, եկեղեցականներու թվի նվազումով:

Երևանի մեր եկեղեցիներու քահանաներու թիվը ոչ միայն պետք չէ նվազի, այլ աճի և մեծնա, բավարարելու համար մեր հավատացյալ ժողովուրդի հոգևոր կարիքները: Այս առիթով Ձեզի կկամենայինք հայտնել նաև թե խրախուսված Սարգիս Անդրեասյանի նկատմամբ Ձեր Աթոռի ցուցաբերած վերաբերմունքեն, Երևանի մեջ պաշտոնավարող երկու քահանաներ ևս կպատրաստվին լքել իրենց ժողովուրդը ու իրենց եկեղեցին, և մեկնել մայր հայրենիքեն:

Նման դասալիքներ քաջալերելով, Ձեր Աթոռը հարված կհասցնե Հայաստանի մեր եկեղեցիներուն և կրոնական կյանքին:

Պարզ է թե Մենք ամեն միջոց ի գործ պիտի դնենք խափանելու համար այս չարագործությունը, և ուխտադրուժ, դասալիք քահանաները կարգազուրկ պիտի հռչակենք հրապարակավ, վստահ ըլլալով թե արտասահմանի ամբողջ հայությունը անխտիր պիտի դատապարտե զանոնք:

Սույն գրով ուրեմն, կդիմենք Ձեզի սիրեցյալ Եղբայր, որ անդրադառնաք այս ծանրակշիռ հարցին և հաճիք հրամայել որպեսզի հեռացվի Սարգիս Անդրեասյանը իր քահանայական պաշտոնեն ու դիրքեն, իբրև աշխարհիկ անձ, հաղորդելով Մեզի այդ մասին շուտափույթ կերպով:

Հույս ունինք որ պիտի ստանանք Ձեր պատասխանը մինչև այս ամսույս վերջը:

Այս առթիվ կհաստատենք Մեր 30 հոկտեմբեր 1969 թվակիր կարևոր նամակը, որուն պատասխանը մինչև այժմս ստացած չենք:

Եղբայրական սիրով ի Քրիստոս՝

ՎԱԶԳԵՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ծնթ.—Հայրապետական սույն նամակը մնացել է նույնպես անպատասխան:

Անթիլիաս, 20 փետրվար 1970 թ.

ՆՈՐԻՆ Ս. ՕԾՈՒԹՅՈՒՆ
Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին

Վեհափառ Եղբայր ի Քրիստոս,

Ամերիկայի Նյու-Ճըրզի նահանգի մեջ վերջերս պատահեցավ խիստ գայթակղալից և տգեղ արարք մը: Կուսակրոն վարդապետ մը ամուսնացավ ներ-

կայությամբ և կնքահայրությամբ եպիսկոպոսներու և տասնյակ մը քահանաներու: Հայց. եկեղեցվո մեջ անհնարինութեան այս ապօրինությունը առատ նյութ հայթայթեց մեր մամուլին, բոլորն ալ անխտիր և միահամուռ կերպով դատապարտեցին այս եղածը որպես խախտում Հայց. եկեղեցվո դարավոր ավանդություններուն և կանոններուն:

Մեր հովվապետական շրջապտույտի ընթացքին ի Միացյալ Նահանգս, սրտի խոր ճմլումով նկատեցինք Ամերիկայի երկու հատվածներուն մեջն ալ մեր ժողովուրդին ընդվզումն ու խռովքը կատարված հակականոնական և հակաօրինական այս արարքին նկատմամբ:

Այդ օրերուն, Մեզի հատուկ պատճառներով չուզեցինք խնդրո առարկա դարձնել այս պարագան, մանավանդ՝ իրազեկ դառնալե հետո Ձեր ծանոթ հայտարարության ձևին ու ոգիին:

Մենք սպասեցինք, որ Ձեր նախագահությամբ ի ս. Էջմիածին գումարելի Հայց. եկեղեցվո եպիսկոպոսներու ժողովը պիտի ըսեր իր դատապարտության խոսքը՝ նվազագույն դադարեցնելով ենթական հետ այնու քահանայագործելու իրավունքե:

Ափսոս որ իզուր անցան Մեր և բազմահազար հայերու սպասումներն ու ակնկալությունները Ձեզմե և Ձեր եպիսկոպոսական ժողովեն: Եվ Մեզի համար իրական անակնկալ մը եղավ երբ լսեցինք որ հակառակ եպիսկոպոսական ժողովին մեջ զեկուցագրողի այս հարցի մասին բերած դատապարտման առաջարկության և ժողովական եպիսկոպոսներու մեծամասնության արդար բողոքին, Նյու-Ճըրզիի այս նորակերպ եկեղեցականը ցարդ կմնա պաշտոնի վրա և կշարունակե եկեղեցականի գործ կատարել:

Արդ, առաջնորդվելով Հայց. եկեղեցվո գերագույն շահերեն և անոր դարավոր կարգերն ու կանոնները անխախտ և անխոցոտ պահելու ու պահպանելու նախանձախնդրութենեն, ներկա գրով պիտի փափագեինք որ Ձեր հայրապետական վճռով մի անգամ ընդ միշտ վերջ տայիք Հայց. եկեղեցվո ծոցին մեջ ստեղծված այս անկերպարան և վրդովեցուցիչ վիճակին՝ իսպառ դադրեցնելով խնդրո առարկա անձը քահանայագործելու իրավունքե և դասելով զինքը ի շարս աշխարհականաց՝ յօրինակ այլոց:

Եթե Մեր այս նախանձախնդրությունը պահանջի կվերածենք, պատճառը այն է որ վաղը նույն բանը կրնա պատահիլ Մեր իրավասության ենթակա թեմերուն մեջ՝ Մեզ դնելով ծանր կացության մը առջև: Ահա թե ինչու համար կփափագինք որ այս խնդիրը օր առաջ վերջնական հանգամանք ստանա և որպես նախընթաց չծառայե:

Կսպասենք որ Մեր այս սրտցավ և իրավ բողոքին ձայնը չի մնար անլսելի Ձեր Եղբայրութենեն:

Մնամ եղբայրական սիրո ջերմ ողջունիվ,

Աղոթակից՝

ԽՈՐԵՆ Ա

ԿԱԹՈՂԻԿՈՍ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈ

Էջմիածին, 9 մարտ 1970 թ.

Ն. Ս. ՕԾՈՒԹՅՈՒՆ
Տ. Տ. ԽՈՐԵՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈ

Անթիլիաս

Այսու հաստատում ենք Ձեր 20 փետրվար 1970 թվակիր նամակը և Ձեզ ի գիտություն հայտնում ենք, թե Ամենայն Հայոց կաթողիկոսը իր ժամանակին, հայրապետական որոշումով, մեր եկեղեցու ավանդական կարգի խախտում է նկատել անցյալ տարի Միացյալ Նահանգների Նյու-Ճըրզիի հայոց եկեղեցու հովիվ, կուսակրոն քահանայի ամուսնության պարագան:

Ի նկատի ունենալով, սակայն, Միացյալ Նահանգների թեմական առաջնորդի և թեմական խորհրդի բացատրագրերը և խնդրանքը, ի նկատի ունենալով, որ Տ. Տ. Գևորգ Ե կաթողիկոսի կանոնական կոնդակով մեր եկեղեցում թույլատրված է այրիացած քահանաների կրկնամուսնությունը, այլև ի նկատի ունենալով նախընթաց նման պարագաներ Տ. Տ. Գևորգ Զ կաթողիկոսի օրոք, Վեհափառ Հայրապետը ներողամտությամբ է վերաբերվել վերոհիշյալ խախտումի նկատմամբ «ոչ յօրինակ այլոց» հայրապետական Իր վճիռով, հրապարակված 12 ապրիլ 1969 թվականին:

Թույլ տվեք նաև Ձեր նկատառման հանձնել, թե անցյալ սեպտեմբերին, Մայր Աթոռում գումարված եպիսկոպոսաց ժողովը չի զբաղվել սույն խնդրով և որևէ վերաբերմունք չեն ճշտել ժողովականները, հայրապետական վճիռով հարցը փակված նկատելով:

Այս առթիվ պիտի կամենայինք Ձեզ հիշեցնել, թե Ամենայն Հայոց Հայրապետը սպասում է Ձեզանից պատասխան՝ 30 հոկտեմբեր 1969 և 12 փետրվար 1970 թվակիր կարևոր Իր նամակներին:

Հաճեցեք ընդունել մեր ջերմագին մաղթանքները Ձերդ Սրբության քաջառողջության և արևշատության համար:

ՀԱՅԿԱԶՈՒՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
ԱՏԵՆԱՊԵՏ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՐԴԻ



ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Նորին Ս. Օծություն Տ. Տ. Վազգեն Ա կաթողիկոսը Ամենայն Հայոց, մեկնելով Մայր Աթոռ ս. Էջմիածնից մայիսի 3-ին 1970 թ., պաշտոնական այցելություն տվեց Հռոմ, Նորին Սրբություն Պավղոս Զ Պապին, եղբայրական սիրո ողջագուրմամբ, լինելով հյուրը Սրբազան Քահանայապետի մայիսի 8—12-ը, Երուսաղեմի և Կ. Պոլսի հայոց սրբազան պատրիարքների և վեց արքեպիսկոպոսների ու եպիսկոպոսների հետ: Պատմական այս այցելությունը տեղի ունեցավ փառաշուք հանդիսավորությամբ, որի ավարտին Նորին Սրբություն Պավղոս Զ Պապը և Ամենայն Հայոց Հայրապետը ստորագրեցին մի հաղորդագրություն՝ ի խնդիր եկեղեցիների միջև սիրո և միության ամրապնդման ու գործակցության և ի խնդիր աշխարհի խաղաղության:

Ապա Տ. Տ. Վազգեն Ա կաթողիկոսը այցելություն տվեց Վենետիկի Մխիթարյան միաբանության ի ս. Ղազար, Գերապայծառ Արբահոր մասնավոր հրավերով:

Ամենայն Հայոց կաթողիկոսը հետ այնու, Արևմտյան Եվրոպայի հայրապետական պատվիրակ գեր. տ. Սերովբե արքեպ. Մանուկյանի որդիական հրավերով, շարունակեց Իր հովվապետական ուղևորությունը՝ Իր հայրական օրհնությունները բաշխելով Միլանոյի, Փարիզի, Լիոնի, Վալանսի, Դեսինի, Մարսելի, Մոնակոյի, Նիսի և Ալֆորվիլի հայ եկեղեցական համայնքներին:

Վեհափառ Հայրապետը Իր օրհնաբեր այցելությունը տվեց Գալուստ Կյուլպենկյան հիմնարկությանը, հարգարժան նախագահի հրավերով, հունիսի 8—11-ը:

Տ. Տ. Վազգեն Ա կաթողիկոսը Իր շքախմբով վերադարձավ Մայր Աթոռ ս. Էջմիածին 1970 թ. հունիսի 20-ին:

ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ

22 հունիս 1970 թ.,
Ս. Էջմիածին

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀ ԲԱԴԱԼ ՄՈՒՐԱԴՅԱՆԻՆ

Հուլիսի 11-ին, շաբաթ օրը, առավոտյան ժամը 11-ին, Վեհափառ Հայրապետը Երևանում, Կառավարական տանը, այցելություն տվեց Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետի նախագահ Բադալ Մուրադյանին:

Ամենայն Հայոց Հայրապետի և Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետի նախագահի միջև տեղի ունեցավ ջերմ զրույց՝ արտագին մթնոլորտում:

Զրույցին ներկա էին՝ Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետի գործերի կառավարիչ Հ. Մելքոնյանը և Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Ս. Գասպարյանը:



ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Մայր Աթոռիս Դիվանը լիազորված է հայտարարելու, թե Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Ա Հայրապետի նախագահության ներքո գումարված Գերագույն հոգևոր խորհուրդը 30 ապրիլ 1970 թվականի իր նիստում, երկրորդ անգամ քննարկելով նախկին եպիսկոպոս Վազգեն Օհանյանի պարագան և նկատի ունենալով հիշյալի 30 հունվար և 22 ապրիլ 1970 թվակիր կարգաթողության գրերը՝ ուղղված Վեհափառ Հայրապետին, ցավով արձանագրեց, որ նա, հոգևոր ծառայության իր ուխտը դրժելով, կարգաթող է եղել և, հեռանալով եկեղեցուց, արդեն 15 փետրվար 1970 թվականից սկսած, ապրում է որպես աշխարհական:

Գերագույն հոգևոր խորհուրդը խնդրեց Տ. Տ. Վազգեն Ա կաթողիկոսին, Հայրապետական Իր վճռով՝ Վազգեն Օհանյան եպիսկոպոսին կարգալույծ հռչակել:

Նորին Սրբությունը ընթացք տալով Գերագույն հոգևոր խորհրդի միջնորդությանը, 2 մայիս 1970 թվակիր հայրապետական Իր վճռով կարգալույծ արեց նախկին եպիսկոպոս Վազգեն Օհանյանին, դասելով նրան աշխարհականաց շարքը, իր նախկին աշխարհական Գեորգ անունով, զրկելով նրան եկեղեցական որևէ արարողության, եկեղեցական կամ եկեղեցուն առընթեր որևէ կազմակերպության վարչական գործունեությանը մասնակից լինելու իրավունքից, նվազագույնը տասը տարի իր կարգաթողության օրվանից:

ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ

3 մայիս 1970 թ.,
Ս. Էջմիածին



ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆԱՑ ՀԱՄԱԳՈՒՄԱՐ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐԻ ՀԱՅՈՑ ԱՐԵՎԵԼՅԱՆ ԹԵՄԻ

Վեհափառ Հայրապետի բարեհաճ կարգադրությամբ և հրավերով Ամերիկայի Միացյալ Նահանգաց Արևելյան թեմի առաջնորդ տ. Թորգոմ արք. Մանուկյանի, ապրիլի 29—30 օրերին հոգևորականաց տարեկան համագումարին մասնակցեցին Մայր Աթոռից տ. Հովհաննես քհն. Մարուքյանը, Մայր տաճարի քահանաներից և հոգևոր ճեմարանում հայոց լեզվի և գրականության դասախոս, և Երևանի ս. Սարգիս եկեղեցուց՝ տ. Ռուբեն քհն. Մարտիրոսյանը:

Տարեկան համագումարը տեղի է ունեցել 1970 թվականի ապրիլի 29-ին և 30-ին, չորեքշաբթի և հինգշաբթի օրերը, Զելտենհամի (հարավային Ֆիլադելֆիա) ս. Երրորդություն հայոց եկեղեցում:

Ապրիլի 29-ին տեղի է ունեցել ժողովի բացումը և դիվանի ընտրությունը՝ նախագահությամբ թեմական առաջնորդ տ. Թորգոմ արք. Մանուկյանի, որը և կարդում է Վեհափառ Հայրապետի ողջույնի հետևյալ գիրը՝ ուղղված համագումարի մասնակիցներին.

Գերաշնորհ տ. Թորգոմ արքեպիսկոպոս Մանուկյանին

Առաջնորդին Հյուսիսային Ամերիկայի արևելյան թեմի

Նյու-Յորք

Փրկչի Իշման սուրբ սեղանեն և սուրբ գրական Հայաստանեն, այսօր, Մեր մտածումը հուզումով զեղուն, կուղղվի դեպի ձեր հեռավոր ափերը, բերելու հայրական սիրո ողջույն և օրհնություն Ձերդ Սրբազնության և տիրախնամ թեմիդ հոգևորականաց համագումարին:

Սիրելի Սրբազան և նույնքան սիրեցյալ հոգևոր որդիներ Մեր, վստահ եղեք թե Հայոց Հայրապետը որ, հաճախ մտահոգությանց բեռան տակ կգտնվի, խորապես կըմխիթարվի ու կհրճվի ամեն անգամ, երբ կըտեսնե մեր եկեղեցիին ծոցին մեջ, աճը՝ հավատքի գործերու շինարար աշխատանքի, կարգապահ ոգիի ու հավատարիմ գործելակերպի:

Մենք կհավատանք թե նույն այս ոգիով համակված, դուք բոլորդ, այժմ ի մի հավաքված եք, որպեսզի առավել աճեցնեք ու զորացնեք ձեր մեջ և ձեր ժողովուրդին մեջ, մեր նախնյաց սուրբ հավատքը, որպեսզի առավել նպատակասլացությամբ կազմակերպեք Ձեր հոգեշեն աշխատանքը և առավել կարգապահությամբ ու հավատարմությամբ գործեք, միշտ նեցուկ հանդիսանալով ձեր սրբազան Առաջնորդին որ բոլորանվեր ջանքերով նվիրված է իր պատասխանատու առաքելության, զոր վստահ ենք թե պիտի շարունակե կենսագործել հետզհետե ավելի արդյունավետությամբ:

Գիտենք թե ձեր օրակարգի վրա ունիք ուշադրության արժանի հարցեր, բոլորն ալ կարևոր և կարոտ բարի և շինարար լուծումներու: Մենք ձեր աշխատանքներուն լիակատար հաջողություն կմաղթենք: Սակայն ամեն բանե վեր, հայրաբար կհորդորենք ձեզ որ սիրով միանաք և սիրով գործեք, փոխա-

դարձ հարգանքով և փոխադարձ գնահատանքով: Ու նաև սիրով հիշեք ձեր հավատքի մայր կեդրոնը ի սուրբ Էջմիածին, ուր ձեր Հայրապետը տիվ և գիշեր կաղոթե ձեզի համար, համայն մեր եկեղեցիին ու ազգին համար:

Մեր զորությունը և մեր հաղթության գրավականը՝ սիրո մեջ է, միության մեջ է, անբաժանության մեջ է:

Հրավեր կկարդանք ձեզի ամենուդ, «Հնազանդ ըլլալու մեկդ մյուսին, երկյուղովը Քրիստոսի» (Եփես. Ե 22):

Շնորհք Տեառն Մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցի ընդ ձեզ ամէն:

ՎԱՉԳԵՆ ԱՌԱՋԻՆ
ԿՈԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Համագումարին ներկա էին 30 հոգևորական պատգամավորներ:

Երկու օրվա մեջ, ըստ ծրագրի կարդացվեցին հետևյալ դասախոսությունները.

ա) «Նոր սերնդի կրոնական և հայեցի դաստիարակության հարցը սփյուռքի մեր պայմաններում»
(տ. Հովհաննես քհն. Մարուքյան)

բ) «Հայաստանյայց եկեղեցին և արդիական հարցերը»
(տ. Ռուբեն քհն. Մարտիրոսյան)

գ) «Սուրբ Գրոց սերտողության և անձնական հոգևոր փորձառություններ»
(տ. Գրիգոր քհն. Հայրապետյան:

Զեկուցումը կարդաց Հովհաննես սրկ. Գասպարյանը):

դ) «Սողոլ սիքյուրիտի և ինքեմ տեքս հոգևորականների համար»
(Անգլերեն լեզվով: Պրն. Հըրպըրթ Ս. Ճոֆֆ)

Առաջին զեկուցման մեջ ներ սերնդի կրոնական և հայեցի դաստիարակության համար շեշտվում էին հիմնական չորս կետերի անհրաժեշտությունն ու միասնությունը.

ա) Եկեղեցին՝ իր գլուխ ունենալով ս. Էջմիածինը և Ամենայն Հայոց Հայրապետությունը:

բ) Դպրոց և հայ մշակույթ:

գ) Ընտանիք և դաստիարակություն:

դ) Հայրենասիրություն. վերածնված Մայր Հայաստանի պայծառ իրականությունը:

«Սուրբ Գրոց սերտողության և անձնական հոգևոր փորձառություններ» զեկուցման մեջ հեղինակը հայտնեց այն միտքը, որ ծեսերի կատարման հետ (պատարագ, մկրտություն, պսակ) անհրաժեշտ է նաև ս. Գրոց սերտողությունը հավատացյալի համար: Անհրաժեշտ է նաև սուրբ Գրոց սերտողություն կազմակերպել նաև եկեղեցիներում: Ուրիշներ առաջարկեցին այդ միացնել ծեսերի բացատրման և ուսուցման ժամանակ, որպեսզի ավելի ամբողջական ստացվի ավետարանական ուսուցումը հավատացյալի մոտ:

Հաջորդ օրը տ. Ռուբեն քհն. Մարտիրոսյանը կարդաց «Հայաստանյայց եկեղեցին և արդիական հարցեր» զեկուցումը, տվեց հայ եկեղեցու պատմականը, մատուցած ծառայությունները՝ հայ ժողովրդին, մշակույթի, լուսավորության, քրիստոնեական ոգու պահպանման գործում, ապա նշեց այն հարցերը, որոնք այսօր ծառացել են մեր եկեղեցու առաջ և սպասում են լուծման:

Չորրորդ զեկուցումը, որ անգլերեն էր, նվիրված էր ամերիկյան օրենքի բացատրմանը, ըստ որի քահանաները կարող են հետագայում ստանալ թոշակներ և, դժբախտության դեպքում՝ սահմանված օժանդակություն:

Համագումարը փակվեց եղբայրական սիրալիր մթնոլորտում և տերունական աղոթքով:

Ժամը 5-ին տեղի ունեցավ երեկոյան ժամերգություն:

Տ. Թորգոմ սրբազանի կազմած ծրագրով մեր քահանա հայրերը եղան հետևյալ քաղաքներում, որտեղ նրանք պատարագեցին և քարոզեցին.

Տ. Ռուբեն քհն. Մարտիրոսյան.

Մայիսի 3-ին՝ Ֆիլադելֆիայի հայոց ս. Սահակ և ս. Մեսրոպ եկեղեցում (հովիվ՝ տ. Եղիշե վրդ. Կիզիրյան).

Քարոզ՝ «Զի որք ոչն տեսանեն, տեսցեն և որք տեսանեն, կարասցին» (Յովհ. գլ. Թ 39).

Մայիսի 10-ին՝ Նյու-Յորքի Նյու-Ճըրզի շրջանի Ֆերլոնի հայոց ս. Ղևոնդ եկեղեցում (հովիվ՝ տ. Գառնիկ քհն. Հալաջյան).

Քարոզ՝ «Մայր սուրբ... աղաչեա վասն մեր զի լռեսցին պատերազմունք, դադարեսցին յարձակմունք թշնամեաց, տնկեսցի սէր և արդարութիւն ի յերկրի. աղաչեմք»:

Մայիսի 17-ին՝ Նյու-Յորքի Մայր տաճարում (հովիվ՝ տ. Կարեն քհն. Կտանյան).

Քարոզ՝ «Կեանք և կենդանարար յոյս և գոյացուցիչ լուսոյ, ինքն բարի աղբիւր բարութեան հոգի ուղիչ առաջնորդական» (շարական):

Մայիսի 24-ին՝ Գլիվլենդ քաղաքի հայոց ս. Գրիգոր Նարեկացի եկեղեցում (հովիվ՝ տ. Արշակ վրդ. Խաչատուրյան).

Քարոզ՝ «Ի վերայ Աջոյն և Էջմիածնի ամենայն ազգն հայոց կապեալ կան» (Ա. Դավրիժեցի):

Մայիսի 31-ին՝ տօն կաթուղիկէ ս. Էջ-

միածնի, Ուոտերթաուի հայոց ս. Հակոբոս եկեղեցում (հովիվ՝ տ. Տաճատ քհն. Դավիթյան).

Քարոզ՝ «Եկայք շինեսցուք սուրբ զիտրանն լուսոյ, քանզի ի սմա ծագեաց մեզ լոյս ի Հայաստան աշխարհի» (շարական):

Անգլերեն քարոզ՝ «Ողորմութիւն և ճշմարտութիւն պատահեսցին, արդարութիւն և խաղաղութիւն համբուրեսցին»:

Մայիսի 17-ին՝ Վաշինգտոնի ս. Մարիամ Աստվածածին եկեղեցում (հովիվ՝ գեր. տ. Բաբգեն եպս. Վարժապետյան).

ԱՄՆ-ի հայոց արևելյան թեմի 68-րդ պատգամավորական ժողովի խմբանկար

Տ. Հովհաննես քհն. Մարուքյան

Մայիսի 3-ին՝ Նորդհ Ֆիլադելֆիայի Զեթլենհամի ս. Երրորդություն եկեղեցում (հովիվ՝ տ. Զավեն վրդ. Արզումանյան).

Հայերեն քարոզ՝ «Ողորմութիւն և ճշմարտութիւն պատահեսցին, արդարութիւն և խաղաղութիւն համբուրեսցին» (սաղմոս):

Անգլերեն քարոզ՝ «Զօրութիւն ս. խաչի քո Քրիստոս որ կանգնեցեր ի փրկութիւն աշխարհի սա պահեսցէ զմեզ յամենայն փորձութենէ» (շարական):

Մայիսի 10-ին՝ Նյու-Յորքի ս. Վարդան Մայր տաճարում.

Հայերեն քարոզ՝ Տօն Համբարձման. «Ամբարձեալ զձեռս իւր օրհնեաց զնոսա եւ վերանայր յերկինս» (Ղուկ. ԻԴ 50):

Հայերեն քարոզ՝ Տօն Հոգեգալստեան. «Ես աղաչեցից զհայր և այլ մխիթարիչ տուցէ ձեզ, զի ընդ ձեզ բնակեսցէ ի յաւիտեան» (Յովհ. ԺԴ 16):

Մայիսի 24-ին՝ Դետրոյտի ս. Հովհաննես եկեղեցում (հովիվ՝ տ. Տիրան քհն. Փափազյան).

Հայերեն քարոզ՝ «Առաքեա, Տէր, զլոյս քո և զճշմարտութիւն քո, զի առաջնորդեսցեն ինձ և հանցեն զիս ի Լեառն Ս. և ի յարկս քո» (սաղմոս):

Մայիսի 31-ին՝ Ուստրի հայոց եկեղեցում (հովիվ՝ տ. Մյուռոն վրդ. Կրճիկյան).

Հայերեն քարոզ՝ «Էջ Միածինն ի Հօրէ և լոյս փառաց ընդ նմա» (շարական):

Պատարագներից հետո ճաշկերույթներ

էին տեղի ունենում եկեղեցիներին կից դահլիճներում, որտեղ մեր քահանա հայրերը միշտ էլ մեր հավատքի, եկեղեցու, ս. Էջմիածնի, հայրենիքի և մեր աշխատասեր ժողովրդի մասին էին խոսում, պատասխանում հարցերին և շեշտում, որ սփյուռքը կարող է գոյատևել ս. Էջմիածնով և իր հայրենի երկրի հանդեպ իր սիրով և հավատարմությամբ:

Բացի այն եկեղեցիներում, որտեղ մեր քահանա հայրերը պատարագեցին, քարոզեցին, նրանք ներկա եղան նաև Սաուտհ Միլվոքիում (հովիվ՝ տ. Վազգեն վրդ. Քեշիշյան) մայիսի 7-ին տրված թեյասեղանի և Ուոտերթաունում (հովիվ՝ տ. Տաճատ քհն. Դավթյան) կազմակերպված մայիսի 28-ին «Հավատքը Հայաստանում» զեկուցմանը: Երկու վայրերում էլ տրվեցին համարյա միևնույն հարցերը, և քահանա հայրերը տալիս էին պատասխաններ՝ Հայաստանի բնակչության, եկեղեցիների, հոգևորականների և դպրոցների քանակի, գիտության, արվեստի, տնտեսության վերելքի մասին:

Ամերիկահայ ժողովուրդը ծարավի է հայրենի ջերմացնող շնչին ու ս. Էջմիածնի օրհնությանը:

Հունիսի 3-ին մեր քահանա հայրերը իրենց պարտականությունները կատարած վերադառնում են Մայր Աթոռ:



ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Մայիսի 24-ին, կիրակի.—Ա կիրակի զկնի Հոգեգալստեան: Սկիզբն Յարութեան կիրակէից: Յիշատակ Եղիայի մարգարէին.

Մայր տաճարում պատարագ է մատուցում տ. Հակոբ քհն. Հակոբյանը:

*
* *

Մայիսի 25-ին, երկուշաբթի.—Տօն սրբոց կուսանացն Հռիփսիմեանց.

Ս. Հռիփսիմեի տաճարում պատարագ է մատուցում տ .Շնորհք վրդ. Գասպարյանը և քարոզում՝ «Անձինք նուիրեալք սիրոյն Քրիստոսի... Եւ կուսանք իմաստունք» բնաբանով:

Հավարտ ս. պատարագի տեղի է ունենում հոգեհանգստյան արարողություն՝ ս. Հռիփսիմեի տաճարի բարերար, միլանաբնակ Երվանդ Հյուսիսյանի գերդաստանի բոլոր ննջեցյալների հոգիների համար:

*
* *

Նույն օրը, երեկոյան ժամը 5.30-ին, Փարիզից Մայր Աթոռ է վերադառնում տ. Հայկազուն արքեպ. Աբրահամյանը, որը որպես հայրապետական շքախմբի անդամ ուղեկցել էր Վեհափառ Հայրապետին դեպի Հռոմ:

Սրբազան հորը դիմավորելու էին գնացել օդանավակայան տ. Մամբրե վրդ. Մարգարյանը և Արարատ սրկ. Գալստյանը:

*
* *

Մայիսի 26-ին, երեքշաբթի.—Տօն սրբոց կուսանացն Գայիանեանց.

Ս. Գայանեի տաճարում պատարագում է տ. Նշան քհն. Բեյլերյանը և քարոզում՝ տ. Շնորհք վրդ. Գասպարյանը՝ «Ո՛վ զգաստութեան իմաստուն կուսանացն... ինքեանք ելին և այլոց ցուցին զճանապարհս ցանկալի» բնաբանով:

Հավարտ ս. պատարագի տեղի է ունենում հոգեհանգիստ՝ եկեղեցու բարերարների ննջեցյալների հոգիների համար:

*
* *

Մայիսի 28-ին, հինգշաբթի.—Տօն սրբոցն Հովհաննու Կարապետին և Աթանագինեայ եպիսկոպոսին.

Ս. Ծողակաթի եկեղեցում պատարագ է մատուցում տ. Շնորհք վրդ. Գասպարյանը և քարոզում «Նա էր ճրագն որ լուցեալ էր և ծագէր, և դուք կամեցարուք ցնծալ առ ժամանակ մի ի լոյս նորա» բնաբանով:

Հավարտ ս. պատարագի տեղի է ունենում հոգեհանգիստ՝ երանաշնորհ Տ. Տ. Նահապետ կաթողիկոսի և եկեղեցու բարերար Ս. Գալենտերյանի գերդաստանի ննջեցյալների հոգիների համար:

*
* *

Մայիսի 30-ին, շաբաթ.—Տօն սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ ելն ի Վիրապէն.

Մայր տաճարում, Իշման ս. սեղանի վրա, պատարագ է մատուցում տ. Մկրտիչ ավագ քհն. Քամաղելյանը:

*
* *

Մայիսի 31-ին, կիրակի.—Բ կիրակի զկնի Հոգեգալստեան: Տօն Կաթողիկէ Էջմիածնի.

Մայր Աթոռի մեծ տոնի առիթով Մայր տաճարում, Ավագ սեղանի վրա, պատարագ է մատուցում տ. Գևորգ վրդ. Սերայդարյանը:

Հավարտ ս. պատարագի Իշման ս. սեղանի առաջ քարոզում է տ. Հայկազուն արքեպ. Աբրահամյանը՝ «Քանզի ի սմա ծագեաց մեզ լոյս ի Հայաստան աշխարհի» բնաբանով:

Ապա տեղի է ունենում հայրապետական հանդիսավոր մաղթանք՝ հավատացյալների հոծ բազմության ներկայությամբ:

*
* *

Հունիսի 7-ին, կիրակի.—Գ կիրակի զկնի Հոգեգալստեան.

Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Մուշեղ վրդ. Պետիկյանը:

*
* *

Հունիսի 8—11 օրերին հոգևոր ճեմարանի ուսանողները, տեսչի և դասախոսական կազմի գլխավորությամբ, քառօրյա ուխտագնացություն կատարեցին դեպի Սևանի, Հաղարծնի, Գոշավանքի վանքերը:

*
* *

Հունիսի 8-ին, երկուշաբթի.—Այսօր Մայր Աթոռ ժամանեցին արժ. տ. Հովհաննես քհն. Մարուքյանը և տ. Ռուբեն քհն. Մարտիրոսյանը, որոնք Վեհափառ Հայրապետի կարգադրությամբ մասնակցել էին Ամերիկայի Միացյալ Նահանգների արևելյան թեմի հոգևորականց համագումարին:

*
* *

Հունիսի 14-ին, կիրակի.—Դ կիրակի զկնի Հոգեգալստեան.

Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Հակոբ քհն. Հակոբյանը:

*
* *

Նույն օրը, երեկոյան ժամը 8.30-ին, հոգևոր ճեմարանի հանդիսությանց դահլիճում տեղի է ունենում հավաքույթ· տ. Հովհաննես քհն. Մարուքյանը ուսանողությանը պատմում է ԱՄՆ կատարած իր այցելության տպավորությունների և հուշերի մասին:

*
* *

Հունիսի 18-ին, հինգշաբթի.—Սրբոց Թարգմանչացն մերոց Սահակայ և Մեսրովբայ:

Հանդիսավոր ս. պատարագ է մատուցում Օշականի եկեղեցում Արարատյան թեմի առաջնորդական փոխանորդ տ. Վահան եպս. Տերյանը և քարոզում՝ ս. Սահակի և ս. Մեսրոպի կատարած մշակութային-հայրենասիրական մեծ գործունեության մասին:

Հավարտ ս. պատարագի տեղի է ունենում հոգեհանգիստ՝ եկեղեցու վերանորոգության բարերարներ Հ. և Թ. Ղազարոսյան և Պ. Ալեքսյան գերդաստանների ննջեցյալների հոգիների համար:

*
* *

Հունիսի 21-ին, կիրակի.—Ե կիրակի զկնի Հոգեգալստեան: Գիւտ տփոյ Սրբուհւոյ Աստուածածնի.

Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Ծնորհք վրդ. Գասպարյանը:

«Հայր մեր»-ից առաջ քարոզում է Վեհափառ Հայրապետը՝ Իր՝ Հռոմ, Ֆրանսիա և Լիսաբոն կատարած այցելությունների հոգևոր, պատմական նշանակության մասին:

*
* *

Հունիսի 22-ին, երկուշաբթի.—Այսօր առավոտյան ժամը 12-ին Մայր տաճար են այցելում Իսպանիայի Կարմիր խաչի պրեզիդենտ Քեյպո Դե Լյոնոնին, փոխ-պրեզիդենտ Վիլյանուև Ադիլյոնին և Մադրիդի Կարմիր խաչի պրեզիդենտ Գենսալո Մորա Ի Արտագոնին:

Ապա Վեհափառ Հայրապետը Վեհարանում ընդունում է այցելուներին և զրույց ունենում՝ ջերմ մթնոլորտում:

*
* *

Հունիսի 24-ին, չորեքշաբթի.—Երեկոյան ժամը 19-ին Վեհարանում տեղի է ունենում հավաքույթ, որին մասնակցում են Գերագույն հոգևոր խորհրդի և միաբանության անդամները, «Էջմիածին» ամսագրի խմբագրական կազմը: Վեհափառ Հայրապետի 9-րդ ուղևորության ժամանակ շքախմբի անդամ և Մայր Աթոռի միջեկեղեցական հարաբերությունների բաժնի վարիչ Պարգև Ճանբազյանը շուրջ 50 րոպե խոսում է Հայոց Հայրապետի Հռոմ, Ֆրանսիա և Լիսաբոն կատարած այցելությունների հոգևոր, պատմական և հայրենասիրական նշանակության մասին:

Հավաքույթը եզրափակում է Վեհափառ Հայրապետը՝ շեշտելով նման ուղևորության մեծ նշանակությունը մեր եկեղեցու և մեր ժողովրդի համար:

*
* *

Հունիսի 29-ին, երկուշաբթի.—Երեկոյան ժամը 19-ին, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, Վեհարանում գումարվում է Գերագույն հոգևոր խորհրդի հերթական նիստը:

*
* *

Հունիսի 29-ին, երկուշաբթի.—Այսօր ուխտավորաբար Մայր Աթոռ ժամանեց Մելբուռնի հայոց հոգևոր հովիվ տ. Ոսկան վրդ. Գալբակյանը:

*
* *

Հուլիսի 5-ին, կիրակի.—Վարդավառ: Պայծառակերպութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի.

Մայր տաճարում, Ավագ սեղանի վրա, պատարագում է տ. Ոսկան վրդ. Գալբակյանը և քարոզում՝ «Որ ի լերինն այլակերպեալ ցուցեր զաստուածային Քո զօրութիւնդ» բնաբանով:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

*
* *

Հուլիսի 6-ին, երկուշաբթի.—Մեռելոց.

Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Խորեն վրդ. Էլչուճյանը: Հավարտ պատարագի տեղի է ունենում հոգեհանգստյան արարողություն՝ համորեն ննջեցյալների համար:

Ս. պատարագի երգեցողությունը կատարում են հոգևոր ճեմարանի սաները:

*
* *

Հուլիսի 7-ին, երեքշաբթի.—Ռոստովի հայոց եկեղեցու հոգևոր հովիվ տ. Գրիգորիս աբեղա Բունիաթյանը Մայր Աթոռ ժամանեց՝ եկեղեցական-համայնքային հարցերով:

*
* *

Հուլիսի 12-ին, կիրակի.—Բ կիրակի.

Մայր տաճարում պատարագում և քարոզում է Ռոստովի հայոց եկեղեցու հոգևոր հովիվ տ. Գրիգորիս աբեղա Բունիաթյանը:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

*
* *

Հուլիսի 15-ին, չորեքշաբթի.—Այսօր Լոնդոնի հայոց ս. Սարգիս եկեղեցու հոգևոր հովիվ տ. Արսեն վրդ. Բերբերյանը ուխտավորաբար ժամանում է ս. Էջմիածին:

*
* *

Հուլիսի 20-ին երկուշաբթի.—Գ կիրակի.

Մայր տաճարում պատարագ է մատուցում Լոնդոնի հայոց ս. Սարգիս եկեղեցու հոգևոր հովիվ տ. Արսեն վրդ. Բերբերյանը և քարոզում՝ «Զի ուր գանձք ձեր են, անդ և սիրտք ձեր եղիցին» բնաբանով:

*
* *

Հուլիսի 21-ին, երեքշաբթի.—Երեկոյան ժամերգությունից հետո, Վեհափառ Հայրապետի բարեհաճ արտոնությամբ, Մայր տաճարի լուսարարապետ տ. Հայկազուն արքեպ. Աբրահամյանը Իշման ս. սեղանի առաջ ծայրագույն վարդապետական իշխանություն շնորհեց Մելբուռնի հայոց հոգևոր հովիվ տ. Ոսկան վրդ. Գալբակյանին՝ խարտավիլակությամբ տ. Գևորգ վրդ. Սերայդարյանի:

*
* *

Հուլիսի 21-ին, երեքշաբթի.—Այսօր Մայր Աթոռ այցելեց Հայաստանում հյուրընկալվող Ավստրիայից մի պատվիրակություն, որին գլխավորում էր Ֆորարլբերգի երկրամասի պրեմիեր-մինիստրի տեղակալ Հերոլդ Ռատցը:

Էջմիածնում ավստրիացի հյուրերը եղան Մայր տաճարում և եկեղեցական արվեստի թանգարանում:

Այնուհետև Վեհարանում հարգարժան հյուրերին ընդունեց Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը և ջերմ զրույց ունեցավ նրանց հետ:





ԱՄԱՎԵՐՋԻ ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆ ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆՈՒՄ

Հունիսի 6-ին, շաբաթ օրը, առավոտյան ժամը 11-ին, հոգևոր ճեմարանի հանդիսությունների դահլիճում, նախագահությամբ Մայր տաճարի լուսարարապետ տ. Հայկազուն արքեպ. Աբրահամյանի, տեղի ունեցավ հոգևոր ճեմարանի 1969—1970 ուսումնական տարվա ամավերջի հանդիսությունը, որին ներկա էին Մայր Աթոռի միաբանությունն ու պաշտոնեությունը, Գերագույն հոգևոր խորհրդի անդամները, ճեմարանի դասախոսական կազմը, ուսանողների ծնողներից ոմանք և բազմաթիվ հրավիրյալներ:

Հանդեսը սկսվում է Հայկական ՍՍՀ պետական հիմնով և ճեմարանի ուսանողական երգչախմբի կատարած «Ճեմարանի քայլերգ» խմբերգով:

Հանդիսությունը բացում է «Էջմիածին» ամսագրի խմբագիր և հոգևոր ճեմարանի ավագ դասախոս Արթուն Հատիտյանը՝ շեշտելով օրվա հավաքույթի նշանակության կարևորությունը ճեմարանի անցնող ուսումնական տարեգրության մեջ:

Ապա Բ լսարանի ուսանող Խաչիկ Խաչատրյանը արտասանում է Արշակ Չոպանյանի «Գեղոն ի պատիվ հայ լեզվի»-ն, Ա լսարանի ուսանող Սեզար Գոնտրալյանը՝ Վահան Թեքեյանի «Հաշվեհարդար»-ը, Գ դասարանի ուսանող Վրեժ Նաջարյանը՝ Հովհ. Թումանյանի «Լուսավորչի կանթեղը», Բ դասարանի ուսանող Գևորգ Առաքելյանը՝ ռուսերեն լեզվով մի ոտանավոր՝ աշխատանքի և խաղաղության նվիրված:

Հոգևոր ճեմարանի ուսանողական երգչախումբը, եվրոպական երաժշտության դասախոս Խորեն Մելյիանեջյանի ղեկավարությամբ, ոգևորությամբ կատարում է կոմիտասյան «Քաղհան», «Հոյ նար», Է. Հովհաննիսյանի «Էրեբունի» խմբերգերը և Մի հատված Վագների «Դան Հոյզեր» օպերայից:

Հոգևոր ճեմարանի ողջ ուսանողության, մասնավորաբար Գ լսարանի շրջանավարտ սարկավագների անունից երախտագիտության և շնորհակալության ողերձով հանդես է գալիս Գ լսարանի ուսանող բարեշնորհ Վարդան սարկավագ Տեղեքյանը.

«Ամավերջի հանդեսի այս պահը ուրախության, հուզման ու քաղցր ներշնչանքի մի պահ է մեզ համար, որովհետև պատմության և հավերժի գիրկն ենք ուղարկում բազում հուշերով ու հույզերով լեցուն աղոթքի, աշխատանքի, ուսման մի տարի ևս, որը բոլորեցինք այս նվիրական հաստատության լուսաշող կամարների տակ:

Այժմ թույլ տվեք ամենից առաջ ողջ ուսանողության ու շրջանավարտ սարկավագների անունից արտահայտել մեր հոգու խորունկ ալքերից բխող որդիական անհուն սերն ու երախտագիտական շնորհակալությունները Նորին Ս. Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Հայոց Հայրապետին՝ մեզ ընձեռուած անգնահատելի հայրական գուրգուրանքի և բազում բարիքների համար:

Արտագին շնորհակալության խոսք ունենք նաև շատ սիրելի տ. Հայկազուն արքեպ. Աբրահամյանին՝ իր հոգատարության ու բարի խորհուրդների համար:

Սիրո անկեղծ զգացումներով երախտապարտ ենք նախկին տեսուչ Ներսես ծ. վրդ. Պոզապալյանին, որ երեք երկար տարիներ հանդիսացավ մեր անմիջական դաստիարակն ու հոգևոր եղբայրը՝ մեզ առաջնորդելով դեպի ազգօգուտ և եկեղեցաշեն ճանապարհներ:

Երախտագիտության ու շնորհակալության հատուկ խոսք ունենք մեր շատ սիրելի տեսուչ տ. Շնորհք վրդ. Գասպարյանին, որ նույնքան մեզ սիրեց ու մեզ աջակից ու ապավեն եղավ փորձությանց ու դժվարությանց պահերին, եղավ մեր արտագին երեց եղբայրը՝ հավասարապես բաժանելով մեր ուրախություններն ու դժվարությունները:

Շնորհակալության արտագին խոսք ունենք նաև մեր վերակացուներին՝ տ. Նշան քհն. Բելլերյանին և պրն. Բ. Թաշճյանին:

Այս հանդիսավոր պահին մեր ամենախորին շնորհակալությունն ենք հայտնում մեր դասախոսներին, որոնք, որպես հավատքի, լույսի և գիտության բարի սերմնացաններ, առատորեն բաշխեցին մեզ իրենց մտքի և հոգու շնորհները, որպեսզի դրանք աճեն ու պտղաբերվեն Աստուծո օգնականությամբ, այս նվիրական մթնոլորտում, մեր ս. եկեղեցու, վերածնված հայրենիքի և հավատավոր ժողովրդի հոգևոր սպասավորության համար՝ «ընդ միոյ երեսուն, ընդ միոյ վաթսուն, և ընդ միոյ հարիւր»»:

Այնուհետև հոգևոր ճեմարանի 1969—1970 ուսումնական տարեշրջանի մասին իր հաշվետու զեկուցումով հանդես է գալիս ճեմարանի տեսուչ հոգ. տ. Շնորհք վրդ. Գասպարյանը.

«Մոտավորապես մի տարի առաջ էր, որ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի հրավերով կանչվում էի Էջմիածին՝ ստանձնելու համար հոգևոր ճեմարանի տեսչությունը: Հայրապետական այդ բարձր հրավերը նույն ինքն ձայնն էր հայոց առաքելական մեր սուրբ եկեղեցու. և ահա թե ինչու ես թողեցի իմ հովվական համեստ պաշտոնը և եկա այստեղ՝ միասին աշխատելու այս սուրբ հաստատության մեջ, մեր եկեղեցու մեծ բարիքին համար:

Այսքանը ուզում եմ ասել այս առթիվ՝ պարզապես շեշտելու համար մի անգամ ևս Մայր Աթոռիս հեղինակությունը արտասահմանի մեր եկեղեցական, ազգային կյանքի վրա և այստեղ կատարվող գործի հիմնական իմաստը, ընդհանրապես մեր եկեղեցիին և ժողովրդին համար: Եթե անցյալին մեծ դեր է կատարած ս. Էջմիածինը, պետք է շարունակի նաև այսօր, որովհետև շատ գործ կա կատարելիք, և հայ ժողովուրդը շատ բան է սպասում Մայր Աթոռից: Ս. Էջմիածինը իր նախախնամական-պատմական առաքելությունը կարող է կատարել միայն հոգևոր ճեմարանի միջոցով, որովհետև այստեղ՝ ս. Էջմիածնի մեջ է, որ բաբախում է հայ եկեղեցու սիրտը և որքան առողջ բաբախի այս սիրտը, այնքան ավելի զորավոր ու կենսունակ կլինի հայ եկեղեցու ընդհանուր մարմինը:

Այս հաստատ համոզումով է, որ հեռավոր ԱՄՆ-ից մինչև ս. Էջմիածին ահա քայլ առինք ու կմնանք փարած այս սուրբ գործին և կջանանք մեր համեստ ու տկար ձիգերը միացնել բոլոր այն երախտավոր մշակների աշխատանքներին, որոնք այս հաստատության լուսեղեն կամարից անցել են:

Ամբողջովին վստահելով Աստուծո նախախնամական առաջնորդության և օրհնությամբ Հայոց Հայրապետի՝ գլուխ անցանք պատասխանատու այս գործին: Մեծ եղավ մեր հրճվանքը, երբ լարված այս աշխատանքին մեջ ունեցանք մի խումբ ազնիվ հոգիներ, որոնք պրկված ջիղերով գործի լծված էին: Դրանք ճեմարանի դասախոսներն էին, որոնցից ոմանք երկար տարիներ աշխատում էին, և ուրախ ենք ասելու, որ նրանք սիրով մեզ շրջապատեցին իբր նոր անդամը այս աշխատող ընտանիքին: Դասախոսները մեր անմիջական աջակիցներն ու լծակիցներն են: Հարգանք ու պատիվ մեր սիրելի դասախոսական կազմին:

Մեր գործի ընթացքում մեր անմիջական խորհրդատուն և հայրը եղավ ազգիս Վեհափառ Հայրապետը, որ ամեն առիթով պատրաստակամություն և հոգատարություն ցույց տվեց մեզ՝ օգնելու և առաջնորդելու մեր առաջին քայլերը:

1969—1970 ուսումնական տարվա ընթացքում ունեցել ենք 35 ուսանողներ՝ բաժանված 6 դասարանների վրա.

Գ լսարան՝ 3 ուսանող
Բ լսարան՝ 5 ուսանող
Ա լսարան՝ 5 ուսանող
Գ դասարան՝ 5 ուսանող
Բ դասարան՝ 9 ուսանող
Ա դասարան՝ 8 ուսանող

Ուսանողության այս թվի մեջ են հաշվվում նաև արտասահմանից հոգևոր ճեմարան ուսանելու եկած 12 աշակերտներ՝ 5 զանազան երկրներից:

Ճեմարանից երեք ուսանողներ այս տարի շրջանավարտ են եղել որպես սարկավագներ. Ղազարոս սրկ. Կյուրեղյան, Վարդան սրկ. Տեղեքյան և Կարապետ սրկ. Գալստյան, որոնք հաջողությամբ հանձնեցին ավարտական քննությունները և այժմ աշխատում են իրենց դիպլոմների վրա:

Հոգևոր ճեմարանի դասախոսական կազմը հիմնականում մնաց նույնը: Այս տարի էլ դասախոսական կազմը բարեհաճել է գլխավորել ազգիս Վեհափառ Հայրապետը:

Այս տարի դասախոսելու հրավիրված են՝ աշխարհագրական գիտությունների թեկնածու, դոցենտ Կամսար Ավետիսյանը (հայրենագիտություն), Հակոբ սրկ. Նալբանդյանը (գրաբար) և Երվանդ Մելքոնյանը (գրաբար):

Վերակացության պաշտոնները այս տարի բարեխղճությամբ կատարեցին տ. Նշան քհն. Բեյլերյանը և Բ. Թաշճյանը, որոնց այս առթիվ հայտնում ենք մեր շնորհակալությունները:

Կրթական որևէ հաստատության մեջ ուսման մակարդակը որոշվում է որակավոր դասախոսական կազմով: Ուրախ եմ նշելու, որ հոգևոր ճեմարանը այս տարի էլ ապահովված էր որակյալ դասախոսական կազմով: Առանց դասախոսների նվիրյալ աշխատանքի տեսչությունը առանձինն անզոր պիտի լիներ ուսումնա-դաստիարակչական իր այս ծանր գործին մեջ: Շնորհակալություն և բյուր օրհնություն, սիրելի դասախոսներ, Ձեր ազնիվ աշխատանքների համար:

Տրված լինելով, որ ճեմարանս հոգևոր տիպի մի հաստատություն է, և որի նպատակն է հոգևոր ապրումով ու գիտակից հավատքով մարդիկ պատրաստել մեր ժողովրդի հոգևոր ծառայության համար, այս պատճառով ջանք չենք խնայել կյանքի վերածելու համար Ավետարանի խոսքերն ու պատգամները մեր ուսանողության ապրումների և խոհերի մեջ:

Ուսանողները ամեն առավոտ և երեկոյան գործոն մասնակցությամբ ներկա են եղել ժամապաշտության: Սեղանատանը հաստատեցինք բարոյալից գիրքերի ընթերցումը: Իսկ երեկոները մասնավոր ժամանակ ենք հատկացրել Ավետարանի ընթերցման և բացատրության, աղոթքի և խորհրդածության և հարցազրույցի: Միշտ քաջալերել ենք ուսանողների ազատ կերպով մեզ մոտենալու և սրտբաց խոսակցություն ունենալը: Սիրով բաժանել ենք նրանց դժվարություններն ու մտահոգությունները: Հաճախ խուսափած ենք պատժելուց, բայց միշտ խրատել ենք՝ ջանալով գիտակից դարձնել նրանց ատելու չարն և ձգտելու բարիին: Եթե հարկ է եղել պատժել, ապա ցավով կատարած ենք այդ: Շատ անգամներ փորձել ենք ներել, սակայն երբեք չանտեսել, այլ ուսանողության մեջ արթնացնել ինքնագիտակցության և պատասխանատվության զգացում:

Ս. հաղորդություն ստանալու պարագային ջանացած ենք գիտակից համոզումով առաջնորդել տղաքը Աստուծո ս. սեղանին՝ բացատրելով ս. հաղորդության անհրաժեշտությունը հոգևոր կյանքի աճման համար, և հոգեկան ուրախությամբ նշմարած ենք հոգևոր զգացումների ինքնաբուխ ծաղկումը նրանցից շատերի մեջ:

Ճեմարանի դասախոսները և տեսչությունս ձեռք-ձեռքի տված լծված ենք գիտական պաշարով օժտելու մեր ուսանողները, այն հաստատ համոզումով, որ 20-րդ դարի հոգևորականը պարտավոր է զինված լինել նաև ընդհանուր զարգացման գիտելիքներով լավագույնս ծառայելու համար ժողովրդին, քայլ պահելով ժամանակի հետ: Մենք համոզված ենք, որ միայն հոգևոր ճեմարանի հարկի տակ կպատրաստվեն եկեղեցու ս. գործին նվիրված արժանավոր սպասավորներ, որոնք կարժանանան նաև մեր ժողովրդի վստահության և հարգանքին:

Այս մտահոգությամբ և Վեհափառ Հայրապետի առաջարկով և թելադրությամբ ճեմարանիս կրթական ծրագիրը այս տարի ենթարկվել է վերանայման՝ կարող դասախոսներից բաղկացած մի հանձնաժողովի միջոցով: Նկատի առնելով օրական դասերի վերժամյա բեռնաձությունը, կազմակերպել ենք արտադասարանական բանախոսություններ, կրոնական, պատմական, գիտական, բարոյական նյութերի շուրջ: Դասախոսությունները կարդացել են Կամսար Ավետիսյանը (2 անգամ), Գր. Գյուլյանը, Ս. Անթոսյանը, Ռոբերտ Աթայանը (3 անգամ), Ամերիկայից՝ դոկտ. Շ. Սևունքյանը, Ֆրանսիայից՝ վերապատվելի Հարություն Հելվաճյանը, Հռոմից՝ հայր Ներսես վրդ. Սեթյանը, Վենետիկից՝ Մուրադ-Ռաֆայելյան վարժարանի տեսուչ հայր Սերովբե վրդ. Աբլյանը, Կ. Պոլսի հայոց պատրիարք Շնորհք արքեպ. Գալստյանը, Ամերիկայից՝ Մեսրոպ վրդ. Սեմերճյանը (7 անգամ), վերապատվելի Ս. Կոնսուլյանը, Հայկազուն արքեպ. Աբրահամյանը և ճեմարանի տեսուչը (5 անգամ): Ունեցանք նաև օտար հյուրեր, որոնք ևս դասախոսեցին իրենց այցելության առթիվ. ս. Գրոց ընկերության կողմից երկու հոգի, Վատիկանից՝ 2 հոգի: Կարդացված դասախոսությունների ընդհանուր թիվը եղել է 30:

Ճեմարանի հարկին տակ կազմակերպված

հանդեսները ևս իրենց գեղարվեստական բնույթով ունեցել են դաստիարակչական նշանակություն: 1969—1970 ուսումնական տարում ունեցել ենք հետևյալ հանդիսությունները. Վարդանանց տոն (բանախոսեց՝ Սիմոն Հովիվյան), նոյեմբերի 29 (բանախոսեց՝ Բարսեղ Թաշճյան), Կոմիտաս վարդապետի 100-ամյակ (բանախոսեց՝ Գր. Գյուլյան), Գալուստ Կյուլպենկյանի ծննդյան 100-ամյակ և Առաքել Դավրիժեցու մահվան 300-ամյակ (բանախոսեց՝ Արթուն Հատիտյան), բանաստեղծ Գևորգ Էմինի մեծարանքի երեկո (բանախոսեց՝ Արամ Սահակյան):

Կրթական ծրագրին առընթեր, որպես դաստիարակչական միջոց, կազմակերպել ենք նաև խմբական պտույտներ դեպի Ծիծեռնակաբերդ՝ Եղեռնի հուշարձան, Էրեբունի, Մատենադարան, պատկերասրահ, արդյունաբերական թանգարան, Թումանյանի տուն-թանգարան, Մ. Սարյանի պատկերասրահ: Երեք անգամ գնացել ենք թատրոն և չորս անգամ էլ՝ համերգ, երկու անգամ՝ կրկես:

Այս բոլորից զատ շաբաթ երեկոները ճեմարանի հարկի տակ շարժապատկերի ներկայացումներ են դիտել տղաքը: Միօրյա պտույտներ և ուխտագնացություններ ենք կատարել դեպի Սաղմոսավանք, Մուղնու ս. Գևորգ, Հովհաննավանք, Գեղարդ և Արզնի: Ամսի 8-ին կմեկնենք քառօրյա ուխտագնացության դեպի Սևանի վանքերը, Հաղարծնի վանքը, Գոշավանք՝ կենտրոն ունենալով Դիլիջան քաղաքը:

Հաճելի նորություններ եղան ուսանողության համար «Զուարթ երեկոյի» և պատի թերթի ձեռնարկների կազմակերպումը:

Մեր ուշադրությունից չվրիպեց նաև սպորտի և մարմնակրթանքի բաժինը: Տղաները սիրով և հաճախակի կազմակերպել են ֆուտբոլի, բասկետբոլի և սեղանի թենիսի մրցումներ:

Ուսանողների ֆիզիկական առողջությունը եղել է մեր գլխավոր մտահոգություններից մեկը: Բարեբախտաբար այս տարի էլ ճեմարանում չենք ունեցել ծանր հիվանդության որևէ դեպք: Հունվար ամսի վերջերին գրիպի պատճառավ ստիպվեցանք երկու շաբաթով դասերն ընդհատել:

Ուսանողության առողջության վիճակի ապահովության համար մասնավոր ուշադրություն ենք դարձրել մաքրության: Այս տարի ճեմարանի կողքին միշտ գործեց մեր սեփական բաղնիքը:

1969—1970 ուսումնական տարում գումարել ենք ութ մանկավարժական ժողովներ և դասախոսների հետ գլուխ-գլխի տված խորհրդակցել, ծրագրել ենք անհրաժեշտը՝ ճեմարանում ուսումնա-դաստիարակչական աշխատանքներն էլ ավելի արդյունավոր դարձնելու միջոցների վրա: Մեր ծրագրերի մեջ է առաջին հերթին ճեմարանի շենքին ընդհանուր նորոգությունը, որն արդեն սկսվել է:

Կրկին գոհություն Աստուծո, որ մեզ պարգևեց առողջություն և կարողություն՝ կատարելու մեր համեստ ծառայությունը այս նվիրական գործին մեջ: Սրտագին երախտագիտության խոսք՝ ազգիս Վեհափառ Հայրապետին, որ մեզ վստահեց այս ծանր պաշտոնը և Իր բարձր հովանավորությունը չզլացավ:

Շնորհակալություն Գերագույն հոգևոր խորհրդի անդամներին՝ իրենց բացառիկ ուշադրության համար, որ տածում են դեպի այս պատմական հաստատությունը: Շնորհակալություն Մայր Աթոռի միաբանությանս անդամներին, ճեմարանի ազնիվ բարեկամներին և ձեզ բոլորիդ: Մենք ջանացինք կատարել մեր լավագույնը, **«Անպիտան ծառայք եմք, զոր ինչ պարտ էաք առնել արարաք»»:**

Ապա տեսուչ հայր սուրբը ներկայացնում է այն ուսանողների անունները, որոնք ուսման, վարքի, եկեղեցասիրության, մարմնամարզության և արտադասարանական այլ օգտակար աշխատանքների համար արժանացել են մրցանակի:

Ուսման մեջ առաջադիմության համար Գ լսարանից՝ Ղազարոս Կյուրեղյան՝ առաջին, Վարդան Տեոլեքյան՝ երկրորդ:

Բ լսարանից՝ Կտրիճ Ներսիսյան՝ առաջին, Խաչիկ Խաչատրյան՝ երկրորդ:

Ա լսարանից՝ Սեզար Գոնտրալյան՝ առաջին, Պետրոս Վարդանյան՝ երկրորդ:

Գ դասարանից՝ Վրեժ Նաջարյան՝ առաջին, Սամվել Պետրոսյան՝ երկրորդ:

Բ դասարանից՝ Ավետիս Արթինյան՝ առաջին, Միսաք Մարգարյան, երկրորդ:

Ա դասարանից՝ Կիրակոս Հովնանյան՝ առաջին, Հարություն Զատիկյան՝ երկրորդ:

1969—1970 ուսումնական տարվա ողջ ճեմարանի ուսման առաջադիմության մրցանակը շահում է Գ դասարանի ուսանող Վրեժ Նաջարյանը, իսկ երաժշտության մրցանակը շնորհվում է Վարդան սրկ. Տեոլեքյանին:

Գերազանց վարքի համար պարգևատրվում են՝ Նորայր Ավագյանը (Գ դասարան), Հարություն Սարգսյանը, Միսաք Մարգարյանը, Պետրոս Քեսապլյանը (Բ դասարան) և Տիգրան Բուլանիկյանը (Ա դասարան):

Նկարչության մեջ ցուցաբերած իր հառաջադիմության համար պարգևատրվում է Գևորգ Առաքելյանը (Բ դասարան): Սեղանի թենիսի մեջ առաջնության համար՝ Ստեփան Գրիգորյանը (Բ դասարան) և Տրդատ Շամլյանը (Բ լսարան): Ֆուտբոլի մեջ ա-

ռաջնություն շահածներից՝ Բաբգեն Ծմավոնյանը, Կիրակոս Հովնանյանը, Աբրահամ Ղուկասյանը և Օնիկ Ալոյանը (բոլորն էլ Ա դասարանից)։

Մրցանակակիրները ներկաների բուռն ծափահարությունների ներքո մոտենում են հանդիսավոր սեղանին և, համբուրելով տ. Հայկազուն արքեպ. Աբրահամյանի աջը, ստանում իրենց նվերները։

Հանդեսը վերջանում է սրբազան հոր՝ ուսանողներին տված պատգամներով, հորդորներով ու «Պահպանիչ»-ով ու խմբովին երգված «Հայր մեր»-ով։

ԳԱՐԵԳԻՆ ՎՐԴ. ՀՈՎՍԵՓՅԱՆ

ՀԱՅՐԵՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅՈՒՆ

Երուսաղէ՛մ, Երուսաղէ՛մ, որ կոտորէր զմարգարէս և քարկոծ առնէր զառաքեալսն առ նա։ Քանի՛ցս անգամ կամեցայ ժողովել զմանկունս քո, զոր օրինակ ժողովէ հաւ զձագս իւր ընդ թևովք, և ոչ կամեցարուք։ Ահա թողեալ լիցի ձեզ տունդ ձեր աւերակ։

(ՄԱՏԹ. ԻԳ 57—58)

Ա.

Հայրենասիրությունը մի բնական զգացում է հաստատված մեր սրտի խորքերում։ Ինչպես բնական է սերը դեպի ծնողները և դատապարտելի այն որդու վարմունքը, որ անարգանքով է վարվում նրանց հետ, նույնչափ բնական է սերը և դեպի հայրենիքը և դատապարտելի դեպի նորա շահերը ցույց տված ապերախտությունը։ Մենք ոչ միայն մեր ծնողների զավակներն ենք, այլև մեր հայրենիքի։ Մեր կյանքի առաջին վայրկյանից կապված ենք հայրենիքի հետ, նորա օդն ենք շնչում, նորա ջուրը խմում, նորա բերքերով կերակրվում։ Բնական է նույնպես և մարդու սերը դեպի յուր բնիկ ժողովուրդը։ Մեր երակների մեջ նույն արյունն է վազում. նույն վարք ու բարքով, սովորություններով, նույն անցյալով և ապագայի հույսերով կապված միմյանց հետ։ Ամենքիս բերանում նույն լեզուն է հորջորջում և հարյուրավոր ու հազարավոր տարիների պատմություն, անցյալի հիշողության ուրախություն և վիշտ, հաջողություն և ձախորդություն ընդհանուր է ամենքիս համար։

Հայրենասիրության սաղմը հայրենի տունն է, ընտանիքը։ Մարդը հասարակության քաղաքացիության համար է ստեղծված, ասել է Պղատոնը և այդ խմբակցության ամենահին ձևը ընտանիքն է։ Նորա անդամները

Այսուհետև «Էջմիածին» ամսագրի էջերում պարբերաբար տեղ կգտնեն «Արարատ» ամսագրում հրատարակված կրոնական, ազգային, հայրենասիրական, հայագիտական և այլ բովանդակություն ունեցող այժմեական հոդվածներ, քարոզներ։ Ամսագրի սույն համարում հրատարակվում են Գարեգին վրդ. Հովսեփյանի «Հայրենասիրություն և քրիստոնեություն» և «Ս. Էջմիածնի խորհուրդը» հոդվածները։

միացած են իրար հետ պարտքի և իրավանց մի սրբազան կապակցությամբ, փոխադարձ սիրո և պաշտպանության բնական զգացմունքով: Վայրենի ցեղերի մեջ իսկ, որոնց համար օտարի կյանքի և գույքի սեփականության գաղափարը սրբություն չէր, այլ սեփական բազկի և սրի քմահաճույք, անձեռնմխելի էր մերձավորի կյանքն ու ստացվածքը: Բնական կյանքի գոյության կոիվը համախմբել է մարդկանց մի տեղ, և նոքա զգացել են, որ անհատական բախտավորությունն ու երջանկությունը կախված է իրենց շրջապատից: Մի ձեռքը ծափ չի տալիս, իսկ հազարավոր ձեռքեր են հարկավոր կյանքի բարդ անիվը առաջ տանելու համար: Մարդիկ կարիք են զգացել՝ փոխադարձաբար օգնել միմյանց, թեթևացնել կյանքի ծանր բեռը, հարթել երկրավոր կյանքի խոպան ճանապարհը և անհատական շահերի ապահովությունը ընդհանուրի շահերի պաշտպանության մեջ տեսնել: Այս բնական պայմանների մեջ, ընտանիքի նեղ շրջանից հետզհետե ծագել և զարգացել է ցեղի, ազգության և վերջապես հայրենասիրության գաղափարը:

Սկզբում այդ գաղափարը մի բնազդ էր գուցե, բայց մարդկային հոգու զարգացման հետ, դառնում է այն մի զորեղ գիտակցություն: Նյութական շահերի պաշտպանության հետ միանում է և հոգևոր շահերի պաշտպանության գաղափարը. անձնական փառքի, պատվի, ապահովության և բարօրության հետ զարգանում է ազգի ու հայրենիքի փառքի, ապահովության և բարօրության գաղափարը: Եվ այս գիտակցությունից է բխում հին ազգերի ամենաբարձր առաքինությունը՝ քաղաքացիության և հայրենասիրության զգացումը: Ազգության գաղափարը այն առանցքն էր, որի շուրջն էր պտտում հին ազգերի պատմության անիվը: Հունաց և Հռոմայեցվոց պատմությունը լի է, դեռևս առողջ և բարոյական շրջաններում, հայրենասիրական առաքինությունների նկարագրություններով: Բայց այդ շրջաններում իսկ զորեղ եսական մի դրոշմ է կրում այն, որ հատուկ է հին հեթանոսության: Քաղաքակիրթ արվեստի և գիտության պտուղներով ուռճացած հույնի համար իսկ անծանոթ է մարդասիրության և մարդկային արժանապատվության ընդհանուր գաղափարը: Պատվո և հարգանքի արժանի է միայն հույնը, իսկ մյուս ազգերի ճակատին դրոշմած է «բարբարոս» անունը, որ միևնույն ժամանակ արհամարհանքի և անարգանքի արտահայտություն էր: Հռոմայեցին կոչված էր նվաճելու աշխարհը և մյուս ազգերի ազատության ավերակների վերա կանգնել յուր փառքի և նյութական ճոխության նոր տաճարը: Նվաճված ազգերի հարստությունն ու երիտասարդ ուժերը որպես գերիներ փոխադրվում էին Իտալիա պատրիկների հարստությունն ու զեխության միջոցները դյուրացնելու: Հռոմայեցի զորապետների հաղթական ընթացքը նվաճված ազգերի շղթայակապ թագավորների, արքայազունների, հափշտակված գանձերի և արվեստի արտադրությունների ցուցադրություններով ինչպե՞ս բնորոշ է այս եսական հպարտ զգացման և դեպի անզորները տածած արհամարհանքի: Այս զգացման և հայացքի արդյունքն էր Հռովմի այս աննկարագրելի անբարոյականությունը, քստմնելի զեխությունը, ամոթի և պատկառանքի կատարյալ բացակայությունը, որ նկարագրում են ժամանակի պատմիչները քրիստոնեության ծագման օրերին: Բայց նույնիսկ Հրեա ժողովուրդը, որ կրոնական և բարոյական գաղափարներով այնքան գերազանց էր դասական ազգերից՝ ազատ չէր ազգային ամբարտավանության զգացումից: Աստուծո ընտրյալ ժողովուրդը միայն հրեությունն էր: Բոլոր հեթանոս ազգերը պիղծ են և ատելի: Միայն բարձր հոգիներն են՝ նշանավոր մարգարեներն ու աստվածամերձ բարեպաշտները, որ երբեմն բողոքում են այս թյուր և սխալ հասկացողության դեմ:

Բ.

Քրիստոնեությունը, որ աշխարհ եկավ բարոյական հեղափոխություն հառաջ բերելու կյանքի մեջ, բնականաբար առանց ազդեցության չմնաց և հայրենասիրության գաղափարի վերաբերությամբ: Նա մաքրեց հայրենասիրությունը եսական և բարբարոսական տարրերից և մի բարոյական զգացմունք դարձրեց այն: Մինչդեռ հին աշխարհի քաղաքակիրթ ազգերի հայրենասիրությունն ու ազգասիրությունն ամբողջապես եսական և շահասիրական խարիսխների վերա էր հաստատված, քրիստոնեությունը այստեղ ևս կամենում է առաջնորդող սկզբունքը բարոյականը դարձնել: Հին ազգերի մեջ առաքինություն էր ոչ միայն բարեկամին սիրել, այլև թշնամուն վնասել, ոչնչացնել: Թշնամու արյուն խմելը շատ ազգերի մեջ պատմական իրողություն էր: Նույնիսկ սաղմոսների մեջ թշնամական զգացման այսպիսի խիստ արտահայտություններ և անեծքներ կան դեպի հակառակորդները, որ քրիստոնյան և բարեկիրթ մարդն առանց սարսափի կարդալ չի կարող: Որպիսի՞ խորին և անսահման ատելություն կարող էր զգալ հրեան դեպի յուր թշնամին, և այդ ոչ միայն դեպի նորա անձը, այլ դեպի նորա կինը, անմեղ որդիքը, նորա ամբողջ սերունդը (Սաղմ. ՃԸ 6—16): Բայց քրիստոնեությունը գթության, կարեկցության և սիրո կրոնն էր,

հայրենասիրության «բնական» զգացումն էլ պիտի ցողվեր այդ կենդանարար զորությամբ և ուրիշ կերպարանք ստանար:

Նոր Կտակարանի մեջ իսկապես հայրենասիրության և ազգասիրության մասին խոսք չկա: Եթե մենք պարտավոր ենք սիրել ոչ միայն մեր բարեկամին, այլև թշնամուն, եթե մեր «ընկերն» է, ոչ միայն մեր ազգակիցը, այլև ամենայն ոք, որ կարոտ է օգնության, կարեկցության, եթե բոլոր մարդիկ եղբայրներ են, միևնույն երկնավոր Հոր երկրավոր որդիք, ապա ուրեմն ի՞նչ խոսք կարող է լինել սովորական մտքով, մանավանդ հին աշխարհի հասկացողությամբ, ազգասիրության և հայրենասիրության մասին: Ո՛չ, քրիստոնեությունը խորտակել է հին աշխարհի կուռքը, եսական բուրգերը, և անձնվիրության ու սիրո լուսեղեն կամարը կանգնել: Այս է պատճառը, որ կյանքի և գրականության մեջ հազվագյուտ չեն այնպիսի ձայներ, որոնք պնդում են, թե քրիստոնեությունը հայրենասիրության և ազգասիրության հակադրությունն է:

Արդարև, բոլորովին անհիմն չէ այս դատողությունը, թեև սխալ է հանած եզրակացությունը: Քրիստոնեությունը հայրենասիրության գաղափարը ոչնչացնել չէր կարող, նա ոչնչացնում է միայն հին աշխարհի միակողմանի և սխալ հասկացողությունն այդ մասին և նոր գնահատություն տալիս, սրբելով այն անբարոյական, եսական, շահասիրական կամ նոր լեզվով խոսելով, նեղ, շովինիստական տարրերից: Ճշմարիտ հայրենասեր և ազգասեր լինելու գաղափարը ոչ միայն դեմ չէ քրիստոնեության, այլ վերջինս է, որ ազնվացնում է և բարձր առաքինություն դարձնում այն: Նա կապում է բազմալեզու և բազմատեսակ ազգերը միմյանց հետ, առանց ոչնչացնելու նրանց ինքնուրույնությունն ու առանձնահատկությունները: Հայրենասիրությունը քրիստոնեական հասկացողությամբ մարդասիրություն է, ո՛չ անհայրենիք և անազգ համաշխարհային քաղաքացիություն, այլ այն մարդասիրությունը, որ կապված է հայրենիքի և ազգության գաղափարի հետ: Հայրենասիրությունն է մաքառել սեփական ժողովրդի տգիտության, անբարոյականության, աղքատության, հիվանդությունների և այլ բազմատեսակ նյութական և բարոյական կարիքների դեմ: Հայրենասիրությունն է փարատել նորա մտքի խավարը, լուսավորել մարդկային հոգու բարձր արտադրություններով և պաշտպանել նորա ժառանգությունները բարոյական բոլո՛ր միջոցներով: Համաշխարհային քաղաքացիությունը մի խոսք է առանց խորին և թանձրացյալ բովանդակության: Անշուշտ, քրիստոնեական սիրո գաղափարը պարտավորեցնում է մեզ կարեկից լինել դեպի օտարազգի թշվառը, բայց մեր սերը կապվում է նախ բնականաբար մեր շրջապատի և ազգի հետ: Քրիստոնեությունը ոչ մի պատճառ չուներ դատապարտելու այն թանկագին կապերը, որ մարդուն միացնում է յուր ազգի և հայրենիքի հետ: Նա հատուկ չէ շեշտում այս գաղափարը, որոշ սկզբունքներ չէ տալիս զարգացնելու այն, որովհետև նորա բերած հեղափոխությունը հոգևոր էր, ներքին, բայց հենց այդ պատճառով հայրենասիրության և ազգասիրության գաղափարն էլ բարեփոխության պիտի ենթարկվեր իբրև մեկը մարդկային հոգու լավագույն զգացմունքների:

Դեռևս քրիստոնեության ծագման օրերին հրեամիտների մեջ զարթնել էր այն միտքը, թե արդյո՞ք նոր ուսումը հակազգային և հակահայրենասիրական չէր, հեթանոսաց առաքյալը յուր ազգի դավաճանը չէ՞, որ ուրանում է նրա ավանդություններն ու օրենքները, սրբությունը: Բայց Հռովմայեցվոց թղթից, երևում է, թե ինչպես առաքյալը առավելություն է տալիս յուր ազգին, ցավում է յուր ժողովրդի բարոյական անկման վերա և կրկամենար մինչ իսկ «նզով լինել ի Քրիստոսէ վասն եղբարց և ազգականաց ըստ մարմնոյ, որ են Իսրայելացիք»: Նորա իղձն է միայն, որ յուր ժողովուրդը վերածնվեր այն հոգևոր փրկության համար, որ բերել էր յուր Տերը: Ավետարանների մեջ ավելի պարզ ցուցումներ կան այս խնդրի համար. Հիսուս գործում է յուր ժողովրդի մեջ և եկել էր Իսրայելի կորուսյալին գտնելու. յուր աշակերտներին ևս նախ Իսրայելի քաղաքներն է ուղարկում: Ինչպիսի՜ թախիծ է պատում Տիրոջ սիրտը Զիթենյաց սարի գլխից տաճարի և հինավուրց սրբազան քաղաքի շքեղությունը դիտելիս: Քաղաքի բարձր ապարանքներն ու աշտարակները, տաճարը յուր գմբեթով և ոսկեզօծ գեղեցիկ դարբասներով փայլում էին ուրախ արևի պայծառ ճառագայթների տակ, բայց մահվան դրոշմն էին կրում արդեն իրենց ճակատին, քարը քարի վերա չպետք է մնար այդ հոյակապ շենքերից... ուստի և լալիս է Տերը յուր հայրենիքի կործանման նախազգացման տպավորության տակ: Այն հայրենիքը և ժողովուրդը, որ Աստուծո ազդարար ձայնը չէր լսում, որ մոլեգնությամբ կոտորում էր յուր մարգարեներին և առաքյալներին, խեղդում է յուր որդոց մեջ արդարության և ճշմարտության բողոքի ձայնը, խեղդում և սպանում է ինքն իրան: Ժողովրդի մտքի և հոգու անբարոյականությունը նորա կործանման նախանշան է: Այս գաղափարն է փայլում Մատթ. ԻԳ գլխի մեջ, ուր Տերը քննադատում է յուր ժամանակի առաջնորդների բարոյական արժանիքը և նո-

նա հետ կապում Երուսաղեմի կործանման գաղափարը: Գողգոթայի ճանապարհին իսկ, երբ կանայք լալիս են Նորա վերա, Նա պատասխանում է. «Դուստե՛րք Երուսաղեմի, մի լայք ի վերայ իմ, այլ լացէք ի վերայ անձանց և ի վերայ որդւոց ձերոց»: Ճշմարիտ հայրենասիրի խորին գիտակցությունից և սրտից բխած ողբն էր այս յուր անգիտակից և բարոյական անկման խորխորատի վերա կանգնած ժողովրդի համար: Այս խոսքերն ու դեպքերը, որ կապված են Հիսուսի անձնավորության հետ, առաքելական և հետառաքելական շրջանի հայացքն էր, և լավագույն ապացույցը, թե քրիստոնեությունը հայրենասիրությունը չի ոչնչացնում, այլ սրբում, մաքրում և կամենում է, որ նորա հիմքը բարոյական լինի: Քրիստոնեության համար հայրենասիրությունը նախ բարոյական վերածնության գործ է:

Բայց այսպես չէին մտածում Հիսուսի ժամանակի փարիսեցիներն ու նախանձահույզները. նոքա ուրիշ ճանապարհ էին ընտրել՝ առաջնորդվելով մարդկային սխալ հասկացված ինքնավստահությամբ և կույր մոլեռանդությամբ: Հրեից մի բուռն ժողովրդի մեջ ստեղծվել էր արհեստական կերպով այնպիսի մի տրամադրություն, որից ամենայն հեշտությամբ օգտվում էին ստության և կեղծիքի հերոսները: Սուտ մարգարեներն ու քրիստոսները հանդես են գալիս այստեղ և այնտեղ և արյան նախճիրներ պատրաստելու անմեղ ժողովրդի համար: Հիսուսի ապաշխարության և հոգևոր թագավորության քարոզները արձագանք չգտան ժողովրդի մեծամասնության մեջ: Առաքյալների հրեղեն լեզուները չկարողացան ջերմացնել սառույց և քար դարձած ժողովրդի սիրտը: Ճակատագրական մի օրհաս, սև՛ փոթորկալի՛ց ամպերով, կախված էր այդ մի բուռն ժողովրդի գլխին, իսկ նորա կույր առաջնորդները աչք չունեին տեսնելու այն:

Վաթսունական թվականների վերջերից հրեական փոքրիկ ժողովրդի մեջ մի զարմանալի շարժում սկսվեցավ, որի նպատակն էր հռովմեական հզոր արծվի թևերը խորտակել: Բայց այդ շարժումը մի սրտաճմլիկ և վերին աստիճանի խրատական ողբերգության փոխվեցավ: Մոլեռանդությունն ու կատաղությունը միշտ հայտարար չէ ներքին ոգեվորության և սրբազան ու վսեմ գաղափարի կենդանության. Աստուծո կենդանարար հոգին փոթորիկների և ամպրոպների մեջ չի երևում, այլ խաղաղ զեփյուռների մեջ: Նախանձահույզների առաջնորդությամբ գլուխ բարձրացած ժողովուրդը ստիպեց հռովմայեցիներին դուրս գալ քաղաքից, բայց դորա փոխարեն այստեղ սարսափի և արհավիրքի մի կառավարություն սկսվեց: Վեսպասիանոս հռովմեական լեգեոնների գլուխն անցած՝ մի մեծ ջարդ էր տվել արդեն ապստամբներին, 40 հազարի չափ հրեաներ ընկել էին առաջին մեծ ճակատամարտի մեջ, իսկ նորանից հետո Տիտոս պաշարել էր քաղաքը: Եվ մինչդեռ Երուսաղեմի պարիսպները հետզհետե տապալվում էին թշնամիների առաջ, իսկ քաղաքի ներսում ժանտախտն ու սովը հազարավորների կյանքն էր հնձում պատմության մեջ քիչ անգամ տեսնված սաստկությամբ, հարազատ մայրը յուր զավակի միսն էր ուտում..., հրեա կուսակցություններն իրենց զորապետներով կատաղի կռիվ էին մղում միմյանց դեմ և հայրենի քաղաքի փողոցները ներկում հարազատ ժողովրդի արյունով: Իզուր չէր երգել նույն ժողովրդի սաղմոսերգուն. «Եթէ ոչ Տէր շինէ զտուն, ի նանիր վաստակին շինողք նորա, եթէ ոչ Տէր պահէ զքաղաք, ընդունայն տքնին պահապանք նորա»: Հրեա ժողովրդի ինքնասպանությունն էր այդ, յուր անբարոյականության պատիժը: Այն ժողովուրդը, որ Հիսուսի նման անձնավորությունը իբրև մահապարտ խաչել կարող էր և հայրենիքի ակնհայտնի կործանման ժամանակ իրար խողխողել, արժանի չէր անկախ և ազատ հայրենիք ունենալու: Քաղաքն ու տաճարը հրո ճարակ դարձան, բնակիչները տասնյակ հազարներով ընկան աներեր թշնամու զորության առաջ, իսկ մնացածները մետաղներն աքսորվեցան կամ գերի տարվեցան Հռովմ: Այս պատերազմը մի միլիոն կյանք նստեց հրեաներին, որոնք երկրորդ ապստամբությունից հետո՝ Ադրիանոսի ժամանակ թողին իրենց ավերակ և անբախտ հայրենիքը և ցրվեցան աշխարհի ամեն կողմերը, ազգերի ատելության արժանացած:

Ինչ որ նկատեցինք հրեից պատմության մեջ, կարելի է ցույց տալ և ուրիշ ազգերի կյանքում: Ի՞նչ էր Հունաստանի պատմությունը մակեդոնական և հռովմեական իշխանության ժամանակ: Երկպառակության զոհ դարձած լավագույն քաղաքացիները՝ ստիպված էին թույն խմել: Զգայական վայելքները, զեխությունն ու անամոթ անբարոյականությունը սպանեցին արվեստի և քաղաքակրթության Մայր Աթենքի ստեղծագործող զորությունը. Պերիկլեսի հետագա քաղաքացիների մեջ մեռել էր ոչ միայն սերը դեպի ազատությունը, այլև դեպի հզորները ցույց տված շողոքորթությամբ մինչև իսկ մարդկային արժանապատվության զգացումները: Իզուր էին աքայական դաշնակցության ջանքերը երկպառակված քաղաքների և ցեղերի մեջ միություն ստեղծելու, ազգային անկախությունն ու ազատությունը պահելու համար: Նախանձը, հափշտակության և ավազակության զգացումը ավելի զորավոր էր

մյուս ցեղերի մեջ: Աքայական դաշնակցությունն էլ արյունաքամ եղավ անվերջ ներքին երկպառակություններից և պատերազմներից, մինչև հռովմեական արծիվը այստեղ էլ տարածեց յուր թևերը, որպես թե ի պաշտպանություն ընդդեմ Մակեդոնացիների: Ազատության, արվեստի, քաղաքակրթության հայրենիքը երկպառակության, ավազակների և վայրենի բնազդների արտահայտության վայր էր դարձել: Կյանքի և գույքի ապահովությունը իսպառ վերացած էր խուժանապետների շնորհիվ: Չնայելով հռովմայեցիների դեպի Հույները ցույց տված զիջողության ու մեղմության, չկարողացան նոքա պահել իրենց ազատության վերջին մնացորդները, որովհետև անբարոյական, կուսակցության և կրքի զգացմունքներով կուրացած ազգն այլևս անկարող էր վայելել այն: Մատնությունը, նենգությունն ու երկպառակությունը վերջ տվին նրանց անկախության վերջին մնացորդներին, և այնուհետև անվեհեր քաջության հայրենիք Սպարտայի որդիքը վարձկան զինվորներ դարձան, իսկ Աթենացիք՝ որպես արվեստագետներ, ուսուցիչներ, դերասաններ կամ պարողներ՝ զբաղեցնում էին հռովմայեցիներին ենթարկված նրանց արհամարհանքին:

Այսպես է պատմության անողոք դատաստանը բարոյական օրենքների հակառակ ընթացող ազգերի համար և վա՜յ այն ժողովրդին, որ չի կամենում տեսնել և ճանաչել այն:

(«Արարատ», 1907, էջ 616—625):



Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ

Ասած է· «Ծառն արմատով է ծառ և տունն հիմամբ է տուն»: Եթե ուզում ենք, որ ծառն աճի, զորանա, յուր ճյուղերն ու տերևներն էլ զարգացնե, պետք է նորա արմատի զորացման վերա հոգանք, ժամանակին ջուրն անպակաս անելով և նրան շրջապատող հողն պարարտացնելով: Եթե ուզում ենք, որ մեր շինած տունն ամուր լինի, հեղեղից և փոթորկից երկյուղ չկրե, պետք է նորա հիմն ամուր ձգենք, ոչ ավազի այլ ժայռի վերա նրան դնենք: Այս անժխտելի ճշմարտություն է մարդկային կյանքի համար, ոչ թե միայն նյութական իրերի վերաբերությամբ, այլև հոգևոր ու բարոյական հաստատության վերաբերմամբ: Մարդուս բոլոր կյանքի ղեկավարն է նորա դատիարակության հիմն, եթե նա խախուտ է և անհաստատ, այնպիսի մարդու կենցաղավարությունը կներկայացնե տատանվող և փոփոխվող, ամեն բանից խռովող և ամեն կողմից շարժվող վիճակ. այնպիսին յուր գործունեության մեջ անհաստատ, յուր ուղղության մեջ փոփոխվող կլինի և ոչ միայն իրան անօգուտ, այլև այլոց վատ օրինակ կդառնա և գործքերին վնասակար, մանավանդ երբ նա որևէ հասարակական գործի գլուխ անցած է և ըստ բերման հանգամանաց ղեկավար իրանից ավելի ստոր մտավոր կարողություն ունեցողների, որոնք անգիտակցաբար հետևելով իրանց առաջնորդին ի վնաս անձանց կգործեն: Այսպիսի դեպքերի օրինակներ նկատելի են ամեն հասարակության կյանքի մեջ և մանավանդ այնպիսյաց մեջ, որոնք դեռևս սակավ զգացումն ունին և դատապարտված են միշտ հետևելու առանց կշռադատության նորակիրթ, անփորձ, թերուս և անձնապաստան ղեկավարների ցուցմանց:

Այսպիսյաց շարքում են մեծ մասամբ ներկայումս և մեր հայ հասարակությունք, որոնք ամենուրեք նոր սկսում են զարգացման ճանապարհի վերա կանգնիլ, բնազդաբար զգալով կարևորությունը, փոխվելու մտավորապես և հոգևորապես, որպեսզի վերածնեն և ներկայիս հարկավոր ույժն ու խաղաղությունն ստանան և մարդկության առողջ ու զորեղ անդամոց կենակցեն և սոցա նման և սոցա պես գործեն ինքնուրույնությամբ: Այսպիսի ձգտման ժամանակ, երբ մարդս տեսնում է յուր ունեցածի ոչնչությունն և ձեռք բերելիք անհրաժեշտ պիտոյից անհունությունը, գործում է հափշտակությամբ, առանց խիստ կշռադատության և ընտրության. ուստի և հաճախ ընկնում է սխալմանց մեջ, և եթե ինքը այլոց էլ ղեկավարող է, քարշում է յուր հետ և սոցա ու սխալանաց մեջ ձգում: Որպեսզի մեր հասարակական գործիչք բարեմտության և բուռն ցանկության հետևանք եղող հափշտակությունից չղեկավարվին և

չսխալին և կամ որքան հնար է սակավ սխալին, պետք է միշտ հիշեն վերոհիշյալ «ծառն արմատով է ծառ և տունն հիմամբ է տուն» խոսքերն և իրանց պատվաստելիքը հայ ծառի բնի վերա պատվաստեն և իրանց հանձնելիք տան հիմն հայ ժայռի և ոչ ավազի վերա դնեն: Ամենքի ցանկությունն էլ բարի է. բայց այդ ցանկության իրագործման համար ընտրած միջոցներն են միայն սխալ. որով և ցանկությունն էլ անկատար է մնում և վնասն էլ վերա է գալիս:

Հայ ազգի մտավոր և հոգևոր կյանքի արմատն և հիմն ս. Էջմիածինն է յուր հաստատություններով, առանց սորա հայություն երևակայելը ցնորք է, այնպես ինչպես առանց Վատիկանի ու պապության՝ կաթոլիկություն երևակայելը: Հայ եկեղեցյաց մայրը, արմատը, Միածնաիջի տաճարն է, ամենայն բարեկարգությունք այստեղից պիտի տարածվին բոլոր հայ եկեղեցյաց մեջ, հայ մտավոր հաստատության հիմն ս. Աթոռույս ճեմարանն է, որ պիտի պատրաստե այլ դպրոցների համար, հնար եղածի չափ, ավելի զարգացած, հոգևոր և աշխարհիկ գիտությամբ զարդարված և որ ամենանշանավորն է, հայ հոգվով դաստիարակված, իսկական մոր կաթամբ սնված, ուսուցիչներ և ղեկավարներ: Նա պիտի տա և բանիբուն և ընդունակ եկեղեցական բարձրաստիճան և քարոզիչ պաշտոնյաներ, որոնք թե՛ ժողովրդոց հոգևոր պիտույքն պիտի հոգան, և թե՛ նրանց համաձայն հայ եկեղեցվո՝ նոցա մոր ոգվույն հոգեպես ղեկավարեն:

Այսպես ուրեմն ս. Էջմիածինն յուր հաստատություններով գոլով հայ ծառի արմատն՝ իրավունք ունի հոգացողության հայազգի հաստատության կողմից, որոնք նորա ճյուղերն են, ամեն մարդ ինքը կարող է կշռել և որոշել, որովհետև խնդիրն և տղայոց համար պարզ է:

Եթե ծառի արմատը թույլ է, չունի բավականաչափ կերակուր, հողի անպարարտ լինելու պատճառով, գիա՞րդ կարող են նորա ճյուղերը սաղարթալից ու տերևալից լինել, բազմաթիվ ծաղկներով զարդարել և բերել պտուղ առատ և անուշահամ: Չէ՞ որ նորա արմատից կարևոր սնունդը չստանալով, կլինին նվազ և տակավ առ տակավ կչորանան: Էջմիածնից՝ հայ ծառի արմատից հեռացած հայություն երևակայելը ցնորք է, ասացինք, և այդ անուրանալի պատմական փաստ է. ապացույցներ չե՞ն միթե այդ ճըշմարտության բազմաթիվ հայ գաղթականության կորուստն ու անհետանալն աշխարհիս ամեն ծայրերում. և ինչիցն էր դոցա կորուստն, եթե ոչ ս. Էջմիածնից՝ իրանց բնական արմատից անջատվելովը. վասնզի ծառն արմատովն է ծառ, առանց արմատի՝ կտրած ծառի թարմությունը վաղանցուկ է, ինչպես և պատահեցավ հայ ազգի այն հասարակությանց, որոնք անջատվեցան իրանց արմատից՝ ս. Էջմիածնից և շուտով բոլորովին չորացան, խռիվ դարձան ու կոխան լինելով փշրտեցան: Շատ հեռու կերթայինք եթե մենք այս մասին մի առ մի փաստեր առաջ բերելու լինեինք, նամանավանդ որ այդ ավելորդ էլ է, որովհետև այդ փաստերն ամեն իսկ աշակերտի հայտնի են, որ յուր ազգի պատմությունը ուսել է կամ ամեն հայի, որ հայ գրքերի ընթերցանությամբ զբաղվել է:

Ուրեմն եթե հայ ազգը կամենում է իբրև առանձին հայ հոգևորապես և մտավորապես ապրել. բայց ապրել, ինչպես ապրում են մարդկության ընտիր անդամները կազմող ազգերն, նպաստելով յուր և ընդհանուրի բարօրության հոգևոր դաստիարակությամբ և մտավոր զարգացմամբ, պետք է նա՝ հայ ազգն, առանձին ուշադրություն դարձնե ս. Էջմիածնա՝ յուր արմատի վերա. հոգա սորա, ամեն միջոցները զորացնելու, կազդուրելու իբրև արմատի, որպեսզի սա էլ կարողանա հայ ազգի մասերին իբրև յուր ճյուղերին առատ և առողջարար կաթը ջամբել, զորացնել նրանց, ծաղկեցնել և առատ ու անուշահամ պտուղներ բերել տալ: Այս մասին որքան պարտք կա մտածելու և հոգալու հայ եկեղեցական դասի վերա, կրկնապատիկ ավելի պարտք կա հոգալու այդ մասին և ամբողջ ազգի վերա և ձգտումն դեպի այս գաղափարի իրագործումն **ոչ թե կենտրոնացումն է բոլոր միջոցների մի տեղում, այլ միայն զորացնում է այն աղբյուրը, որ յուր առատ և զովարար վճիտ ջրով պիտի զովացնե բոլոր ազգի հոգևոր ծարավը:** Ազգի տվածը աղբյուրում չպիտի մնա, այլ էլի տոկոսյոք պիտի վերադառնա դեպի նա, բայց ավելի հարմարեցրած նորա ճաշակին և իբրև սընընդարար կերակուր և դյուրամարս նորա ստամոքսի համար: Ի՞նչ է հայ ազգի ներկա ամենակարևոր պահանջն, եթե ոչ դաստիարակություն ազգային-կրոնական հոգվով և գիտություն: Նրան հարկավոր են քարոզիչներ հայ եկեղեցու հոգվով զարգացած և գիտությանց ներկուռ ուսուցիչներ, նույն **ուղղությամբ:** Երկուսի աղբյուրն էլ պիտի լինի ս. Աթոռս յուր հաստատություններով: Իրավ է գիտությունք ամենուրեք մի են. նոքա ընդհանուր մարդկության սեպհականությունք են և ամեն ազգերի, մտավոր, բարոյական և նյութական կյանքի բարօրության ծառայելու համար են: Բայց նոքա լոկ միջոցներ են, որոնք յուրաքանչյուր ազգ պիտի գործ դնե յուր առանձնահատկությունքը կազդուրելու, իր գոյությունն ապահովելու համար և ոչ ի կորուստ սոցա: Գիտությունք և արհեստք ամեն բարեկիրթ երկիրներում նույնն են և

գրեթե միևնույն զարգացման աստիճանի վերա են գտնվում, բայց ֆրանսիացին նույն գիտություններով ապրում է իբրև ֆրանսիացի, ռուսը նույն գիտությունով ապրում է իբրեվ ռուս և գերմանացին՝ իբրև գերմանացի, ուստի և հայն էլ նույն գիտությունները ստանալով պետք է ապրի իբրև հայ: Ֆրանսիացին գերմանական գիտություն ուսանելով, չէ դառնում գերմանացի և ընդհակառակն, որովհետև նոցանից յուրաքանչյուրն ունի առանձնահատկություն, որոց հիման վերա դաստիարակվում է և որոց զարգացման նպաստում են գիտությունք. յուրաքանչյուրն ունի յուր հայրենիքն, որ սուրբ է նորա համար և որ նորա հոգացողության և խնամոց առարկան է, նորա հոգվով, նորա կյանքով է նա ապրում: Հայի հայրենիքն էլ այսօր իբրև կրոնական ազգի, ս. Էջմիածինն է, առանց սորա հայություն չկա, առանց սորա հայ ազգի գոյությունն այսօր անհասկանալի է: Հայրենիքից զրկված ֆրանսիացին և գերմանացին օտարանում է հաճախ յուր ազգից և օտարի մեջ ձուլվում, Էջմիածնից զրկված հայերն էլ օտարաց մեջ ձուլվել են և կորել: Գիտությանց հետ և ազգայնության ոգին պետք է տիրե մարդուս սրտին, որ միայն հայրենիքումն է և նորա հիշատակաց մեջ: Այսօր հայի հայրենիքն յուր եկեղեցին է. սորա կեդրոնը ս. Էջմիածինն. այստեղ է նորա հոգին սավառնում: Ուստի և այն հայն որ յուր սրտի զգացմանց առարկա չէ անում Էջմիածինն և յուր պարտքը դեպի նա չէ ճանաչում, լինի նա թե եկեղեցական թե աշխարհական, շեղվում է հայությունից, իսկ նա, ով անտարբերությամբ, չենք ուզում ասել թշնամությամբ է նայում ս. Էջմիածնա վերա, այդպիսին մայրատյաց զավակ է. հայ ազգի անդամությունից դուրս է: Հայ ազգը դարավոր հիվանդ է. ս. Էջմիածինն է նորա Պրոպատիկե ավազանը: Այստեղ է նորա հոգեվոր բժշկության աղբյուրը: Այսպես պիտի մտածե հայ ազգն և նրան բարի կլինի աշխարհիս երեսին:

(«Արարատ», 1888, էջ 216—220):





ԳՐԻԳՈՐ ՀԱԿՈԲՅԱՆ

ՍԱՀԱԿ ՊԱՐԹԵՎԻՆ ՎԵՐԱԳՐՎՈՂ ՇԱՐԱԿԱՆՆԵՐԸ

Գրիգոր Լուսավորչի թոռան թոռը, Ներսես Մեծի որդին՝ Սահակ Պարթևը, ծնվել է Կեսարիայում: Կրթությունը ստացել է Բյուզանդիայում, լավ հելլենագետ էր: Հայաստան գալուց հետո ամուսնացել էր, բայց երբ կինը վախճանվեց, դարձավ եկեղեցական: Ուներ 60 աշակերտ, որոնց հետ վարում էր մեկուսի կյանք: Խոսրով Գ-ի օրով ընտրվեց կաթողիկոս՝ իբրև Ասպուրակեսի հաջորդ (387): Ամբաստանվեց պարսից թագավորի առաջ և իբրև հունասեր՝ գահընկեց արվեց: Վռամշապուհի գահակալությունից հետո գնաց Պարսկաստան, ներկայացավ Վռամ թագավորին, արդարացավ և նորից նստեց հայրապետական գահին (390 թ.): Հայոց Վռամշապուհ թագավորի աջակցությամբ Մեսրոպ Մաշտոց վարդապետի հետ միասին հիմքը դրեցին հայոց գրի ու գրականության: Թարգմանել է ս. Գիրքը և ուրիշ գործեր: Պարսկասեր կուսակցությունը դժգոհ լինելով Արտաշես Գ թագավորից, ուզեց գահընկեց անել նրան, ջնջել հայոց Արշակունի թագավորությունը և փոխարենը պարսիկ մարզպան դնել: Սահակ Պարթևը բողոքեց այդ որոշման դեմ, որի համար զրկվեց կաթողիկոսական գահից և մնաց Պարսկաստանում մինչև 432 թվը, երբ վերադարձավ Հայաստան, հաստատվեց Բագրևանդում, զբաղվեց գրականությամբ և վախճանվեց 438 թվին: Թաղվել է Աշտիշատում: Բացի թարգմանություններից Սահակ Պարթևին են վերագրվում կանոններ, թղթեր, աղոթքներ և շարականներ:

* * *

387 թվականին Հայաստանը բաժանվեց բյուզանդական և պարսկական աշխարհակալ պետությունների միջև: Թեպետ արևելյան Հայաստանում դեռ մնում էր Արշակունիների թագավորությունը, բայց գրեթե միայն անունով, որովհետև նա չէր կարող առաջվա պես հանդես գալ իր ազգային ու պետական շահերը պաշտպանելու դիրքերում:

Ժամանակի հասարակական-քաղաքական պայմաններն իրենց հետ անհրաժեշտորեն բերել էին պայքարի նոր բնագավառներ ու ձևեր: Երբեմնի քաղաքական պայքարին այժմ փոխարինելու էր գալիս մշակութային պայքարը: Թեև գաղափարական, կրոնական պայքարը Արշակունիների թագավորության անկումից առաջ էլ տեղի ուներ հայերի ու պարսիկների միջև՝ քրիստոնեության սկզբնական շրջանից, բայց այն առանձնապես սուր կերպարանք ստացավ Շապուհ Բ-ի օրով (310—379) և քանի գնաց՝ ավելի սաստկացավ: Ստեղված քաղաքական դրությունը

ստիպում էր պարսիկներին Հայաստանում քրիստոնեությունը վերացնել և նրա տեղ տարածել զրադաշտական կրոնը՝ բյուզանդացիների ազդեցությունը վերացնելու նպատակով: Բայց Արշակունիների թագավորության անկումից հետո հայ եկեղեցին ոչ միայն չթուլացավ, այլև նա հանդես եկավ որպես համազգային հեղինակավոր, կենտրոնական մի իշխանություն: Ահա թե ինչու այդ ժամանակ պարսիկները այնքան խոշոր նշանակություն էին տալիս քրիստոնեական կրոնի ու հայ եկեղեցու դեմ մղվող պայքարին և ամեն կերպ աշխատում էին եթե ոչ վերացնել, գոնե չեզոքացնել այն, պարսկական քաղաքականության գործիք՝ Սուրմակների և Բրքիշոների միջոցով: Բայց հայ ժողովրդի քաղաքական ճգնաժամի հետ միասին պատմության հրապարակի վրա հանդես է գալիս աննախընթաց մտավոր մի վերածնություն, մի զորեղ մշակութային շարժում, որ դարեր շարունակ բախտորոշ պիտի լիներ հայ ժողովրդի համար և փրկեր նրան մեծ ազգերի կուլ գնալուց ու ոչնչանալուց: Այդ շարժումը գլխավորել էին Սահակ-Մեսրոպը և Արշակունյաց իշխանությունը: Եվ քանի որ այդ շրջանում ազգի ինքնուրույնությունը պաշտպանելու ճակատում ամենաուժեղ միջոցներից մեկը հայ եկեղեցին էր, ուստի անհրաժեշտ եղավ կատարելագործել այդ հոգեկան զենքը: Թեև հայերի քրիստոնեություն ընդունելու օրից շուրջ հարյուր տարի էր անցել, բայց քանի որ ժամասացությունը կատարվում էր հունարեն և ասորերեն անհասկանալի լեզուներով, այդ կրոնը ժողովրդի մեջ դեռ չէր արմատացել: Ուստի, գրերի գյուտից հետո առաջին հերթին անհրաժեշտ էր «ազգայնացնել», «հայացնել» եկեղեցին: Այդ գործի համար հարկավոր էր ունենալ նաև հայերեն հոգևոր երգեր: Ինչպես գրի ու գրականության, այնպես էլ մեր ազգային առաջին շարականների հիմնադիրները հանդիսանում են Սահակ Պարթևը և Մեսրոպ Մաշտոցը:

*
* *

Սահակ Պարթևն ու Մեսրոպ Մաշտոցը ոչ միայն մեր առաջին շարականագիրներն են, այլև հոգևոր երգի եղանակների հեղինակները: Երբ բաց ենք անում մեր Շարակնոցը, «Յօրինողք շարականաց» առաջաբանում կարդում ենք.

1. «Մեծն Մեսրոպ ասաց զկարգն ապաշխարութեան...».

2. «Եւ սուրբն Իսահակ զԱւագ շաբաթուն»[1]:

Սահակ Պարթևի գրած շարականներն երկու տասնյակից ավելի են, որոնց մի մասը վերաբերում է Ծաղկազարդին, մի մասը՝ Ավագ հինգշաբթի, ուրբաթ և շաբաթ օրերին, և մի մասն էլ՝ Ղազարի հարությանը: Բայց այստեղ մենք քննության ենք առել Սահակ Պարթևի գրած ոչ միայն այդ կանոնական շարականները, որոնք ընդունված են ժամակարգության մեջ և կան մեր Շարակնոցում, այլև նրա գրչին պատկանող, ժամակարգությունից ու Շարակնոցից դուրս մնացած «Շարականներ», որոնց մի մասը նույնպես նվիրված է Ծաղկազարդին և մի մասն էլ՝ Ղազարի հարությանը: Սահակ Պարթևը գրել է յոթ շարական, որոնցից չորսը կանոնական[2] են («Թագաւոր գոլով», «Յորժամ եկն Յիսուս», «Զգալուստ քո Քրիստոս այսօր», և «Ի յարութեան աւուր»), իսկ երեքը՝ պարականոն[3] («Որ զերիս մանկունսն ի հնոցին ապրեցուցէր», «Ուրախ լեր մայր լուսոյ» և «Բարեբանեալ»):

Ծաղկազարդի տոնին վերաբերվող բոլոր շարականների հիմնական գաղափարը, բովանդակությունն այն է, որ ըստ Ավետարանի, Քրիստոսը համեստորեն, նստած ավանակի վրա՝ մտնում է Երուսաղեմ՝ որպես «Նոր Դավիթ»: Այս շարականները համակված են ցնծության զգացմունքներով ու բացականչություններով: Ամբողջ Երուսաղեմը ջերմ ոգևորությամբ է դիմավորում ավանակի վրա նստած Փրկչին: Ի պատիվ Փրկչի, ծերունիները նոր ծաղկած ձիթենու ճյուղերով, իսկ տղաները՝ արմավենու ոստերով ընդառաջ են ելնում և բոլորը միաբերան փառաբանության երգեր են ասում.

Ծերքն ոստովք ձիթենեօք,
Եւ տղայքն ոստովք արմաւենեօք,
Եւ երամ-երամ դասուքն աղաղակէին՝
Ովսաննա, օրհնեալ, եկեալ ի յանունն Տեառն[4]:

Ուրախության մեջ են ոչ միայն մարդիկ, այլև բնությունը: Մարդկանց, ողջ քաղաքի հետ միասին ցնծության մեջ է նաև Երուսաղեմի Սիոն լեռը.

Ցընծացաւ սուրբ Սիովն,
Բերկրեցաւ սուրբ եկեղեցիք,
Եւ խնդութեամբ բազմաւ ելին ընդառաջ,
Օրհնէին զգալուստ քո Փրկիչ յաշխարհ[5]:

Ամենից շատ ուշադրություն դարձրել են նաև մանուկները:

[1] «Շարական», Երուսաղեմ, 1936, էջ 5:

[2] Անդ, էջ 313—315:

[3] **Ս. վ. Ամատունի**, Հին և նոր պարականոն շարականներ, Վաղարշպ., 1911, էջ 88—91:

[4] «Շարական», էջ 313: Այս և բոլոր մեջբերված շարականները մեր կողմից չափաստղված են:

[5] Անդ, էջ 314:

Ի լեռնէ Զիթենեաց մանկունքն
Տարածանէին զհանդերձս իրեանց...
Ուտովք և տերևօք ձիթենեօք՝
Եբրայեցւոց մանկունքն օրհնէին[6]:

Ցնծության մեջ են նաև Երուսաղեմն ու առաջին քրիստոնեական եկեղեցին.

Ուրախ լե՛ր Երուսաղէմ քաղաք,
Եւ ցընծա՛ Սիովն՝ մայր եկեղեցի[7]:

Ուրախությունը խորանալով ու ծավալվելով վերածվում է հանդիսավոր տոնախմբության, որին տարերայնորեն մասնակցում են բոլորը՝ անկախ հասակից ու սեռից:

Ի ծերոց բըղխեալ օրհնութիւն,
Եւ ի տղայոց փառաբանութիւն[8]:

Այս տոնին նվիրված պարականոն երեք շարականներից երկուսը «երգաբանեալ» փառաբանություն են՝ ուղղված Փրկչին, «վեցթևյան սերովբեներին» և «զուարթունք երկնից» հրեշտակներին: Այստեղ արտահայտվում են նաև բանաստեղծի հույզերը: Նա ևս հրճվում է երուսաղեմցիների հետ՝ Փրկչի գալստյան առթիվ.

Ընդ նոսին և մեք երգեսցուք,
Ովսաննա Բարձրելոյն, որ փրկեաց զմեզ[9].

Ավելի քնարական ու գեղեցիկ է պարականոն Մեծացուցեն: Եթե Երուսաղեմի բնակիչները ցնծության հորդոր էին ուղղում իրենց հայրենակիցներին, քաղաքին և նույնիսկ լեռներին, ապա այս շարականում հեղինակը այդ նույն զգացմունքներով ու հորդորներով դիմում է Տիրամորը.

Ուրախ լեր մայր լուսոյ, Աստուածածին,
Քանզի ի քէն մարմնացաւ Աստուած,
Այսօր ի վերայ յաւանակի նստել հաճեցաւ[10]:

Տոնի և Քրիստոսի Երուսաղեմ գալու մասին խոսելուց հետո, հեղինակը շոշափում է Փրկչի մարդեղության խորհուրդը և նպատակը՝ ներդնելով այդտեղ նաև դավանաբանական գաղափարներ.

Որ ի Հօրէ առաքեցաւ Բանն,
Եւ յորովայնի քում բնակիլ հաճեցաւ.
Որ ի յերկրի երևեցաւ,
Եւ ընդ մարդկան շրջեցաւ,
...Ի դասուց եբրայեցւոց բարեբանեցաւ[11]:

Ծաղկազարդին վերաբերող կանոնական և պարականոն վերոհիշյալ բոլոր շարականները գրված են պարզ ու մատչելի լեզվով, խոր հուզականությամբ, որտեղ պարզ երևում է Դավթի սաղմոսների թողած ազդեցությունը: Սահակ Պարթևի գրած շարականների երկրորդ խումբը վերաբերում է Ղազարի հարությանը, որը նույնպես մտնում է Ավագ շաբաթի կանոնի մեջ: Այս շարականների գաղափարն ու թեման հեղինակը վերցրել է Հովհաննեսի Ավետարանի ԺԱ գլխից, ուր խոսվում է Ղազարի հարության մասին:

Ղազարի հարությանը վերաբերող շարականները հետևյալներն են՝ «Այսօր գոլով ի Բեթանիա» (օրհնութիւն), «Որ ի չորեքկերպեան կենդանեաց փառաբանիս» (Ողորմեա), «Աղբիւր անմահութեան» (Տէր յերկնից), «Որ ի յերկնից իջեր» (Ճաշու) և մի պարականոն Մեծացուցեն «Տուն տնօրէնութեան» սկսվող բառերով:

Սահակ Պարթևի այս կարգի շարականներն ավելի ևս աչքի են ընկնում իրենց պարզությամբ ու լեզվով: Վերոհիշյալ հինգ շարականների մեջ տարբեր ձևերով ու տարբեր խոսքերով ներկայացվում է Ղազարի հարության հրաշքը, Քրիստոսի պարզությունն ու մարդասիրությունը: Եթե Ծաղկազարդի տոնի շարականներում եբրայեցի մարդիկ, մանավանդ փոքրերը, դիմավորում էին Երուսաղեմ մտնող Հիսուսին՝ ձիթենու և արմավենու նոր, կանաչած ուտերով, ցնծության երգերով ու փառաբանությամբ, ապա այստեղ բեթանիացիները, դարձյալ մեծ մասամբ մանուկները, «սքանչացեալ» պատմում են բոլորին Քրիստոսի կատարած հրաշքը, փառաբանում Նրան և իրենց համար էլ երկար կյանք խնդրում.

Այսօր գոլով ի Բեթանիա,
Եբրայեցւոց մանկունքն,
Սքանչացեալ ասէին՝
զՄարիամու զեղբայրն
Ի թաղմանէ յարուցեալ՝
Որդւոյն Մարիամու.
Կենդանարար Քրիստոս
Կեցո զմեզ[12]:

Այս փոքրիկ շարականում միաժամանակ ցույց է տրվում, որ Փրկչի ամենազոր հրամանով «դողացաւ մահը», «պարտեցաւ դժոխքը» և «լուծաւ ապականութիւնը» մի անպատում հրաշագործությամբ, այն է՝ չորս օրվա մահացած ու թաղված Ղազարի հարությամբ: Ըստ շարականի, Ղազարի հարության ցնցող դեպքը ունեցել է մի ուրիշ՝ ավելի մեծ ու սքանչելի խորհուրդ ևս: Դա այն է, որ Ղազարի հարությամբ, Քրիստոսը կամեցել է նախապես նշել Իր էլ հարության դեպ-

---

[6] Անդ, էջ 314:
[7] Անդ, էջ 314:
[8] Անդ, էջ 315:
[9] **Ս. վ. Ամատունի**, նշված աշխատությունը, էջ 88—89:
[10] Անդ, էջ 91:
[11] «Շարական», էջ 91:
[12] Անդ, էջ 305:

քը, այսինքն, որ ինքն էլ է մեռնելու և հարությամբ մահը հաղթելու.

Այսօր գոլով ի Բեթանիա,
ԶՔո զաշխարհակեցոյց
Սուրբ յարութիւնդ
Յառաջագոյն ծանուցեր[13]:

Այս շարականներից մեկի մեջ էլ հեղինակը Քրիստոսի կատարած աստվածային գործերի կողքին ներկայացրել է Նրա նաև մարդկային ու մարդասիրական գծերը: «Որ ի չորեքկերպեան կենդանեաց» բառերով սկսվող շարականում աչքի է ընկնում Քրիստոսը Իր կարեկցող և զգայուն սիրով: Նա սովորական մարդու պես լալիս է՝ Մարիամի, Մարթայի և մյուսների հետ ու առաջարկում թափում Ղազարի մահվան առիթով:

Մյուս շարականի մեջ բնորոշվում է Հիսուսը որպես՝

Աղբիւր անմահութեան,
Բղխեալ ի Բեթանիա[14]:

Այն Փրկիչը, ասում է շարականը, «յորմէ դողան դասք հրեշտակաց», այսօր եկել է իր մեռած բարեկամի ու նրա քույրերի մոտ նրանց միխիթարելու, սփոփելու համար.

Մարդասիրապէս արտասուեցեր՝
Ողբակցելով ընդ Մարթայի,
Եւ ընդ Մարիամու[15]:

Այս մի քանի փոքրիկ շարականների մեջ Սահակ Պարթևը կարողացել է ներկայացնել Քրիստոսի ոչ միայն աստվածային զորությունն ու գործերը, այլև ընդգծել է նրա մարդկային, զգայուն և մարդասիրական կողմերը:

Առանձնապես ուշագրավ է Ղազարի հարությանը նվիրված «Տուն տնօրէնութեան» բառերով սկսվող պարականոն Մեծացուցեն: Այստեղ, սովորաբար ինչպես և բոլոր Մեծացուցեների մեջ, գովերգվում ու փառաբանվում է Տիրամայրը՝ նաև նրա համար, որ աշխարհի համար ծնել է այնպիսի մի Փրկիչ, որը մեռածներին անգամ կյանքի է կոչում: Ըստ շարականի, Տիրամայրն է փրկության աղբյուրն ու կյանքի ակունքը:

Տուն տնօրէնութեան և տաղաւար՝
Բանին կենաց Բարձրելոյն[16]:

Եվ վերջապես Տիրամայրը իր հավասարը չունեցող, անզուգական է ու պանծալի, մայր է, ավելի բարձր՝ քան երկինքը, քանի որ նա կարողացել է իր արգանդում կրել «անբաւելին երկնի և երկրի»:

Մարիամ, մայր պանծալի,
Եւ քան զերկինս բարձրագոյն.
Որ բարձեր զբարձողըն բոլորից,
Եւ հանգուցեր ի գիրկս քո[17]:

Այնուհետև իրենց պարզ բովանդակությամբ և հուզականությամբ աչքի են ընկնում մի քանի ուրիշ շարականներ՝ Փրկչի մատնությանը, խաչելությանն ու թաղմանը նվիրված: Թեև այս շարականները մի քանի հատ են, բայց բոլորի էլ հիմնական գաղափարը նույնն է, որոնց ընդհանուր հանգույցն սկսվում է «Խորհրդավոր ընթրիքի» ժամանակ, զարգանում և ապա հասնում իր գագաթնակետին ու լուծվում Քրիստոսի մահվամբ ու թաղմամբ:

Ավագ շաբաթի հինգշաբթի օրն է: Երեկո է: Վերջին ընթրիքի խորհրդավոր ու սրտառուչ պահն է: Շարականը ասում է.

...Այսօր Տէրն մեր լուսանայր զոտս աշակերտացն,
Եւ պատուիրէր զայս ասելով՝
Մի ոմն ի ձէնջ, եղբարք,
Զիս մատնելոց է առ ի մահ...[18]:

Այս հայտարարությունը ճնշող ազդեցություն է թողնում առաքյալների վրա: Հուզվում, ապա հետաքրքրվում են, թե ո՞վ է արդյոք այդ մատնիչը: Տիրում է ծանր դրություն, որովհետև

Բանն զոր ասաց Յիսուս,
Տրտմեցոյց զիւր զաշակերտսն,
Եւ խռովեցան ամենեքեան[19]:

Ապա պարզվում է, Ավագ ուրբաթ օրվա շարականներից, որ՝

«Արծաթասիրութեամբ մոլեալ Յուդա,
Զիւր ըզմեծ վարդապետըն,
Ընդ երեսուն արծաթոյ հրէիցն մատնէր»[20]:

Խիստ խոսքերով է բնութագրված մատնիչը, որը դադարել է ոչ միայն Քրիստոսի աշակերտը լինելուց, այլև որպես վատնոգի և անարգ, արդեն կորցրել է մարդկային դեմքը և դարձել սատանա:

«Մերկացաւ յինքենէ զաստուածային
սուրբ հոգին,
Եւ զգեցաւ զսատանայ, որպէս հանդերձ
արկաւ զիւրեաւ[21]:

Մանկունք անունը կրող շարականում հատկապես փառաբանվում է Քրիստոսի համբերատարությունն ու երկայնամտությունը: Թեև Նա մատնվում է իր մոտիկ մարդու ձեռքով, ապերախտաբար, անարդար դատապարտվում է, գանակոծվում ու խաչվում է, բայց Նա էլի մնում է անհիշաչար, մարդասեր: Նա այդ բոլոր չարչարանքները

[13] Անդ, էջ 305:
[14] Անդ, էջ 305:
[15] Անդ, էջ 306:
[16] **Ս. վ. Ամատունի**, նշված աշխատությունը էջ 87:
[17] Անդ:
[18] «Շարական», էջ 337—338:
[19] Անդ, էջ 338:
[20] Անդ, էջ 341:
[21] Անդ:

համբերությամբ ու սիրով է տանում՝ հանուն մարդկության, հանուն մեղսագործ ադամորդու և աշխարհի փրկության: Այսպես.

Որ մարդասիրապէս վասն ամենեցուն,
Ամենայնի համբերեցեր,
Եւ ի մահու զմահ կոխեցեր[22]:

Ավագ շաբաթ օրվա նշանավոր շարականը նվիրված է Քրիստոսին՝ խաչահայտից իջեցնելուն և թաղմանը: Այդ շարականն ընկալվում է «Պարգևատուն ամենեցուն» բառերով: Փրկիչը, որ դեռ երեկ և մյուս օրը մեռելին հարություն էր տալիս, ամենքին կյանք պարգևում ու սիրում, այսօր այդ նույն Փրկիչը զրկվել է կյանքից և խաչափայտի վրա՝ մահացել: Նա, որ Ինքը անճառ լույս էր և ողջ աշխարհն էր լուսով ողողում, այսօր Հովսեփի ձեռքով պատանքվում է՝ գերեզմանի մեջ դրվելու համար: Ավելին. պիտի մարդիկ խնդրեն Պիղատոսին, որ նա թույլ տա Փրկչի մարմինը թաղելու համար:

Պարգևատուն ամենեցուն,
Այսօր խնդրի պարգևս ի Պիղատոսէ...
Կենդանատուն ամենեցուն,
Այսօր դնի ի նոր գերեզմանի...[23]:

Եթե Ղազարի հարության, Ծաղկազարդի և Ավագ հինգշաբթի տոների շարականներին աչքի են ընկնում պարզությամբ, հուզականությամբ, ապա Քրիստոսի խաչելության և թաղման վերաբերող այս շարականները վերոհիշյալ հատկանիշների հետ միաժամանակ ունեն պատկերավորություն, հակադրություն և արտահայտչականություն.

Կենդանին յաւիտենից Քրիստոս,
Այսօր խնդրի որպէս մեռեալ ի Պիղատոսէ[24].
Անմահութեանց տրուող Քրիստոս,
Այսօր ի հող մահու խոնարհեցաւ...
Արեգակն արդարութեան Քրիստոս.
Այսօր եդաւ ի գբի ստուերականի...[25]:

Ամբողջ շարականի ընթացքում մի դրությունը, վիճակը պատկերավոր հակադրվում է մի ուրիշ դրության: Կուսածին կյանքը դրվում է գերեզման. արթունը ննջում է, ցընծությունը վերածվում է սգի, արեգակը մտնում է գբի ստվերների մեջ, ճառագայթին փոխարինում է խավարը և այլն:

Շարականագիրը խաչելության շուրջ ստեղծում է ուժեղ պատկերներ և ինքն էլ ընկնում ծանր ապրումների մեջ: Այստեղ արդեն հեղինակը Ավետարանի նյութը միայն մշակող կամ երգաբանող չէ: Ինքն էլ է հանդես գալիս, որպես խաչելության ներկա, տառապող անձնավորություն և շարականի մեջ արտահայտում նաև իր ներքին հույզերը.

Ով սքանչելի տեսիլ և անհաւոր,
Զարարիչըն երկնի և երկրի,
Այսօր տեսաք ի խաչի[26]:

Բանաստեղծի մոտ խաչելության երևույթը այնքան անհեղ է ու մեծ, որ այն ցնցել է ամբողջ տիեզերքը.

Տեսեալ ըզՏէրն ի խաչին,
Խաւարեցաւ արեգակն,
Եւ վարագոյր տաճարին,
Ցելոյր վերուստ մինչ ի վայր[27]:

Սահակ Պարթևի գրած բոլոր շարականները վերաբերում են Ծաղկազարդի կիրակիին և Ավագ շաբաթի խորհրդին: Շարականագիրը ավետարանական պատումները ենթարկել է ստեղծագործական, ինքնատիպ վերամշակման: Այս ամենի հետ զուգընթաց, այդ շարականները արտահայտել են նաև բանաստեղծի ապրումները: Այս շարականներով ս. Սահակ Պարթևը հիմք է դնում մեր ազգային, հոգևոր երգին: Հետագայում նրան հետևեցին շատ բանաստեղծներ ու շարականագիրներ, ինչպես՝ Մ. Մաշտոցը, Մ. Խորենացին, Հ. Մանդակունին, Կոմիտասը, Ստեփանոս Սյունեցին, Ն. Շնորհալին, Լամբրոնացին և ուրիշները:

---

22 Անդ, էջ 345:
23 Անդ, էջ 366:
24 Անդ, էջ 366—367:
25 Անդ, էջ 367:
26 Անդ, էջ 344:
27 Անդ:

Ն. ԹԱՀՄԻԶՅԱՆ

ՀՈԳԵՎՈՐ ԵՂԱՆԱԿՆԵՐԻ ԿՈՄԻՏԱՍՅԱՆ ԿԱՆԽԱԳՈՒՅՆ ԳՐԱՌՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԾԱՆՈՒԹՅՈՒՆԸ

12. «Եւ ևս խաղաղութեան» (քարոզ).

13. «Եղիցի անուն Տեառն օրհնեալ» (չափաւոր).

14. «Թագաւորեսցէ Տէր յաւիտեան» (չափաւոր, ԳՁ).

15. «Փառք յարութեան քո Տէր» (չափաւոր, ԱԿ և ԱՁ).

16. «Ամէն, և ընդ հոգւոյդ քում» (ծանր, ԳԿ).

Այս երգերի եղանակները ելևէջային տարբեր, բայց յուրովի գեղեցիկ, ձևերի մեջ ժամանակին ձայնագրել է նաև Ն. Թաշճյանը:

«Եւ ևս խաղաղութեան» քարոզը, որ երգվում է «Ցառաջ քան զիւղաբերից աւետարանն», Ն. Թաշճյանը ձայնագրել է երկու տեսակ. «Ի հասարակ կիւրակէս»[1] և «Ի մեծահանդէս կիւրակէս»[2]: Կոմիտասի գրառածը երկրորդից էլ ավելի լայնաշունչ ու հանդիսավոր է:

«Եղիցի անուն Տեառն օրհնեալ»-ը (որ է՝ «Երգ իւղաբերից աւետարանին»), դարձյալ երկու տեսակ է ձայնագրել Թաշճյանը. «Վասն կիւրակէից մեծի պահոց»[3] և «Վասն կիւրակէից Ցարութեան»[4]: Ձայնեղանակով վերջինիս հետ է համաձայնվում Կոմիտասի գրառածը, բայց ելևէջը ավելի ոլորուն է և կշռույթը՝ տրոհված:

«Թագաւորեսցէ Տէր յաւիտեան»-ը (իւղաբերից) Թաշճյանը գրառել է նույնիսկ երեք տեսակ. «Վասն կիւրակէից մեծի պահոց»[5], «Վասն հասարակ կիւրակէից յարութեան»[6] և «Վասն հանդիսաւոր աւուրց»[7]: Հյուսվածքի ճոխությամբ ու ձայնեղանակով վերջին երկուսն են մոտիկ Կոմիտասի ձայնագրածին: Սակայն, սա ավելի լայնաշունչ է բնույթով և նրանում ելևէջի երկարաձիգ ոլորումները գրական խոսքի այլ վանկերի վրա են:

Ընդհակառակը, «Փառք յարութեան քո Տէր»-ը Կոմիտասի գրչի տակ ավելի ճկուն ու գնացուն երգի նկարագիր է ձեռք բերել[8]:

Վերջապես՝ «Ամէն, և ընդ հոգւոյդ քում»-ի մասին: Դատելով ձայնեղանակից ու բնույթից, այն՝ մի հատված է «Ի պէտս Տաղաւարաց» պատարագից, Թաշճյանի ձայնագրած համեմատությամբ ավելի ևս զարդոլորուն հյուսվածքով[9]: Հատվածիս սահմաններն են՝ «Ստամենայնի»-ից հետո, մինչև «Միայն սուրբ», ուր բաց են թողնված սարկավագի՝ մեջ ընդ մեջ կատարվող երգամասերը («Ամէն, և ևս խաղաղութեան» և այլն), ու երկու «խմբովին» երգ. «Տէր ողորմեա, բեզ Տեառնդ յանձն եղիցուք» և «Հայր մեր»:

Սրանով ավարտում ենք հայկական հոգևոր եղանակների կոմիտասյան 1893 թվակիր ժողովածուի նյութերի հրապարակումը: Եվ այս կապակցությամբ հարկ է նշել հետևյալ կետն էլ:

Կոմիտասի կատարած սույն գրառումներում երբեմն հանդիպում են, այսպես կոչված, զարտուղի (կամ անկանոն) ամանակներ՝ չափական միավորի տևողությունից պակաս, անկախ խմբավորումներ, ինչպես՝ հինգ 32-ականներից կազմված «կվինտոլներ» («Հաւիկ», «Դասքրն հրէական»), երկու 16-ականից բաղկացած կշռութային ինքնուրույն գծագիր («Ամէն, և ընդ հոգւոյդ քում») և այլն:

Ուշադիր քննությունը ցույց է տալիս, որ դրանք պատահական սխալմունքի արդյունք չեն, այլ՝ տակավին միջնադարում կիրառված ու, ամենայն հավանականությամբ, նաև խազային գրություններում ժամանակին արտացոլված երաժշտա-տաղաչափական նրբություններ (նման հայոց ձայնեղանակների ելևէջային մանրամասնություններին):

Եվ սակայն, հարմար դատեցինք դրանք վերածել չափական կանոնավոր միավորների՝ հաշվի առնելով, որ հիշյալ զարտուղություններն այսօր գործնական նշանակություն չեն կարող ունենալ երգիչների համար, այլ միայն ավելորդ դժվարություններ կստեղծեն կատարման ընթացքում:

---

*Շարունակված «Էջմիածին» ամսագրի 1970 թվականի №№ Բ—Դ-ից:

[1] Տե՛ս Երգք ձայնագրեալք ի ժամագրոց Հայաստանեայց ս. եկեղեցւոյ, Վաղարշապատ, 1877, էջ 277—278:

[2] Անդ, էջ 276—277:

[3] Անդ, էջ 287—288:

[4] Անդ, էջ 281:

[5] Անդ, էջ 288:

[6] Անդ, էջ 286—287:

[7] Անդ, էջ 283—284:

[8] Հմմտ.՝ անդ, էջ 284:

[9] Հմմտ.՝ Ձայնագրեալ երգեցողութիւնք սրբոյ պատարագի, Բ տպագրութիւն, Վաղարշապատ, 1878, էջ 88—91:

ԵՒ ԵԼԱՒ ԽԱՂ ԱՂՈՒԹԵԱՆ

(Քարոզ)

Չափաւոր-միջակ




Վասն ըն - դու - նե - լոյ զպա - դա -


- տա - նըս սո - ցա ըստ մե - ծի

ո - ղոր - մու - թեան իւ - րում


- եւ ե - ւրս մի - ա - բան վա -


- սըն ճըշ մա - րիտ եւ սուրբ հա - ւա - տոյս մե - ռոյ


Զան - ձի - նըս մեր եւ ըզ - մի - մեա - նըս


տեառն Աս - տու - ծոյ ա - մե - նա - կա - լին յան - ծըն


ա - ռաս - ցուք


Քեզ Տեառնդ յանձն է -


- ղի - ցուք։


Ո - ղոր - մեաց մեզ Տէր Աստ-ուած


մեր. ըստ մե - ծի ո - ղոր - մու - թեան Քում ա -


- սաս - ցուք ա - մե - ցե - քեան մի - ա - բա -


- ցու - թեամբ։


Տէր ո - ղոր - մեա. Տէր


ո - ղոր - մեա. Տէր ո - ղոր - մեա։

ԵՂԻՑԻ ԱՆՈՒՆ ՏԵԱՌՆ ՕՐՇՆԵԱԼ





ԹԱԳԱՒՈՐԵՍՑԷ ՏԷՐ

Չափաւոր ԳՉ



օրհ - նե - ցից
ըզ - Տէր


ի կեն - դա - նու - թեան


ի - մոյ։

Օր - թի։

եւ ընդ հոգ-ւոյդ բում։


եր-կիւ - դա ծու-թեամբ լը - ուա - ռուք


Փառք քեզ Տէր Աստ-ուած մեր։


10
Պռոս - խու - մէ։


Ա - սէ Աստ - ուած։

ՓԱՌՔ ՅԱՐՈՒԹԵԱՆ ՔՈՅ ՏԷՐ

Չափաւոր ԱԿ և ԱՉ

Փառք յա ռու - թեան քո Տէր. ոչ դա-դա-ռե - ցայց Քրիս -
Փառք յա ռու - թեան քո Տէր. ոչ դա-դա-ռե - ցայց Յի -

- տոս օրհ - նել ըզ - քեզ զա-մե-նայն
- սուս գո - վել ըզ - քեզ զա-մե-նայն

ա - ւուրս կեն - դա - նու - թեան ի - մոյ։
ա - ւուրս կեն - դա - նու - թեան ի - մոյ։

ես ոչ դա - դա - ռե - ցայց. Փըր - կիչ. փա -

ռա-ւո - ռել ըզ - Քեզ զա - մե - նայն

ա - ւուրս կեն - դա - նու - թեան ի - մոյ։

ԱՄԷՆ ԵՒ ԸՆԴ ՀՈԳԻՈՅՆ ՔՈՒՄ

Ծաեր ԳԿ

5

Ա - մեն եւ ընդ հոգւոյդ քում 12

Տէր ո - ղոր - մեա։


Տէր ո - ղոր - մեա։
Տէր ո - ղոր մեա։
Տէր ո - ղոր - մեա։
Կե - ցո Տէր եւ ո - ղոր - մեա։
Յի-շեա Տէր եւ ո - ղոր - մեա։
եւ ընդ հոգ - ւոյդ քում։
Ա - ռա - ջի քո
Տէր։



ՍԱՀԱԿ ՎՐԴ. ԱՄԱՏՈՒՆԻ

ՀՈԳԵՒՈՐ ԵՐԳՔ ՍԱՀԱԿԱՅ ԵՒ ՄԵՍՐՈՊԱՅ[1]

Անցեալ 1915 դժնդակ տարում օսմանեան զարհուրելի սրից կենդանի մնացած տանկահպատակ մեր դժբախտ հայ եղբայրները ինչպէս որ իրենց հայրենական տանից-տեղից փախուստ տալով գունդագունդ չուեցին եկան ու թափուեցին Սուրբ Էջմիածին իբրև ի գիրկս մօր խնամակալութեան, այնպէս էլ թափուեցին Սուրբ Էջմիածին իբրև ի գիրկս մօր գրականութեան և նրանց մխիթարութեան հոգևոր պաշարները, այն է, Տաճկաստանում գտնուած վանքերի, անապատների, եկեղեցիների բոլոր Ձեռագիրները, որոնց մէջ Լիմ անապատից բերուած կայ մի հազուագիւտ Ձեռագիր որ միմիայն պարունակում է իւր մէջ Սրբոյն Սահակայ և Մեսրոպայ մինչեւ այժմ գրականութեան անծանօթ, **Երգք հոգևորք,** մի գիրք, որն Ե դարում սրբազան վաստակաւէր հայրերիս ձեռքով գրուելուց յետոյ, իբրև օրհներգութիւն միոյն Աստուծոյ գործ է դրուել մեր եկեղեցում ի տեղի· այժմեան շարականի և շարականների:

Տանք այժմ այս հոգևոր երգերիս գրքի գրութեան նկարագիրը, և ապա յառաջ բերելով բովանդակ գիրքը, իրազեկ լինենք քաջապէս այն բանի մասին, թէ ինչո՞վ է տարբեր այս նշանաւոր հին գիրքը, այժմեան շարականից և Սուրբ Սահակն ու Մեսրոպը իրենց կեանքի ո՞ր օրերումն են գրել այս աստուածային տառը:

ա. Հոգևոր երգերս գրել է ոմն **ԱՂԱՆԱ՝** հաստ, կոկած, դեղնաւուն թղթի վերայ, գրելով տեղ-տեղ երգերի վերնագիրը մանր, գեղեցիկ բոլորագրով. երգի առաջին տողը երկաթագրով, ապա գրութիւնը գեղեցիկ միջակ բոլորագրով (թղ. 19բ, 24ա):

Մէն միայն իւր անունը երկաթագիր փուկագրով պահել է նա Մեծի Չորեքշաբթի երգերի խորագրի տակ ըստ այսմ՝ —**Կանոն Դ. Շաբաթին ԱՂԱՆԱ** (թղ. 72ա) իսկ եկեղեցւոյ ընդհանուր մանկանց համար առ փղրկիչն արած իւր կարճ աղերսը ամփոփել է նա փրկչի ծննդեան՝ «Ը զարք վերինք հիացեալ զարմանալին» երգի տակ և ընդհանուր գրութիւնից ջոկելու համար, գրել է մանր բոլորագրով, —«Եւ զաղաւթս յաջողեայ զմանկանց մեր» (13բ):

Երկրորդ, երգի միայն առաջին բառը՝ երկաթագրով, ապա գրութիւնը գեղեցիկ բոլորագրով (46բ, 100բ, 115բ):

Երրորդ, երգի վերնագիրը խոշորագոյն բոլորագրով, իսկ գրութիւնը խոշոր սիրուն

---

[1] Մ. Մաշտոցի անվան Մատենադարան. Արխիվ Սենեքերիմ Տեր-Հակոբյանի, թղթ. 74, վավ. 77:

Սույն հոդվածը հրատարակության է պատրաստել Ս. Թ. Ավդալբեգյանը:

բոլորագրով (56բ, 60բ, 67ա, 72ա, 74ա, 77ա, 81ա, 82բ, 137բ):

Ի նկատի առնելով Ջեռագրիս գրութեան այս հանգամանքները, Ջեռագիրս գրուած է ԺԳ կամ ԺԲ դարում:

1836 թուին Վենետիկ տպուած նշանաւոր Հայկազեան բառարանը ունի հետևեալ բառերից, բայց է որ միակ օրինակը այս գրքից է:

1. Զորօրինակ **հարցնափառ,** որ և Փոքր Հարց կոչի, փառ, և փառեր հարցիցն որ են ի հին ժամագիրս կամ յերգարանս որպէս համառօտ շարականք ի տեղի այժմու ընդարձակ հարցներոյն· զորօրինակ «հարցնափառեր ապաշխարութեան:

Հայր երկնաւոր որ առաքեցիր զմիածին որդիդ քո փրկիչ աշխարհի և այլն. տես Ջեռ. թղ. 46բ:

Է որ բառը տարբեր ձևով, զորօրինակ 2. Հ Բ ունի **երկթերթի,** առանց հոլովման, որ մեզ թւում է թէ երկթերթ բառի սեռական հոլովն է որն ունի այս գիրքը,—թղ. 4բ— «Ի ծնանել ձայնի ամլոյն ծնաւ զբարբառ Զաքարիաս, քանզի մինչև բացեալ էր զշրթունս երկթերթ»:

Է որ բառը չունի և է որ բառերի օրինակները ունի տարբեր ձևով. ՀԲ չունի անքունակ. «Որ կամաւ եկիր ի չարչարանս մտեր ի գերեզման անքունական Աձ» 89ա. 3. Նրուիրաբար (չունի), բարեհաճոյ, վերակնարկեմ. թղ· 21— «Որ զմարմնացեալն նուիրաբար յաձածնէն յերրորդութենէն խոստովանեալ հաւատացեալ ի սիրտս մեր ընկալցուք զնա որպէս ի գիրկս իւր Սիմեոն, Քանզի Աձ բանն՝ թէ ուղղափառ հաւատ ցուցաք և բարեհաճոյ գործս, տանաք գտցուք հոգևորական (ունի ՀԲ.—եթէ ուղղափառ հաւատս ցուցցուք և բարեհաճոյ...): Թղ. 29ա—29բ· Ապաշ. ԲՁ. Որպէս յուխից ի ծփանաց կենցաղոյս... (վերջին տունը): «Այլ յուսով վերակնարկեմ քեզ, որպէս Պետրոսի ձգեցեր զձեռն քո յաւգնականութիւն, գթայ ի յիս և ողորմեայ որպէս զմարդասէր: (Ունի ՀԲ—Որ Պետրոսի ձգեցեր յօգնութիւն զձեռն»:

Է որ բառի միակ օրինակը թեպէտ հին է, բայց ունի այս գիրքը: 4(ՀԲ) «Արհամարիցէ ոք զհրապարակախօսն. Ոսկ. Յհ. ա. 34: Թղ. 29բ. ապաշ. ԲՁ. Յորժամ զմտաւ ածեմ... (վերջին տունը). Աւգնեայ ինձ ի քում հրապարակախաւս ատենին, և կեցոյ որպէս զմարդասէր:

Հոգևոր երգերիս դասաւորութիւնը նման է ձեռագիր և տպագիր շարականների դասաւորութեան, և ունի միայն բոլոր տերունական տօները, բացի շարականի մէջ գտնուած **Տօն ծննդեան Աձածնի** և **Տօն Յովակիմայ և Աննայի ծնողաց Աձածնի,** որոնք սահմանուել են ԺԳ-րդ դարում և **Տօն աւետեաց սբ. Աձածնի** և **վերափոխման** (ա աւուր), որոնք սահմանուել են Է-րդ դարում, կամ այս դարից առաջ:

Իսկ սրբոց տօների կարգից ունի միայն «Կանոն Յովհաննու Կարապետի» «օր ի Գրիգորէ և Տրդատայ... կարգեալ էի» և միահամուռ սրբոց հիշատակի համար՝ «կանոն մարտիրոսաց»:

Ջեռագիրս պակաս լինելով վերջից, յիշեալ կանոնից անթերի ունի ԱՁ-ից մինչև ԴԿ ձայնի Զ-րդ երգի միայն առաջին տունը,— «Պայծառացեալ ցնծայ այսաւր կաթողիկէ. կրկ· Տաւնելով զյաղթող ճգնութիւն սրբոց մարտիրոսաց» (թղ. 154բ):

Մարտիրոսաց կանոնի յաջորդ կանոնը ըստ օրինի պիտի լինէր «Կանոն յամօրէն ննջեցելոց», որը տարաբախտաբար պակաս է:

Դ. Ջեռագիրս գրուած է 21 քառաձալ տետրակների վերայ, որոնցից իւրաքանչիւրը բաղկացած է 8 թերթից և այբբենով իրարից բաժանած, այբբենի ամէն տառը գրած տետրակի առաջին և վերջին երեսների վերայ՝ ըստ այսմ՝ ա—ա բ—բ և շարունակաբար այսպէս գրած ու հասցրած մինչև յ:

Այս տետրակներից պակաս են.

ա տետրակի սկզբից 5 թերթ, միջից՝ 1 թ (2—3)
ե տետրակի » 1 թ (26—27)
ը » » 1 թ. (55—56)
լ » » 3 թ. (84—85)
ճ » » 2 թ. (110—111)

և են ընդամենը 54 երգ ըստ այսմ՝ ԱՁ—10, ԱԿ—9, ՁԲ—13, ԲԿ—5, չունի ԳՁ, ԳԿ ձայները. ՁԴ—10, ԴԿ—Ը:

Հոգևոր երգերիս մէջ ոչ մի երգ չունի իւր բառերի վերայ ըստ օրինի երաժշտական խազեր կամ ձայնանիշեր:

Յայտնի է ամենքիս, որ երգի առաւելութիւնը կայանում է իւր խազերի մէջ, որոնք տխուր կամ ուրախ գեղգեղանք, դայլայլիկք յառաջ բերելով, ընկճում են մարդիս հոգին իրենց տխուր կամ ուրախ անմարմին թեների տակ, և այնուհետև լինում է մարդս տխուր կամ ուրախ:

Արդ, անկարելի է որ սբն. Սահակ և Մեսրովբ չհասկանային երաժշտական գիտութեան այս յայտնի և գլխաւոր օրենքը և հետեւապէս իրենց գրած երգերն էլ գրէին ու կարդային առանց երաժշտական խազերի:

Մեծ հայրերիս համար այսպիսի տկար մտածմունք մեր մտքովն անցնելն անգամ մեծ մեղանչականութիւն է մեր կողմից: Մեղանչականութիւն է այն պատճառով, որ եթէ կայ մի յայտնի երգ կամ եղանակ, նա անպատճառ պիտի ունենայ և իւր յայտնի ու յատուկ խազերը,—երգին կամ եղանակին կենդանութիւն տուող այդ անմարմին էակ-

ները, որոնք հպելով, միանալով երգի հետ, իրենց ուրախ կամ տխուր թռիչքներով ցոլացնում են նրա իսկական պատկերը ճիշտ այնպէս, ինչպէս մեր ապականացու մարմնի մէջ յընթացս կենաց անապական մնալով հոգի և շունչ, իրենց պարգևած զգայական շնորհքներով զատում որոշում են մեզ անզգայ տարրերից, և յայտնում քարոզում մեր բանաւոր արարած լինելը: Կրկնում ենք, մի երգ եթէ չունի մեր հոգու կամ սրտի վերայ տխուր կամ ուրախ գեղեցիկանք փչող սիրո և գգուանաց ցուրտ կամ ջերմ սիրոյ հովեր շնչող խազեր, նա երգ չէ, այլ երգի շնորհքներից զուրկ հասարակ գրուածք, մինչդեռ ակնայտի տեսնում ենք, որ Սուրբ Սահակի և Մեսրովբի յօրինածները հասարակ գրուածքներ չեն, այլ «Հոգևոր երգեր» և յօրինուած միայն այն նպատակով, որ հոգի Աստծուն խմբովին հողեղեն լեզուով բարեբանելու և փառաբանելու դեպքում, ընդ միշտ պիտի բարեբանել և փառաբանել «ահիւ և դողութեամբ» (քզ. Զարթ), «արթուն մտօք և անզբօս խորհրդով» (քզ Զ ժամ) և լալով «հոգևոր երգով», որպիսիքն տեսնում, կարդում ենք թէ իրենց նուիրական այս նոր երգերի մէջ և թէ սուրբ ժամագրքում:

Իսկ ո՞ւր ուսան երկու սուրբ թարգմանիչներս իրենց այլ և այլ բարձր գիտութեանց հետ երաժշտութեան դասն ու ուսումը, և իրենց ուսածները անփոփոխ բերին թողին մեր աշխարհի մէջ, և անփոփոխ մատակարարեցին մեր աշխարհի ուսումնատենչ որդուց, ըստ չափ ու կարողութեան պարզենք այս խնդիրը, դիմելով մեր պատմական գրուածքներին:

Իսկ հոգևոր երգերս այսպէս անխնայ յայտնի բարի նպատակով իրենց ճոխ հին խազերից փետրահան արած ու թողած ի ծոց եկեղեցոյ՝ նրա Կրօնասէր որդուց համար իբրև մի զուտ դաւանաբանական գիրք նրա երգասէր որդուց համար շարականներ յօրինելու իբրև անվրէպ ձեռնարկ և ուղեցոյց, նրա գրականասէր որդուց համար իբրև վայելչագեղ գրութեան գեղեցիկ օրինակ ու նմուշ, որին ծարաւ հոգով դիմել են թուած որդիքս, այս պատահել է հաջորդ դարերում, և կպարզենք իրենց տեղում:

Հոգևոր երգերիս մէջ տեղ տեղ ցոլում են այլաբանական ակնարկներ, որոնք ցույց են տալիս թէ սբն. Սահակ և Մեսրովբ այս՝ ոգեշունչ երգերը իրենց կեանքի ժամանակի ո՞ր օրերումն են գրել, և երկրորդ. արդեօք Հայոցս աշխարհի խաղաղութեան և անդորրութե՞ան ժամանակ են գրել թէ նրա վրդովման, երկպառակութեան և անմիաբանութեան ժամանակ:

Յայտնի է պատմութիւններից, որ Ե-րդ դարում Սբ. Սահակի օրով Հայոցս Արտաշիր թագաւորի նախարարները՝ Արտաշիրի զեղխ, անառակ, անկարգ ու անկանոն վարք ու բարքից տաղտկացած, դիմեցին սբ. Սահակին միաբանել իրենց հետ, և գահընկեց անել Արտաշիրն՝ պարսից Վռամ թագաւորի ձեռքով: Մեծն Սահակ հիարկէ երբ չհամաձայնեց նախարարների այս դավաճան խորհրդին ասելով նախարարներին «Ինձ քաւ լիցի մատնել գայլոց զիմ մոլորեալ ոչխար (Խոր. Գ. ԿԳ)... զիա՞րդ լինիցի այդ, փոխանակել զիմ ախտացեալ ոչխար ընդ առողջ գազան» և թող այս, երբ մեծ քահանայապետս իւր հայրական խրատներով ու յորդորներով չկարողացաւ զսպել, մեղմացնել նախարարների կատաղի բարկութիւնը, և յետ կասեցնել նրանց իրենց տիրանենգ խորհրդից, այն ժամանակ նախարարները — այս ապերախտ հայերը անպատկառաբար ասացին սբ. Սահակին երեսն ի վեր. «Վասն զի ոչ կամեցար մեզ՝ զթագաւորել նմա, արդ մեք ոչ կամեսցուք և քեզ զքահանայանալ մեզ» (Խոր. Գ. ԿԳ):

Եւ իրօք դիմելով Վռամին խնդրեցին «Ի բաց ընկենուլ զթագաւորն իրեանց և պարսիկ ածել ունող աշխարհիս»—պարսիկ կառավարիչ նշանակել մեր աշխարհի վերայ (Խոր. Գ. ԿԳ): Եւ խորամանկն Վռամ ըստ առաջարկութեան նախարարների ոչ միայն գահընկեց արեց Արտաշիրն և յարքունիս գրաւեց նրա բոլոր ունեցածը—**«զամենայն ինչս»** կարգելով Արտաշիրի տեղ պարսիկ մարզպան Վեհմիհրշապուհին, այլև միաժամանակ գահընկեց արեց և սուրբ Սահակին, յարքունիս գրաւելով մեծանուն հայրապետիս փարթամ հայրապետանոցը,—«զտունն կաթողիկոսական» (Խոր. Գ. ԿԳ), կարգելով մեծ Քահանայապետիս տեղ քսու և սնափառ արծկեացի երեց Սուրմակին որն այս բոլոր նորանոր չար գործողութեանց և փոփոխութեանց մածունն ու մէրանն, հեղինակն և աղբիւրն էր, որովհետև երբ Վռամը Արտաշրի և սուրբ Սահակի գործերը հրապարակաւ քրքրում քննում էր, աւելի կարևորութիւն տուեց միայն Սուրմակի՝ այս անարժան հոգեւորականի խօսքերին, «Յօժարութեամբ լսէր չարախօսացն, առաւել ևս յոյժ աղտեղութեան բանիցն Սուրմակայ» (Խոր. Գ. ԿԳ):

Բայց Սուրմակը ինչո՞ւ համար էր աղտեղի խօսքեր խօսում, որովհետև «զաթոռ եպիսկոպոսութեանն էր նմա նախարարացն խոստացեալ» (Խոր. ԿԴ):

Արդ, Արտաշրից յետոյ երբ «բարձաւ Հայոցս թագաւորութիւնը, և Սուրմակի, Բրքիշոյի և Ծմուէլի վարած անարժան կաթողիկոսութիւնից յետոյ երբ միաժամանակ բարձաւ և «Հայոցս արժանաւոր կաթողիկոսութիւնը» որոց համար Խորենացին սուտ է լալով—

«Ողբամ զքեզ Հայոց աշխարհ, զի բարձաւ թագաւոր և քահանայ» (Խոր. Գ. ԿԸ. ԿԴ.). այս երկու թանկագին կորուստները հայոց նախարարները ի նկատի առնելով, ուստի մի կողմ դնելով սուրբ Սահակին ցույց տուած իրենց ապաշնորհ և անպատկառ վարմունքը, խորին պատկառանքով և կորագլուխ մոտեցան Քահանայապետիս, աղաչեցին, որ վերստին ընդունէ կաթողիկոսութիւնը «զմեղանս յանձն առեալ՝ աղաչէին զնա բարձեալ ունել զԱթոռն» (Խոր. Գ. 42), բայց մեծ քահանայապետն երբ յանձն չառաւ, «այլ նա ոչ առնոյր յանձն (անդ) խորին խոցուած այն դառն հանգամանքից, որ այս կոռէն և անմիաբան նախարարները ոչ միայն Հայոց թագաւորութեան ու քահանայապետութեան անկման պատճառ դարձան, այլև Հայաստան մի այնպիսի օրորոց շինեցին պարսից ձեռքին, որի մէջ այլևս դժուարին էր աստուածային խաղաղութեան և անդորրութեան օրորների անուշ ձայն լսել և խաղաղ և անվրդով քնել:

Ըստ իս, այս խռովայոյզ հանգամանքները եղան պատճառ, որ իմաստուն մեծ քահանայապետս Վաղարշապատից փոխադրուեց Բագրևանդ, և այս նոր քաղաքի կաթուղիկէից—Էջմիածին (ՀԲԲԵ), սկսեց «զհոգևոր կաթն դիեցուցանել մանկանց եկեղեցու հանդերձ Մեսրոպա զոր թողեալ խարրսխեաց յեկեղեցւոջն կաթուղիկէ ի Վաղարշապատ քաղաքի» (Խոր. Գ. ԿԶ): Արդ մասամբ իւիք հաւանական է, թէ երկու հայրերս իրենց **հոգևոր երգերը** յօրինել են այս խռովայոյզ ժամանակ, որովհետև սուրբն Սահակ մուտ ակնարկութեամբ՝ իւր գրած **Ծննդեան** մի երգի մեջ յառաջ է բերում այն դառնավարամ անցքերը, որոնք եկան դարձան մեր դժբախտ ազգի, նրա եկեղեցու և նոյնիսկ իւր մեծ հայրապետիս գլխով, և անցքերը պատշաճում են աւելի Վռամի ժամանակ պատահած անցքերին՝ քան ուրիշի:

Իսկ այս ցաւալի անցքերը ցաւագին սրտով սուրբ հայրապետս սուրբ կոյս Մարիամ Աստուածածնի տեսութեան առաջ դնելով, «Աղաչում է աստուածամօրս, բարեխօսել առ Փրկիչն աշխարհի **«փրկել զեկեղեցիս ի Հարաւային բռնութենէ»**, իմա՝ Պարսից պետութիւնից, կամ աւելի պարզ՝ Վռամից», «և չընթողնել սրա աղախնին հանել իւր տիկինը (մեր աշխարհի մէջ ի զբօսանս), և աղախինը իւր որդիքներով (իւր ընկեր նաժիշտներով) փախչէ յանապատ աստուածամօրս երեսից». ահաւասիկ երգը.

«Ուրախ լեր աշխարհի մայր և կոյս ... Ուրախ լեր աստուածային խորհրդանոց, զորմէ պատմել ոչ բաւեմք, այլ միայն աղաչեմ՝ բարեխաւսեայ, որում զկուսականդ արբուցիր զկաթն, փրկել զեկեղեցի ի հարաւային բռնութենէն և մի թողացուցանել յաղախնուն հանել զտիկինն: Այլ զառաջինսն խորհրդաբար ի մեզ կատարել, զի միս անգամ աղախինն որդեաւքն (որդովքն) իւրովք փախիցէ, յանապատ յերեսացդ տիկնոջ և մեք խաղաղացեալք ընդ հրեշտակապետին գոչեսցուք զերգս. Ուրախ լեր անթառամ աշխարհի պսակ»: Հոգերգ. 6բ:

Սուրբ Սահակի մրմունջի պես ու ձայնով և ազդութեամբ նրան հաւատար այպէս էլ սուրբ Մեսրոպն է մուտ ակնարկութեամբ իւր աղերսը սփոում առ ոտս երկնաւոր Հօր՝ իւր գրած ապաշխարութեան մի երգի մէջ, աղաչելով երկնաւոր Հօրը, ի դէպ ժամու «Ողորմութեամբ խրատել իւր ժողովրդեան և իւր սրբութիւնները կործանող, իւր հաւատացեալներին անարգող անօրէնների ձեռքը չմատնել». ահաւասիկ այդ երգը.—

— Զի թէպէտ և բազում անգամ մեղանչեմ, դու ես Ած մեր բայց ի քէն զայլ ոք ոչ գիտեմք սբ. երրորդութիւն. ողորմութեամբ քո խրատեայ մեզ, և անօրինաց մի մատնիր. Զսրբութիւն քո կործանեցին և զհաւատացեալս ի քեզ անարգեցին. Ահայ մեծաքանեան հեթանոսք ուր է Ած նոցայ. յամենայնի կարող և նախանձոտ տէր լուր մեզ և ողորմեայ»: ՀՈԳԵՐԳ 35ա:

Բիւզ. Ե. դպ. Դ. «Եւ սբն. Ներսէս զբազուկսն համբարձեալ յերկինս խնդրէր ի տեառնէ... մի տալ զժողովուրդսն ի ձեռս հեթանոսաց, զի մի երբեք ասիցեն ի հեթանոսս թէ ուր է Ած նոցա»:

Այսպես էլ անհաւանական չէ, թէ երկու տօնելի հայրերս իրենց այս աստուածային պատգամները գրել են մեր աշխարհի անդորրութեան ժամանակ և այն ժամանակ երբ խաղաղ սրտով ու հոգով իրենց սիրասուն աշակերտների հետ զբաղուած էին Ս. Գրոց թարգմանութեամբ և ժամակարգութեան պաշտամունքների կարգաւորմամբ: Եթէ այսպէս ընդունենք, ուրեմն երկու սրբերիս յառաջ բերած վերոյգրեալ դառն ակնարկները՝ կվերաբերեն ոչ թէ Վռամի ժամանակին, այլ նրա գարշելի պապերի և հաւերի, որոնք ըստ սրբոյն Մեսրոպայ բանի, Աստուծոյ «սրբութիւնները կործանելու, նրա հաւատացեալներին անարգելու» և մեր թագաւորներին ու քահանայապետներին անգոսնելու և արհամարհելու կողմից, պակաս չէին անօրէն Վռամից և այս կարգի թագաւորներից՝ պարսից մէջ, առաջինը եղաւ Շապուհ իսկ վերջինը՝ Վռամ և իւր յաջորդները: «Դասի սա (Շապուհ)... առաջին ի կարգս հալածչաց եկեղեցւոյն Հայոց (ՊՀԵՀ թղ. 9բ):

Եւ այսպէս. որ ժամանակ էլ որ գրուած լինեն հոգևոր երգերս, սակայն նոքա ուրիշ դարի և մարդոց գրչի արդիւնք չեն, այլ պատկանում են սուրբ Սահակի և Մեսրոպի

արդիւնաւոր գրչին, որպէս ցոյց են տալիս իրենց ակնյայտի պատուական լեզուն, ակնյայտի Աղօթից եօթը նախնական ժամերի լինելը, ակնյայտնի Սաղմոսների՝ մանաւանդ ութ կանոնների տակ դրուած Մարգարէից օրհնութեանց և Երից մանկանց երգի (օրհնեալ ես տէր Աւծ հարցն մերոց) և սրա յաջորդ երգերի կամ սաղմոսների ձևով, ոճով և իմաստով գրած հետևողութիւնները. ակնյայտնի՝ սբ. Գրքի օրինակները՝ մանաւանդ Սբ. Աւետարանի առակները և խրատները զուգահաւասար խօսքերով վերընծայելը. ակնյայտնի՝ խորին հնութեան կնիք կրող **ութ ձայների այժմեանից** տարբեր գրութեան ձևը և նրանց անունները, որպիսիք են ՁԲ, ՁԳ4, ՁԴ, ԿՁԴ, ԳԿ և Կ. ակնյայտնի խորին հնութեան կնիք կրող երաժշտական գիտութեան վերաբերեալ կանոնները, որոնք նշմարւում են ձայնաւոր տառերի վրայ, որպիսիքն են ա, ե, է, ը, ի, ո, որոնք դրուած են տեղ տեղ բառերի սկիզբը և տեղ տեղ բառերի մէջ՝ բառը կազմող գրերի հետ կից, երգի տաղաչափական կարգ ոտը կամ յանգը տեղը բերելու-լրացնելու համար. ակնյայտնի՝ խորին հնութեան կնիքը կրող և տօների դասաւորութիւնը և տօները և այլն, որպէս ցոյց տուաք վերևում:

ՑՈՒՑԱԿ

Համառօտ և Արձակ ձեռագիր և տպագիր գրքերի, որոնցից օգտուել ենք աշխատութիւնս կազմելիս.

Բիւզ. Փաւստոսի Բիւզանդացւոյ Պատմութիւն Հայոց ի չորս դպրութիւնս. Վենետիկ, 1892.

Խոր. Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց ի Վենետիկ, 1827.

ՀԲԲՆ. Հայոց Բառ ու Բան. աշխատասիրեց Սահակ վրդ. Ամատունի, միաբան Մայր Աթոռոյ ս. Էջմիածնի, Վաղարշապատ, 1913.

ՀՈԳԵՐԳ. Հոգևոր երգք սրբոյն Սահակայ և Մեսրոպայ, ձեռագիր Լիմ անապատի, բերուած սբ. Էջմիածնի մատենադարան 1916 թուի օգոստոս.

ՊՀԵՀ ձեռագիր. Պատմութիւն հալածչաց եկեղեցւոյն Հայոց. գրեաց Աբել արքեպ. Մխիթարեան. գտնւում է իմ՝ Սահակ վարդապետիս մոտ:





ՎՐԹԱՆԵՍ ՔԵՐԹՈՂԸ ԵՎ ՊԱՏԿԵՐԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ

1. ՇԱՐԺՈՒՄԸ ԵՎ ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՆ

Ընդհանուր եկեղեցու պատմության մեջ պատկերամարտությունը Ը դարում ծնված երևույթ է: Այս ավելի քան եկեղեցական-դավանաբանական վեճը առընչություն ունի նաև արվեստի պատմության հետ: Պատկերամարտները դեմ էին նկարներին, որովհետև, ըստ նրանց, կռապաշտություն էր և սրբապղծություն Քրիստոսին ու նրա առաքյալներին նկարելը:

Շարժումը կապվում է Բյուզանդիայի Լևոն Իսավրացի կայսեր անվան հետ, որը 726-ին հրովարտակ է հանում բոլոր եկեղեցիներից պատկերների վերացման մասին. «Առ ազատելոյ զեկեղեցի ի կռապաշտութեան մոլորութենէ»[1]:

Պատկերների դեմ շարժումը սակայն կա քրիստոնեական առաջին դարերից:

Երբ եկեղեցական հայրերը արգելեցին պատկերների հարգանքը , ստեղծվեցին Քրիստոսին, Սուրբ Հոգուն ներկայացնող զանազան խորհրդանկարներ՝ աղավնի, քնար, ձուկ, խարիսխ, և հատկապես խաչ[2]: Միայն Դ և Ե դարերին է, որ խորհրդանկարները տեղի են տալիս նկարներին: Վեբերը իր «Ընդհանուր պատմություն»[3] աշխատության մեջ ասում է. «Քրիստոնեության հետ Հռոմեական նահանգներում մուտք գործեց նաև պատկերներ ու սրբերի նշխարներ հարգելու սովորությունը»: Դեռևս 306 թ. Իսպանիայում գումարված (հավանաբար գաղտնի) Իլբերիսի ժողովի 36-րդ կանոնը հրամայում էր. «Պետք չէ, որ եկեղեցիներում պատկերներ լինեն, և Նա, ով պաշտելի ու երկրպագելի է, նկարվի պատերի վրա»[4]: Բայց անշուշտ նկարների թիվն ու հարգանքի աստիճանը միակերպ չէր քրիստոնյա աշխարհի ամբողջ տարածքին: Մեծ դեր էր խաղում տեղական սովորությունը՝ հեթանոսական կրոնի թանձրությունը և եկեղեցական ազդեցիկ պետերի հակումը: Դեռ Դ և Ե դարերում նեստորականները լայն կերպով հակադրվում են պատկերահարգության: 488-ին Մաբուգի եպիսկոպոս Փիլոկսենեսը գրում է. «Հարկավոր է գիտենալ, թե Աստված ընդունում է միայն հոգվով ու ճշմարտությամբ երկրպագելը: Սխալ է մարմնավորել հրեշտակներին, Քրիստոսին, և Սուրբ Հոգուն աղավնակերպ ներկայացնել»: Զ դարավերջում Մարսիլիայի եպիսկոպոս Սերենոսը մեծ եռանդով նկարները դուրս է գցում եկեղեցուց, որպես կռապաշտության տարրեր: Իսկ այլ տեղերում հավատացյալները երկրպագում են փայտին, հրճվանքով հարգում այն տեղերը, ուր շրջել է Քրիստոս, նստել կամ երևացել: Հարգում են սոսկ տեղը՝ քաղաքը, քարերը[5]: Ահա թե թ դարում ինչ է գրում Կակազ Միքայել Բ կայսրը արևմուտքի Լուդովիկոս կայսեր. «Նրանք (պատկերահարգները—Ե. Մ.) հեռացրել են եկեղեցիներից սուրբ խաչը և նրա տեղ դրել պատկերներ, որոնց առաջ կան կանթեղներ: Այդ պատկերների առաջ խունկ են ծխում, սաղմոսներ երգում, երկրպագում և հատկապես նրանցից սպասում օգնություն... **Քահանաներից և կղերականներից ոմանք պատկերների ներկերը քերում են և խառնում Հաղորդության հետ»:**

Ուրեմն շարժումը կա դեռևս քրիստոնեական վաղ դարերից, բայց Ը դարում ավելի բուռն ձև է ստա-

---

[1] «Պատմութիւն տիեզերական ժողովոց եկեղեցւոյ, որք յարևելս գումարեցան», Վիէննա, 1847 թ., էջ 470—71:

[2] **Երվանդ Տեր-Մինասյան,** «Ընդհանուր եկեղեցական պատմություն», Էջմիածին, 1908 թ., Ա հատոր, էջ 198—99:

[3] Մոսկվա, 1887 թ., Ե հատոր, էջ 220:

[4] Հեֆելե «Տիեզերական ժողովների պատմություն», Փարիզ, 1869—1873, Ա հատոր, էջ 149:

[5] **Լեբեդև,** Вселенскіе соборы VI, VII, VIII веков, Մոսկվա, 1897, Բ հատոր, էջ 131—135:

նում[6]: Ը դարից մինչև ԺԱ դար պայքարը ընթանում է շատ լարված և հանգեցնում հույն և հոռոմեական եկեղեցիների բաժանման: Օրինակ. 754-ին Պոլսում գումարված պատկերահարգության դեմ վճիռ արձակող ժողովին մասնակցում են 338 եպիսկոպոսներ և հրամայում. «Ով որ այսուհետև համարձակվի պատկերներ հորինել, կամ պատվել, կամ դնել եկեղեցում, կամ մասնավոր տան մեջ, կամ ով որ համարձակվի ի ծածուկ ունենալ այդպիսի պատկերներ, կկարգալուծվի և կքանադրվի»: 787 թվականին սակայն, Իրինե կայսրուհու հրավերով Նիկիայում գումարված ժողովին մասնակցող 367 եպիսկոպոսները որոշում են. «Սուրբ և անարատ պատկերների նույն երկրպագությունը մատուցել, ինչ որ սուրբ և կենարար խաչի նշանին, թե՛ դեղով ներկված, թե՛ մոզաիկից և թե՛ որևէ այլ նյութից շինված»[7]:

Հայ եկեղեցին որոշ չափով կողմնակից է եղել պատկերահարգությանը, բայց, պետք է նշել, խուսափել է կուտակումից, պահելով չափի զգացողությունը: Այնուամենայնիվ, եղել են ծայրահեղ հոսանքներ, որոնց ներկայացուցիչները հեռացել են եկեղեցուց և հերված առաջացրել: Հայաստանում էլ պատկերամարտների շարժումը տարածվել է հիմնապես աղանդավորների՝ այդ թվում մծղնեականների, պավղիկյանների մոտ:

Հովհան Մայրագոմեցին իր Դավիթ Մեծ կողմանց եպիսկոպոսին ուղղած թղթում գրում է որ պատկերամարտները կռապաշտություն և Ս. Գրոց պատվիրաններից դուրս էին համարում նկարների հարգանքը. «Մեք ոչ պագանեմք երկիր պատկերաց, զի ոչ ունիմք հրաման ի գրոց»: Նա պատմում է, որ Հեսու, Թադեվոս և Գրիգոր քահանաները բաժանվելով եկեղեցուց անցնում են Սոթք գավառ և սկսում են քարոզել «Ի բաց ջնջել» նկարները եկեղեցուց: Մովսես Եղիվարդեցի կաթողիկոսը (574—604) կանչում է նրանց իր մոտ, բայց մերժում են գալ: Հետո Գարդմանա տերը ձերբակալում է նրանց, ուղարկում կաթողիկոսարան, ուր և համոզելով դարձի են բերում՝ «Զթիւրութիւն նոցա ուղղեցաք»[8]: Հովհան Օձնեցին իր «Ընդդէմ Պաւղիկեանց» ճառում դատապարտելով պավղիկյանների մոլար գաղափարները՝ անդրադառնում է նաև նկարներին և ասում որ պավղիկյանները «Ի պատկերամարտութենէ ի խաչամարտութիւն և ի քրիստոնատեցութիւն և անդուստ յանաստուածութիւն և ի դիւապաշտութիւն» են հասել:

Ըստ մեր եկեղեցական պատմության վկայության և դավանության մենք ոչ թե պատկերներն ենք պաշտում, այլ նրանց վրա նկարված սրբերին ենք փառավորում և նրանցից բարեխոսություն խնդրում: Կորաքամակ պիտի չընկնել նրանց առաջ և միայն նրանց վրա չդնել հույսը, ինչպես հեթանոսներն էին անում: Մենք խաչին և նկարներին երկրպագում ենք որպես միջնորդի՝ Աստծու օգնությունը խնդրելու համար[9]:

Չափի այս զգացողությունը առանձնահատուկ է հայ եկեղեցու բոլոր հայրերին: ԺԱ դարում ապրած Անանիա Սանահնեցին գրում է. «Այլ մեք նկարեմք զպատկեր Քրիստոսի և զառաքելոց և զմարգարէից և հայեցեալ տեսանեմք և պաշտեմք, այլ ոչ հրամայեմք տխմարաց և տգիտաց ժողովրդոց առաւել քան զչափն պատիւ և պաշտօն մատուցանել, զի մի տգիտութեամբ գայթակղեալ ի կռապաշտութիւն անկանիցին»[10]: Մրենը, Աղթամարի ս. Խաչը, Անիի ս. Գրիգոր Լուսավորիչը ունեցել են որմնանկարներ ու որմնաքանդակներ, որոնք, թեև, բացատրվում են տեղի եպիսկոպոսի անհատական նախաձիրությամբ:

Մեր եկեղեցական մատենագրության մեջ Մայրագոմեցու վերոհիշյալ թղթից բացի մեզ հասել է Վրթանես Քերթողի «Յաղագս պատկերամարտից» նշանավոր թուղթը: Բայց նախ՝ ով է Վրթանես Քերթողը:

2. ՀԵՂԻՆԱԿԸ

Վրթանես Քերթողը հայ եկեղեցական պատմության ականավոր դեմքերից է: Նրա տեղապահության օրով են սկիզբ առնում հայ-վրացական եկեղեցական վեճերը, որոնք հանգում են բաժանման:

Նրա կյանքի մանրամասնությունները անծանոթ են: Ժ դարի պատմիչ Ուխտանեսը նրա մասին գրում է. «Վրթանէս այս վարդապետ եղեալ հայոց՝ **սնեալ և ուսեալ** ի տան կաթողիկոսարանի»[11]: Մաղաքիա արք. Օրմանյանը հենվելով նրան տրված **քերթող** մակդիրի վրա, նրան համարում է Տաթևի Սյունյաց դպրոցի աշակերտ: Այդպես է գրված նաև «Սիոն»-ում ներկա թղթի հրատարակության առթիվ գրված ծանոթության մեջ[12]: Նրա **քերթող** մակդիրը ամենայն հավանականությամբ տրված է իր ուսումնական կարողությունների համար: Թղթերից երևում է, որ լավ ծանոթ է հունարեն լեզվին և հույն հեղինակներին:

Իրեն ուղղված թղթերի մեջ ծանոթ է **Քչկանորդի** մականունով. «Փառաւորելոյ Տերանց Վրթանեսի Տե-

---

[6] Լեբեդևի խոսքերով. «Դիմադրությունը (պատկերամարտությունը Ե. Մ.) Դ դարում մահանում է վտանգավոր կայծի պես մինչև Ը դար, երբ բորբոքվում է և դառնում մեծ հրդեհ»:

[7] **Լեբեդև**, անդ, էջ 192—203:

[8] Մայրագոմեցին այս կերպ է բացատրում պատկերամարտության ծագումը. նկարիչները հպարտանում են և իրենց բարձր դասում գրիչներից, որովհետև իրենց ամեն մարդ է կարդում իսկ գրիչներին միայն քչերը. նկարիչներին դատապարտում են և հալածում: «Հանդէս Ամսօրեայ», 1910, էջ 38:

[9] **Հ. Գ. Զարբհանալյան**, «Յաղագս Բարեխօսութեանց Սրբոց», Վենետիկ, 1852, «Յաւելուած»:

[10] **Ա. Սեդրակյան**, «Հայ եկեղեցու պատկերահարգութիւնը», Ս. Պետերբուրգ, 1904, էջ 128: Օտար հեղինակներից բերված նյութերի մի մասը քաղել ենք այս գրքից:

[11] **Ուխտանես**, «Պատմութիւն հայրապետաց և թագաւորացն հաց և բաժանման վրաց», Էջմիածին, 1871, Բ—59:

[12] «Սիոն», 1927, էջեր 23—25 և 61—63:

բանց նուիրակի վարդապետի Ջչկանորդուց»[13]: Իր համար գործածված են նաև **Շաղնասար և Տերանց նուիրակ** մակդիրները: Առաջինը, ըստ Հ. Ն. Ակինյանի (մանրամասն տես՝ «Հանդէս ամսօրեայ», 1910, էջ 9, Բ սյունակ, ծնթ. 1) նշանակում է արքունուստ նշանակված տեղապահ, իսկ Օրմանյանը անհասկանալի է նկատում բառը: Երկրորդը՝ **տերանց զինվոր** է թարգմանում Ակինյանը, այսինքն քաղաքական մակդիր, մինչդեռ Օրմանյանը ավելի տրամաբանորեն ասում է, որ Սորմենոս Ստրատելատը Վրթանեսին ուղղած իր թղթում («Գիրք Թղթոց», 90—92) այդ ածականը գործածում է, որովհետև Վրթանեսը Գրիգոր անունով մի վարդապետի հետ մասնակցում է Կ. Պոլսում 589-ին գումարված ժողովին, որպես Մովսես Եղիվարդեցի կաթողիկոսի նուիրակ, ներկայացուցիչ[14]:

Վրթանես Քերթողը Մովսես Եղիվարդեցի կաթողիկոսի մահից հետո 604-ին տեղապահ է ընտրվում մինչև Աբրահամ Աղբաթանեցի կաթողիկոսի ընտրությունը՝ 607:

Շատ մեծ է եղել Վրթանես Քերթողի դերը «Գիրք Թղթոցի» կազմության գործում: Զանազան եկեղեցական հայրերի թղթեր ու նամակներ է ուղարկում բուն կազմող՝ Գուգարաց Ցուրտավ քաղաքի եպիսկոպոս Մովսեսին: «Գիրք թղթոցում» կան նաև Վրթանեսի բազմաթիվ թղթակցությունները քաղկեդոնականության դեմ: Իր մի նամակում Մովսես եպիսկոպոսը գրում է. «Զգիր երանելոյն Տիմոթէոսի բովանդակ ստացայ, և թուղթք, որ ի սուրբ եկեղեցւոջդ և առ ձեզ գտան, զամենայն գրեցի: Հասին առ իս և այլ թուղթք բովանդակ տեղեաց երանելի վարդապետացն, որք յանդիմանեն և նզովեն զծողով երկաբնակացն»: («Գիրք թղթոց»—140): Մեծ է եղել նրա ազդեցությունը նաև ժամանակակից եկեղեցականների վրա: Ահա թե ինչպես է ընդունվել նրա թուղթը. «Որպէս երկիր ծարաւի՝ ի բազում երաշտութենէ պապաքեալ, ընդունելով անձրև շահեկան զուարճացեալ յինքեան ցուցանէ զսովորութիւն, զանուշահոտ ծաղիկն երեվեցուցանելով տեսողացն»[15]:

Բայց Վրթանեսի մատենագրական վաստակում մեծ տեղ է գրավում «Յաղագս Պատկերամարտից» թուղթը:

3. ԹՈՒՂԹԸ ԵՎ ԱՐԺԵՔԸ

Վրթանես Քերթողի վերոհիշյալ թուղթը առաջին անգամ 1852 թվին հրատարակել է հայր Գարեգին Զարբհանալյանը իր «Յաղագս բարեխօսութեանց սրբոց» գրքի հավելվածում, ուր կան նաև ուրիշ թղթեր նկարների ու սրբերի նշխարների պաշտամունքի մասին: Հրատարակված է մեկ ձեռագրի հիման վրա, բայց կատարված են ուղղումներ ուղղագրության և բնագրի քերականական կառուցվածքի մեջ:

Երկրորդ անգամ այն հրատարակել է մեծ բանասեր Եղիշե Պատրիարք Դուրյանը Երուսաղեմի «Սիոն» ամսագրում, 1927 թվին (էջեր 23—25 և 61—63): Հրատարակվել է մեկ ձեռագրի օրինակով, բայց համեմատելով նախորդ հրատարակության հետ: Նշված են տարբերությունները և երբեմն՝ այս կամ այն օրինակի ճիշտ լինելը: Որոշ տողեր ներս են առնված նախորդ հրատարակությունից: Սիրարփի Տեր-Ներսիսյանը 1945-ին այն թարգմանում է ֆրանսերեն և ընդարձակ ծանոթագրություններով հրատարակում առանձին գրքույկով: Այժմ այն հրատարակում ենք 4 օրինակների համեմատությամբ: Տպագիր օրինակներից վերցրել ենք առաջինը: Մյուս երեք օրինակները Մաշտոցի անվան Մատենադարանի ձեռագրերն են: Հանվել ենք 3062 ձեռագրի վրա (նշված Ա, 192բ—194բ), որովհետև այն ավելի ամբողջական է, քան մյուսները: Երկրորդ՝ այս օրինակը արտագրված է շատ գիտակ գրչի կողմից (Խաչատուր Կ. Պոլսեցի, 1765—1767 թվերին, Էջմիածնում, ստացող՝ Աբրահամ Ատապատցի), որովհետև բանասերի հմտությամբ լուսանցքներում նշված են Աստվածաշնչից կատարված մեջբերումների տեղերը: Օրինակ՝ երբ բնագրում խոսվում է տեռատես կնոջ ապաքինման մասին և ասում «զոր ուսաք ի սուրբ Աւետարանէն», գրիչը լուսանցքում նշում է տեղը երեք ավետարաններում՝ «Մատթ. 9. 18, Մարկ. 5. 22, Ղուկ. 8. 43»: Այս վերջին փաստը խոսում է ձեռագրի ճշգրտության մասին, ուստի և այն ընտրեցինք որպես մայր օրինակ: Աշխարհաբար բնագրի տակ կտանք այս օրինակի լուսանցքներում արված նշումները, գրաբար բնագրի տողատակերը չմոռոնելու համար:

Երկրորդ ամբողջական օրինակը 2966-րդ ձեռագիրն է (նշված Դ երես 112բ—116ա): Ընդօրինակված է 17-րդ դարում, գրիչն է Ղուկաս երեցը: Զարմանալի նույնություն կա Դ և Ա ձեռագրերի միջև, նույնիսկ սխալները նույնությամբ կրկնվում են: Սա մեզ մղում է ենթադրելու, որ Ա օրինակը ընդօրինակված է Դ օրինակից: Բայց Դ օրինակը չունի լուսանցքային ծանոթությունները:

Երրորդ օրինակը 4381-րդ ձեռագիրն է, ընդօրինակված 19-րդ դարում: Բնագիրն սկզբից թերի է, բացակայում է մի երկար պարբերություն: Ընթացքում էլ հանդիպում են պակասող բառեր և նախադասություններ: Օրինակը թերի է նաև վերջից, այն էլ բավական երկար: Բայց այս բնագիրն էլ օգնեց որոշ ուղղումներ և լրացումներ կատարելու բնագիրն ամբողջացնելու համար: Ձեռագիր այս երեք օրինակները համեմատել ենք հայր Զարբհանալյանի հրատարակած օրինակի հետ և նշել տարբերությունները:

Դեռ 1892-ին հայտնի արվեստաբան Ստրժիգովսկին կասկած է հայտնել թղթի հեղինակի հավատիության վերաբերյալ. «Կարծում եմ, որ Վրթանես նրա համար չի կարող գրվածքի հեղինակը լինել, որովհետև խոսակցության նյութը հայտնապես պատկերամարտությունն է՝ ապա ուրեմն ամենաշուտ Ը դարի կեսից կարող է լինել»: Դեռևս 1910-ին Հ. Ն. Ակինյանը կասկածից դուրս է համարել հեղինակի վավերականությունը:

Այս թուղթը մեծ արժեք է ներկայացնում և՛ ընդ-

[13] «Գիրք թղթոց», Թիֆլիս, 1901, էջ 90:

[14] **Մ. Օրմանյան**, «Ազգապատում», Ա հատոր, Բ գիրք, էջ 580:

[15] «Գիրք թղթոց», էջ 132:

հանուր եկեղեցվո, և՛ հայ պատկերամարտության պատմության համար:

Ա.—Հայր Ն. Ակինյանը, Մ. Աբեղյանը և Ս. Տեր-Ներսիսյանը վերջնականապես հաստատել են, որ սա պատկերամարտության դեմ գրված առաջին թուղթ է ընդհանուր եկեղեցական գրականության մեջ, որ հասել է մեզ: Կարևոր է հատկապես այն իմաստով, որ հաստատում է այն ենթադրությունը, ըստ որի պատկերամարտության շարժումը եղել է Հայաստանում մոտավորապես մեկուկես դար առաջ, քան արևմուտքում:

Բ. Այս թուղթը շատ կարևոր է նաև հայ նկարչության պատմության համար: Հեղինակը խոսում է եկեղեցիներում իր տեսած նկարների ու որմնանկարների մասին: Կարևոր է հատկապես այն, որ հեղինակը նշում է այնպիսի սրբերի նկարներ, որոնք միայն հայ եկեղեցուն են պատկանում, ուստի և խոսք չի կարող լինել Բյուզանդիայից բերվելու մասին: Ս. Գրիգոր Լուսավորիչը, ս. Գայանեն և Հռիփսիմեն նկարված պիտի լինեին միայն հայ նկարիչների կողմից, իսկ սա ենթադրում է, որ դեռևս 5—6-րդ դարերին կա նկարչական հայկական դպրոց: Ավելին. հեղինակը գրելով հեթանոսական տաճարների մեջ և բրիստոնեական եկեղեցիներում նկարված նկարների մասին, խոսում է Անահիտի և Աստղիկի նկարների ու քանդակների մասին իրենց «արբեցությունների և անառակությունների» կարծես ականատեսի վկայությամբ: Արդյոք խոսքը հայ հեթանոսական տաճարների մասին չէ՞: Եթե նույնիսկ մի պահ ենթադրենք, որ նա չի տեսել տաճարը կանգնած վիճակում, անհավանական չէ սակայն, որ նա խոսում է գոնե ավերակների հիման վրա կամ որևէ աղբյուրից՝ քաղվածաբար: Հայ հեթանոսական տաճարներում էլ եղել են մեծ չափով նկարներ և քանդակներ: Հեղինակը խոսում է նաև ոսկյա և արծաթյա ավետարանի տուփերի, ինչպես նաև փղոսկրյա և կարմիր մորթուց սարքված կազմերի մասին: Հեղինակը դատապարտելով պատկերամարտների առարկությունները ի միջի այլոց գրում է. «Որ գրեալն է, թե զպատկերս յեկեղեցիս Պապ տարաւ, այդ ամենեցուն յայտնի է, թե սուտ խօսիք, քանզի ի Հայս պատկերս ոք չգիտեր առնել մինչև ցայժմ, բայց ի հոռոմց բերէին»: Ստրժիգովսկին հիմնվելով վերոհիշյալ տողերի վրա եզրակացնում է, որ «Չկա ուրեմն Հայաստանում մանրանկարչության (հետևաբար և նկարչության—Ե. Մ.) ինքնակա դպրոց և ոչ ընդօրինակողներ, այլ ամեն պիտույք հոգացվում էր բյուզանդական ներածությամբ»[16]:

Սիրարփի Տեր-Ներսիսյանը փորձում է մեղմացնել այս տողերը, ասելով, որ Վրթանեսի խոսքը վերաբերում է մասնավոր և բացառիկ դեպքերին: Անհավանական չէ այս կարծիքը: Հնարավոր չէ՞ արդյոք այլ ընթերցում: **«Այդ ամենեցուն յայտնի է, թե սուտ խօսիք»** նախադասությունը միջանկյալ է, իսկ **«տարաւ»**-ին իմաստային տեսակետից անմիջապես հաջորդում է «քանզի»-ով սկսված նախադասությունը, որով ստացվում է այսպես. «Որ գրեալն է թէ զպատկերս յեկեղեցիս Պապ տարաւ, քանզի ի Հայս պատկերս ոք չգիտէր առնել մինչև ցայժմ, բայց ի հոռոմց բերէին». սա կլինի պատկերամարտների առարկությունը, որին հակադրվում է հեղինակը ասելով. «Այդ ամենեցում յայտնի է թէ սուտ խօսիք»: Միթե՞ կարող էր որմնանկարները և նկարները իր աչքով տեսած հեղինակը այդ կարծիքի լինել, չէ՞ որ նա նշում է այնպիսի սրբերի, որոնց նկարները չէին կարող Բյուզանդիայից բերվել, ինչպես նշեցինք:

Գ.—Թուղթը արժեքավոր է նրանով, որ հեղինակը թղթի վերջում տալիս է ներկերի՝ «Դեղերի» բաղադրությունը, որով իմանում ենք, թե դեռևս Զ—Է դարերում (և ինչու չէ՝ ավելի առաջ) ինչից էին պատրաստում այն հրաշալի ներկերը, որոնց նկարները մինչև հիմա դիմացել են բնության հակազդեցությունն և պահել իրենց պայծառությունը:

Վրթանես Քերթողի այս թուղթը նրան պատվավոր տեղ է հատկացնում նաև մեր արվեստի պատմության մեջ:

Այժմ ներկայացնում ենք համեմատական բնագիրը և աշխարհաբար թարգմանությունը:

ՅԱՂԱԳՍ ՊԱՏԿԵՐԱՄԱՐՏԻՑ*

Ի կենսաբեր լուսոյն զարդարին ամենայն արարածք, և ի **ճառագայթ նորա** նորոգ պայծառացեալ բերկրին երկինք և երկիր, քանզի լիցն հըզմարտութեան ելից լուսով զամենայն տիեզերս,
5 փարատեաց զմէգ խաւարային ի ստուերաման և թանձրացեալ սրտից և լցաւ աշխարհ Աստուածածնօթ վարդապետութեամբ: Իսկ մթաւորական **ուսմանն խորհօղք**, որք շրջին յաղջամուղջ **խաւար ընդվայրածք շաղեալք** սասանեն, զանհեթեթս պատրեն **զմիտս** անմեղաց և մուծանեն
10 հերձուածս յեկեղեցի: Ոչ է արժան, ասեն, նկարս և պատկերս յեկեղեցիս առնել. և բերեն վկայութիւն ի հնոց կտակարանաց, զոր վասն հեթանոսաց կռապաշտութեան էր ասացեալ, վասնորոյ
15 և ամբաստան լինէին մարգարէքն: Բայց մերս ոչ նմանի նոցա, որ յաղագս Քրիստոսի և ընտրելոց իւրոց: Եւ ոչ եթէ ի բանից, ճարտարութենէ այլ գրոց վկայութեամբ ասասցուք, որպէս և պատմիչք պատուիրանացն **ուսուցին** մեզ **ստուգապէս**:

Քանզի զպատկերացն օրինակ նախ Մովսէս արար ի խորանին հրամանաւն Աստուծոյ ։ը։ **քերովբէս** ոսկիս, ճախարակեայս, թեւաւորս,

---

[16] «Հանդէս Ամսօրեայ», 1892, էջ 200:

* 2966-ը ունի «Ցաղագս ընդդիմամարտաց», 3062-ը ունի «Ընդդէմ ընդդիմամարտից», 4381-ը ևս Գ-.-ն «Ցաղագս Պատկերամարտից»:

Ծնթ.—Բ օրինակը չունի սկզբից մինչև «ստուգապես»

2 Ա. և Դ. ունեն **Անճառ** օրինօք: 8 Գ. ունի **ուսմանց խոհալք**: 9 Պակասում է Ա.-ում, իսկ Դ. ունի **ջաղեալք**: 10 Գ. **զսիրտս**: 19 Ա. Գ. **ասացին**. Գ. չունի: 20 Բ. չունի: 23 Բ. **քերուբս** Գ. **քերոբս**: 24 Ամ-

մարդակերպս ի վերայ քաւութեանն, **յորոյ միջոյ**
25 **խօսէր Տէրն տէրանց, զոր և առաքեալ ի վկա-**
յութիւն հաստատէ՝ քերովբէքն փառաց որք հո-
վանի ունէին ի վերայ քաւութեանն, որ ի մեծի
խորհրդոյ օրինակ: Նոյնպէս և զվարագոյրն զոր
Տէրն ասաց առնել **նարօտով, նկարուք** ի պէս-
30 պէս **յօրինուածեալ զարդիւք,** որ է քեռեզ և ծի-
րանի, **կարմիր՝** և կապուտակ. ոչ ապաքէն ոչ՝ էին
երանգք նկարուց վարագուրին՝ և նկարք
վարագուրին՝ քէրօբէքս: **Այնպէս՝** և Սողոմոն ա-
րար ի Տաճարին քերովբէս ի **կիպարիս՝** փայտէ
35 և պատեաց ոսկով և ոչ միայն **որ ի դաբիրն**
էին քէրօբէք այլ **ի** յորմսն և ի դրունս և ի
սեամս **քէրօբէքն այլ և յորմսն՝** շուրջանակի
գրեաց **գրչաւ** քէրօբէս և արմաւենիս և թռուցեալ
թիթեղունս, և ոչ խստեաց Աստուած այլ կոչ-
40 եաց՝ Տաճար անուան իւրոյ: Եւ հոգեկիր մար-
գարէն Եզեկիէլ, տեսիլն զոր ետես, ոչ իբրև զսոյլ
ոք ի մարգարէիցն եւ կամ պատգամախօսաց՝ այլ
աստուածատես գուշակմամբ **բարբառեալ՝** ասէր.
«Եդ զիս Տէր ի վերայ լերին **միոյ՝** բարձոյ **յոյժ.**
45 **և ի վերայ նորա իբրև զշինուած՝** քաղաքի և
տարաւ զիս ի ներքս և տեսի ի նմա Տաճար և
այր մի ի նմա աչեղ և զարմանալի, և փայլա-
տակունք հատանէին **ի նմանէ՝** իբրև ի պղնձոյ,
և կայր ի վերայ դրանն և ի ձեռին իւրում ուներ
50 լար շինողաց և ձող չափոյ և ասէ ցիս. «որդի
մարդոյ տես և ի միտ առ զամենայն **ինչ,** որ ի
սմա է, զի վասն ցուցանելոյ քեզ եկի այսր» և
տեսի զՏաճարն նկարեալ շուրջանակի ներքոյ և
արտաքոյ քերօբէք և արմաւենիք **ի՝** յատակէն
55 մինչև ցվերնայարկն և ոչ միայն Տաճարն էր
նկարեալ այլեւ **պատշգամքն՝** և դրունք և սեղանն
Տեառն: Եւ էին քերօբէքն մարդակերպք :բ: :բ:
ամենեքին և արմաւենի ի մէջ երկոցունց, որ է
մեծի սքանչելեաց **նորա ցոյց:**
60 Արդ զինչ **ասիցես** յաղագս սորա, **ով մարդ,** որ
հիւանդ ես մտօք, զի վասն Մովսէսի և Սողոմո-
նի յօրինուածոյն և քերօբէիցն ասացեր թէ ձեռա-
գործք **են,** իսկ զսա **զինչ համարիցես,** զոր

Աստուծոյ **իւրոյ՝** է ցուցեալ: Անա յայտ եղև զի
65 որ յառաջնոցն պատկերք էին, ի պատիւ և ի
սպասաւորութիւն]՝ երկրպագութեան փառաց
Աստուածութեան: Այս ի հնոց **գրոց** ասացեալ:
Իսկ ի նորոց Կտակարանաց ասէ Պօղոսն ցԱթե-
նացիսն. շրջեալ և տեսեալ զպաշտամունս ձեր.
70 գտի բագին մի, **յորում գրեալ էր.** «անծանօթի
Աստուծոյ». զոր դուք յանծանօթ պաշտէք. ես
զնոյն պատմեմ ձեզ: Միթէ Աստուած էր բա-
գինն. բայց զի **յանուն** Աստուծոյ պատուէին,
զնոյն և Պօղոս վկայեաց: Եւ մեք ոչ եթէ **ճշմա-**
75 **րիտ Աստուած** ասեմք **զպատկերս և զնկարս,**
այլ յանուն Աստուծոյ նկարեմք որպէս երևեցաւն,
զոր Եսայի ասէ զծնանելն, Երեմիա՝ զընդ մարդ-
կան շրջելն, և Դաւիթ՝ զչարչարանացն և զթաղ-
ման, և Եզեկիէլ և Ովսէ՝ զՅարութենէն, Դանիէլ
80 և Զաքարիա՝ զերկրորդ գալստենէն, Նաւում և
Մաղաքիա՝ զդատաստանէն, քանզի նորա նշա-
նակաւ **պատմեցին** մեզ **և է** որ եղև **և է** որ լինե-
լոց է, և մեք զնոյն նկարեմք, զոր ի գիրսն
գրեալ է, զի և գիրն դեղ է և նիւթք պատկերաց:
85 Նաև վարդապետք եկեղեցւոյ յիշատակեն **յա-**
ղագս պատկերաց, որպէս **Յոհանէս** Կոստանդը-
նուպոլսի Եպիսկոպոս յայն ճառի, որ **ասէ** առ
լուսաւորեալսն, մի փոքր յառաջ մատուցեալ
ասէ. «զորօրինակ պատկերք պղնձիք թագաւո-
90 **րականք անշունչք են և անզգայք, որ փախ-**
չին ի նոսա մարդիկ ապրեցուցանեն ոչ զի
պղինձն է, այլ վասն զի թագաւորաց է»: Եւ դու
ըստ այնմ օրինակի իմացիր ով հերետիկոսդ:
Եւ դարձեալ յայն ճառի, որ ասէ «ոչ է պարտ
95 անցանել զԱստուածային գրով. ապա ասէ ոչ
տեսանէք ի թագաւորական պատկերսն, զի ի
վեր անդ **կայ** պատկերն և ըզթագաւորին **գիր**
ունի գրեալ և ի խոնարհ խարսխին գրեալ են
թագաւորին նահատակութիւնք, **յաղթութիւնք,**
100 **իրաց ուղղութիւնք.** նոյնպէս և ի **մաշկսն** է տե-
սանել թագաւորական պատկերն ի **վերայ և ի**
ստորևն առաքինութիւնք, յաղթութիւնքն ասե-
նայն»:

Կամ զինչ արդօք ասիցես զպատկերն Տեառն
105 զոր **Անան** հաւատարիմ թագաւորին Արգարու
նկարեաց յանդիման Քրիստոսի, տեսութեամբ
իսկ. զոր և այժմ ասեն գոլ ի մեծ եկեղեցւոջն
Ուռհայի:

Եւ Սեբերիանոս եպիսկոպոս ասէ. «զորօրինակ
110 թագաւորի ի **բացեալ եղելոյ** պատկերն նորա

բողջ հատվածը բացակայում է Բ.-ում, իսկ Գ.-ում սկսած **Տէրն**-ից: 28 Ա. **խորհրդոց:** Գ. **Սոյնպէս:** 29 Բ.—**նարօտաւ:** Ա.—**նկարովս:** 30 Գ.—**յօրինուածեալք զարդարեալ,** իսկ Դ. ունի **յօրինուածովք զարդարեալ:** 31 Ա. և Դ. չունեն: 32 Բ. չունի, իսկ Գ.-ում կա **նարօտուց:** 33 Գ. և Դ. ունեն **սոյն օրինակ:** 34 Բ.—**կիւպարիս:** 35 ունի Ա.-ն միայն: Ըստ Աճառյանի եբրայական փոխառություն է և նշանակում է տաճարի ներքին մաս, հավանաբար զոհարան: Բ.—**ի դաբիրսնն:** Գ.—**և:** 37 կա միայն Ա.-ում և Դ.-ում 38 Բ.—**գրչով:** 38 Գ.—կոչեաց **զնա:** 42 Բ. ունի **ոչ ի մարդս:** 43 Ա. Գ. Դ.—**բարբառէր:** 44 Բ. չունի: 45 Գ. չունի, Բ.—**զշինած:** 47 Ա. և Դ. չունեն: 48 Ա. Գ. Դ. չունեն: 51 Բ. չունի: 55 Բ. և Գ. չունեն: Բ ունի **ի:** 56 Դ. ունի **պատշկամբքն:** 57 Գ. **չունի:** 59 Բ. և Գ. ունեն **տարացոյց:** 60 Բ.—**ասացեր:** Ա և Դ ունեն **ով դու:** 63 Գ—**էին:** Գ ունի անիմաստ **շինել:** Ա ունի **հրամայեաց,** իսկ Դ ունի **համարեսցիս:** 64 Բ չունի: 66 Բ և Գ չունեն: 67 Բ—**գրեաց:** 70 Բ չունի: 73 Բ ունի **զանուն:** 75 Ա Գ և Դ ունեն **Աստուած ճշմարիտ:** Ա և Դ ունեն **զպատկերաց նկարս:** 82 Ա ունի **պատմէին:** Բ չունի: 86 Գ **վասն:** Բ և Դ **Յոհան:** 87 Բ չունի: 90 Բ-ում կրկնվում է: 91 Ա Գ Դ չունեն: 92 Բ ունի **ի պղնձէ:** 97 Բ չունի: Ունի միայն Բ: 100 Գ չունի: Բ ունի անիմաստ **ի մշակսն:** 102 Բ չունի: 105 Բ չունի, իսկ Գ ունի **աստուածային:** 106 Գ ունի **նկարեալ:** 110 Ա ունի **ի բաց:** Ա և Գ ունեն **և պատկերն:** 112 Բ ունի

լնու զտեղի թագաւորին և երկիրպագանեն ի-
խանք և զտօնս **ամսոյ կատարեն.** պետք հանդի-
պին և ռամիկք երկիրպագանեն ոչ ի տախտակն
հայելով այլ ի պատկեր թագաւորին, ոչ ի բնու-
115 թիւն **հային** այլ որ գրովն տպաւորեալ է. և եթէ
մահկանացու թագաւորի պատկեր այնքան զո-
րանայ որչափ ևս առաւել **անմահի** թագաւորին
կերպարան և պատկերն»: Այդպէս իմա զոր ա-
սենս, զի և սոքա վարդապետք էին եկեղեցւոյ,
120 և թէ զսոցա **գիրս** կամիս **ուսանել** զնոյն պատ-
մեն: Այսպէս և **սուրբն Գրիգոր հայոց Լուսաւո-
րիչն ասէ** յաղօթսն իւրում **«փոխանակ դրօշելոցն
փայտից զխաչն իւր կանգնեաց ի մէջ տիեզե-
րաց և զի սովոր էին մարդիկ երկրպագանել**
125 պատկերացն մեռելոց եղաւ ինքն մեռեալ պատ-
կեր ի վերայ Խաչին, մեռաւ և անշնչացաւ զի
հաստատեսցեն խաչին փայտի երկիրպագանել
և **որ ի** վերայ նորա պատկերն և մարդադէմն
իցէ զի զպատկերագործսն և զպատկերասէրսն
130 և զպատկերապաշտսն յիւր պատկեր Աստուածու-
թեանն հնազանդեսցուսցէ»: Արդ **եթէ մերոցս
բանից ոչ հաւատայք** զգիրս պարտ է քննել և ի
վերայ հասանել. բայց դուք ի գրոց այնչափ հեռի
էք որպէս երկինք յերկրէ:
135 Բազում և այլ վկայութիւնք են ի Գրոց Սրբոց,
քանզի ամենայն ինչ տեսանելի է, որ միտս ու-
նին զի **ականջք** լսեն և միտք իմանան և առանց
մտաց աչաց մարմնոյ աչք կուրացեալ գտանին:
Բայց զարմանք մի այս է, որ զպատգամսն ըն-
140 դունիք և զիշխանն հալածէք, նշանին երկիրպա-
գանէք և ի թագաւորն քարաձիգ լինիք, զխաչն
պատուէք և **զխաչելեալն** թշնամանէք: Այսպէս
Մանիքեցիքն և Մարկիոնացիքն առ աչօք հա-
մարին զճշմարտութեամբ մարմնանալ Փրկչին, և
145 յորժամ տեսանեն զպատկերս **գժդմնին** զայրա-
գնեալք և մատուցեալք թշնամանն: Զի թէ
մեր չիցէ տեսեալ զմարգարէսն, **տեսեալ** է և
քննեալ, զի նոքա վասն կռապաշտութեանն աղա-
ղակէին ըստ այնմ թէ կուռք հեթանոսաց **դնք
150 են,** բայց ոչ ուրեք գտանեմք գրեալ եթէ պատ-
կերք եկեղեցւոյ **կամ քրիստոնէից ասեն դնք այլ
զկռոցն** ամբաստան լինին **մարգարէքն:** Նաև յե-
կեղեցական պատմութեանն ասէ, զոր Եւսեբի
ժամանակագրի հաստատեալ էի եօթերորդ դրպ-
155 ռութեանն ի եօթն և տասներորդ ճառին, վասն
սքանչելի նշանացն որ եղեն, ասէ, ի Պենենադայ
ի **քաղաքի մեծամեծ գործոցն** վասն Փրկչին մե-
րոյ: «Այլ քանզի զայս **քաղաք յիշեցաք մեք, ասէ,
ոչ է արժան անցանել զսորա** պատմութեամբ, զի
160 արժանի է սա յիշատակաց այնոցիկ որ գայլեն
զկնի մեր, վասն կնոջն տեռատեսի որոյ բղխումն
արեան խաղացեալ ելանէր, զոր ուսաք մեք ի
Սուրբ Աւետարանէն, որ բժշկեցաւ ի ցաւոց **ան-
տի** ի Փրկչէն մերմէ **յայնմ քաղաքի որ ասեն թէ
էր նա և տուն նորա յայտնի է անդէն ի քաղա-
քին և շնորհք ողորմութեանն որ եղեն ի կինն՝**
նշան սքանչելեացն Աստուծոյ, զի առաջի դրաց
տանն նորա կայ ի **վերայ բարձր** վիմի պատկեր
պղնձի կնոջ մարդոյ իջեալ ի ծունգս իւր և
170 սփռեալ **զձեռս իւր** առաջի իւր աղաչէ ըստ **նորա**
նմանութեան, և ընդդէմ նորուն կայ դարձեալ
պատկեր պղնձի առն մարդոյ որ կանգնեալ է և
կայ արկեալ զիւրև **մեկնոց** և կարկառեալ ունի
զձեռն իւր առ կինն և ի կողմանէ ոտից նորա
175 **ի վերոյ** քան զհանդերձն բուսեալ է արմատ ինչ
բոյս որ օտար է յամենայն արմատոց **տեղեամբ
իւրով** և ելանէ մինչև ի դրօշակ հանդերձի նորա
և է նա դեղ ամենայն ցաւոց, այս անդրի ի նմա-
նութիւն Փրկչին մերոյ է, որպէս և ասեն կայ մնայ
180 մինչև յաւուրս մեր, և տեսաք մեք զնա աչօք
մերովք ի ժամանակի իբրև չոգաք մեք ի քա-
ղաքն յայն»: Բայց **ոչինչ է սա** մեծ քան զայն
որ հաւատացին ի Քրիստոս յարանց հեթանոսաց
և նկարեցին դեղով զպատկերսն Պօղոսի և Պետ-
185 րոսի և զնորուն իսկ զՔրիստոսի և **կայ,** մինչև
ցայսօր ժամանակի:
Եւ արդ չիցէ ձեր տեսեալ զգիրս զայս ով ընկեր
որ հակառակ **կայք** պատուիրանացն Աստուծոյ:
Ընկեր ասեմ, ոչ վասն ուղղափառութեան հաւա-
190 տոյ ասեմ ընկեր, այլ ըստ այնմ որ լուաւն ի տե-
առնէ մերմէ **Յիսուսէ Քրիստոսէ** թէ «ընկեր, վասն
որոյ եկիրդ»: Զի թէ ընթերցեալ էք և ոչ գիտէք
ապա առ ձեզ կատարի բան առաքելոյն որ ասէ.
«Որոց Աստուած աշխարհիս այսորիկ կուրացոյց
195 **զմիտս** անհաւատիցն զի մի ծագեսցի **ի** նոսա
լուսաւորութիւն Աւետարանի փառացն Քրիստո-
սի». այլովք հանդերձ. ապա թէ **չէ ընթերցեալ
ձեր** խնդրել արժան է և քննել և գիտել զբարին

ամսոց: Բ ունի **թէ պետք:** 113 Բ ունի **հանդիպէի:** 115 Բ ունի **հօրն:** 117 Բ ունի **անմահ:** 120 Ա Գ Դ ունեն իմաստը չարտահայտող **զիրս:** Ա Բ Դ ունեն **տեսանել:** 122 Ա Գ Դ ունեն **սրբոյն Գրիգորի հայոց Լուսաւորչին:** 124 Ամբողջ հատվածը չկա Ա-ում և Դ-ում: 127 Դ ունի **հաւատացեն:** 128 Բ չունի: 132 Բ ունի **թէպէտ և մեր բանիցս չհաւատայք:** 137 Ա Բ Դ ունեն **միտք:** 139 Ա Գ Դ ունեն **են:** 142 Գ ունի **զխաչեալն:** 145 Գ ունի **դժգմնին:** 147 Բ ունի **միթէ մեր չիցէ,** իսկ Գ ունի **միթէ ոչ իցէ:** 147 Գ ունի **հերկեալ:** 150 Բ չունի: 153 Բ չունի: Ա Գ Դ չունեն:

157 Գ ունի **մեծագործոցն:** 159 Բ չունի, իսկ Ա և Դ ունեն **անցանել զայս:** 164 չունի: 164—66 Գ և Բ չունեն: Գ և Դ շարունակում են **ի Փրկչէն մերմէ նշան սքանչելեաց սոցա մինչև ցայսօր ժամանակի:** 168 Ա և Դ չունեն: Գ ունի **վերնաբարձր:** 170 Ա Բ Գ չունեն: 170 Բ չունի: 172 Ա և Գ ունեն **ամիմաստ և:** 173 Գ ունի **կրկնոց,** իսկ Ա և Դ ունեն **մերկնոց:** 175 Բ ունի **ի վերայ:** 175 Ա Գ Դ չունեն: 176 Ա չունի: 182 Գ ունի **ոչ ինչ է:** 185 Բ **ունին:** 188 Գ ունի **կաս:** 188 Այստեղ ընդհատվում է Բ-ն՝ 4381 ձեռագիրը: Ամբողջ շարունակությունից կան միայն մի քանի անկապ բառեր: 191 Գ չունի: 193 Դ ունի **ավելորդ մարգարէի:** 195 Գ **զսիրտս** Գ **առ:** 198 Գ ունի միայն

և զչարն և ընտրել զաստուածայինսն և զդիւա-
200 կանսն:

Եւ զիարդ ոչ գիտէք, զի ի մեհեանս կոռցն է **դրոշմեալ Որմիզդ,** որ է Արամազդ և պոռնկութիւնք իւր և կախարդութիւնք, իսկ յեկեղեցիս Աստուծոյ տեսանեմք նկարեալ զսուրբ Կոյս
205 Աստուածածին և ի գիրկս իւր ունելով զՔրիստոս իբրև յայնժամ զարարիչն իւր և զորդի և զստեղծիչն ամենայնի: Իսկ մեհեանս կոռցն Անահիտ և պղծութիւնք իւր և պատիրք: Իսկ յեկեղեցիս քրիստոնէից և ի յարկս վկայից Աս-
210 տուծոյ տեսանեմք նկարեալ զսուրբն Գրիգոր և աստուածահաճոյ չարչարանք իւր և սուրբ առաքինութիւնք և **զսուրբն** Ստեփաննոս Նախավկայն ի մէջ **քարկոծողացն,** զերանելի և **զսուրբ կանայսն զԳայանէ** և զՀռիփսիմէ հանդերձ ամենայն
215 սուրբ ընկերօք և յաղթող **նահատակութեամբ** նոյնպէս, և զայլ առաքինիս և զպատուականս և զհրեշտակակրօնս զորս ոչ **բաւեմք** ընդ համար **արկանել:** Ի մեհեանս սնոտիցն Աստղիկ և **Ափրոդիտէս,** զոր մայր ցանկութեանց կոչեն
220 **ամենայն** հեթանոսք, և արբեցութիւնք նոցա և անառակութիւնք, իսկ **յեկեղեցիս** Աստուծոյ Խաչն տերունական և խաչակիր **գունդք** առաքելոց և մարգարէից, որք բարձին ի միջոյ **զկռապաշտութիւն** ամենեցուն և ածին զտիեզերս յաստուածա-
225 պաշտութիւն և յամօթ արարին զսատանայ և զզօրս նորա: Քանզի յեկեղեցիս Աստուծոյ **տեսանեմք** նկարեալ զամենայն սքանչելագործութիւնս **Քրիստոսի** զոր արար, որպէս և ի գիրս գրեալ է, որպէս և յառաջն ասացաք զոր **գուշա-**
230 **կեցին** մեզ մարգարէքն զծնանելն ասեմ և զմկրտելն, զչարչարանսն, զհաչելութիւնսն, զթաղումն, զյարութիւն, **զհամբառնալ** յերկինս. զայդ ամենայն նկարեն յեկեղեցիս, զոր գիրք սուրբք պատմեն: **Ոչ** ապաքէն դեղով գրեալ է զգիրս և զնոյն բան
235 դեղովք նկարեալ է յեկեղեցիս. ի գրոցն ականջք **միայն** լսեն իսկ զնկարսն աչօք տեսանեն և ականջօք լսեն և **սրտիւք հաւատան:**

Ահա յայտ է զի չէ արտաքոյ Գրոց պաշտել զպատկերսն, և եթէ խորհրդի որ քննէ ճշմարիտ
240 գայ և վրիպեալ զտանին հերետիկոսքն որ հակառակաբանեն և ասեն. «վասն այսորիկ խոտան համարիմք զի անխօսք են և անբանք»:

Արդ միթէ Տապանակն Աստուծոյ խօսէր յոր-

ծամ **զԴագովն** բերանսեալ կործանեաց և զԱ-
245 զովտոս և զԳէթ և **զԱսկողովնա** զքաղաք այլազգեացն **եհար** հարուածովք մինչև բոլոր բարձեալ ասկողովնացիքն ասէին. «ընդէ՞ր դարձաւ տապանակդ աստուծոյ իսրայէլի առ մեզ **սպանանել** զմեզ և զժողովուրդս մեր»: Միթէ Խաչն
250 Քրիստոսի խօսեցաւ, որ ի քաղաքին **զմեռելսն** կենդանացոյց և հրաշագործութիւնս բազումս է արարեալ մինչև **յաւուրս** մեր, որ է պարծանք հրեշտակաց և փրկութիւն մարդկան և արքայիրք դիւաց: Եւ արդ **զուգաւորեալ** շարամանին նոր
255 պատուիրանք ըստ հնոցն և մեզ վկայեն **շնորհիւն** Քրիստոսի քանզի և **զտուփս** Աւետարանին տեսանեմք նկարեալ, ոչ միայն յոսկւոյ և յարծաթոյ այլ և **յոսկերաց** փղաց և կարմիր **մորթոց** կազմեալ և մեք յորժամ երկիրպագանեմք սրբոյ
260 Աւետարանին կամ համբուրեմք ոչ եթէ փղին ոսկերացն մատուցանեմք զերկրպագութիւն կամ **լայքային, որ** յաշխարհէ բարբարոսացն է եկեալ ի վաճառ, այլ Բանի **Փրկչին** որ ի մագաղաթին **գրեալ է:** Այսպէս և Տէրն Փառաց նստեալ ի յա-
265 ւանակի և ի մերձենալ ի քաղաքն եկին ընդ **առաջ** ծերք և տղայք **ոստօք ձիթենեօք և ոստօք արմաւենեօք** և օրհնէին գովէին և երկիրպագանէին. ոչ եթէ իշոյն երկրպագանէին այլ Քրիստոսի Որդւոյն Աստուծոյ որ ի վերայ **նորա** նստեալն
270 էր: Այսպէս և պատկերացն երկրպագանել ոչ վասն դեղոցն է այլ վասն Քրիստոսի յորոյ անուն նկարեցաւն: **Այլ** արդ զինչ նմանութիւն է աստուածային **պատկերացն** հեթանոսաց պղծութեանն. վասն որոյ հերետիկոսք բիծս կարկատեն
275 և հերձուածս մուծանեն ի կորուստ անձանց և բնաւ լսողաց զոր **տալոց և** հատուցանելոց են զանանցական վրէժս տանջանաց գեհենին հանդերձ ամենայն կամակցօք **իրեանց և գործակցօք,** որում յիրաւի և ի դէպ ասաց երջանիկ մար-
280 գարէն Ովսէէ. **«որոգայթ** գայթակղութեան ի ճանապարհս նոցա վասն զի մոլութիւն ի տան Աստուծոյ տնկեցին և միւս ևս. «վայ որ արբուցանէ ընկերին իւրում հրապոյրս պղտորս»: Եւ արդարև իսկ հրապուրանօք և **հաղթիւք** մեղաց
285 շաղապատին որ **ըստ երերեալ** են յուղիղ հաւատոյ, և **հեղեալ** տապալեցան յուղիղ խորհրդոց: Բայց ասեմ և ոչ լռեմ: Զոր օրինակ **եթէ զիրս ու-**

ձեր ընթերձեալ: 202 ունի **դրոշեալ:** Ա և Դ ունեն **զՈրմիզդ:** 212 Գ չունի: 213 Գ ունի **քարկոծչացն:** 214 Գ ունի **զփառաւոր կոյսն Սուրբ Գայանէ...:** 215 Գ ունի **նահատակօք:** 218 Գ ունի **անցուցանել:** 219 Ա և Դ ունեն **Եպրափրոդիտես:** 220 Ա և Դ չունեն: 221 Գ-ում միշտ կա **յեկեղեցւոջ:** 222 Ա և Դ ունեն **գրեալքն յառաքելոց և ի մարգարէից:** 223 ունի **զամբարբշտութիւն:** 227 չունի: 228 Ա և Դ ունեն **Աստուծոյ:** 229 Ա և Դ ունեն **գուշակն եղեն:** 232 Գ ունի **զհամբարձումն:** 234 Գ չունի: 236 Ա և Դ ունեն **մտացն:** 237 Գ ունի **որ սրտիւք իմանան՝ հաւատան:**

244 Գ ունի **զԴագոն:** 245 Գ ունի **զԱսկաղոնայ:** 246 Գ չունի: 249 Գ ունի **ապականել:** 250 Գ ունի **զմեռեալն:** 252 Գ ունի **յօրս:** 254 Գ չունի: 255 Գ ունի **շնորհօք:** 256 Գ ունի իմաստը չարտահայտող **զտիպրս:** 258 Ա ունի **յոսկերց:** Գ ունի **մորթոց:** 262 Ա չունի, իսկ Դ ունի **դաքային:** 263 Ա չունի: 264 Ա և Դ ունեն **գրեցաւ:** 265 Ա ունի **յառաջս:** 266 Գ ունի **ոստովք ձիթենեաց և ոստովք արմաւենեաց:** 269 Ա և Դ չունեն: 272 Գ չունի: 273 Գ ունի **պատուիրանաց:** 276 Գ չունի: 277 Գ ունի **վրէժ:** 278 Ա և Գ չունեն: 280 Գ-ում անիմաստ է **որոց:** 284 Գ ունի **խարից:** 285 Գ ունի **ստերիւրեալ:** 286 Ա և Դ ունեն **եղեալ:**

բուք խնդրեալ յարկեղաց և **ասիցէ** զառաքեալդ տուր, կամ թէ զԵսայի, կամ զԵրեմիա, միթէ Ե-
290 սայի ինքն իցէ և կամ առաքեալն ինքնին, ոչ ապաքէն պատգամք աստուածայինք ընդ նմին և բանք նոցա: Եւ մեք պատկերաց նկարուք զնոսա յիշեմք **և զառաքողսն նոցա և ոչ ասեմք** թէ սա իցէ Աստուածն այլ յիշողութիւնն Աստուծոյ և
295 ծառայից նորա:

Եւ որ գրեալն է թէ զպատկերս յեկեղեցիս Պապ տարաւ. այդ ամենեցուն յայտնի է թէ սուտ խօսիք. քանզի ի **Հայս** պատկերս ոք չգիտէր առնել մինչև ցայժմ բայց ի հոռոմոց բերէին, և մեր
300 ուսմունք անտի էին եթէ նոքա չէին կորուսեալ. և քան զՊապ յառաջ այլ թագաւորք էին և պատկերս և նկարս տանէին յեկեղեցիս յանուն Քրիստոսի, և դարձեալ զկնի Պապայ և այլք թագաւորք եղեն ի **Հայս** և հայրապետք որպէս երանե-
305 լի Սուրբն Սահակ և **Մաշտոց** և Եզնիկ և Արձան և Կորիւն և ընկերք **նոցա** որ և ի ձեռն **իսկ** նոցա հայոց դպրութիւն շնորհեցաւ ի **տեառնէ** Աստուծոյ և ոչ ոք ի նոցանէ վասն պատկերաց և նկարուց եկեղեցւոյ բանս ինչ ոք արար. բայց
310 միայն **Շմուէլ** և Թադէոս և **Եսայի** և ընկերք նոցա որ և զլոլովս ընդ իրեանս **ի յետս** կացուցին որպէս և զնեզդ, զի թէպէտ **առ ժամանակ փայլէ** կողմն հերձուածողաց այլ ստէպ խամրի վասնզի զատութիւն խօսին. զի և մեղք իսկ առաջին ի
315 ստութենէ ծնան որպէս **առ** Ադամաւն: Քանզի ոչ եթէ իմ են բանք, այլ Գրոց սրբոց, հնոց և նորոց Կտակարանաց. եթէ կամիք Քրիստոսի Աստուծոյ ծառայել և սիրել զպատուիրանս Նորա զնոյն գիրս, զորոց անուանս **ի սմա** գրեալ է, յուզեցէք
320 և յորժամ **գտանիցէք, նոքա** ցուցանեն զճշմարիտ ճանապարհն Աստուծոյ:

Եւ վասն պատկերացն այսչափ ասեմ բաւական լիցի՝ որ միտս ունի:

Իսկ զդեղոցն, որ ասեն թէ պիղծ են, որք յան-
325 դիմանին **իսկ** ի յինքեանց բերանոց, քանզի դեղ Գրոցն է **արջասպ** և գիտոր և կոիզ, զոր և ճաշակել իսկ մարթի, և նիւթն պատկերաց կաթն և ձու, զառիկ, լաժուարդ, ժանգառ, **բուռ, կիր** և որ **այլ ինչ** է զոր ի պէտս կերակրոց մարթի ճա-
330 շակել կամ ի պետս բժշկութեան: Բայց ոչ ասեմք պիղծ զոր **եդ** Աստուած ի վայելչութիւն երկրի և ոչ անգոսնեմք իբրև զազիր ինչ որ ասէքդ թէ հոտ գայ ի դեղոցն: Արդ իբրև այդպէս **անաղտք էք** և հոգևորք պարտ է ձեզ **ի ժամ** աղօթիցն
335 հերձուլ զորովայնս ձեր և **եռանդամբ** ջրով լուանալ զաղիս ձեր և ապա մտանել յեկեղեցի, ով չարք և անհնարին չարք, որ մերթ դեղոցն աւոկ դնէք և մերթ պատկերացն և նկարուց և ասէք թէ ձեռագործք են և մեզ չեն արժանի. նա և ե-
340 կեղեցիք ձեռագործք են և կոչին Տաճար Աստուծոյ: Զոր և Պաւղոս ասէր առ Տիմոթէոս. «զի գիտասցես, ասէ, որպէս պարտ իցէ քեզ ի տան Աստուծոյ շրջել, որ է եկեղեցի Աստուծոյ կենդանւոյ սիւն և հաստատութիւն ճշմարտութեան»:
345 Արդ առ այս զինչ ասիցէք, զի և սա ձեռագործ է քանզի յայտնեաւք զաներևոյթն ճանաչեմք և դեղքն և նկարքն յիշողութիւն է Աստուծոյ և ծառայից նորա: Բայց քանզի դուք վիսացեալ էք սատանայիւ և սուրբ կոչէք զանձիս և նմանող էք
350 գերեզմանաց բռելոց, **ապա** ճշմարիտ ասաց առակողն. «մի կարի արդար լինիր և մի ճարտարէր զի մի թիւրեսցիս»: Եւ դարձեալ ասէ. «ծնունդ չար առ արդարս **ունի** զանձն իւր», որպէս և դուքդ **բարձրացեալ պանծայք** և անդուն բերա-
355 նով խօսիք, **զոր** ինչ ոչ է պիտոյ:

Այլ մեք փութասցուք յեկեղեցի Քրիստոսի մտանել ի տուէ և ի գիշերի հանապազօր **կանխեալ** յաղօթս որպէսզի կատարեսցուք զպանդխտութեան ժամանակս: Եւ արժանի լիցուք տեսա-
360 նել զԱստուած զուարթագին երեսօք յաւուրն դատաստանի, զի յաւիտենից բարութիւնս հասանել **կարասցուք** զի նմա փառք յաւիտեանս **յաւիտենից** ամէն:

ՊԱՏԿԵՐԱՄԱՐՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Բոլոր արարածները զարդարվում են կենսաբեր լույսով, և նրա ճառագայթներով նորովի պայծառացած բերկրում են երկինք ու երկիր, որովհետև ճշմարտության լույսը լցրեց լույսով ողջ տիեզերքը, փարատեց խավար մեգը մթամած և կարծրացած արտերից և աշխարհը լցվեց աստվածածանոթ վարդապետությամբ: Իսկ մոլար ուսման հետևողները, որոնք շրջում են խավար աղջամուղջում, մանվածապատ զրախոսություններով ցնցում և անհեթեթությամբ խաբում են անմեղների մտքերը, հերձված են մտցնում եկեղեցում: «Արժան չէ, ասում են, նկարներ և պատկերներ դնել եկեղեցում»: Հին Կտակարանից վկայություն բերում են ինչ որ հեթանոսների կռապաշտության համար է ասված, որի դեմ և բողոքում էին մարգարեները: Բայց մեր (նկարները) նման չեն

---

288 Գ ունի **եթէ ի գիրս խնդրեալ**: Գ ունի **ասասցէ**: 293 Ա չունի: 298 Գ ունի **ի հայք, ի հայս**: 305 Գ ունի **Մեսրոպ**: 306 Ա ունի **նոցունց**: Ա և Դ ունեն **իսկ՝ դպրութիւնից** առաջ: 307 Ա ունի **ի Քրիստոսէ**: 310 Գ ունի **պիղծն մոլին՝** սխալ: Ա և Դ ունեն **Եսաւ**: 311 Ա և Դ ունեն միայն **յետ**: 312 Գ ունի **առ ժամանակ մի փայլածէ**: 315 Ա և Դ չունեն: 319 Ա և Դ ունեն **ի սմայս**: 320 Գ ունի **գտանէք**: Ա ունի **նոցա**: 325 Գ չունի: 326 Ա և Դ ունեն **ասպնջական**. իմաստ չի արտահայտում: 328 Գ ունի **բուռկիր**: 329 Գ ունի **և այլ որ նման է սոցին**: 331 Գ ունի **ետ**: 333 Ա և Դ ունեն **անաղէտք էք**: 334 Գ ունի **ի ժամու**: 335 Գ ունի **եռանդմամբ**: 350 Գ ունի **ուրեմն**: 353 Գ ունի **ունիցի**: 354 Ա և Դ ունեն **պանձացեալ բարձրանայք**: 357 Գ **կանխել**, Դ **կանխեալ**: 362 Գ ունի **կարիցեմք**: 363 Գ չունի;

նրանց (նկարներին)[1], որովհետև Քրիստոսի և նրա ընտրեալների համար են (արվում)։ Ոչ թե ճարտար խոսքերից վկայություն պիտի բերենք, այլ գրքերի վկայությամբ պիտի խոսենք, ինչպես ստուգապես սովորեցրին մեզ պատվիրանների մեկնողները։ Որովհետև նախ Մովսե՛սը պատկերների օրինակը շինեց խորանի վրա, Աստծու հրամանով, երկու ոսկյա, մարդակերպ, թևավոր ու ճախրող քերովբեներ[2] քավության (խորանի) վրա, որի միջից խոսում էր տերերի Տերը։ Նույնը Առաքեալը վկայաբերելով հաստատում է. «Փառքի քերովբեները հովանի էին քավության վրա», որը մեծ խորհուրդի օրինակ էր։ Նույնպես և վարագույրը, որ Տերը պատվիրեց պատրաստել նարոտով, նկարներով և զանազան ձեռագործ զարդերով[3], բեհեզյա, ծիրանի, կարմիր և կապույտ։ Դեղ չէի՞ն արդյոք վարագույրի նկարների երանգները, իսկ նկարները՝ քերովբեներ։ Այնպես արեց նաև Սողոմոնը Տաճարում։ Կիպարիս[4] փայտից քերովբեներ պատրաստեց և ոսկով պատեց։ Բայց ոչ միայն դաբիրում[5] քերովբեներ կային, այլև պատերի վրա, դրներում և շեմքերին։ Պատերի վրա գրիչով շուրջանակի գծեց քերովբեներ, արմավենիներ[6] և թռչող թերթիկներ, բայց Աստված չհանդիմանեց այլ տաճարը Իր անունով կոչեց։ Եվ հոգեկիր Եզեկիել մարգարեն, տեսիլքը[7], որ տեսավ մարգարեներից և պատգամախոսներից ոչ մեկի նման այլ աստվածատես գուշակումով ասաց. «Տերը ինձ դրեց մի շատ բարձր լեռան վրա, ուր քաղաքի կառույցներ կային։ Ինձ տարավ ներս և նրա մեջ տեսա մի տաճար, որի մեջ կար մի աղեղ և զարմանալի մարդ, որից փայլատակումներ էին ցայտում կարծես պղնձից, կանգնած էր դրան վրա և ձեռքում ուներ որմնադրի լար ու չափաձող։ Ինձ ասաց. «Մարդու որդի, տե՛ս և հիշի՛ր այն ամենը ինչ կա այստեղ, որովհետև քեզ ցույց տալու համար եկա»։ Եվ տեսա Տաճարը շուրջանակի նկարված՝ ներսից և դրսից քերովբեներ, արմավենիներ հատակից մինչև առաստաղ։ Բայց ոչ միայն Տաճարն էր նկարված, այլև պատշգամբներն ու դռները և Տիրոջ սեղանը։ Քերովբեները մարդակերպ էին, երկուս-երկուս և նրանց միջև արմավենի։ (Այս բոլորը) նրա մեծ սքանչելիքների ապացույցն է»[8]։

Արդ, ինչ կասես սրա համար, ո՛վ մարդ, որ մտքով հիվանդ ես, որովհետև Մովսեսի և Սողոմոնի հորինածների և քերովբեների համար ասացիր, որ ձեռագործ են. իսկ սա ինչ կհամարես, որ Աստված ինքն է ցույց տվել։ Ահա պարզ է, որ սկզբից պատկերները Աստվածության փառքի պատվի և երկրպագության սպասավորության համար էին։

Այսքանը Հին Կտակարանից ասված։

Իսկ Նոր Կտակարանում Պողոսը ասում է աթենացիներին. «Շրջելով և տեսնելով ձեր պաշտամունքը, գտա մի բագին, որի վրա գրված էր «Անծանոթ Աստծուն»։ Ում դուք առանց ճանաչելու եք պաշտում, ես ձեզ նույնն եմ քարոզում»[9]։ Մի՞թե բագինը աստված էր. բայց որովհետև հանուն աստծու էին պատվում, Պողոսն էլ նույնը վկայեց։ Իսկ մենք ոչ թե ճշմարիտ Աստված ենք ճանաչում պատկերներն[10] ու նկարները այլ աստծու անունով ենք նկարում, ինչպես երևեցավ մեզ. Եսային խոսում է Նրա ծննդյան մասին, Երեմիան՝ մարդկանց մեջ շրջելու, Դավիթը՝ չարչարանքների և թաղման, Եզեկիելն ու Ովսանն՝ հարության, Դանիելն ու Զաքարիան՝ երկրորդ գալըստյան, Նավումն ու Մաղաքիան՝ դատաստանի մասին։ Եվ որովհետև նրանք նշաններով պատմեցին մեզ, (որոշ բաներ) եղան, (ուրիշներ) կկատարվեն։ Իսկ մենք նկարում ենք այն, ինչ գրված է գրքերում, որովհետև գիրն էլ դեղ է ինչպես պատկերների նյութը։

Եկեղեցու վարդապետներն էլ խոսում են պատկերների մասին։ Ինչպես Հովհաննես Կ. Պոլսի եպիսկոպոսը՝ այն ճառում, ուր խոսում է լուսավորչականներին[11], մի փոքր առաջ գնալով ասում է. «Օրինակ, թագավորական պղնձյա արձանները անշունչ են և անզգա, բայց նրանց ապավինող մարդիկ փրկվում են, ոչ թե պղինձն է (փրկում), այլ որովհետև թագավորինն է»։ Եվ դու, հերետիկոս, այսպես իմացիր։ Եվ դարձյալ այն ճառում, ուր ասում է «Պետք չէ զանց առնել աստվածային Գիրքը», շարունակում է. «Զե՞ք տեսնում թագավորական նկարների վրա, որ վերևում պատկերն է, ուր թագավորը ստորագրել է, իսկ ներքևում, խարիսխի վրա գրված են թագավորի պատերազմները, հաղթանակներն ու կյանքի դեպքերը։ Նույնպես և գրքերի վրա կարելի է տեսնել թագավորի պատկերը, իսկ վերևում և ներքևում բոլոր բաջությունները ու հաղթանակները»։

Կամ ինչ կասես արդյոք Տիրոջ այն նկարի մասին, որ Աբգար թագավորի հավատարիմ՝ Անանը նկարեց Քրիստոսի դեմ հանդիմանելով, որ այժմ մնում է, ասում են, Ուռհայի եկեղեցում։

Սևերիանոս եպիսկոպոսը ասում է. «Օրինակ, երբ թագավորը բացակա է, նրա պատկերն է գրավում տեղը և իշխանները երկրպագում են նրան, ամենա տոները կատարում։ Պետերն ու ռամիկները երկրպագում են ոչ թե տախտակին նայելով, այլ թագավորի պատկերին, ոչ թե նյութին են նայում, այլ գրով այնտեղ որոշվածին։ Իսկ եթե մահկանացու թագավորի պատկերը այդքան է մեծարվում, որքա՞ն ավելի պետք է մեծարվի անմահ թագավորի կերպարանքն ու պատկերը»։ Լսի՛ր, ինչ որ ասում են, որովհետև սրանք էլ եկեղեցու վարդապետներ էին, որոնց գրքերը էլ, եթե ուզենաս կարդալ, նույնը կպատմեն։ Այսպես. Հայոց սուրբ Գրիգոր Լուսավորիչը ասում է

1 Բնագրում չկա **նկարներ** բառը։

2 Աստծուն ուղեկցող հրեշտակներ։

3 Ելից ԻԶ. 31, ԼԶ. 8 և 35։

4 **Նոճի։**

5 **Սրբություն սրբոց վայր, խոստովանավայր** (Աճառյան Արմատական բառարան)։

6 Գ. Թագավորաց Զ. 23—35։

7 Ա ձեռագիրը ունի լուսանցքում. Եզեկիել 40.2։

8 Եզեկիել Խ. 2—4 և ԽԱ. 18—20։

9 Գործք Առաքելոց ԺԷ. 23։

10 Հավանաբար ունի որմնանկար իմաստը։

11 Նկատի ունի նոր մկրտված քրիստոնյաներին։

իր աղոթքներում. «Փորագրված փայտերի փոխարեն իր խաչը կանգնեցրեց տիեզերքում, և որովհետև մարդիկ սովոր էին երկրպագել մահացածների պատկերներին, Ինքը մեռածի պատկեր դարձավ խաչի վրա: Մեռավ և անշնչացավ, որպեսզի հաստատեն խաչափայտին երկրպագելը, նրա վրա գտնվող պատկերին կամ մարդադեմքին, որպեսզի պատկերագործներին, պատկերասերներին և պատկերապաշտներին իր աստվածության պատկերին հնազանդեցնի»[12]:

Իսկ եթե մեր խոսքերին չեք հավատում, պետք է գրքերը քննել և վերահասու լինել. սակայն դուք գրքերից այնքան հեռու եք, որքան երկինքը երկրից: Բազմաթիվ այլ վկայություններ կան Ս. Գրքից: Ամեն ինչ տեսանելի է նրանց, ովքեր միտք ունեն: Ականջները լսում են և մտքերը ըմբռնում. առանց մտքի աչքերին՝ մարմնի աչքերը կույր են: Բայց զարմանալին այն է, որ պատգամը ընդունում եք, իսկ իշխանին հալածում, նշանին երկրպագում եք, իսկ թագավորին քարկոծում, խաչը պատվում եք ու Խաչյալին թշնամանում: Այսպես. մանիքեականներն ու մարկիոնականները առ աչոք են համարում Փրկչի ճշմարտապես մարմնանալը, բայց երբ տեսնում են պատկերները, սաստիկ զայրացած, դժկամակում են և մոտենալով թշնամանում: Եթե մենք մարգարեներին չենք տեսել ու քննել, որ նրանք կռապաշտության համար էին ասում, թե հեթանոսների կուռքերը դևեր են[13], սակայն ոչ մի տեղ գրված չենք գտնում, որ ասեն թե եկեղեցու կամ քրիստոնյաների պատկերները դև են, այլ՝ մարգարեները կուռքերին էին դատապարտում: Եկեղեցական պատմության մեջ էլ նույնն է ասվում, ինչպես Եվսեբիոս ժամանակագիրը հաստատում է 7-րդ գլխի 17-րդ դպրության մեջ, ուր խոսում է Փրկչի մեծամեծ գործերի հրաշալի նշանների մասին, որոնք կատարվեցին Պենեադա քաղաքում: «Բայց որովհետև այս քաղաքը հիշեցինք—ավելացնում է—չարժե զանց առնել սրա պատմությունը (որովհետև հիշվելու արժանի է նրանց կողմից, որոնք պիտի գան մեզնից հետո) տեռատես կնոջ մասին, որի արյան բղխումը հոսում էր, ինչպես ուսանում ենք սուրբ Ավետարանից, և բժշկվեց իր այդ ցավերից մեր Փրկչի կողմից այն քաղաքում, որտեղ, ասում են, ապրում էր նա: Եվ նրա տունը հայտնի է այդ քաղաքում իբրև գրավական Աստծու հրաշքների, նշան՝ այն ողորմության շնորհքներին որ կատարվեցին կնոջ վրա: Նրա տան դռների առաջ մի բարձր քարի վրա կա պղնձյա քանդակը ծունկի իջած կնոջ, որը ձեռքերը առաջ մեկնած աղաչում է նրա նման: Դրա դիմաց կա տղամարդու պղնձակերտ արձան, որ կանգնած է, մեկնոց ունի գցած, ձեռքը կարկառել է դեպի կինը: Իսկ սրա ոտքերի կողմից, զգեստից բարձր, մի բուսարմատ է աճել, որ իր տեսքով տարբեր է բոլոր արմատներից ու բարձրանում է մինչև գոտկատեղը. սա դեղ է բոլոր ցավերին: Այս արձանը մեր Փրկչի նմանությունն է, ինչպես ասում են, և կանգուն է մինչև մեր օրերը. մենք էլ այն տեսանք մեր աչքերով, երբ գնացինք այդ քաղաքը»: Բայց սա ոչնչով մեծ չէ քան այն, որ հեթանոսներից մարդիկ հավատացին Քրիստոսին և դեղով նկարեցին Պողոսին, Պետրոսին և նույնիսկ իրեն՝ Քրիստոսին, և մնում է մինչև այսօր:

Արդ չե՞ք տեսել այդ գրքերը, ով ընկեր, որ հակառակում եք Աստծու պատվիրաններին: Ընկեր եմ ասում ոչ թե հավատքի ուղղափառության համար, այլ այն բանի համար որ լավեց մեր Հիսուս Քրիստոսից թե «Ընկեր, **ինչի համար եկար**»: Որովհետև եթե ընթերցել եք ու չգիտեք, ապա ձեզ համար ասված կլինի առաքյալի խոսքը, որ ասում է. «Աստված կուրացրեց այս աշխարհի անհավատների միտքը, որպեսզի նրանց մեջ չծագի Քրիստոսի փառքի Ավետարանի լույսը»[14], և այլ բաներ: Իսկ եթե չեք կարդացել, պետք է փնտրել, քննել ու իմանալ բարին ու չարը, տարբերել աստվածայինն ու դիվականը:

Եվ ինչու չգիտեք, որ կուռքերի մեհյաններում քանդակված է Որմիզդը՝ Արամազդը, և իր պոռնկությունները ու կախարդությունները, իսկ Աստծու եկեղեցիներում նկարված ենք տեսնում սուրբ Կույս Աստվածածնին՝ իր գրկի մեջ ունենալով Քրիստոսին, որպես և՛ իր արարիչը և՛ իր որդին և՛ բոլորի ստեղծիչը: Կուռքերի մեհյաններում Անահիտն է իր պղծություններով ու պատրանքներով: Իսկ քրիստոնյաների եկեղեցիներում և Աստծու վկաների հարկերում նկարված ենք տեսնում ս. Գրիգորին իր աստվածահաճո չարչարանքներով ու սուրբ առաքինություններով, ս. Ստեփաննոս Նախավկային՝ իրեն քարկոծողների մեջ, երանելի և սուրբ կանանց՝ Գայանեին և Հռիփսիմեին իրենց հաղթական նահատակությամբ և սուրբ ընկերներով, ուրիշ առաքինիների, պատվականների և հրեշտակակրոնների, որ չենք կարող թվել այստեղ: Կուռքերի մեհյաններում կան Աստղիկն ու Ափրոդիտեն, որին ցանկությունների մայր են անվանում բոլոր հեթանոսները, նրանց արբեցությունն ու անառակությունները, իսկ Աստծու եկեղեցիներում տերունական խաչը և առաքյալների ու մարգարեների խաչակիր գնդերը, որոնք վերացրին ամբողջ կռապաշտությունը մեջտեղից և տիեզերքը բերին դեպի աստվածապաշտություն՝ ամաչացնելով սատանային և իր զորքերին: Աստծու եկեղեցիներում նկարված ենք տեսնում Քրիստոսի (կատարած) բոլոր սքանչելագործությունները, ինչպես Գրքերում է գրված, ինչ որ նախապես ասացինք, թե մարգարեները մեզ գուշակեցին ծնունդը, մկրտությունը, չարչարանքները, խաչելությունը, թաղումը, հարությունը և երկինք համբառնալը: Եկեղեցիներում նկարում են այս բոլորը, ինչ որ Սուրբ Գիրքն է պատմում: Դեղով չե՞ն գրված գրքերը. նույն բանն էլ դեղով նկարված է եկեղեցիներում: Գրքերից միայն ականջներն են լսում, իսկ նկարները աչքով են տեսնում, ականջներով լսում և սրտով հավատում: Ահա պարզ է, որ Գրքերից շեղում չէ պատկերների պաշտամունքը: Եթե որևէ մեկը (խորը) քննի, ճշմարտության կհասնի, իսկ հերետիկոսները սխալվում են հակաճառելով. «Նրա համար

12 Ագաթանգեղոս, «Հայոց Պատմութիւն», Վենետիկ, 1930, էջ 67—68:

13 Հիշեցնում է 96-րդ Սաղմոսի 5-րդ համարը:

14 Բ Կորնթացւոց Դ. 4:

ենք խոտան համարում (նկարները), որովհետև անխոս են և անշունչ»: Բայց մի՞թե Աստծու տապանակը խոսում էր երբ բերանսիվայր կործանեց Դագովնը, Ազովտան, Գեթը, և այլազգիների քաղաք Ասկողովնան այնքան հարվածեց, մինչև որ ասկողովնացիք բողոքեցին ասելով. «Ինչու Իսրայելի աստծու տապանակը (վերա) դարձավ մեզ ապանելու համար, մեզ և մեր ժողովրդին»[15]: Միթե Քրիստոսի խաչը, որ հրեշտակների պարծանքն է, մարդկանց փրկությունը և դևերի սարսափը, խոսեց, երբ քաղաքում կենդանացրեց մեռյալներին և մինչև մեր օրերը կատարել է բազմաթիվ հրաշագործություններ:

Ահա նոր պատվիրանները շարվում են հների ետևից և մեզ պատմում Քրիստոսի շնորհի մասին: Ավետարանի տուփերն էլ նկարված ենք տեսնում, ոչ միայն ոսկուց ու արծաթից պատրաստված, այլև փղերի ոսկորներից և կարմիր կաշուց: Իսկ մենք, երբ երկրպագում ենք սուրբ Ավետարանին կամ համբուրում, ոչ թե փղի ոսկորներին ենք երկրպագություն մատուցում կամ լայքային[16], որ բարբարոսների երկրից է վաճառքի բերվում, այլ Փրկչի խոսքին, որ գրված է մագաղաթի վրա: Միշտ նույնպես, երբ Փառաց Տերը ավանակի վրա նստած մոտեցավ քաղաքին, նրան ընդառաջ ելան ծերերն ու մանուկները ձիթենու և արմավենու ոստերով. օրհնում էին, գովաբանում և երկրպագում: Ոչ թե էշին էին երկրպագում, այլ Քրիստոսին՝ Աստծու Որդուն, որ նրա վրա էր նստած: Այսպես էլ պատկերներին երկրպագելը ոչ թե դեղերի համար է, այլ Քրիստոսի համար, որի անունով նկարված են: Արդ, աստվածային պատկերների նմանությունը ինչ է հեթանոսների պղծության հետ, որի համար հերետիկոսները բծեր են կարկատում և հերձված մտցնում անձերի և բոլոր լսողների կորստի համար: Իրենց բոլոր կամակիցներով ու գործակիցներով վրեժ պիտի գտնեն տանջանքների դրժոխքում: Այսպիսիների մասին դիպուկ է ասել Ովսեե երջանիկ մարգարեն. «Գայթակղության որոգայթները նրանց ճանապարհին են, որովհետև մոլություն տընկեցին Աստծու տան մեջ»[17], իսկ մի այլ տեղ՝ «Վայ նրան ով ընկերոջը զգլխում է պղտոր հրապույրներով»[18]: Եվ իսկապես. մեղքերի հրապույրներով ու որոգայթներով են պատված նրանք, որոնք տատանվում են ուղիղ հավատի մեջ և շեղվելով տապալվում ուղիղ խորհրդից: Բայց կխոսեմ և չեմ լռի: Օրինակ, եթե մեկը որևէ գիրք որոնի արկղներում և ասի **առաքյալը տուր** կամ **Եսային** կամ **Երեմիան**, մի՞թե Եսայուն է խնդրում կամ առաքյալին, թե նրանց գրքերում գտնվող աստվածային պատգամներն ու խոսքերը: Իսկ մենք պատկերներով հիշում ենք նրանց և նրանց առաքողներին, և չենք ասում թե սա (նկարը) Աստված է, այլ Աստծու և նրա ծառաների հիշեցնողը:

Իսկ որ գրված է թե Պապը եկեղեցի մտցրեց նկարները[19], բոլորին հայտնի է, որ սուտ եք խոսում, որովհետև Հայաստանում ոչ ոք նկարել չգիտեր մինչև հիմա, այլ հոռոմներից (հույներից) էին բերում, ինչպես մեր ուսումն էր այնտեղից, երբ դեռ նրանք չէին մոլորվել: Ե՛վ Պապից առաջ ուրիշ թագավորներ կային, որոնք պատկերներ ու նկարներ էին դնում եկեղեցում Քրիստոսի անունով, և՛ Պապից հետո ուրիշ թագավորներ եղան Հայաստանում և հայրապետներ՝ ինչպես երանելի ս. Սահակն ու Մաշտոցը, Եզնիկը, Արծանը, Կորյունը և նրանց ընկերները, որոնց միջոցով իսկ Աստված դպրություն շնորհեց հայերին:

Բայց նրանցից ոչ մեկը եկեղեցու պատկերների ու նկարների դեմ որևէ բան չգրեց, այլ միայն Շմուլը, Թադեոսն ու Եսային և նրանց ընկերները, որոնք շատերին իրենց հետ շեղեցին (ուղիղ ճանապարհից) ինչպես և ձեզ: Թեև ժամանակավորապես հերձվածողների կողմը փայլում է, սակայն, անմիջապես խամրում է, որովհետև սուտ են խոսում, իսկ առաջին մեղքերը ստելուց ծնվեցին, ինչպես Ադամի մոտ: Այս խոսքերը իմը չեն, այլ Սուրբ Գրքերինը՝ Հին և Նոր Կտակարաններինը: Եթե ուզում եք Քրիստոսին ծառայել ու սիրել նրա պատվիրանները, նույն գրքերը, որոնց անունը այստեղ գրված է, որոնեցեք, և երբ գտնեք, նրանք ձեզ Աստծու ճշմարիտ ճանապարհը ցույց կտան:

Նկարների մասին այնքանն էլ բավական է նրանց, ովքեր խելք ունեն:

Իսկ դեղերի մասին, որ ասում են թե պիղծ են, հանդիմանվում են իրենց իսկ բերանով, որովհետև գրքերի դեղն է արջասպ, գաղտոր և կոհլ, որ կարելի է ուտել նույնիսկ, իսկ պատկերների նյութն է կաթ, ձու, զառիկ, լաժվարդ, ծանգաղ, բուս, կիր և այլ բաներ, որոնց մի մասը կարելի է ուտել որպես կերակուր, կամ բժշկման համար գործածել: Բայց պիղծ չենք համարում այն, որ Աստված տվեց երկրի վայելչության համար, և իրրև զգալելի բան չենք արհամարհում, երբ ասում եք թե հոտ է գալիս դեղերից: Իսկ եթե այդքան անաղտ եք և հոգևոր, պետք է աղոթքի ժամին պատռեք ձեր որովայնները, եռացրած ջրով լվաք ձեր աղիքները և հետո միայն մտնեք եկեղեցի, ո՛վ չար և անչափ չարեր, որ մերթ դեղերն եք պատճառ բռնում և մերթ՝ պատկերներն ու նկարները, և ասում եք, որ ձեռագործ են ու մեզ ոչ արժանի նաև: Եկեղեցիներն են ձեռագործ և կոչվում են Աստծու Տաճար, ինչպես Պողոսն էր ասում Տիմոթեոսին. «Որպեսզի իմանաս, ասում է, որ ինչպես

---

15 Ա. Թագավորաց Ե. 10:

16 Մալխասյան բառարան—«Ոսկանային կես թափանցիկ հյութ, որ կաթի պես ծորում է ծառերից»:

17 Ովսեե Թ. 8:

18 Ամբակում Բ. 15:

19 Հավանաբար պատկերամարտները գործածել են Փ. Բյուզանդի հետևյալ խոսքերը. «Նրա (Ներսեսի) այս աշխարհից գնալուց հետո, շատ մարդիկ դարձան նախկին կռապաշտության. **Հայաստանի շատ տեղերում կուռքեր կանգնեցրին Պապ թագավորի թույլտրվությամբ, որովհետև չկար մեկը, որ հանդիմաներ, չկար մեկը, որից քաշվեին, այլ ամեն մարդ համարձակ գործում էր, ինչ որ կամենում էր. շատ արձաններ էին կանգնեցրել և նրանց երկրպագում էին»** (Փ. Բյուզանդ, Երևան, 1968, էջ 269—270):

պետք է քեզ շրջել Աստծու տանը, որ կենդանի Աստծու եկեղեցին է, ճշմարտության սյունն ու հաստատությունը»[20]: Արդ ինչ կասեք (այս մասին), որովհետև սա էլ (Տաճարը) ձեռագործ է, իսկ այդ հայտնիի միջոցով աներևույթն ենք ճանաչում. դեղերն ու նկարները Աստծու և նրա ծառաների հիշեցնողն են: Բայց որովհետև դուք սատանայով եք տարված և ձեր անձերը սուրբ են համարում, նման եք սպիտակացրած գերեզմանների: Ուստի ճիշտ է ասել առակողը. «Շատ արդար մի լինիր և մի ճամարտակիր, որպեսզի չսխալվես»[21]: Դարձյալ ասում է. «Զար ծնունդը արդարների մոտ է փնտրում իր անձը»[22], ինչպես և դուք բարձրա(մտե)լով գոռոզանում եք և անդուր բերանով շատախոսում այն, ինչ պետք չէ:

Իսկ մենք կշտապենք մտնել Քրիստոսի եկեղեցի գիշեր ու ցերեկ կանխա(պես) աղոթելով, որպեսզի ավարտենք այս պանդխտության ժամանակը և արժանի լինենք դատաստանի օրը զվարթագին դեմքով տեսնելու Աստծուն, որպեսզի կարողանանք հասնել հավիտենական բարիին, քանի որ Նրանն է փառքը հավիտյանս հավիտենից. Ամեն»:

ԵՐՎԱՆԴ ՄԵԼՔՈՆՅԱՆ

20 Ա. Տիմոթէոս Գ. 15:
21 Ժողովող Է. 17:
22 Առակաց Լ. 12:





ԱՐՄԻՆԵ ՔՈՇԿԵՐՅԱՆ

ՄԻ ՆՈՐԱՀԱՅՏ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԳԱՆՁԱՐԱՆ

Գանձերից, տաղերից, մեղեդիներից ու հորդորակներից բաղկացած ժողովածուները, որոնք կոչվում են Գանձարան, ընդգրկում են զանազան հեղինակներ: Վերջիններս հանդես են գալիս ոչ հավասարաչափ գանձերով կամ տաղերով: Որոշ անուններ հանդիպում են բավական հաճախ, մինչդեռ ուրիշները՝ ընդամենը մի քանի նմուշներով: Օրինակ, հին շրջանի ձեռագրերում Գր. Նարեկացու, Գեորգի, Մովսեսի, Մկրտիչի, Խաչատուրի և Մխ. Այրիվանեցու գանձերը կազմում են մեծ թիվ, ընդ որում, վերջին երեքի ստեղծագործությունները շարունակում են գերակշռել նաև հետագայում: Միաժամանակ նկատելի է, որ Գանձարաններում այդ հեղինակների գանձերը կամ տաղերը ներկայացված են ոչ միայն շոշափելի քանակով, այլև՝ մասամբ պահպանված տոնական շարքով: Հետևապես, միտք է ծագում, որ առանձին անհատներ կարող էին ունեցած լինել գանձարանային ամբողջություն կազմող գանձերի կամ տաղերի խումբ: Վերևում հիշված հեղինակների մասին ձեռագրերում, այս կապակցությամբ, կան կարևոր տվյալներ, որոնք սակայն առայժմ դեռ անբավարար են և ենթակա առանձին քննության: Իսկ ինչ վերաբերում է գանձերի առաջին հեղինակ Գր. Նարեկացուն, ապա հնագույն շրջանի մի քանի Գանձարաններում պահպանված նրա գանձերի, տաղերի ու մեղեդիների փոխհարաբերությունն ու համադրությունը մեզ հանգեցրել է այն համոզման, որ այդ երկերն իրենց ստեղծման օրից, ըստ երևույթին, ունեցել են հեղինակային մի ամբողջական համակարգ[1]: Ուրեմն հավանական է, որ սկզբնական շրջանում Գանձարանները ծագած լինեին իբրև անհատական ժողովածուներ:

Հեղինակային Գանձարանների երբեմնի գոյությունը հաստատող մի շատ կարևոր փաստ է հանդիսանում Մաշտոցյան Մատենադարանի № 6527 Գանձարանը: Վերջերս մեր ուշադրությունը գրաված այս ձեռագիրը, որ բաղկացած է գանձերից, տաղերից ու հորդորակներից, հանդես է գալիս մի հեղինակի՝ **Առաքել վարդապետի անունով:** Այսպիսով, շնորհիվ նորահայտ ձեռագրի, փոխվում է Գանձարանների բնույթի մասին մինչև այժմ գոյություն ունեցող պատկերացումը և տարակույս չի մնում, որ նաև առանձին անհատներ կազմել են Գանձարան-ժողովածուներ: Նորահայտ Գանձարանը հետաքրքրական է նաև այն առումով, որ նրա հեղինակ Առաքել վարդապետը, ինչպես կտեսնենք ստորև բերված փաստերից, հանդիսանում է 15-րդ դ. բանաստեղծ **Առաքել Բաղիշեցին:** Վերջինիս գանձերի ու հոգևոր տաղերի ցանկը, շնորհիվ նշված ձեռագրի, հարստանում է մի քանի տասնյակ նոր նմուշներով, իսկ ինքը՝ Առ. Բաղիշեցին առաջին անգամ հայտնի է դառնում բանաստեղծությանը իբրև Գանձարան-ժողովածուի հեղինակ:

Մեր նպատակն է սույն հոդվածով հանգամանորեն ներկայացնել հեղինակային Գանձարանների՝ մեզ հայտնի դարձած ամբողջական և առայժմ եզակի այդ շատ կարևոր ձեռագիրը: Այդ կապակցությամբ օգտակար նյութեր են բովանդակում Մատենադարանի նաև երկու այլ Գանձարաններ (№№ 7349 և 7961), որոնց մասին խոսք կլինի իրենց տեղում:

*
* *

Նորահայտ Գանձարանը (№ 6527) ընդօրինակված է Ղուլթիկ գյուղում 1528 թ. Ստեփաննոս եպիսկոպոսի ձեռքով: Ձեռագիրը բաղկացած է 233 թերթից, գրված դեղնավուն թղթի վրա, միասյուն, ոչ գեղեցիկ բոլորգրով, առանց մանրանկարների ու զար-

[1] Նշված հարցին անդրադարձել ենք «Գրիգոր Նարեկացին և Գանձարանների սկզբնավորումը» հոդվածում, որը հանձնված է տպագրության:

դագրերի: Վերնագրերն ու սկզբնատառերը կարմիր են: Նախկինում այն բավական վնասված է եղել, սակայն հետո վերանորոգվել է՝ ու վերակազմվել և այժմ գտնվում է բարվոք վիճակում: Սկզբում կա հինգ թերթ պահպանակ. երեքը թղթյա է՝ տպագիր («Մեկնութիւն սաղմոսաց»), իսկ երկուսը մագաղաթ՝ Մատթեոսի Ավետարանից: Ձեռագիրն ունի ութ պրակ, յուրաքանչյուրը բաղկացած հազվադեպ պատահող 30 թերթից (բացի Ա, Բ, Ը պրակներից) այբբենական էջակալումով՝ կատարված, հավանաբար, հենց գրչի ձեռքով: Այդ էջակալումը, սակայն, միատեսակ չէ և ունի վրիպումներ, ուստի չի համապատասխանում թերթերի քանակին: Ձեռագիրը լրիվ է, պակասում է միայն մի քանի թերթ, որի պատճառով երեք գանձ մնում են թերի (թերթ 212ա, 213ա, 230ա): Գանձերը համարակալված են ըստ սկզբնական ցանկի, որը բովանդակում է Ա—ՂԷ գանձ: Նրանց ընդհանուր թիվը, սակայն, ոչ թե 97 է, այլ 95, որովհետև ԶԴ համարի գանձը, որն ըստ ցանկի պետք է նվիրված լիներ Մինաս, Երմոգինե և Գրաբոս սրբերին, ձեռագրի ընդօրինակության ժամանակ վրիպել է գրչի ուշադրությունից[2]: Պակասող մյուս նմուշը նվիրված է Թեոդորոս զորավարին, որից բերված է միայն վերնագիրն ու սկզբնատողը[3]: Ձեռագրի բոլոր գանձերը հանդես են գալիս Առաքել վարդապետի անունով, որը հանդիպում է խորագրերում, արտահայտված է ծայրակապով և երբեմն հիշատակված է նաև ստորին լուսանցքներում: Գանձերից մեկը միայն՝ նվիրված Աստվածածնի վերափոխման տոնին (թերթ 177բ), որն իր չափով և այլ հատկանիշներով չի տարբերվում մյուսներից, ունի **«Ներսէս»** ծայրակապ: Այն հանդիսանում է Ներսես Շնորհալու անհանգ ու խառն չափով գրված «Ներսէսի երգ» ծայրակապով համանուն գանձի մշակումն ու վերաշարադրումը՝ կատարված Գանձարանի հեղինակի կողմից[4]: Ինչ վերաբերում է ձեռագրում հանդես եկող տաղերին ու հորդորակներին, որոնց թիվը հասնում է 59-ի, ապա նրանց մեծագույն մասը՝ 42 տաղ ու հորդորակ **ունեն Առաքելի անունը հոդող ծայրակապ և կամ պահպանել են նրա անունը խորագրերում**[5]: Ձեռագրի վերջին թերթերում նոտրանման գրով, հավանաբար հետագայում, ընդօրինակված է շարականի մի հատված, ինչպես նաև Ն. Շնորհալու «Աշխարհ Ամենայն»-ը, և վերջապես գալիս է № 6527 ձեռագրի գրչի հիշատակարանը, որը բերում ենք ստորև փոքր կրճատումներով.

«Գրեցաւ Գանձարանս յիշատակ Նուբարին և Էլատին... որ գնեցին զԳանձարանս և տուին ի գեօղն ի Ղուլթիկ ի դուռն սուրբ Գէորգեայ զօրավարին և սուրբ Յունանին և սուրբ Յովանիսին... ձեռամբ տէր Մկրտչին և տէր Մէլքէսեթին, որ հանապազ կարդան ն Աստուած ողորմի ասեն Էլատին և կնոջն Նուբարին...:

Զգանձս հարցնատես արարէք և ասէք, որ ի յԱռաքել վարդապետի սուրբ աղօթից և ի յաւուր տօնի սրբոցն մասնակից լինիք և վարձք առնուք ի յԱստուծոյ և ի սրբոցն, ամէն:

Դարձեալ յիշեցէք... Էլատի քուրոջն Սաֆին, որ կամակից եղև գրոցս առնելոյն... չկայ հրամանք, որ գիրքս ելանէ ի գեղէն Ղուլթկայ, այլ կենայ ի սուրբ եկեղեցոյ դուռն ի սուրբ Գէորգեայ զօրավարին» (թերթ 232բ—233բ):

№ 6527 Գանձարանում գտնվող նյութերը, ինչպես արդեն նշվեց, հանդես են գալիս Առաքել վարդապետի անունով և ձեռագիրն այսպիսով ներկայանում է իբրև անհատական մի ժողովածու: Այդ է ապացուցում վերոնշյալ հիշատակարանի **«ի յԱռաքել վարդապետի սուրբ աղօթից և ի յաւուր տօնի սրբոցն մասնակից լինիք»** պարբերությունը: Նշված ձեռագրի հեղինակային Գանձարան լինելու օգտին են վկայում նաև որոշ տվյալներ կապված գանձերի ու տաղերի հետ:

Ամենից առաջ նկատելի է այդ ստեղծագործությունների ծայրակապերի ընդհանուր նմանությունը: Ծայրակապով են հանդես գալիս բոլոր գանձերն անխտիր (95 նմուշ), ինչպես նաև տաղերի ու հորդորակների մեծագույն մասը (40 նմուշ), ընդ որում, հիմնականում, արտահայտված հեղինակի անունով: Օրինակ՝ գանձերից 44-ը հոդում են պարզապես **«Առաքել», «Առաքելի», «Առաքելի է», «Այս յԱռաքելէ», «Առաքել վարդապետի», «Այս բան յԱռաքելէ»** և նման այլ ձևեր են օգտագործված ինչպես գանձերի, այնպես էլ տաղերի ու հորդորակների համար: Ձեռագրում կան նաև իմաստային ծայրակապ ունեցող 13 գանձ և 7 տաղ[6]: Գանձերի և ավելի հաճախ տաղերի համար օգտագործվող ծայրակապի այս ձևը, որն ընդհանրապես արտացոլում է համապատասխան ստեղծագործության բովանդակությունը, նշված ձեռագրում հաճախ հանդես է գալիս զուգորդված հեղինակի անվան հետ: Այսպես, օրինակ. **«Առաքելի է ի յարութիւն Ղազարու», «Մարգարէից է ի յԱռաքելէ երգ», «Վեց աւուր յԱռաքելէ», «Այս գանձ Վարագայ խաչին յԱռաքել վարդապետէ», «Այս յԱռա-**

---

[2] Ձեռագրում գանձերից յուրաքանչյուրի համար գրիչը համապատասխան էջի ստորին լուսանցքում ունի ստուգման հատուկ նշան՝ ◯, որը ԶԴ համարի վերոնշյալ գանձի համար նշանակված է խաչով՝ ⊕ Այդ նշանակում է, որ գրիչը ստուգել և նկատել է իր վրիպումը:

[3] Նշված գանձի վերնագրին կից կարդում ենք **«գրած է»** բառերը, որոնք թերևս ցույց են տալիս, թե ձեռագրի նախօրինակում էլ «գրած է» եղել հենց այդքան:

[4] Ակնբախ է երկու գանձերի նմանությունը մանավանդ տների սկզբնատողերում, որոնք գրեթե միատեսակ են. Նորահրաշական տօնիս կուսական..., Երրեաբուն էին..., Բամեալ միայնոյ... և այլ նման բառերով են սկսվում տները ինչպես Ն. Շնորհալու մոտ, այնպես էլ նորահայտ Գանձարանի նշված գանձում:

[5] Ծննդյան տոնին նվիրված մի տաղ ունի «Յովանէս» ծայրակապ, այդ մասին խոսք կլինի հետո:

[6] Ձեռագրում կա նաև մի տաղ, որն իր սկզբնատողերով հոդում է այբուբենի տառերը՝ Ա—Ք:

քել վարդապետէ ասացեալ բան առ Թումայ առաքեալն» և այլն:

Ձեռագրում կան տաղ ու հորդորակի մի քանի նմուշներ, որոնք հանդիպանում են միևնույն ստեղծագործության առանձին մասերը: Գանձարաններում տաղերի, մեղեդիների ու հորդորակների (հաղվադեպ նաև գանձերի) նման մասնատում հաճախ է նկատվում, երբ նրանք անջատաբար հանդես են գալիս այլ հեղինակների ստեղծագործությունների հետ, տեղիք տալով շփոթության: Նորահայտ Գանձարանում այդ ինքնուրույն հատվածները ներկայացված են միմյանց կից՝ իբրև տաղ ու հորդորակ և շնորհիվ իրենց չընդմիջվող ծայրակապի, կրկին անգամ հաստատում են, որ այդ երկերը կազմում են հեղինակային մի ամբողջություն: Օրինակ, հետևյալ ծայրակապերի ընդգծված մասերը վերաբերում են տաղերին, իսկ չընդգծվածները՝ հորդորակներին.

«Այս յԱռաքել վարդապետէ», **«ի յԱռաքելէ** վարդապետին երգ բան», **«Առաքել վարդապետի** է ի գալուստ հոգոյն», **«Առաքել վարդապետի** է կուսանաց»:

Նորահայտ ձեռագրի գանձերը, տաղերն ու հորդորակներն ունեն Գանձարանի **հեղինակային** բնույթը հաստատող նաև այլ հատկանիշներ, ինչպես օրինակ՝ գանձերի մեծագույն մասի համար կիրառվող միատեսակ չափը[7], որոշ նույնանման բառերի ստեպ գործածությունը և գանձը կամ տաղը հաճախ միանման տողերով ավարտելու սովորությունը, երբ գրեթե միշտ հանդիպում են «եկայք ձայնին», «աւրհնեալ Հեկայք» և նման արտահայտություններ:

Նշված Գանձարանի անհատական էությամբ կարող է բացատրվել մասամբ նաև այն, որ այստեղ **չկան մեղեդիներ,** որոնք լինում են սովորական Գանձարաններում, այլ կան միայն գանձեր, տաղեր ու հորդորակներ: Բացի այդ, խիստ սահմանափակ է յուրաքանչյուր գանձի կից հանդես եկող տաղերի ու հորդորակների թիվը. ընդ որում, գանձերի մեծ մասից յուրաքանչյուրն ունի համապատասխան մեկ տաղ ու մեկ հորդորակ և կամ ընդհանրապես զուրկ է դրանցից, մինչդեռ Գանձարաններում դրանք առհասարակ կազմում են մեծ թիվ:

Հեղինակային № 6527 Գանձարանը, որն առայժմ մեզ հայտնի է նշված միակ օրինակով, բնականաբար, ունեցել է նաև այլ ընդօրինակություններ, որոնք եթե ոչ ամբողջապես, գեթ հատվածաբար կարող են հանդիպել զանազան ձեռագրերում: Այս տեսակետից ուշագրավ է Մատենադարանի № 7349 Գանձարանը, որն ընդօրինակվել է 1757—1761 թթ. Կարինում: Այստեղ, այլ հեղինակների կողքին հանդես եկող Առաքել վարդապետի ստեղծագործություններից 27 գանձ և 13 տաղ ու հորդորակ համապատասխանում են հեղինակային նորահայտ № 6527 Գանձարանի նյութերին և նման են ինչպես իրենց դասավորությամբ, այնպես էլ գանձ ու տաղ և կամ գանձ, տաղ ու հորդորակ միասնական ամբողջությամբ: Այսպիսով, 18-րդ դ., այդ ձեռագրով տեսնում ենք անհատական Գանձարանի բեկորներ, որոնք պահպանվել են, հավանաբար, մի այնպիսի օրինակից, որի նախատիպը հանդիսացել է № 6527 Գանձարանը: Ուշադրության է արժանի Մատենադարանում պահվող նաև մի այլ Գանձարան՝ № 7961, որն ընդօրինակվել է 1489 թ. Բալուի Նեխորի գյուղում: Ձեռագիրն սկզբից թերի է, սկսվում է 38-րդ գանձից: Նյութերի իր դասավորությամբ այն շատ նման է Առաքել վարդապետի վերոհիշյալ № 6527 հեղինակային Գանձարանին և, ինչպես երևում է գանձերին կից գտնվող համարներից, ընդգրկել է մոտավորապես նույնքան գանձ և թերևս մի քիչ ավելի տաղ ու հորդորակ: Առաքել վարդապետի գանձերն այստեղ մյուս հեղինակների համեմատությամբ ունեն թվական նկատելի գերակշռություն: Նրա անունով հանդես են գալիս 26 գանձ, մինչդեռ Գրիգորի անունով՝ 13, իսկ ուրիշ հեղինակներ ներկայացված են շատ ավելի քիչ նմուշներով: Տաղերի հարցում, ծայրակապի հաճախակի բացակայության պատճառով, դժվար է նման հաշվառում կատարել, սակայն այստեղ ևս Առաքել վարդապետի անունը հանդիպում է բավական հաճախ (14 տաղ): Առաքել վարդապետի նշված 26 գանձերից 23-ը, ինչպես նաև տաղերից 7-ը առկա են հեղինակի անհատական Գանձարանում: Սրանք կարող էին դիտվել իբրև այդ ժողովածուից արտածված նմուշներ, բայց մեր կարծիքով պետք է լինեն հեղինակի ավելի վաղ շրջանի երկերը, որոնց հիման վրա նա հետագայում ստեղծել է իր Գանձարան-ժողովածուն: Այսպես ենք ենթադրում հատկապես այն պատճառով, որ № 7961 ձեռագիրն իր գրության ժամանակով, ինչպես նաև կառուցվածքով լինելով նորահայտ Գանձարանին շատ մոտ կանգնած մի ձեռագիր, նրանում հանդես եկող գանձերի ու տաղերի վերոնշյալ փունջը, բնականաբար, պետք է ներկայանար առավել ամբողջական ու կուտ տեսքով: Սակայն էականն այստեղ ոչ թե այն է, որ տվյալ ձեռագրում գտնվող ստեղծագործությունների այս խումբը հաջորդել կամ նախորդել է հեղինակի Գանձարան-ժողովածուին, այլ այն, որ նրա, ինչպես նաև № 7394 ձեռագրի միջոցով մի անգամ ևս հաստատվում է նորահայտ № 6527 Գանձարանի հեղինակային միասնականությունը: Մնում է որոշել, թե ո՞վ է նրա հեղինակ Առաքել վարդապետը:

№ 6527 Գանձարանը, որի ընդօրինակությունն, ինչպես գիտենք, կատարված է 1528 թ., պիտի կազմված լինի 15-րդ դ. ապրած մի հեղինակի կողմից, որովհետև ավելի վաղ շրջանի ձեռագրերում Առաքելի անունով գանձեր չեն հանդիպում: Բանասիրու-

[7] Գանձերի համար օգտագործված հիմնական չափն է յամբ-անապեստյան 9 վանկանի (երկու հատածով՝ 4+5) չափը, իսկ ութ գանձ ունեն յամբ-անապեստյան 5 վանկանի չափ: Նշված երկու չափերը հանդես են գալիս նաև միասին, միևնույն գանձում: Այդպիսիք ձեռագրում երեքն են, որոնցից երկուսի մոտ չափը փոխվում է մեջընդմեջ տներով, իսկ երրորդը կեսից՝ յոթերորդ տնից: Այս տան լուսանցքում կարդում ենք **«փոխէ զձայնն»** բառերը: Նշանակում է, տարբեր չափերի կիրառությունը կարող էր պայմանավորված լինել նաև տվյալ ստեղծագործության եղանակային (երաժշտական) փոփոխություններով:

թյանը հայտնի են 15-րդ դ. երկու Առաքելներ՝ Սյունեցի և Բաղիշեցի, որոնք հաճախ շփոթվել են միմյանց հետ և մեկի ստեղծագործությունը սխալմամբ վերագրվել է մյուսին: Նշված ձեռագրի հեղինակը որոշելու հարցում Առ. Սյունեցու և Առ. Բաղիշեցու կապակցությամբ առաջ եկած երկընտրանքին վերջ է տրվում այն պարզ պատճառով, որ անվիճելիորեն Առ. Սյունեցունը համարվող ստեղծագործություններից ոչ մեկը քննվող № 6527 ձեռագրում չի հանդիպում[8], մինչդեռ շատ փաստեր Առ. Բաղիշեցու օգտին են խոսում:

Ձեռագրական տվյալների հիման վրա մինչև այժմ Առ. Բաղիշեցու անունով հայտնի են եղել ավելի քան մեկ տասնյակ գանձեր ու ավելի մեծ թվով տաղեր: Նշված ստեղծագործությունների ցանկը բերված է Մաշտոցյան Մատենադարանի մատենագիտական ցուցակներում (անտիպ), Հ. Անասյանի գրքում[9], ինչպես նաև Ս. Ղազինյանի Առ. Բաղիշեցուն նվիրված մենագրության մեջ[10]: Առ. Բաղիշեցու գանձերի ու տաղերի մասին եղել են ակնարկներ նաև բանասերների կողմից: Օրինակ՝ Ղ. Փիրղալեմյանն ասում է. «...Առաքել վարդապետ Բաղիշեցի երգիչն, որ ունի բազում գանձս ասացեալ»[11]: Մ. Պոտուրյանը Առ. Սյունեցուն նվիրված իր աշխատության մեջ գրում է, որ Վենետիկի ձեռագրական հավաքածուի № 604 Գանձարանը ընդօրինակված 1488 թ., բովանդակում է «Բաղիշեցւոյ ընծայելի շատ մը գանձեր»[12]: Առ. Բաղիշեցու ոչ միայն գանձերի, այլև տաղերի նմուշներ են հանդես գալիս նույն հավաքածուի № 651 (ԺԶ դ.) Գանձարանում[13]: Զգիտենք, սակայն, թե քանիսն են և կամ որոնք են այդ գանձերն ու տաղերը: Այն գանձերը, որոնք մեզ հայտնի են վերեվում նշված ցուցակներից և անվերապահորեն համարվում են Առ. Բաղիշեցունը, № 6527 ձեռագրում մեծ մասամբ կան: Այստեղ առկա են նաև գանձեր, որոնք ընդհանրապես հանդիպում են լոկ Առաքել անունով, իսկ եթե որոշ ձեռագրերում պատահում են հեղինակային լրացուցիչ նշումներ, ապա դրանք դարձյալ Առաքել Բաղիշեցու անունով են: Այս հանգամանքն էլ հանդիսանում է նշված Գանձարանը Առ. Բաղիշեցունը համարելու առաջին և գլխավոր կողմը: Ինչ վերաբերում է հեղինակի տաղերին, ապա նրանք մեծ մասամբ ձեռագրերում հազվադեպ նմուշներ են՝ ընդհանրապես հայտնի Առաքելի անունով[14], որոնցից Առ. Բաղիշեցու անունով հանդիպում է մեկը՝ **«ՅԱռաքելէ մըտաւք տրխմար...»**, իսկ Առ. Սյունեցուց չի հանդիպում ոչ մի նմուշ:

Նորահայտ № 6527 Գանձարանում կան տվյալներ, որոնք նույնպես Առ. Բաղիշեցու օգտին են և միաժամանակ նպաստում են ճշտելու Գանձարանի ընտեղծման վայրն ու մոտավոր թվականը: Հայտնի է, օրինակ, որ Առ. Բաղիշեցին եղել է Զմշկածագի նահանգի Ցաղման գավառի Երկայն-Ընկուզյաց վանքի առաջնորդ: Դրա մասին հիշվում է ձեռագրերի հիշատակարաններում, որոնք վերաբերում են 1432—1435 թվականներին[15]: Այդ մասին լրացուցիչ տեղեկություններ է մեզ հաղորդում Երուսաղեմի № 25 Հայսմավուրք-ձեռագիրը, ընդօրինակված մի քանի գրիչների ձեռքով և ավարտված 1435 թ. Երկայն-Ընկուզյաց վանքում: Ձեռագրի բազմաթիվ հիշատակագրություններում հաճախակի հանդիպում է Առ. Բաղիշեցու ծնողների՝ Ներսեսի և Խությումելիքի, ինչպես նաև որդու՝ «դեռաբոյս մանուկ» տէր Հովհաննեսի անունները, իսկ գրչի գլխավոր հիշատակարանում կարդում ենք. **«...Եւ արդ ես... բազմամեղ սուտանուն երէց Կարապետ, ըստ իմում տկար, անձամբս յանձն առի և... կատարեցի... ի վանքս Երկայն Ընկուզեաց, ընդ հովանեաւ սուրբ Կարապետին և սրբուհոյ Աստուածածնին, ի հայրապետութեան տեառն Կոստանդեայ, և յառաջնորդութեան սուրբ Ուխտիս՝ Առաքել վարդապետի և Ստեփանոս Հայրապետի, ի թվականիս Հայոց ՊԶԴ...»**[16] (1435):

Այստեղ Առաքել վարդապետի հետ հիշվում է նաև Ստեփանոս հայրապետը, այսինքն՝ եկեղեցու հայրերի պետը կամ վանահայրը: № 6527 ձեռագրում երկու անգամ գանձերի վերջին տողերում կարդում ենք՝

Նաև մերոյ եպիսկոպոսին
Պարիսպ լինել տէր Ստեփաննոսին... (թերթ 29ա)
Զեպիսկոպոսն այս Գանձատետրին
Զտէր Ստեփանոսն ի խաղաղութիւն... (թերթ 100ա)

Նշված տողերում հիշված Ստեփաննոսը, բնականաբար, չէր կարող լինել ձեռագրի գրիչը, որն իր մասին անշուշտ չէր ասի «մերոյ եպիսկոպոսին»: Ուրեմն նա մի ուրիշ Ստեփաննոս է, թերևս վերոհիշյալ հիշատակարանում նշված և Առ. Բաղիշեցու ժամանակակից նույն Ստեփանոս հայրապետը, որը, հավանաբար, հանդիսանում է նաև տվյալ Գանձա-

---

[8] № 6527 Գանձարանում գտնվող **«Յորժամ որ ստեղծեաց տէրն ամենայնի»** սկզբնատողով տաղը Հ. Անասյանը հղում է Առ. Սյունեցուն առանց որևէ հիմնավորման, հավանաբար այն պատճառով, միայն որ տվյալ ստեղծագործությունը Առ. Բաղիշեցունը համարելու բավարար հիմքեր չի ունեցել (տե՛ս Հ. Անասյան, Հայկական Մատենագիտություն, հատոր Ա, Երևան, 1959, էջ 248):

[9] **Հ. Անասյան**, նշվ. աշխ., էջ 1128—1132:

[10] Նշված դիսերտացիոն աշխատությունը անտիպ վիճակում հեղինակը տրամադրել է մեզ ծանոթանալու, որի համար հայտնում ենք մեր շնորհակալությունը:

[11] **Ղ. Փիրղալեմյան**, Նոտարք հայոց, Կ. Պոլիս, էջ 116:

[12] **Մ. Պոտուրյան**, Առաքել Սյունեցի և իր քերթվածները, Վենետիկ, 1914, էջ Լ:

[13] **Մ. Պոտուրյան**, նշվ. աշխ. էջ ԼԶ:

[14] № 6527 Գանձարանի տաղերից համեմատաբար մեծ թվով նմուշներ են հանդես գալիս՝ շուրջ երկու տասնյակ, №№ 7961 և 7349 ձեռագրերում:

[15] **Լ. Խաչիկյան**, ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն Ա, Երևան, 1955, էջ 426, 442, 449, 458:

[16] **Ն. Պողարյան**, Մայր ցուցակ Ձեռագրաց սրբոց Յակոբեանց, հատոր Ա, Երուսաղեմ, 1966, էջ 131:

բանի պատվիրատուն, ինչպես ցույց են տալիս «զեպիսկոպոսն այս Գանձատեսրին» բառերը[17]:

Ուշադրության է արժանի նաև ձեռագրում գտնվող Տեառնընդառաջի տոնին նվիրված գանձի վերջում պահպանված հետևյալ տողերը՝

Զտէր Առաքել տեսուչըս հաւտի
Պահել անփորձ ի հնարից չարի... (թերթ 22բ)

Այստեղ «տեսուչըս հաւտի» բառերը հավանաբար վերաբերում են Երկայն-Ընկուզյաց վանքում Առ. Բաղիշեցու զբաղեցրած առաջնորդական պաշտոնին: Ուրեմն, բացի այն, որ Գանձարանի հեղինակը Առ. Բաղիշեցին է, միաժամանակ պարզվում է, որ այն հավանաբար կազմված է եղել Երկայն-Ընկուզյաց վանքում՝ հեղինակի առաջնորդության տարիներին, ընդ որում, ժամանակն ավելի է ճշտվում հետևյալ փաստով:

№ 6527 ձեռագրում առկա են Առ. Բաղիշեցու անունով հայտնի ոչ բոլոր գանձերը[18]: Պակասող մի քանի նմուշների թվին է պատկանում Թեկղի և Վառվառե կույսերին նվիրված նրա գանձն իր համապատասխան տաղով: Այս տաղի վերջում հեղինակը հայտնում է, որ նշված ստեղծագործությունը (անշուշտ, նաև գանձը) նա գրել է 1438 թ. Մերտին քաղաքում.

Ի յոթ հարիւր թվականին
Ութսուն և եթն աւելորդին
Զբանս ասացի սուրբ Վառվառին
Յեզեր Մէրտին մեծ քաղաքին[19]...

Հետևապես, եթե այս գանձն ու տաղը տեղ չեն գտել վերոնշյալ Գանձարանում, ապա պիտի ենթադրել, որ Գանձարանը մինչև 1438 թ. արդեն կազմված է եղել: Արժե նկատել, որ հեղինակի անունով այլ ձեռագրերից հայտնի և տվյալ Գանձարանում բացակայող գանձերի այդ մի քանի նմուշները տեղ չեն գտել նաև № 7961 ձեռագրում, մի հանգամանք, որն ավելի հավանական է դարձնում այն ենթադրությունը, թե այդ ձեռագրում գտնվող Առ. Բաղիշեցու ստեղծագործությունները նախորդել են հեղինակային Գանձարանի ստեղծմանը:

Ուշադրության է արժանի՝ նորահայտ Գանձարանը Առ. Բաղիշեցունը համարելու մի այլ, ոչ նվազ կարևոր հանգամանք, որը կապվում է Գր. Խլաթեցու անվան հետ: Վերջինս, ինչպես գիտենք, ձեռնամուխ է եղել Գանձարանների խմբագրմանը ու միաժամանակ այդ ժողովածուները հարստացրել իր հեղինակած բազմաթիվ նոր գանձերով, տաղերով, մեղեդիներով ու հորդորակներով: Հայտնի է, որ Առ. Բաղիշեցին եղել է Գր. Խլաթեցու աշակերտը, իր սիրելի ուսուցչի հանդեպ տածել առանձին հարգանք ու նրան նվիրել մի ներբող և մի ողբ: № 6527 ձեռագրում գտնվում է մի գանձ, որի ծայրակապն է՝ **«Ի խնդրոյ վարդապետին Գրիգորին»**: Շատ հավանական է, որ հեղինակն այստեղ նկատի է ունեցել իր ուսուցչին: Բացի այդ, նկատվում է Գր. Խլաթեցու անմիջական ազդեցությունը Գանձարանում գտնվող ստեղծագործություններում, որոնք աչքի են ընկնում նրա երկերին բնորոշ մի շարք առանձնահատկություններով: Օրինակ՝ գանձերի համար հեղինակի օգտագործած չափերը, նրան կից օգտագործվող հանգավոր փոքրիկ հիշատակագրությունները, որոնք սկիզբ են առել Գր. Խլաթեցուց և նրա կողմից կոչվել կաֆա, գանձի կամ տաղի վերջում իրեն՝ հեղինակին հիշելու սովորությունը և վերջապես ծայրակապի այն յուրահատուկ ձևը, երբ, բացի տնագլուխ տառերից, գանձերի մեջ օգտագործվում են նաև տողերի սկզբնատառերը: Այսպես՝ «Այս բան **յԱռաքելէ**»[20], «Առաքել **վարդապետին երգ**», «Այս գանձ **Վարագայ խաչին յԱռաքել վարդապետէ**»:

Ձեռագրում գտնվում է Գր. Լուսավորչին նվիրված մի գանձ այսպիսի ծայրակապով՝ **«Առաքելի է այս խնդրեալ է Յովհաննէս ծաղկաւոն»** (թերթ 144ա): Թեև չենք կարող հաստատապես պնդել, բայց և այնպես հավանական ենք համարում, որ այս Հովհաննեսը՝ Առ. Բաղիշեցու որդին է: Վերջինս իրոն ծաղկող հիշվում է Երկայն-Ընկուզյաց վանքում այդ տարիներին ընդօրինակված Երուսաղեմի վերոհիշյալ Հայսմավուրքի հետագայի մի հիշատակարանում՝ **«Այլ և կրկին յիշեցէք զարի և բաջ բարունապետն զԱռաքել վարդապետն և զծնաւղսն իւր ըստ մարմնոյ զՆերսէս և զԽութլումելիքն և զորդին իւր զՀովհաննէս սարկաւաքն, որ և ծաղկեաց այլ և գի(ր)քս»**[21]:

№ 6527 Գանձարանում, որտեղ այլ հեղինակների ստեղծագործություններ չեն հանդիպում, կա **«Յովհաննէս»** ծայրակապով մի տաղ (թերթ 12ա): Այս փոքրիկ տաղը, որն ուրիշ գրչագրերից մեզ հայտնի չէ, հավանաբար նույնպես Առ. Բաղիշեցունն է՝ նվիրված որդուն, եթե, իհարկե, ինքը՝ Հովհաննես ծաղկողը չի գրել այն:

Բերված փաստերն այսպիսով ցույց են տալիս, որ նորահայտ № 6527 անհատական Գանձարանի հեղինակը Առ. Բաղիշեցին է և ձեռագիրը հասել է մեզ շուրջ մեկ դար հետո կատարված ընդօրինակությամբ: Նրանում գտնվող նյութերի մի որոշ մասը, ինչպես նշվեց, հայտնի է այլ աղբյուրներից՝ կա՛մ հեղինակի անունով և կա՛մ լոկ իբրև ոմն Առաքելի

[17] Ձեռագրի առաջին գանձի վերջում հիշվում է Տեր Սարգիս հովվապետի անունը, որը հավանաբար Ստեփաննոս գրչի կողմից կատարված ներմուծություն է և վերաբերում է գրչին ժամանակակից՝ Սարգիս Դ Վրաստանցի կաթողիկոսին (1520—1536 թթ., տե՛ս Մ. Օրմանյան, Ազգապատում, հատոր Բ, մասն Բ, Բեյրութ, 1960, էջ 2223—2232):

[18] Ձեռագրերում երբեմն Առ. Բաղիշեցու անունով է հանդես գալիս նաև՝ **«Գանձդ կենաց որդիդ միածին...»** գանձը, **«Գանձ Թաբաւրի»** ծայրակապով. տե՛ս Ձեռ. № 5434, թերթ 269ա, ինչպես նաև՝ Երուսաղեմ, Ձեռ. № 135, թերթ. 463բ, **Ն. Պողարյան,** Նշվ. աշխ., էջ 399:

[19] Ձեռ. № 424, թերթ 278ա:

[20] Ընդգծված է ծայրակապի այն հատվածը, որն արտահայտված է տողերի սկզբնատառերով:

[21] **Ն. Պողարյան,** նշվ. աշխ., էջ 132:

ստեղծագործություններ, սակայն ավելի քան 40 գանձ և շուրջ 35 տաղ ու հորդորակ, որքան մեզ հայտնի է, հանդիպում են առաջին անգամ[22]: Այսպիսով, շնորհիվ այդ նորահայտ ձեռագրի, վերջնականապես Ան. Բաղիշեցու անվան հետ են կապվում մինչ այդ ենթադրաբար կամ վերապահությամբ նրան վերագրվող շատ գանձեր, որոնց թիվը բազմապատկվելով հասնում է շուրջ 100-ի, իսկ տաղերն ու հորդորակները՝ 60-ի: Ուշագրավ է մանավանդ այն, որ այդ ստեղծագործությունները կազմում են մի ամբողջական ժողովածու և կապվում մի անհատի՝ Ան. Բաղիշեցու անվան հետ: Գանձարանների սկզբնավորման ու կազմավորման հարցում նշված ժողովածուն ունի խիստ կարևոր նշանակություն: Այս կապակցությամբ ավելորդ չի լինի ծանոթանալ նաև տվյալ ձեռագրում գտնվող նյութերի դասավորության ընդհանուր սկզբունքին և առանձնահատկություններին:

*
* *

Ինչպես հայտնի է, Գանձարաններում ներկայացված են լինում տերունական տոները, որոնք ընդգրկում են Քրիստոսի կյանքի կարևոր դրվագները ծննդից մինչև Այլակերպություն, Աստվածածնի Վերափոխման, Խաչի ու եկեղեցու տոները, ինչպես նաև զանազան սրբերի, մարտիրոսների, առաքյալների և այլոց նվիրվածները: Տոնական այս շարքի հաջորդականությունը երբեմն մասամբ խախտվում է. ուստի Գանձարանների մեծ մասում նկատվում է միմյանցից տարբերվող հիմնական երկու տեսակ դասավորություն: Նախ՝ երբ ժողովածուն սկսվում է Հրեշտակապետներին նվիրված գանձով, որին հաջորդում են սրբերի, ճգնավորների և այլն նվիրված ստեղծագործությունները, իսկ տերունականները՝ հետո: Այս կարգի Գանձարանները կազմում են մեծ թիվ: Գանձարանների մի այլ, դարձյալ ստվար խումբ, տոնական այդ շարքն սկսում է տերունականներով, իսկ սրբերի, մարտիրոսների և այլոց խումբը հանդես է գալիս ձեռագրի վերջում: Մեզ հետաքրքրող № 6527 Գանձարանը նյութերի իր դասավորությամբ պատկանում է այս երկրորդ խմբի ձեռագրերին: Այս ձևով են ներկայանում հին շրջանի մեզ հանդիպած նաև մյուս Գանձարանները: Պատահում են ձեռագրեր, որոնք տարբերվում են այս երկու տեսակներից, սակայն, այդպիսիները խիստ փոքրաթիվ են:

Ընդհանրապես Գանձարաններում տվյալ տոնի համար հաճախ միմյանց են հաջորդում մի քանի գանձ, տաղ, մեղեդի կամ հորդորակ: Ան. Բաղիշեցու ձեռագրում նույնպես առանձին տոներ ներկայացված են մեկից ավելի գանձերով կամ տաղերով: Օրինակ՝ Քրիստոսի Հարության տոնին նվիրված է 6 գանձ, Խաչի ու ս. Հոգու Գալստյան տոներին՝ երեքական, ընդ որում, Հոգեգալստյան գանձերից երկուսը փաստորեն միևնույն գանձի առանձին մասերն են: Երկուական գանձ է նվիրված Համբարձման տոնին ու Հովհ. Մկրտչին և այլն: Սակայն հատկանշական է այստեղ այն, որ եթե ուրիշ Գանձարաններում միևնույն տոնի համար գանձերով ու տաղերով հանդես են գալիս տարբեր հեղինակներ, այստեղ բոլորը պատկանում են մի հեղինակի և չնայած նյութի ընդհանրությանը՝ նրանք միմյանց չեն կրկնում:

Ան. Բաղիշեցու Գանձարանի համար բնորոշ է նաև այն, որ ինչպես արդեն նշվել է, գանձերից յուրաքանչյուրը հանդես է գալիս համապատասխան մեկ տաղով, կամ մեկ տաղ ու մեկ հորդորակով, երբեմն էլ անշուշտ առանց դրանց: Գանձարանային լրիվ համակարգն, այսպիսով, նրա մոտ կազմված է գանձ, տաղ և հորդորակ միավորներից: Ընդ որում, տաղերն ու հորդորակները հաճախ հանդիսանում են միևնույն ստեղծագործության առանձին մասերը, անջատված երկուսի: Ուշագրավ է, որ նշված Գանձարանին գրեթե ժամանակակից № 7961 ձեռագրում ևս նկատվում է գանձերին կից հանդես եկող ստեղծագործությունների գրեթե նույնպիսի դասավորության ու որոշակի քանակի: Մոտավորապես նման պատկեր տեսնում ենք այդ ժամանակաշրջանի նաև մի քանի այլ ձեռագրերում: Հետևապես, Ան. Բաղիշեցու Գանձարանային նյութերի դասավորությանը վերաբերող այն հարցը դուրս է գալիս տվյալ Գանձարանի սահմաններից և պահանջում է առավել ուշադիր ու առանձին քննություն:

Այսպիսով, № 6527 ձեռագիրը ներկայանում է իբրև հեղինակային գանձերի ու տաղերի ավարտուն մի ժողովածու, որն աչքի է ընկնում մի շարք առանձնահատկություններով: Շնորհիվ այդ նորահայտ Գանձարանի համալրվում է ոչ միայն հեղինակի՝ Ան. Բաղիշեցու ստեղծագործությունների շարքը, այլև, որ ավելի կարևոր է, հարստանում են Գանձարան-ժողովածուները ինքնատիպ մի նմուշով: Վերջինս հանդիսանում է հենակետ և ուղեցույց հեղինակային գանձարանների ուսումնասիրության համար, որոնց երբեմն գոյությունը շնորհիվ № 6527 ձեռագրի, դառնում է ավելի քան անվիճելի: Ուստի, նկատի ունենալով այդ նորահայտ ձեռագրի կարևորությունը, անհրաժեշտ ենք համարում կից ներկայացնել նրանում հանդես եկող նյութերի ցանկը՝ վերնագրերով, ծայրակապերով և սկզբնատողերով:

---

[22] Ձեռագրում տեղ են գտել նաև ազգային թեմաներ շոշափող մի քանի գանձեր ու տաղեր, որոնք ընդհանրապես հազվադեպ են հանդիպում: Դրանցից են, օրինակ, Վարդանանց տոնին նվիրված գանձն՝ իր համապատասխան տաղով, Ղևոնդյանց նվիրված գանձը և թարգմանիչներին նվիրվածը, որը հեղինակի անունով հայտնի է նաև ուրիշ ձեռագրերից, բայց այստեղ կից ունի նաև տաղ, որն առաջին անգամ է հանդիպում:



ՌՈՒԲԵՆ ՂԱԶԱՐՅԱՆ
(Բանասիրական գիտությունների թեկնածու)

ՆՈՐ ՀԱՅԿԱԶՅԱՆ ԲԱՌԱՐԱՆԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ

19-րդ դարի երկրորդ քառորդում տպագրության է հանձնվում հայագիտության անզուգական գործերից մեկը՝ Նոր Հայկազյան բառարանը[1]: Այս երկհատոր հրատարակությունը, որ ընդգրկում է հին հայերեն գրական լեզվի գրեթե ողջ բառապաշարը, աննախընթաց երևույթ էր հայ բառարանագրության զարգացման պատմության մեջ: Երկար տարիների ստեղծագործական աշխատանքի արդյունք հանդիսացող այդ բառարանը, որ կազմվել է երեք երախտավոր հայագետների անխոնջ ջանքերով, ոչ միայն հայ դասական բառարանագրության բարձրակետն է, այլև իրավամբ համարվում է համաշխարհային բառարանագրության ամենաարժեքավոր գործերից մեկը:

Այստեղ ավելորդ չի լինի վերհիշել ականավոր լեզվաբան և բառարանագետ Հր. Աճառյանի «Նոր Հայկազյան բառարան»-ին տրված հետևյալ գնահատականը. «Քիչ ազգ կա՝ որ մեր Հայկազյան բառարանի նման հոյակապ գործ ունենա և դեռ պետք է հիշել, որ սա բուն ձեռագրի համառոտությունն է, բուն ձեռագիրը վեց անգամ ընդարձակ է եղել և ծախսի մեծության պատճառով միայն համառոտել և վերածել են երկու հատորի»: Անկասկած՝ իր էությամբ, կատարմամբ ու բովանդակությամբ բառարանագրական բարձրարժեք ներդրում է Նոր Հայկազյան բառարանը, դարագլուխ հանդիսացող մի հսկայական գործ, «որով անգնահատելի ծառայություն է մատուցվել և դեռ շատ երկար կմատուցվի մեր լեզվի ուսումնասիրության համար»[2]:

Ֆրանսիացի նշանավոր լեզվաբան—հայագետ Անտուան Մեյեն իր «Դասական հայերենի համեմատական քերականության ուրվագիծ» աշխատության ներածական մասում Նոր Հայկազյան բառարանը բնորոշում է որպես «հայ բառարանագրության ամենակարևոր գործը»[3]:

Այդ բառարանը, որ իր արժանիքներով մնում է դեռևս չգերազանցված, պրոֆ. Ս. Ղազարյանի խոսքերով ասած՝ «վստահելի ուղեցույց է բոլոր այն մարդկանց համար, որոնք զբաղվում են հայոց լեզվի պատմության, բառապաշարի, քերականության և հնչյունաբանության հետազոտության հարցերով»[4]:

Չնայած բառարանի լույս ընծայումից հետո երկար ժամանակամիջոց է անցել, ավելի քան 130 տարի, սակայն այդ երկար ու ձիգ տարիների ընթացքում բառարանը չի կորցրել և մինչև այժմ էլ պահպանում է իր խոշոր նշանակությունը:

Նոր Հայկազյան բառարանի ստեղծման հետ կապված աշխատանքները տևել են 50 տարի՝ 1784 թվականից մինչև 1834 թվականը: Այդ ծրագրի իրականացման ընթացքում Վենետիկի Մխիթարյանների ձեռագրատունը ունեցել է շուրջ 1000 ձեռագրեր, որոնք և հիմք են հանդիսացել բառարանը կազմելու համար: Այս մասին բառարանի հեղինակներն առաջաբանում գրում են. «Ազգային մատեանք. այսինքն գրչագիր գրեանք, զորս ռամկօրէն Ձեռագիրն անուանեմք, է որ մագաղաթեայ, և է որ թղթեայ, իմա անխրտիր՝ երկաթագիր, բոլորագիր, նօտրագիր, ընդ մեծ և ընդ փոքր՝ ընդ հին և ընդ նոր՝ ոչ պակաս քան զհազար

---

[1] «Նոր բառգիրք Հայկազեան լեզուի», երկասիրութիւն երից վարդապետաց յաշակերտութենէ մեծին Մխիթարայ աբբահօր՝ Հ. Գաբրիէլի Աւետիքեան, Հ. Խաչատրոյ Սիւրմէլեան, Հ. Մկրտիչ Ալգերեան, հտ. Ա, Բ, Վենետիկ, 1836—37:

[2] **Մ. Աբեղյան,** Հայոց հին գրականության պատմություն, գիրք 2-րդ, Երևան, 1946, էջ 441:

[3] A. Meillet, Esquisse d'une grammaire comparée de l'arménien classique, Vienne, 1936, *էջ 18:*

[4] **Ս. Ղազարյան,** Միջին հայերեն, գիրք Ա, Երևան, 1960, էջ 8:

հաշուին ի գրատան մերում. և զի ոմանց ի նոցա էին կրկին և երեքկին օրինակք»[5]:

Պարզ է, որ այդ ձեռագիր հիշարձաններից, որպես աղբյուրներ, հմտորեն օգտվելու և բառաքննական աշխատանքները ճիշտ կազմակերպելու համար քննարկվող բառարանը կազմողներից պահանջվում էր բառարանագրական գործի բացառիկ իմացություն: Հարկ է նշել, որ բազմաշխատ հեղինակները մանրակրկիտ կերպով և գիտական մեծ հմտությամբ ուսումնասիրել են բառարանի աղբյուրները, ստեղծելով մի հոյակապ գործ, որը ինքնին հիմնական աղբյուր է հանդիսացել հետագա մեզ հայտնի գրեթե բոլոր հայերեն բացատրական (և ոչ միայն բացատրական) բառարանների համար, սկսած Գ. Փեշտմալճյանի, Ս. Գաբամաճյանի բառարաններից, ընդհուպ մինչև Ստ. Մալխասյանցի «Հայերեն բացատրական բառարան» քառահատոր աշխատությունը:

Արդ, որոնք են այն աղբյուրները, որոնց հիման վրա կազմվել է այդ բարձրարժեք բառարանը: Նախ ընդգծենք, որ այս բառարանի համար հիմք ծառայած բոլոր կարգի հիմնական և երկրորդական աղբյուրներն անխտիր կերպով, առանձին բացատրություններով հանդերձ, հիշատակվում են առաջաբանի շարունակությունը կազմող ծավալուն մատենագրական ցանկի մեջ (տես՝ ՆՀԲ, առաջաբան, էջ 9—20):

Այդ ցանկի քննությունը ցույց է տալիս, որ հեղինակները բառարանը կազմելիս օգտվել են բնույթով և բովանդակությամբ տարբեր բազմաթիվ անտիպ ու տպագիր աղբյուրներից, որոնք կարելի է բաժանել երկու հիմնական խմբի.

ա) Մատենագրական աղբյուրներ: Այս խմբի մեջ են մտնում 5—17-րդ դարերի հայոց մատենագրության ինքնուրույն և թարգմանական երկերը, որոնք ընդգրկում են հայ հոգևոր մշակույթի գրեթե բոլոր բնագավառները (պատմագրություն, փիլիսոփայություն, վարքագրություն, գեղարվեստական գրականություն, տոմարագիտություն, իրավունք, աշխարհագրություն, մաթեմատիկա, բժշկություն և այլն)[6]:

բ) Բառարաններ, որոնք միջանկյալ կերպով օգտագործվել են որպես օժանդակ աղբյուրներ: Այս խմբին են վերաբերում մի շարք բառարանագրական աշխատանքներ, ինչպես՝ «Բառք քերթողականք», «Բառք Գաղիանոսի բժշկապետի» միջնադարյան հին ձեռագիր բառարանները, Ստ. Ռոշքայի «Գանձ հայոց լեզուի» անտիպ աշխատությունը և այլն[7]:

Ա) ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ ԱՂԲԻՅՈՒՐՆԵՐ

Հայ հին և վաղ միջնադարյան մատենագրությունն է այն հիմնական ու կարևորագույն աղբյուրը, որի հիման վրա կազմվել է Նոր Հայկազյան բառարանը: Այս առումով բառարանի հիմնական աղբյուրներն են, նախ և առաջ, 5-րդ դարի հայ մատենագիրների՝ Ագաթանգեղոսի «Պատմութիւն Հայոց», Կորյունի «Վարք Մաշտոցի», Փավստոս Բյուզանդի «Պատմութիւն Հայոց», Ղազար Փարպեցու «Պատմութիւն Հայոց և թուղթ առ Վահան Մամիկոնեան», Եզնիկ Կողբացու «Եղծ աղանդոց», Եղիշեի «Վասն Վարդանանց և Հայոց պատերազմին», Մովսես Խորենացու «Պատմութիւն Հայոց» աշխատությունները: Այս երկերը, որոնցից անհամեմատելի չափերով օգտվել են բառարանի հեղինակները, անգնահատելի սկզբնաղբյուրներ են հանդիսացել 5-րդ դարի մատենագրության լեզվի՝ դասական հայերենի բառապաշարի ընտրության տեսակետից:

Անտարակույս, քննարկվող բառարանում օգտագործված 5-րդ դարի ինքնուրույն երկերի մեջ իրենց հերթին ուրույն տեղ են գրավում հայ նոր դպրության առաջին հեղինակներ՝ Մեսրոպ Մաշտոցի «Ցանխապատում ճառք» կոչված ժողովածուն, որը վերագրվում է Գրիգոր Լուսավորչին և Սահակ Պարթևի անունով պահպանված մի քանի «Կանոնները»:

Հայոց գրական լեզվի հնագույն շրջանի ուսումնասիրության գործում, բնականաբար, բացի հիշյալ մատենագրական ինքնուրույն աշխատություններից, էական նշանակություն են ունեցել Հովհան Մանդակունու (5-րդ դ.) կրոնական բնույթի գործերը (ճառեր, կանոններ, քարոզներ, մեկնաբանություններ, հոգևոր երգեր, աղոթքներ և այլն), Մովսես Խորենացու կրտսեր եղբայր Մամբրե Վերծանոլի (5—6-րդ դդ.) երկու ճառերը, ինչպես՝ «Ճառ Քրիստոսի գալստեան յԵրուսաղէմ», «Ճառ յարութեան Ղազարու», Աբրահամ Մամիկոնյանի (5—6-րդ դդ.) գլխավոր աշխատությունը՝ «Պատմութիւն վասն ժողովոյն Եփեսոսի», Պետրոս Քերթող Սյունեցու (6-րդ դ.) «Ներբող ի սուրբ Աստուածածնի», «Պատասխան առ հարցմունս Վաչագանայ իշխանի» գրվածքները և, վերջապես, հայ հին փիլիսոփայական մտքի խոշորագույն ներկայացուցիչ Դավիթ Անհաղթի (6-րդ դ.) իմաստասիրական երկերը:

Հին հայերենի բառապաշարի ուսումնասիրության համար ոչ պակաս կարևոր աղբյուրներ են հանդիսանում 7—9-րդ դարերում ստեղծված մատենագրական ինքնուրույն երկերը, որոնց թվում մասնավորապես այն գործերը, որոնք վերաբերում են 7-րդ դարին, բացառությամբ նույն ժամանակաշրջանի պատմագիր Սեբեոսի «Պատմութիւն»-ը, որը բառարանի կազմողները հասկանալի պատճառով չեն օգտագործել, որքանով որ հիշյալ աշխատությունը հայտնաբերվել է միայն 1842 թվականին: Բառարանի համար հիմք ծառայած աղբյուրներից, որոնք վերաբերում են 7-րդ դարին, առանձնապես կարևոր են Վրթանես Քերթողի «Ճառ ընդդէմ պատկերամարտից», Սահակ Զորափորեցու «Ճառ Արմաւենեաց», Գրիգորիս Արշարունու «Մեկնութիւն ընթերցուածոց» երկերը և, մանավանդ, Զենոբ Գլակ—Հովհան Մամիկոնյանի «Պատմութիւն Տարօնոյ» երկու մասից բաղկացած աշխատությունը և Թեոդորոս Քռթենավորի երեք «Ճառերը», որոնք են՝ «Ներբողեան ի սուրբ խաչն»,

[5] ՆՀԲ, առաջաբան, էջ 8:

[6] **Ռ. Ղազարյան,** Նոր Հայկազյան բառարանը, «Բանբեր Երևանի համալսարանի», 1968, № 2, էջ 235:

[7] Նույն տեղում:

«Գովեստ ի սուրբ Աստուածածին», «Ընդդէմ Յովհաննու Մայրագոմեցւոյն»:

Այդ երկերից բացի, բառարանի առանձին աղբիւր ներկայացնող աղբյուրների կողքին հատուկ տեղ ունեն 7-րդ դարի հայ ականավոր գիտնական, մաթեմատիկոս և աշխարհագետ Անանիա Շիրակացու հետեվյալ աշխատությունները. 1. «Ցաղագս կշռոց և չափուց», 2. «Ցաղագս Շրջագայութեն երկնից», 3. «Վասն որպիսութեան կենացն իւրոց», 4. «Անանիայն Շիրակացւոյն Համարողի ասացեալ ի յայտնութիւն Տեառն և Փրկչին մերոյ», 5. «Անանիայի Շիրակացւոյ Համարողի ասացեալ ի զատիկն Տեառն», 6. «Ժամանակագրութիւն»: Ինչ վերաբերում է Անանիա Շիրակացու անունով հայտնի «Աշխարհացոյց» երկին, ապա այն բառարանի հեղինակները սխալմամբ վերագրել են 5-րդ դարի պատմագիր Մովսես Խորենացուն:

Բառարանի անմիջական աղբյուրների շարքում կարեվոր տեղ է գրավում հայ պատմագրության աչքի ընկնող դեմքերից մեկի՝ Մովսես Կաղանկատվացու «Պատմութիւն Աղուանից աշխարհի» երկը, որտեղ ՆՀԲ-ի ընձեռած տվյալների համաձայն հեղինակը հիշատակում է շուրջ 97 առանձնահատուկ բառեր և բառակապակցություններ, որոնք բոլորովին չեն հանդիպում նախորդ մատենագրական ինքնուրույն գործերում:

Բացի վերոհիշյալ երկերից, որպես բառարանի գլխավոր աղբյուրներ, ուշադրության արժանի են 8-րդ դարի հեղինակներ Ղևոնդ պատմագրի «Պատմութիւն Հայոց» աշխատությունը և Հովհաննես Իմաստասեր Օձնեցու մի քանի գործերը, որոնցից պետք է նշել. 1. «Ատենաբանութիւն», 2. «Կանոնք», 3. «Ճառ ընդդէմ Պաւղիկեանց», 4. «Ճառ ընդդէմ երևութականաց», 5. «Ցաղագս կարգաց եկեղեցւոյ»:

9-րդ դարին պատկանող հայ հեղինակների երկերից, որոնք նույնպես համարվում են կարևոր աղբյուրներ, բառարանի կազմողներն օգտագործել են Համամ Արևելցու, Շապուհ Բագրատունու, Միսայել եպիսկոպոս Իմաստասերի և կաթողիկոս Զաքարիա Զագեցու աշխատությունները:

Բառարանի հիմնական աղբյուրներից են նաև մատենագրական այն ինքնուրույն երկերը, որոնք գրվել են 10—12-րդ դարերում և անգամ ավելի ուշ շրջաններում: Այդ աղբյուրներից են, օրինակ, նշված դարերի հայ պատմիչներ ու ժամանակագիրներ՝ Հովհաննես Դրասխանակերտցու «Պատմութիւն Հայոց», Թովմա Արծրունու «Պատմութիւն Տանն Արծրունեաց», Ստեփանոս Տարոնեցի Ասողիկի «Տիեզերական պատմութիւն», Սամվել Անեցու «Ժամանակագրութիւն», Արիստակես Լաստիվերտցու «Պատմութիւն վասն անցիցն անցելոց ի յայլասեռն ազգաց որք շուրջ զմեօք են», Մատթեոս Ուռհայեցու «Ժամանակագրութիւն» աշխատությունները:

Հիշատակված երկերը, որոնցից անհրաժեշտ չափով օգտվել են բառարանի հեղինակները, իրենց մեջ պարունակում են ձևա-իմաստային տեսակետից զգալի թվով նոր բառեր ու բառակապակցություններ, որոնք կամ առաջին անգամ են հանդես եկել այդ գործերում, կամ ունեցել են տարբեր առումներ ու գործածության ձևեր:

Բառարանի մատենագրական ցանկում, որպես հիմնական և կարևոր աղբյուրներ, հիշատակվում են 10—12-րդ դարերի հայ մատենագրության մի շարք այլ նշանավոր ներկայացուցիչների գործերը, որոնց թվում Խոսրով Անձևացու (10-րդ դ.), Անանիա Նարեկացու (10-րդ դ.), Գրիգոր Նարեկացու (10-րդ դ.), Գրիգոր Մագիստրոսի (10—11-րդ դդ.), Անանիա Սանահնեցու (11-րդ դ.), Իգնատիոս վարդապետի (11-րդ դ.), Հովհաննես Սարկավագի (11—12-րդ դդ.), Գրիգոր Տղա կաթողիկոսի (12-րդ դ.), Ներսես Լամբրոնացու (12-րդ դ.), Արիստակես գրչի (12-րդ դ.) և ուրիշների երկերը:

Միաժամանակ, որպես կարևոր աղբյուրներ, պետք է նշել 12-րդ դարի մեծանուն բանաստեղծ Ներսես Շնորհալու կրոնական և աշխարհիկ բնույթի արձակ ու չափածո գործերը, որոնք են՝ 1. «Ատենաբանութիւն», 2. «Թուղթ ընդհանրական», 3. «Միաբանութեան թղթեր», որոնց մեջ՝ «Թուղթ առ կայսրն Մանուէլ», «Թուղթ առ մեծ իշխանն Ալեքս փեսայ կայսեր» և այլն, 4. «Մեկնութիւն յաւետարանն Մատթէի», 5. «Ողբ Եդեսիոյ», 6. «Մաղթանք առ սուրբ հրեշտակսն», 7. «Գովեստ ներբողական», 8. «Ողբերգութիւն վիպասանական ի տառից սրբոց» («Յիսուս որդի»), 9. «Խրատ ուսումնականաց մանկաց», 10. «Ցաղագս երկնից և զարդուց», 11. «Բան հաւատոյ», 12. «Ներբողեան կենսատու սուրբ Խաչին առ ի սրբոյ հօրէն մերմէ Դաւթէ Անյաղթ փիլիսոփայէ ասացաւ, ոտանաւոր չափով աստանօր եղաւ», 13. «Տաղք», 14. «Առակք»—հանելուկներ:

Ինչպես ցույց է տալիս բառարանի քննությունը, հեղինակները մեծ չափով օգտագործել են 12-րդ դարի մի այլ հեղինակի՝ Գրիգոր Իմաստասեր Մարաշեցու (կամ Մաշկևորցու) 250 տնից բաղկացած չափածո գրվածքը, որը կրում է հետևյալ վերնագիրը. «Վարք ողբոց. մեղացեալ անձին, խոստովանաբար ասացեալ առաջի Աստուծոյ Յանդիմանութիւն հոգւոյ և մտաց և մարմնոց, ի զգուշութիւն բարուց և յուղղութեան սխալանաց. ի բոլորումն արտասուաց, և ի խայտառակութիւն մեղաց և ծուլութեան»:

Բացի այդ՝ հիշատակության արժանի է, որպես հիմնական աղբյուր, հայ իրավունքի ականավոր ներկայացուցիչներից մեկի՝ 12-րդ դարի հեղինակ Մխիթար Գոշի «Հայոց Դատաստանագիրք»-ը: Վկայակոչելով այս աղբյուրը՝ բառարանի հեղինակները նշում են. «Գործ երևելի, հաւաքեալ վայելուչ և բարեյարմար կարգաւորութեամբ՝ ի սուրբ գրոց և յայլոց մատենից ազգայնոց կամ թարգմանելոց ի յունաց. ուստի եղանեն բազում բառք կարևորք»[8]: Եվ իրոք, բառարանի բառացանկում տեղ են գտել մեծ թվով բառեր, որոնցից շատերը չեն հանդիպում 5—12-րդ դարերի մատենագրական գործերում և առաջին անգամ հանդես են եկել Մ. Գոշի աշխատության մեջ: Ըստ մեր հաշվումների՝ «Հայոց Դատաստանագիրք» աշխատությունից ուղղակի կերպով Նոր Հայկազյան

[8] ՆՀԲ, հտ. Ա, էջ 15:

բառարանի մեջ են մտել 96 բառ, որոնց մեծագույն մասը օգտագործվել են որպես իրավաբանական տերմիններ ու հասկացություններ:

Բառարանի համար որպես աղբյուր է հանդիսացել 12-րդ դարին պատկանող մի այլ՝ «Ջերմանց մխիթարութիւն» բժշկական բովանդակությամբ աշխատությունը, որը գրել է միջնադարյան հայ գիտական մտքի նշանավոր դեմքերից մեկը՝ Մխիթար Հերացին: Տվյալ երկը, որ գրված է «գեղջուկ և արձակ բարբառով», օգտագործվել է միջանկյալ կերպով իբրև երկրորդական աղբյուր, որից բառարանի հեղինակները մասնակի ընտրությամբ վերցրել են ընդամենը 40 բառ, որոնք ժամանակի բժշկագիտական գրականության պահանջները բավարարող փոխառյալ կամ հայոց լեզվի բառակազմական ներքին հնարավորությունների միջոցով ստեղծված տերմիններ են: Մ. Հերացու կողմից առաջին անգամ գործածված և քննարկվող բառարանի մեջ ներմուծված մասնագիտական բառերն են. ալուս, ականջթոռ, անբորբոս, աներկիւղացուցանել, անթ, անհոգացուցանել, անճարակել, ապիկէգործութիւն, ասպահանիկ, արական, (հիվանդության անուն է), արձականալ, արմացք, ափիմեռիանոս, բանդակ, բորբոսային, երկարօրեայ, զրեւանդ, ըռուպ, թափթափիլ, թոքացաւութիւն, խոլային, խօխ, կարուրայ, կիսեղկ, հալ եւ մաշ (հալումաշ), հաւձագ, ձգեռտ, մարձել, միջավար, մրգաջուր, նշաձէթ, նոպայ, ողոշար, ուռենալ, պալղամ, սրտահեշտացուցանել, տտպել, փայծաղնացաւութիւն, փոթոթային, փոթոթութիւն:

Տարբեր բովանդակություն ունեցող մատենագրական ինքնուրույն երկերից, որոնք նույնպես օգտագործվել են երկրորդական աղբյուրներ, կարելի է միաժամանակ նշել 10-րդ դարի մատենագիրներ Մեսրոպ Երեցի «Պատմութիւն Մեծին Ներսէսի», Սամվել Կամրջաձորեցու «Տօնապատճառ», ինչպես և 11-րդ դարի հեղինակ Սիսիանոս վարդապետ Սեբաստացու «Ներբողական ի քառասունս նահատակեալս ի Սեբաստիա» կոչված գրվածքները, որոնցից բառարանը կազմողները քաղել են սահմանափակ թվով բառեր, որոնք առանձին որակ ամենևին չեն կազմում:

13-րդ դարը, ինչպես նախորդ՝ 10—12-րդ դարերը, հայ ժողովրդի հոգևոր և մշակութային կյանքի բուռն վերելքի շրջաններից մեկն է, որը տվել է գիտության տարբեր բնագավառների մի ամբողջ շարք ներկայացուցիչներ, որոնց երկերն ըստ մեծի մասին շարադրված են ժողովրդական լայն հատվածներին հասկանալի լեզվով՝ օժտված ինչպես գրաբարում գործածված բառերի նոր առումներով, այնպես էլ ժամանակի խոսակցական լեզվին բնորոշ բազմաթիվ բառերով ու դարձվածներով:

Այդ ժամանակաշրջանի աղբյուրներից, որոնցից մեծ չափով օգտվել են բառարանի հեղինակները, կարևոր են, օրինակ, Գրիգոր Ակներցու (Մաղաքիա Աբեղա) «Պատմութիւն վասն ազգին Նետողաց», Ստեփանոս Օրբելյանի «Պատմութիւն Նահանգին Սիսական», Հեթում պատմիչ Կոռիկոսցու «Պատմութիւն թաթարաց», Մեծն Վարդան Արևելցու «Պատմութիւն տիեզերական», Կիրակոս Գանձակեցու «Պատմութիւն Հայոց» պատմագրական երկասիրությունները: Այս երկերի հետ զուգընթաց կարևոր աղբյուրներ են նմանապես 13-րդ դարի հեղինակներ Վահրամ Բաբունու, Մ. Գոշի աշակերտ Վանական վարդապետի, Մխիթար Այրիվանեցու, Բենիկ վարդապետ Վանանդեցու, Գրիգոր Սկևռացու և Մովսես Երզնկացու գործերը[9]:

Այդ կարգի աղբյուրների շարքը պետք է դասել նաև 13-րդ դարի խոշոր գիտնական, բանաստեղծ և փիլիսոփա Հովհաննես Երզնկացու (Պլուզ) արձակ և չափածո երկերը, որոնցից բառարանի մատենագրական ցանկում հիշատակվում են հետևյալները. 1. «Ցաղագս երկնային շարժմանց», 2. «Ցաղագս երկնային զարդուց», 3. «Մեկնութիւն քերականութեան», 4. «Խրատ հասարակաց...», 5. «Լրումն թերոյն համառօտ տեսութեամբ սրբոյ աւետարանին, որ ըստ Մատթէի», 6. «Ներբողական գովեստ ի սուրբ Լուսավորիչն Հայոց Գրիգորիոս...», 7. «Տաղ ջրօրհնէքին»:

Վերջապես, բառարանի հիմնական աղբյուրների շարքում ուրույն տեղ ունեն 13—14-րդ դարերում հայ իրականության մեջ իր գիտա-մանկավարժական բեղմնավոր գործունեությամբ մեծ համբավ ձեռք բերած Գլաձորի բարձրագույն տիպի ուսումնական հաստատության ամենանշանավոր ներկայացուցիչ Եսայի Նչեցու մի քանի աշխատությունները:

Բառարանի հեղինակների կողմից օգտագործված մատենագրական ինքնուրույն երկերի մնացած մասը պատկանում է 14—17-րդ դարերին: Այդ դարերին են վերաբերում բառարանի աղբյուրների ցանկում հիշատակված Կիրակոս Արևելցու, Խաչատուր Կեչառեցու, Թովմա Մեծոփեցու, Ներսես Մոկացու և Առաքել Դավրիժեցու գործերը: Պետք է նկատել, որ այս հեղինակների երկերը բառարանը կազմողներին հետաքրքրել են այնքանով, որքանով որ գրված են հին հայերենով, և իրենց մեջ պարունակում են մի շարք «կարևոր թվացող բառեր»: Այստեղ բացառություն է կազմում 15-րդ դարի հեղինակ Մխիթար Ապարանցու «Գիրք տրամաբանութեան ուղղափառաց» խորագրված աշխատությունը, որը մեծ չափով օգտագործվել է բառարանի ստեղծման ընթացքում:

Ինչպես հայտնի է, դեռևս 5-րդ դարում, հայոց գրերի գյուտից անմիջապես հետո, Մեսրոպ Մաշտոցի ու Սահակ Պարթևի և նրանց առաջին կամ ավագ աշակերտների՝ Հովսեփ Վայոցձորեցու, Հովնան Եկեղեցացու, Ղևոնդ Երեցի, Հովսեփ Պաղնացու, Եզնիկ Կողբացու, Մուշեղ Տարոնեցու, Կորյունի, Աբրա-

---

[9] Բառարանի համար որպես աղբյուր է ծառայել 13-րդ դարի մի այլ գործչի՝ Բարսեղ Մաշկևորցու «Մեկնութիւն ավետարանի Մարկոսի» գրվածքը, որի օգտագործման կապակցությամբ հեղինակները նշում են. «...գործ թերի՝ պակասաւոր առաջին գլխոց մինչև ի թ, ուստի սկսանի երկրորդ հատոր գործոյն յերեսին օրինակս մեր: Ոճն պարզ և ստորին ըստ ԺԳ և ԺԴ դարուց, այլ ուրեք հետևոյ հնախօսութեան. մանաւանդ ըստ միում օրինակի, յորում կան յաւելուածով ձեռք բանից քաջավայելուչք» (ՆՀԲ, հտ. Ա, էջ 10):

համ Խոստովանողի (կամ Զենակացու) և շատ ուրիշների կողմից թարգմանական մեծ աշխատանք է ծավալվում. նախ հայերենի է փոխադրվում Աստվածաշունչը, այնուհետև ասորերեն և հունարեն լեզուներից թարգմանվում են կրոնա-եկեղեցական բնույթի բազմաթիվ գործեր՝ թղթեր, կանոններ, աղոթքներ, օրհներգություններ, հակաճառություններ, մեկնաբանություններ, վարքագրություններ, ինչպես և գիտական, պատմական, փիլիսոփայական մի շարք բարձրարժեք երկեր և այլն: Թարգմանական այդ աշխույժ գործունեությունը վերածվում է խոշոր մի շարժման և շարունակվում հաջորդ դարերի ընթացքում: 5-րդ դարից հետո տարբեր ժամանակաշրջաններում աստիճանաբար երևան են գալիս կրոնա-դավանաբանական, պատմագրական, քերականագիտական, փիլիսոփայական, բնագիտական, բժշկական, օրենսգիտական և այլ բովանդակությամբ մեծ թվով նոր գործեր, որոնց թարգմանությունները կատարվել են ոչ միայն հունարենից և ասորերենից, այլև լատիներենից, արաբերենից, պարսկերենից, վրացերենից և այլ լեզուներից:

Արդ՝ բացի 5—17-րդ դարերի հայկական մատենագրության տարբեր բովանդակություն ունեցող բազմաթիվ ինքնուրույն երկերից, որ վերը հիշեցինք, քննարկվող բառարանի գլխավոր և կարևորագույն աղբյուրների մեջ առանձնահատուկ տեղ ունեն նաև թարգմանական գործերը:

Ընդհանուր առմամբ հեղինակները բառարանը կազմելիս լայնորեն օգտվել են հատկապես այն թարգմանական երկերից, որոնք հայերենի են փոխադրվել 5—6-րդ դարերում: Այս առումով, իհարկե, բառարանի կազմողները ամենամեծ չափերով օգտվել են ս. Գրքից, այսինքն՝ Աստվածաշնչից (Հին և Նոր Կտակարաններով հանդերձ), որն իր թարգմանական ճոխ և պատկերավոր լեզվով, բառապաշարի հարստությամբ համարվում է բառարանի ամենահիմնական աղբյուրներից մեկը:

5-րդ դարի հայ թարգմանական գրականության մեջ աչքի ընկնող երկերից բառարանի համար խիստ արժեքավոր աղբյուրներ են հանդիսացել հույն պատմիչ Եվսեբիոս Կեսարացու (267—340 թթ.) աշխատությունները: Այսպես՝ քննարկվող բառարանում բերվում են «Քրոնիկոն»-ում մուտք գործած ավելի քան 86 բառեր և բառակապակցություններ, որոնք միայն հանդիպում են, կամ առաջին անգամ երևան են եկել տվյալ երկի հայերեն թարգմանության մեջ:

Նույն հեղինակի «Պատմութիւն եկեղեցական» երկի հայերեն թարգմանությունից ուղղակի կերպով Նոր Հայկազյան բառարանին են անցել այնպիսի բառեր, ինչպես՝ ագաթուեմ, անթիհիպատոս, առաջանիւթ, առաջնորդասիրութիւն, առուահանք, աստուածավրէժ, բացաբերանեալ, եռանդնալից, երկրորդուստ, ժանտկէն, լոկիլ, լոկութիւն, լուսաւորամիտ, խածատանք, խժդուժ, խուչակունք, կակղամիս, կարծեխօս, կեղանկ, հանգստաբար, հոիտորայութիւն, հոովմէարէն, մերկարար, մոլորեալ, շնորհութիւն, պիհ, սաբա, սերսէրիմ, տոսկութիւն, վերստայք կամ վերստեայք, տաղոսել, տանեստան, տողան, փութկոտ, օրէնսպահանջ և այլն[10]:

5-րդ դարի թարգմանական երկերից, որոնցից մեծ չափերով օգտվել են բառարանի հեղինակները, միաժամանակ պետք է նշել ասորական եկեղեցու ամենահեղինակավոր անձնավորություններից մեկի՝ Հակոբ Մծբնացու (մհ. 337 կամ 338 թ.) «Գիրք որ կոչի Զգօն» և հույն եկեղեցական նշանավոր գործիչ Բարսեղ Կեսարացու (329—379) «Մատեան վասն Վեցօրեայ արարչութեան» աշխատությունները, ինչպես և վերջինիս կրոնա-փիլիսոփայական գաղափարներով հագեցված մի շարք այլ գրվածքները (մեկնություններ, ճառեր, քարոզներ, թղթեր և այլն):

Այնուհետև, որպես բառարանի հիմնական աղբյուրներ, կարևոր է հիշատակել հույն ականավոր մտածողներ Պլատոնի (427—347 թթ. մ. թ. ա.), Արիստոտելի (382—322 թթ. մ. թ. ա.), Պորփյուրի (233—304 թթ.) փիլիսոփայական մի շարք երկերի հայերեն թարգմանությունները:

Բացի այդ՝ բառարանի համար խիստ կարևոր աղբյուրներ են հանդիսացել հունական և ասորական եկեղեցիների նշանավոր հայրեր և մատենագիրներ Հովհան Ոսկեբերանի, Դիոնիսիոս Արիսպագացու, Եփրեմ Խուրի Ասորու, Աթանաս Ալեքսանդրացու, Գրիգոր Սքանչելագործի, Կյուրեղ Երուսաղեմացու, Անթիպատրոս Բոստրացու, Աստվածազգաց Իգնատիոսի, Կյուրեղ Ալեքսանդրացու, Սեբերիանոս Եմեսացու (կամ Սեբերիանոս Գաբալացու), Եպիփան Կիպրացու, Պրոկղի, Եվագր Պոնտացու, Սոկրատես Սքոլաստիկոսի և այլոց քրիստոնեական գաղափարախոսության հետ կապված գրվածքները, որոնց մեջ՝ կանոններ, ճառեր, քարոզներ, հակաճառություններ, մեկնաբանություններ և այլն, կամ փիլիսոփայական, աստվածաբանական, ճարտասանական, պատմական երկերը՝ թարգմանված հունարեն և ասորերեն սկզբնագրերից:

Զեռնամուխ լինելով բառարանի ստեղծմանը՝ հեղինակները չափազանց մեծ ընտրությամբ օգտվել են նաև Ալեքսանդրյան դպրոցի հայտնի դեմքերից մեկի՝ Փիլոն Եբրայեցու (Ալեքսանդրացու, 1-ին դ. մ. թ.) երկերի հայերեն թարգմանություններից, որոնցից պետք է հիշատակել գլխավորապես «Այնոցիկ որ ի Լինելութեանն խնդրոց և լուծմանց», «Այնոցիկ որ յԵղեան խնդրոց և լուծմանց», «Աստուածային օրինացն այլաբանութիւն», «Ցաղագս նախախնամութեան», «Ցաղագս բան ունել և անասուն կենդանեացդ», «Վարք իմաստնոց» և «Ի բան» աշխատությունները:

Բառարանի համար հիմք ծառայած աղբյուրների շարքում առանձնակի տեղ է գրավում հելլենիստական շրջանի հույն հայտնի քերական Դիոնիսիոս Թրակացու (170—90 թթ. մ. թ. ա.) «Քերականական արվեստ» աշխատության հայերեն թարգմանությունը,

[10] Բառարանի աղբյուրների ցանկում, բացի հիշյալ երկու աշխատությունից, հիշատակվում է Ե. Կեսարացու մի այլ՝ «Թուղթ առ Կարպիանոս, վասն Համաբարբառոյն Աւետարանաց» գրվածքը:

որից հեղինակները քաղել են բավական թվով բառեր, որոնց գերակշռող մեծամասնությունը թարգմանության մեջ մուտք գործած քերականական տարբեր հասկացություններ արտահայտող տերմիններ են:

Բառարանում օգտագործված աղբյուրներից մատենագրական ցանկում հիշատակվում է Ալեքսանդրյան դպրոցի մի այլ նշանավոր ներկայացուցիչ՝ Էվկլիդեսի (3-րդ դ. մ. թ. ա.) «Տարրեր» կամ «Հիմունքներ» երկրաչափական աշխատությունը, որի հայերեն թարգմանությունը կատարվել է Գրիգոր Մագիստրոսի ձեռքով մոտավորապես 1051 թվականին[11]:

Ուշ շրջանի թարգմանական երկերից, որոնցից անհրաժեշտ չափով օգտվել են բառարանի հեղինակները, աղբյուրների ցանկում միաժամանակ հիշատակվում են 12-րդ դարում արաբերենից թարգմանված Անատոլիոս Պերիթացու «Գիրք վաստակոց» չափազանց հետաքրքրական աշխատությունը և 12-րդ դարի հեղինակ Միքայել Ասորու (1126—1199 թթ.) ընդարձակ «Ժամանակագրութիւն»-ը՝ թարգմանված ասորերենից 13-րդ դարում:

Բացի հիշյալ թարգմանական երկերից, բառարանի ստեղծման ընթացքում չափավոր կերպով օգտագործվել են 8-րդ դարի հույն հեղինակ Հովհաննես Դամասկացու (745—780 թթ.) փիլիսոփայական-աստվածաբանական մի քանի աշխատությունները՝ թարգմանված վրացերեն և հունարեն լեզուներից:

Ի վերջո, բառարանի աղբյուրների ցանկում հիշատակվող թարգմանական երկերից ուշադրության արժանի է դարերի ընթացքում, տարբեր հեղինակների կողմից ստեղծված «Քարթլիս-ցխովրեբա»-ն («Վրաց պատմություն»-ը), որի հնագույն մասերը հայերենի են փոխադրվել 12-րդ դարում:

Այսպիսով, ահա մատենագրական այն ինքնուրույն և թարգմանական տարբեր բովանդակություն ունեցող հիմնական ու երկրորդական աղբյուրները, որոնք մի առ մի հիշատակվում են բառարանի ծավալուն մատենագրական ցանկի մեջ:

Բնորոշն այն է, որ հեղինակները ոչ միայն արձանագրում են մատենագրական ցանկում այդ աղբյուրները՝ տալով միաժամանակ հակիրճ բացատրություններ, այլև ընդգծում են յուրաքանչյուր մատենագրի լեզվի ու ոճի առանձնահատկությունը: Այսպես՝ բառարանը կազմողները նշում են, որ 11-րդ դարի մատենագիր Անանիա Սանահնեցու «Ընդդեմ երկաբնակաց «հակաճառական երկի» ոճն է ուրեք միջակ, և ուրեք ստորին և անշուք»: Աբրահամ Մամիկոնյանի գլխավոր երկը՝ «Պատմութիւն վասն ժողովոյն Եփեսոսի» գրված է «պարզ և վայելուչ հայկաբանութեամբ»: Նույն չափանիշով է գնահատվում 8-րդ դարի պատմագիր Ղևոնդ Երեցի «Պատմութիւն»-ը՝ շարադրված «յստակ և ընտիր հայկաբանութեամբ»: 10-րդ դարի վերջերի և 11-րդ դարի սկզբների պատմագիր Ստեփանոս Տարոնեցի Ասողիկի լեզվի նկարագիրն է՝ «միջակ ոճով, ուրեք հարթ, և ուրեք անհարթ»:

Լեզվի և ոճի տեսակետից տարբերվում են ոչ միայն ինքնուրույն, այլև թարգմանական երկերը, որոնք նույնպես ունեն լեզվա-ոճական առանձնահատկությունների տարբեր դրսևորումներ: Այսպես, օրինակ՝ հույն փիլիսոփա Հովհաննես Դամասկացու մի քանի երկերը թարգմանվել են «ի վրաց լեզուէ ի հայ բարբառ անհարթ ոճով», Եվսեբիոս Կեսարացու «Ժամանակագրութիւն»-ը՝ «պանծալի թարգմանութիւն ի յոյն բնագրէ՝ քաջ հայկաբանութեամբ», Անթիպատրոս Բոստրացու մի քանի ճառերը՝ թարգմանված հունարենից «միջակ ոճով» և այլն:

Հարց է ծագում, թե բառարանի հեղինակները ի՞նչ տեսանկյունով են քննել տվյալ մատենագրի լեզվի տարբեր դրսևորումները, այլ կերպ ասած՝ ինչպե՞ս են բնորոշել նրա ոճի հատկանիշներն ու սահմանները: Առաջաբանում ասված է, թե «լավութիւն մատենագրին յառաջիկ այս նկատի ի մէնջ ըստ ոճոյ հնութեան և ըստ գեղեցիկ հայկաբանութեան»[12]: Պարզ է, որ «ըստ ոճոյ հնութեան և ըստ գեղեցիկ հայկաբանութեան» հասկացության տակ բառարանի կազմողներն առաջին հերթին նկատի են ունեցել անցյալի լեզվի պատկերավորման միջոցներն ու նախորդների ոճի առանձնահատկությունները, մասնավորապես՝ 5-րդ դարի առաջին կեսի հայ մատենագիրների և թարգմանիչների լեզվին ու ոճին հատուկ ,օրինաչափությունները:

Արդ, պետք է նկատի ունենալ, որ բառարանի ստեղծման ընթացքում, բացի վերոհիշյալ երկերից, որպես աղբյուրներ լայնորեն օգտագործվել են դարերի ընթացքում կուտակված և ընդհանուր վերնագրեր կրող զանազան ժողովածուներում ընդգրկված այս կամ այն բովանդակությամբ մեծ ու փոքր պատկառելի քանակությամբ մատենագրական ինքնուրույն և թարգմանական այլազան բնագրեր, տեքստեր և այլն: Այդ ժողովածուները, որոնք պարունակում են մատենագրական ինքնուրույն և թարգմանական տարբեր բովանդակություն ունեցող զանազան նյութեր, հիմնականում հետևյալներն են. Հայսմավուրքներ, Հարանց վարքեր, Ճառընտիրներ, Կանոնագրքեր, Բժշկարաններ, Գանձարաններ, Ժամագրքեր, Տաղարաններ, Շարակնոցներ և այլն:

Բ. ԲԱՌԱՐԱՆՆԵՐ

Արդեն ասվել է, որ Նոր Հայկազյան բառարանի ստեղծման ընթացքում, բացի մատենագրական ինքնուրույն և թարգմանական տարբեր բովանդակություն ունեցող երկերից, օգտագործվել են մի քանի բառարանագրական աշխատանքներ, որոնք հետևյալներն են. «Բառք քերթողականք», «Բառք Գաղիանոսի բժշկապետի» հին ձեռագիր բառարանները և Ստ. Ռոշքայի «Գանձ հայոց լեզուի» անտիպ աշխատությունը, որը բաղկացած է երկու՝ հայ-լատիներեն և լատիներեն-հայերեն բառարաններից:

---

[11] Գ. Բ. Պետրոսյան, Էվկլիդեսի երկրաչափության հայերեն հնագույն թարգմանությունը..., ՀՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր», № 1—2, 1945, էջ 70:

[12] ՆՀԲ, առաջաբան, էջ 8:

Պետք է նկատել, որ չնայած այդ բառարանները խիստ զգուշությամբ օգտագործվել են որպես օժանդակ աղբյուրներ, սակայն բավականաչափ առատ նյութ են տվել հեղինակներին բառարանը կազմելիս: Բառարանի բառացանկի ընտրության համար առանձնապես արժեքավոր աղբյուրներ են հանդիսացել միջնադարյան հին ձեռագիր բառարանները, որոնց մեջ վկայված են զգալի թվով այնպիսի բառեր, որոնք ընդհանրապես չեն հանդիպում մինչև այժմ մեզ հայտնի մատենագրական ինքնուրույն և թարգմանական երկերում, կամ հանդես են գալիս իմաստային այլ նշանակություններով ու առումներով:

Հին բառագրքերի օգտագործման կապակցությամբ բառարանի աղբյուրների ցանկում ասված է հետևյալը. «Հաւաքումն բառից ի գրչագիր համառօտ բառագիրս. գործ ԺԳ և ԺԴ դարուց՝ ի պէսպէս օրինակս այլևայլ օրինակաւ»[13]: Այս վկայությունից կարելի է ենթադրել, որ հեղինակները ձեռքի տակ են ունեցել ամենայն հավանականությամբ 13—14-րդ դարերի ընդօրինակություն ունեցող այն ձեռագիր ժողովածուներից, որոնք պարունակում են մի շարք հին բառարաններ ու բառացանկեր: Այդ կարգի ժողովածուներում հիմնականում հանդիպում են տարբեր տիպի և ընդգրկման ծավալի այնպիսի հին ձեռագիր բառարաններ ու բառացանկեր, ինչպիսիք են՝ «Բառք քերթողականք», «Բառք յունարէնն», «Բառք Փիլոնի», «Բառք խորանին», «Բառք Վարդան գրոց», «Հանդէս բանաստեղծաց», «Բառք գովասականք», «Բառք եբրայեցւոց», «Բառք քերականի», «Սահմանք իմաստասիրականք» և այլն:

Բանասեր Հ. Ամալյանը, որին նույնպես հայտնի է քննարկվող բառարանի համար որպես աղբյուրներ մի քանի հին ձեռագիր բառարանների օգտագործման հանգամանքները, իր «Միջնադարյան Հայաստանի բառարանագրական հուշարձաններ» ուշագրավ աշխատության մեջ նշում է. «Նոր Հայկազյան բառարանի հեղինակները ձեռագիր բառարաններից վերցրած բառերի դիմաց դնում են «ի հին բառ. գրի», «հին բռ.» և նման այլ նշումներ՝ դրանց տակ նկատի ունենալով գլխավորապես «Բառք քերթողականք»-ը[14]:

Եվ իրոք, ինչպես ցույց է տալիս հիշյալ հին ձեռագիր բառարանների բաղդատական հետազոտությունը, Նոր Հայկազյան բառարանի հեղինակները հիմնականում օգտվել են «Բառք քերթողականք» բառարանից: Արդեն Հ. Ամալյանը միանգամայն ճիշտ կերպով նկատել է, որ «նրանք (այսինքն՝ ՆՀԲ-ի հեղինակները.—Ռ. Ղ.), խստագույն ընտրությամբ, ձեռագիր բառարաններից վերցրել են գլխավորապես այն բառերը, որոնք վկայված են մատենագրությամբ, սակայն հին բառարաններում հանդես են գալիս իմաստային այլ նշանակությամբ, որպես տարբերակներ ու նրբերանգներ կամ էլ բոլորովին այլ իմաստներով, որպես հոմանուններ»[15]:

[13] ՆՀԲ, հտ. Ա, էջ 14:

[14] **Հ. Ամալյան**, Միջնադարյան Հայաստանի բառարանագրական հուշարձաններ, Երևան, 1966, էջ 82:

[15] Նույն տեղում, էջ 218:

Քննարկվող բառարանում տեղ գտած այդ կարգի բառերից են, օրինակ. **ալոցագոյն, դարաւանդ, ելրաստ, աղունք, բոջախոհ, թոհ և բոհ, աւիւն, խաշընդեղ, բորբ, ակաստան, կաւառն, համակոնեն, նկուղ, ցմախ, անոպայ, կողով, զօշոտութիւն, դանդան, բաղազանութիւն, անտղելի, փոռնիտ** և ուրիշ բառեր, որոնք հին ձեռագիր բառարաններում հանդիպում են թե՛ իմաստի և թե՛ ձևի տեսակետից որոշ տարբերություններով:

Այնուհետև հին ձեռագիր բառարաններից ուղղակի կերպով Նոր Հայկազյան բառարանին անցած բառերի վերաբերյալ Հ. Ամալյանը իրավացիորեն գտնում է, որ «նոր» անվավեր բառեր հին բառարաններից ՆՀԲ-ի հեղինակները վերցրել են բացառիկ դեպքերում, երբ նրանք այդ բառը աղավաղված կամ սխալ գրչագրված լինելու մեջ չեն կասկածել»[16]:

Ստորև բերում ենք Նոր Հայկազյան բառարանում ընդգրկված մի խումբ բառեր, որոնք հանդիպում են միայն հին ձեռագիր բառարաններում, որոնց մեջ մասնավորապես «Բառք քերթողականք»-ում.

Ագորանք, ազնակից, աթոր, ալաւունք, ակղթել, աղթաման, ամարու, անաղամող, անաղապէտ, անգուրդ, անսխուր, անցուցանք, ապաք ցապաքէն, բագ, բագեմ, բագձաձ, բաղայող, բեղն, բութէն, բունկէն, դաշնակել, զաւեշտարար, թաւդատել, թոռակուռ, թուղբ, ինքներեսս, լմշտոց, լուսնաժէտ, խաւիղ, խոճոճ, ծխնելոյզ, ծղուկ, ծփոց, կաղկանձել, կէշկէշել, հրշտել, ձեղունահանք, ճահանոց, մակաղ, մակոնատ, մծղնի, յախուռնախօս, նումնճանակ, շամշպետ, շոնք, ոչընչաքեայ, պսխեի, պաշտակ, ջայլանք, ռիմ, սաւառնաձայն, սօսիւն, տաբիրոն, տարբեղուն, բաբացեալ, ցապաք, փիւն, փիշակէ, քրտոն բակաղթ (ՆՀԲ, հտ. Բ, հավել. էջ 1047), գողտ կամ գողկ (նույն տեղում, էջ 1049), գուշպ կամ գուն (նույն տեղում), զահոմիլ (նույն տեղում, էջ 1052), խտտղան (նույն տեղում, էջ 1054), հանդիճել (նույն տեղում, էջ 1056) և այլն:

«Բառք քերթողականք»-ից բացի, Նոր Հայկազյան բառարանի համար աղբյուր ծառայած բառարանագրական գործերից է «Բառք Գաղիանոսի բժշկապետի» բառարանը, որը հայ միջնադարյան բառարանագրության արժեքավոր հուշարձաններից մեկն է, մեզ հասած հայերեն առաջին բժշկական բառարանը:

Ինչպես ցույց է տալիս Նոր Հայկազյան բառարանի քննությունը, աղբյուրների ցանկում հիշատակվող այդ բառարանից հեղինակները քաղել են զգալի թվով բառեր, որոնց մեծ մասը բուսաբանական բառեր են. բազմապիսի ծառերի և բուժիչ խոտերի, տերևների, ծաղիկների ու պտուղների անուններ և այլն: «Բառք Գաղիանոսի» բառարանից քննվող բառարանի մեջ մուտք գործած բառերից կարելի է նշել, օրինակ՝ **աղբղբուկ** (կամ **աղբաղբուկ**), **արեւադէմ, ափիոն, գառին ծաղիկ, բլիթէն, բոգ, եղիտամն** (ՆՀԲ, հտ. Բ. հավել. էջ 1050), **զմռնախունկ, խոզուկ, խոռ (ն), կտատեակ** (կամ **կտատուկ**), **ճարտարուկ, ձիալախուր, մարդախոհ, ջոշիր** (կամ **ջոխիր**), **պղնձաքար, քերքէշ** և այլն:

[16] **Հ. Ամալյան**, նշվ. աշխ., էջ 218:

Բացի մատնանշված հին ձեռագիր բառարաններից, քննարկվող բառարանի համար որպես օժանդակ աղբյուր է ծառայել լեհահայ բազմավաստակ գիտնական Ստեփանոս Ռոշքայի (1670—1739) հայ-լատիներեն և լատիներեն-հայերեն բառարաններից կազմված՝ «Գանձ հայոց լեզուի» վերնագրով անտիպ աշխատությունը: Կարևոր այս հուշարձանի օգտագործման կապակցությամբ ՆՀԲ-ի հեղինակները գրում են. «Առաջնոյն ոճ առաւել ընտիր քան զերկրորդին (լատիներեն-հայերեն բառարանի—Ռ. Ղ.). Նորին առաջնոյ է և բառգիրք ընդարձակ և բազմավաստակ՝ չև ելեալ ի լոյս, զորոյ զհատուածս ևեթ եղև մեզ տեսանել, ուստի նշանակեցաք և զքանի մի բառս և զանց արարաք զայլովք՝ որք քննութեան և ստուգութեան երևեցին պէտս ունել»[17]:

Ինչպես տեսնում ենք, Ստ. Ռոշքայի հայ-լատիներեն բառարանը հիշատակվում է մատենագրական ցանկում՝ գնահատվելով որպես «բառգիրք ընդարձակ և բազմավաստակ», չնայած հիշյալ բառարանի միայն առանձին հատվածներին են, ցավոք, ծանոթ եղել ՆՀԲ-ի հեղինակները: Նրանք, այդ բառարանի առանձին հատվածներից, խիստ մասնակի ընտրությամբ, վերցրել են մի շարք բառեր՝ անտեսելով մյուսները, որոնք ստուգման և ճշգրտման կարիք են ունեցել:

Ստորև բերվում են այն բառերը, որոնք Ստ. Ռոշքայի բառարանից ուղղակիորեն անցել են Նոր Հայկազյան բառարանին.

Ախազ, անմուրց, աչոց, բիբեմ, դօդօշ, եզնակն, ելագ (կամ ելակ), եղան, ժմիրակ, թաղակ, թաղամանական, թառափ, թալի, թոդան, լաստենի, լըրթութիւն, խառնաթան, խոթ (ալկիոն թռչունը), խորոպ, կարշն, կեղիկ, կտցար, կրկիտ, հանգոյրժ, հաւքաջ, հողմացուցանել, հրացումն, մատանեկան, մենագրոհ, մենաճիւ, միզերակ, մկնարջ, մղձուկ, շպարանք, ոսկերել, ուրուարար, չարաճամոզ, ջայլակոծել, ջնարակագոյն, ջրխոտ, սթարել, վարակոտ, տարօրինել, փաղակատարական, փոշոշ:

Պետք է նշել, որ այս բառերը մատենագրությամբ վկայված բառեր են, գործածություն են ունեցել գրական այնպիսի երկերում, որոնք հայտնի չեն եղել քննվող բառարանը կազմողներին:

Ընդհանրապես Ստ. Ռոշքայի «Գանձ հայոց լեզուի» աշխատությունն առանձին հետաքրքրություն է ներկայացնում մասնավորապես այն պատճառով, որ «հեղինակը կոչումներ կ'ընէ բազմաթիւ հայ ձեռագիր մատեաններէն, որոնցմէ ոմանք նաև այսօր յայտնի չեն լիովին»[18]: Ահա թե ինչու վենետիկյան միաբան Մ. Ճանաշյանը, 1955 թ. իր Ստ. Ռոշքայի բառարանին նվիրված արժեքավոր հոդվածի մեջ, ներկայացնելով այդ բառարանը, այն միտքն է հայտնում, որ «եթէ ՆՀԲ-ի հեղինակներուն տրամադրութեան տակ գտնուէր Ռոշքեանի գործը, հաւանաբար շատ բառեր պիտի անցնէին Նոր Հայկազեանին մէջ յետ ստուգուելու»[19]:

Այսպիսով, վերն ասվածներից կարող ենք հետևցրնել, որ բազմակողմանիորեն ուսումնասիրելով Վենետիկյան միաբանության գրապահոցներում եղած պատկառելի թվով տարբեր բովանդակությամբ և զանազան ժամանակների պատկանող հայ ինքնուրույն ու թարգմանական գրականության հուշարձանները, քննարկվող բառարանի հեղինակները գիտականորեն միանգամայն ճիշտ սկզբունքներից ելնելով, սկզբնաղբյուրների մանրակրկիտ օգտագործմամբ ստեղծել են մեծ արժանիքներ ունեցող մի գործ, որի ամբողջ բովանդակությունը, բառարանագիտության առումով, ըստ ամենայնի իր վրա կրում է անկախ և ինքնուրույն հետազոտության կնիք:

[17] ՆՀԲ, հտ. Ա, էջ 22:

[18] **Հ. Տաշյան**, Ցուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանի Մխ. ի Վիեննա, Վիեննա, 1895, էջ 22—23:

[19] **Հ. Մեսրոպ Ճանաշեան**, Ստեփանոս Ռոշքեանի բառարանը, «Բազմավէպ», 1955, էջ 254:





Օ. Ս. ԵԳԱՆՅԱՆ

ԿԱՐԱՊԵՏ ՀՈՎՀԱՆՋԱՆՅԱՆԻ ՀԱՅԵՐԵՆ ՁԵՌԱԳՐԵՐԻ ՀԱՎԱՔԱԾՈՆ

Մաշտոցի անվան Մատենադարանի բազմահազարանոց հավաքածոյի բաղկացուցիչ մասերից մեկն է նաև հայտնի լուսանկարիչ Կարապետ Հովհաննիսյանի հայերեն ձեռագրերի անձնական հավաքածոն, որը բանասիրությանը հայտնի է Խաչատուր Քուչուկ-Հովհաննիսյանի կազմած ցուցակի միջոցով:

Խ. Քուչուկ-Հովհաննիսյանը իր «Старинные армянские надписи и старинные рукописи в пределах Юго-западной Руси и в Крыму» («Հայկական հնագույն արձանագրություններ և հնագույն ձեռագրեր հարավարևմտյան Ռուսաստանի սահմաններում և Ղրիմում») հոդվածում՝ «Коллекция старинных армянских рукописей К. Оханджаньяна в Кишиневе» («Կ. Հովհաննիսյանի հայերեն հնագույն ձեռագրերի հավաքածոն Քիշնևում») ենթախորագրի տակ անդրադառնալով Կ. Հովհաննիսյանի ձեռագրերին, 1—11 թվահամարների ներքո համառոտակի նկարագրում է 11 ձեռագիր, այդ թվում 6 «Աւետարան» (№№ 1—6), 1 «Խորհրդատետր» (№ 7), 1 «Յայսմաւուրք» (№ 8), 1 «Ճաշոց» (№ 9), 1 «Տօնացոյց» (№ 10) և 1 «Ժամագիրք» (№ 11):

Հիշատակված 11 ձեռագրերից 8-ը (№№ 1, 4—6, 8—11) այսօր որոշակիորեն գտնվում են Մաշտոցի անվան Մատենադարանում (տե՛ս կից տախտակը), իսկ մնացած 3-ի (№№ 2, 3, 7) հետագա ճակատագիրը առայժմ մեզ հայտնի չէ:

Բացակայող այդ ձեռագրերն են.

№ 2. «Աւետարան», մագաղաթ, 165 թերթ, երկսյուն, բոլորգիր, մեծություն՝ 17,5 սմ, ունի կիսախորաններ և լուսանցազարդեր. պակասում է Հովհաննու Ավետարանը, իսկ Ղուկասու Ավետարանը ավարտվում է ԺԱ 39-ով: Գրիչ և տեղ՝ անհայտ, ժամանակ՝ ԺԴ դար:

№ 3. «Աւետարան», թուղթ, 267 թերթ, երկսյուն, բոլորգիր, մեծություն 21 սմ, ունի 13 տերունական նկարներ, խորաններ, կիսախորաններ և լուսանցազարդեր: Սկզբից և վերջից ունի 2-ական թերթ մագաղաթյա պահպանակներ (բոլորագիծ երկաթագիր, մասն Ավետարանի), կազմը կաշեպատ տախտակ՝ մետաղյա շրջանակով և արծաթյա կոստղերով: Գրիչ և տեղ՝ անհայտ, ժամանակ՝ ԺԶ դար: Հիշատակագրության մեջ ասված է, որ այն պատկանել է ոմն Հռիփսիմեի:

№ 7. «Խորհրդատետր», թուղթ, 20 թերթ, գրված 1711 թվականին Թոխաթում, Եղիա Մարսվանեցու ձեռքով:

Բացի Քուչուկ-Հովհաննիսյանի կողմից արձանագրված վերոհիշյալ 11 ձեռագրերից, ըստ երևույթին Կ. Հովհաննիսյանը ունեցել է նաև այլ ձեռագրեր, որոնք չեն ցուցակագրվել. դրանցից մեկն է Մատենադարանի № 6712 ձեռագիրը, որի 1բ էջում պահպանվել է հետևյալ մակագրությունը. «Կարապետ

---

[1] Древности Восточные. Труды Восточной Комиссии Императорского Московского Археологического Общества, том II, вып. III, Москва, 1903, стр. 33—75.

[2] Անդ, էջ 50—57:

Յովհաննէսեանց Ալէքսանդրապոլցի, 1884 թ.»: Այդ ձեռագիրը հետագա շարադրանքում պայմանականորեն կարտահայտենք [12] թվահամարով:

Այսպիսով, առայժմ մեզ հայտնի տվյալներով, Կ. Հովհաննիսյանի ունեցած ձեռագրերի քանակը հասնում է 12-ի[3], իսկ առկա ձեռագրերի քանակը՝ 9-ի (№№ 4661, 6283, 6712, 7072, 7498, 7568, 7879, 8124, 8571), որոնցից 4-ը (№№ 4661, 6283, 6712, 7072) Մատենադարան են մուտք գործել 1924—1936 թվականների ընթացքում, իսկ մնացած 5-ը (№№ 7498, 7568, 7879, 8124, 8571)՝ 1938 թվականին Գրական թանգարանի հավաքածոյի կազմում: Վերջիններս, ի միջի այլոց, 20-ական թվականներից եղել են «Հայ արվեստագետների միության» գրադարանում և Գրական թանգարանին են անցել միության լուծարքից հետո (16.11.1930):

Թե ում են պատկանել նշված ձեռագրերը նախքան Կ. Հովհաննիսյանի հավաքածոյի մեջ մտնելը, ոչինչ հայտնի չէ: Սակայն, ինչպես կարելի է եզրակացնել ձեռագրերից մի քանիսի վրա եղած մակագրություններից, դրանք դեռևս անցյալ դարի 70-ական թվականներից եղել են Կ. Հովհաննիսյանի սեփականությունը և Քիշնև են փոխադրված Ալեքսանդրապոլից: Ահա այդպիսի մակագրություններից մեկը. «Ի մատենադարանէ Կարապետի Յովհաննիսեանց, 1879 թ., Ալէքսանդրապոլ» (№ 7072, թերթ 44ա):

Ստորև տալիս ենք այդ ձեռագրերի հին և նոր թվահամարների տախտակը:

ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՏԱԽՏԱԿ ԿԱՐԱՊԵՏ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ՀԱՅԵՐԵՆ ՁԵՌԱԳՐԵՐԻ ՀԻՆ ԵՎ ՆՈՐ ԹՎԱՀԱՄԱՐՆԵՐԻ

Ձեռագրի հերթական	Հայ արվեստագետների միության գրադարան	Գրական թանգարան	Մատենադարան	
			Ինոն հավաքածու	Այլի
1	57	1168	—	7879
2	—	—	—	—
3	—	—	—	—
4	1	1167	—	8571
5	60	1169	—	8124
6	59	1170	—	7568
7	—	—	—	—
8	—	—	1663	6283
9	—	1172	—	7498
10	—	—	—	7072
11	—	—	—	4661
[12]	—	—	—	6712

[3] Հովհաննիսյանը 4 ձեռագիր էլ նվիրաբերել է Մոսկվայի Կայսերական Հնագիտական թանգարանին («Արձագանք», 1896, № 47), որոնք այժմ պահվում են Մոսկվայի Պատմության թանգարանում:



ԼՈՒՐԵՐ ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅ ԿՅԱՆՔԻՑ

ԲՈՒԼՂԱՐԱՀԱՅ ԹԵՄՈՒՄ.—1970 թվի հունիսի 19-ին Բուլղարիայի մայրաքաղաք Սոֆիայում տեղի է ունեցել Բուլղարահայ թեմական-պատգամավորական ժողովը՝ թեմի առաջնորդ տ. Տիրայր եպիսկոպոս Մարտիկյանի նախագահությամբ: Ժողովին ներկա են եղել թեմական խորհրդի, վերստուգիչ հանձնաժողովի և եկեղեցական վարչությունների անդամները, ինչպես նաև՝ թեմի բոլոր քահանա հայրերը:

Ժողովը օրհնության և ողջույնի խոսքով բացել է առաջնորդ սրբազանը: Այնուհետև թեմական խորհրդի գործունեության հաշվետու զեկուցումով հանդես է եկել թեմական խորհրդի ատենադպիր պ. Միսաք Ռեթեվոյանը: Ապա սույն զեկուցման շուրջ տեղի են ունեցել մտքերի փոխանակումներ:

Պատգամավորական ժողովը նկատի առնելով, որ առաջնորդ սրբազանի, թեմական խորհրդի, վերստուգիչ հանձնաժողովի և եկեղեցական վարչությունների պաշտոնավարության պայմանաժամը ավարտվել է, այն երկարաձգել է մինչև 1972 թվականի սեպտեմբեր:

Ժողովը գոհունակությամբ և երախտագիտությամբ արձանագրել է տ. Տիրայր եպիսկոպոս Մարտիկյանի առաջնորդության 10-ամյակը: Այս առթիվ կարդացվել է Ամենայն Հայոց կաթողիկոսի օրհնության գիրը, որով առաջնորդ սրբազանը արժանանում է Վեհափառի օրհնությանը և գնահատանքին:

Ժողովականներից շատերը շնորհավորում են սրբազանին, մատնանշում նրա առաջնորդության տարիներին թեմում կատարված եկեղեցական, մշակութային բեղուն գործունեությունը:

Ժողովից հետո, ի պատիվ առաջնորդ սրբազան հոր, Սոֆիայի «Պալքան» ճաշարանում տրվել է ճաշկերույթ, որին, բացի ժողովականներից, ներկա են եղել Բուլղարիայի կրոնական գործերի նախարար Մ. Քյուչուկովը, նրա տեղակալը, Բուլղարիայի տ. Կիրիլ սրբազան պատրիարքի ներկայացուցիչներ տ. Նիկոլայ եպիսկոպոսը և Բլագոյ ա. քահանան:

Առաջնորդ տ. Տիրայր եպիսկոպոսին շնորհավորել են Մ. Քյուչուկովը, տ. Նիկոլայ եպիսկոպոսը, թեմական խորհրդի ատենապետ Օ. Ալանյանը և ուրիշներ:

Ընդունելությունն անցնում է ջերմ մթնոլորտում: Վերջում առաջնորդ սրբազանը իր շնորհակալական խոսքում նախ որդիական ջերմ երախտագիտություն է հայտնում Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին, Որի օրհնության ներքո բուլղարահայ թեմը նվիրվել է եկեղեցանվեր, խաղաղ գործունեության: Ապա առաջնորդ սրբազանը իր մասնավոր երախտագիտությունն է հայտնում Բուլղարիայի կրոնից նախարար Մ. Քյուչուկովին և ի դեմս նրա Բուլղարիայի բարեխնամ կառավարությանը, որի հովանու տակ խաղաղ և բարօր ապրում է հայ ժողովուրդը: Տիրայր սրբազանը ջերմ շնորհակալություն է հայտնում նաև Բուլղարիայի տ. Կիրիլ սրբազան պատրիարքին՝ հայ եկեղեցու և ժողովրդի մեծ բարեկամին, որի օրով հայ և բուլղար քույր եկեղեցիների եղբայրական հարաբերությունը և սիրալիր գործակցությունը էկումենիկ ոգով, տվել է իր բարի պտուղները:

Տ. Տիրայր սրբազանը իր խոսքը ավարտում է սրտագին բարեմաղթություններ անելով բուլղարահայ ժողովրդի, նրա եկեղեցական, մշակութային հաստատությունների պայծառության, թեմական խորհրդի ժրաջան անդամների համերաշխ գործունեության համար, բարեմաղթելով, որ սերտ և անքակտելի մնա բուլղարահայ թեմի կապը Մայր Աթոռ սուրբ Էջմիածնի և մեր վերածնված մայր հայրենիքի հետ:

Ընդունելությունն ավարտվում է խմբովին երգված տերունական աղոթքով:

ԵԹՈՎՊԱՀԱՅ ԹԵՄՈՒՄ.—Ադիս-Աբեբայի հոգևոր հովիվ տ. Կորյուն ծ. վրդ. Մանվելյանը 1970 թվականի 9 հուլիս՝ Վեհափառին ուղարկած իր տարեկան զեկուցագիր-նամակում ներկայացնում է եթովպահայ թեմի ազգային-մշակութային գործունեությունը։ Քաղվածաբար մեր ընթերցողներին ենք ներկայացնում այդ զեկուցագրից որոշ լուրեր։

թյունն է, որը բաղկացած է հինգ հոգուց և որը հոգևոր հովվի ղեկավարությամբ զբաղվում է համայնքի եկեղեցական, մշակութային և նյութական հարցերով։ Հոգաբարձությունն իր գանձանակում ունի շուրջ 10000 եթովպական դոլլար։

Ինչպես գաղութային վարչության, այնպես և հոգաբարձության անդամները ոչինչ չեն խնայում համայնքի ղեկավարության համե-



Ադիս-Աբեբայի հայոց Գևորգոֆ վարժարանի տեսչական և ուսուցչական կազմը 1969—1970 ուսումնական տարվա շրջանավարտների հետ

Զեկուցագրում խորին շնորհակալություն և հավատարմություն է հայտնվում Վեհափառ Հայրապետին՝ թեմի նկատմամբ ցուցաբերած գուրգուրանքի և ուշադրության համար։ Նշվում է նաև, որ թեմի հայությունը անքակտելի հավատարմությամբ կապված է Մայր Աթոռ սուրբ Էջմիածնի հետ, իր ուշադրությունը սևեռել է դեպի վերածնված Մայր Հայաստան, որի ամեն մի հաջողությունը սրտի մեծ բերկրանքով է դիմավորում։

Համայնքի հայերի ընդհանուր թիվը 1200 է։ Ութ տարիներ ի վեր համայնքի հոգևոր հովիվն է եղել տ. Կորյուն ծ. վրդ. Մանվելյանը, որը կատարել է շնորհակալ աշխատանք։ Համայնքը ղեկավարվում է գաղութային վարչության կողմից, որի անդամները ընտրվում են չորս տարին մեկ անգամ։

Համայնքի երկրորդ կարևոր մարմինը տեղի սուրբ Գևորգ եկեղեցու հոգաբարձու-

ռաշխ գործունեության, նյութական, մշակութային բարօրության համար։

Տեղի ազգային Գևորգոֆ վարժարանում սովորում են 138 երկսեռ աշակերտներ։

Վարժարանի այս տարվա ամավերջի հանդեսը տեղի է ունեցել հունիսի 28-ին, Ադիս-Աբեբայի քաղաքապետարանի հանդիսությունների սրահում։

Շրջանավարտները, որոնք թվով 13 հոգի են, որոշել են իրենց ուսումը շարունակել զանազան երկրների տարբեր ուսումնական հաստատություններում, ոմանք էլ՝ մայր հայրենիքում։

Սույն հանդեսի փակման խոսքով հանդես է եկել թեմի հոգևոր հովիվ տ. Կորյուն ծ. վրդ. Մանվելյանը։ Հայր սուրբը իր գեղեցիկ խորհուրդներով ու հորդորներով քաջալերել է շրջանավարտներին, նրանց պատվիրել է լինել խելացի, հեռատես, հավատարիմ մեր

դարավոր մշակույթին, հերոս ու լուսամիտ նախնիների թողած ավանդներին: Ապա հայր սուրբը ողջ ներկաներին, մանավանդ աշակերտությանը խոսել է վերածնված մայր հայրենիքի, սուրբ Էջմիածնի և նրա արժանընտիր գահակալ Վեհափառ Հայրապետի մասին, մասնավորաբար անդրադարձել է Նրա՝ վերջերս Հռոմ կատարած ուղևորության եկեղեցական-պատմական մեծ նշանակությանը:

1970 թվի հունիսի 28-ին Ադիս-Աբեբայի պատրիարքարանի Մայր տաճարում նշվել է Եթովպիայի պատրիարք, Նորին սրբություն Աբունա Բասիլիոսի գահակալության 11-րդ տարեդարձը: Գահակալական, սույն հանդիսությանը, հանուն Հայոց Հայրապետի, ներկա է եղել թեմի հայոց հովիվ Կորյուն ծ. վրդ. Մանվելյանը, ընկերակցությամբ գաղութային ժողովի ատենապետ Գ. Սվաճյանի: Հանուն Հայոց Հայրապետի տ. Կորյուն ծ. վարդապետը շնորհավորել է քույր եկեղեցու հոգևոր պետին՝ բարեմաղթություններ անելով Տ. Բասիլիոս պատրիարքի կենաց արևշատության, եթովպական եկեղեցու և հայրենեաց բարօրության համար:

ՀԱՆԳԻՍՏ
ԱՐԺԱՆԱՊԱՏԻՎ Տ. ՄԿՐՏԻՉ ԱՎԱԳ ՔԱՀԱՆԱ ՉՈՐՉՈՓՅԱՆԻ
(1889—1970)

Սույն թվականի հուլիսի 14-ին Ռոստով քաղաքում, 81 տարեկան հասակում, վախճանվեց արժ. տ. Մկրտիչ ավագ քահանա Չորչոփյանը:

Հանգուցյալ տ. Մկրտիչ քահանան ծնվել է 1889 թվականին Նոր Նախիջևանում: Կրթությունը ստացել է Բեսարաբիայի հայոց թեմական դպրոցում, որի դասընթացը վերջացրել է 1906—1907 ուսումնական տարում:

Հանգուցյալը հմուտ է եղել եկեղեցական երգեցողությանը և հայկական ձայնագրությանը: Նրա երաժշտության ուսուցիչն է եղել տ. Գևորգ եպիսկոպոս Չորեքչյանը: 1908—1916 թվականներին տեր Մկրտիչը վարել է դպրի պաշտոն տեղի ս. Աստվածածին և ս. Նիկողայոս եկեղեցիներում: Տ. Գևորգ եպիսկոպոս Չորեքչյանի կողմից 1916 թվականին ձեռնադրվել է սարկավագ, իսկ 1918 թվականին՝ քահանա:

1910—1918 թվականներին հանգուցյալը տեղի թեմական դպրոցում և գիմնազիայում վարել է երգեցողության և կրոնի ուսուցչի, 1928—1935 թվականներին՝ հայոց հոգևոր խորհրդի քարտուղարի, իսկ 1940—1945 թվականներին՝ Բեսարաբիայի հայոց թեմի առաջնորդական փոխանորդի պաշտոնները:

Իր եկեղեցանվեր գործունեության համար 1926 թվականին Տ. Գևորգ Ե կաթողիկոսից ստացել է իրավունք՝ կրելու քահանայական լանջախաչ, 1928 թվականին՝ ծաղկյա փիլոն:

1948 թվականին Տ. Գևորգ Զ կաթողիկոսի կողմից արժանացել է ավագ քահանայության պատվի:

Հանգուցյալը 1940 թվականից մինչև իր



կյանքի վերջին ամիսները քահանայագործել է Ռոստով քաղաքի ս. Լուսավորիչ և ապա ս. Հովհաննես Մկրտիչ եկեղեցիներում: 1968 թվականին Տ. Վազգեն Ա կաթողիկոսը նրան շնորհել է վարդապետական ականակուռ խաչ:

1970 թվականի ապրիլ ամսին հանգուցյալը անցել է կենսաթոշակի:

Տ. Մկրտիչ ավագ քահանան եղել է իր կոչման բարձրության վրա գտնված եկեղեցական, նվիրված իր ժողովրդի հոգևոր լուսավորության գործին, սիրված և հարգված իր ծխականներից:

Հանգիստ իր ոսկորներին:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	Էջ
ԽՄԲԱԳՐԱԿԱՆ—Ճշմարտությունը ամբողջ	3
Մայր Աթոռի և Անթիլիասի միջև փոխանակված նամակներ և հեռագրեր՝ ս. Էջմիածնում 1969 թվականի սեպտեմբեր 27—հոկտեմբեր 2-ը կայացած եպիսկոպոսաց ժողովին Կիլիկյան Աթոռի եպիսկոպոսների մասնակցության վերաբերյալ	11
Հաղորդագրություն	44
ՊԱՇՏՈՆԱԿԱՆ—Վեհափառ Հայրապետի այցելությունը Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետի նախագահ Բաղդալ Մուրադյանին	45
Հայտարարություն	46
Հոգևորականաց համագումար Ամերիկայի Միացյալ Նահանգների հայոց արևելյան թեմի	47
ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ	51
Ամավերջի հանդիսություն հոգևոր ճեմարանում	54
ԳԱՐԵԳԻՆ ՎՐԴ. ՀՈՎՍԵՓՅԱՆ—Հայրենասիրություն և քրիստոնեություն	59
Ս. Էջմիածնի խորհուրդը	64
ԳՐԻԳՈՐ ՀԱԿՈԲՅԱՆ—Սահակ Պարթևին վերագրվող շարականները	67
Ն. ԹԱՀՄԻԶՅԱՆ—Հոգևոր եղանակների կոմիտասյան կանխագույն գրառումների վերծանությունը	72
ԵՍԱՅԱԿ ՎՐԴ. ԱՄԱՏՈՒՆԻ—Հոգևոր երգք Սահակայ և Մեսրոպայ	81
ԵՐՎԱՆԴ ՄԵԼՔՈՆՅԱՆ—Վրթանես Քերթողը և պատկերամարտությունը	86
ԱՐՄԻՆԵ ՔՈՉԿԵՐՅԱՆ—Մի նորահայտ անհատական գանձարան	98
ՌՈՒԲԵՆ ՂԱԶԱՐՅԱՆ—Նոր Հայկազյան բառարանի աղբյուրները	104
Օ. Ս. ԵԳԱՆՅԱՆ—Կարապետ Հովհաննիսյանի հայերեն ձեռագրերի հավաքածոն	112
Լուրեր սփյուռքահայ կյանքից	114
Հանգիստ արժանապատիվ տ. Մկրտիչ ավագ քահանա Զորչոփյանի	116

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ, ԷՋՄԻԱԾԻՆ

«ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Հանձնված է արտադրության 26/V 1970 թ.։ Ստորագրված է տպագրության 4/VIII 1970 թ., տպագրական 7,5 մամուլ, թուղթ 60×84 1/8, պատվեր 421

Մայր Աթոռ ս. Էջմիածնի տպարան, 1970 թ.